

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ  
Ա. Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1898

Յ Ա Ր Ա Կ Ա Ն Ի Ր Ա Կ Ա Ն

1898 № 6

ՏԱՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ


Երես

1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱԽԵՏԻՔ. . . . .	759 Խօսէք ալճակու, ինչպէս գրում էք: III.
2 ԾԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱԼ. . . . .	763 Երդեր Ա՛յս ինչ առևմ...—Ա՛յս ահ ամպեր...:
3 ՇԲԵՑՆԵՐ. . . . .	765 «Հեքիաթներ».
4 ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ. . . . .	777 Այս, մինչ օրս եւ... (բանաստ.):
5 ՖԻԼԻՊՊՈՆ-ԻՑ ԳԱՐ. ՍԱՐԴԱՆԵԱՆ	778 Օգասկար և վասակար միկրոլներ.
6 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԼ. . . . .	799 Ժաղավարական մոտիւ (բան.):
7 ՆՈՅՆԻ. . . . .	800 Ո՞ւր էք կորեր... (բան.):
8 ԱՊ.ՔԱՆԵԱՆ, Ն. . . . .	801 Վ. Գ. Բէլինոկիւ (Քննակ. էտիւդ):
9 ԱՐԱՄ.ԶԱՐՅԵՒ. . . . .	813 Միլմեր իրար:—Ասացէք նորան:— Երկու օրօրոցներ (բանաստ.):
10 ԶՊԱՆԵԱՆ, ԱՐՃԱԿ . . . . .	816 Հանր Հանէ, (Քննակ. էտիւդ):
11 ԱԹԱՅԵԱՆ, ԱՐՃԱԿ . . . . .	829 Եղբակ (բանաստ.):
12 ՄՈՒՐԱԴԵԱՆԵՑ, ՅԱԿՈԲ . . . . .	831 Մի ծալի ափերին II.
13 ԱՂԲՈԼԵԱՆ, ՆԻԿ. . . . .	839 Երգու վերք: Ա. Խոահակեանի մասին:
14 ՎԱՐԴԱՆԵԱՆ, ԳՐ. . . . .	856 Ալիք. Գողէի և բնուանիքի լենարան:
15 Ա. Ա. . . . .	861 Դրէքիուսի զորձը: (Լաւենեալի լալ- տարարութիւնը):
16 ԴԱԻԹԵԱՆՑ, ԱԼ. . . . .	876 Շերամի սերմագործութիւնը Գող- թանում:
17 ՄԱՐ. ՅԱՐ. . . . .	885 Երեանի քաղաքակին զործերը:
18 ՄՈՏԱ. . . . .	888 Աջ ու ձախ. Գ.
19 Զ. . . . .	894 Խապան.-Ամերիկ. պատերազմը:
20 ԽՄԲ. . . . .	900 Զանազան լորեր:
21 ԽՄԲ. . . . .	926 Բովանդակութ. Մուրճի կիսասեալին:

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Գ. ԱՕՏԻԵԱՆԵՑԻ

Տիպոգրաֆիя М. Д. Ротинианна, Гол. пр., լ. № 41.



# ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱՋԻՐ

№ 6 1898

ՅՈՒՆԻՍ

1898 № 6

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Դ. ՌՈՏԻՆԱՆՑ

Տիպոգրաֆիя М. Д. Ротиниана, Гол. пр. д. № 41.

1898

# ВАДИМ

ДЛЯ ДЕТЕЙ, ЗАИНТЕРЕСОВАННЫХ ГУМАНИТЕРИЕЙ

## ЧАСТЬ ЧЕТВЕРТАЯ

СЛОВА

СЛОВА

СЛОВА

Дозволено цензурою. Тифлисъ, 6-го Іюля 1898 г.

БИБЛІОГРАФІЯ  
ДЛЯ ДЕТЕЙ  
ІЗ ВІДОВЛІВАЮЩІМІСЬ КОЛЛЕКЦІОНЕРСТВОМ

# ԽՈՍՔԻ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՎԻՍ ԳՐՈՒՄ ԷՔ

## III

### ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ ՄՏԱԿՈՐ ԶՈՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Գրականական լեզուի գործածութիւնը իբրև տնային-մայրէնի լեզու կոչւած է, սակայն, ոչ միայն առահովցնելու մեր գրականութեան ապագան և ոչ միայն հաստատելու մեր գրական լեզուի վերջնական ձևերը, այլ և կարեոր գեր կառարելու ժողովրդի մոտաւոր զարգացման գործութիւն Անկարելի է ժխտել, որ մի լեզուի բառերի ու զարձւածների պաշարը ուղիղ յարաբերական է նորան գործածող ժողովրդի ունեցած մտաւոր ու ոգեկան պահանջներին։ Վայրենիները, որոնք զարգացման ամենաստոր աստիճանի վրայ են կանգնած, ունին նաև բառերի շատ աննշան պաշար։ Մեր գաւառական բարբառները, թէև քուլուրական համեմատապէս շատ բարձր աստիճանի վրայ կանգնած ժողովուրդների լեզուներ են, բայց նոքա իրենց բառերի ու զարձւածների գանձով միայն մի մասնիկը կարող են կազմել մի կառարելապէս զարգացած գրական լեզուի։ Մի գաւառաբարբառ ունի ամենաշատը առօրեայ կեանքի ու տարրական ոգեկան կեանքի արտայալութիւնների միջոցներ։ և նոյն իսկ այդքանի համար էլ մեր հայկական բարբառները իրենց հարազատութեամբ չեն կարող պարձենալ, այն աստիճան նոքա ենթարկւել են տիրապետած ազգերի բառերին ու ոճերին։

Ժողովրդական բարբառների լեզուական գանձի աղքատութիւնը, համեմատած գրականականի հետ—մեզնում դեռ ևս չի հասկացւած։ Մարդիկ կարծել են որ եթէ արդի գրականական լեզուն գեռես կարօտ է բարբառների օգնութեան, ուրեմն վերջիններս իբրև թէ առաջնից հարուստ են իրենց բառերի ու զարձւածների պաշարով։ Նոքա բնաւ հաշւի չեն առել, որ գոյականական լեզուն ունի սպունդի յատկութիւն՝ իրեն պահասող ամեն բառ ու ոճ իւր մէջ լնդունելու։ այլ և նոքա հաշւի չեն առել այն մշակումը, որին ենթարկւում է ամեն գրական լեզու՝ մարդկային ոգու և մոքի ըոլոր արտայացութիւններին գերազանց ճշգութիւն ու նրբութիւն ու նրբութիւն տալու համար։

հակառակ գրականութիւն չունեցող տեղական բարբառներին, որոնք այդքան լայն ծառալով զարգանալու հնարաւորութիւնը չունին:

Այդ հանգամանքը չի մնացել առանց խոր ազդեցութեան հացերի վրայի: Տեղական բարբառների միակ գործածութիւնը սղմնածէ է պահում նաև մասաղ սերունդների մտաւոր զարգացումը: Խօսելով մանուկների հետ տեղական բարբառով, մանուկը հենց դորանով իսկ հեռու է պահում այն ամեն հասկացողութիւններից, որոնք գրականութեան մէջ են երևան եկած և պարզաբանուած: Եւ որովհետեւ մայրենի բարբառը իւր ոյժը պահպանում է նաև մինչև մարդուս հասակ առած տարիները, մինչև մահը, — ուստի գտաւուական բարբառի մէջ պարփակւած մտաւոր պաշարը շարունակում է գրեթէ միակ մտաւոր օժիտը մնալ ժողովրդի ահագին մեծամասնութեան համար իւր ամբողջ կեանքում, այսինքն այն ահագին մեծամասնութեան համար, որը միջնակարգ և բարձրագոյն ուսում չի ստանում: Բայց եթէ ոչ այդ չափով, գեթէ մի յայտնի և զգալի չափով ապագայ կրթութեան գործը դանդաղում է նաև այն անհատների համար, որոնք տեղական բարբառով մեծանալուց յետոյ որ և է գպրոցական կրթութիւն են ստանում: Պարոցում այդ մանուկները զեռ միայն նորոնոր պիտի սովորեն գրականապէս մտածելու, մինչդեռ այդ վարժութիւնը կատարելապէս հնարաւոր է նոյն իսկ տանը, զեթ այն ընտանիքներում, ուր ծնողները տեղեակ են գրականա լեզւին:

Բայց ահա և մի հանգամանք, որը աչք կարգի լինելով հանգերձ՝ ահազին կարեորութիւն ունի ներկայ խնդրի համար:

Լեզուն մի ազգի անդամներին իրար հետ միացնող ամենազօր ըեղ դործոնն է: Հայոց ազգը այդ կողմից չափազանց զժբախտ ե եղած՝ նորա տեղական բարբառների չափազանց շատաւթեան պատճառով: Ամեն ինչ այս աշխարհում անշուշտ ունեցել է և ունի իւր բնական պատճառները: Բայց միայն սա հաստատ է, որ ցիշեալ հանգամանքը չի նպաստել Հին-Հայաստանի ոգեկան և քաղաքական միութեան գործին Բարբառները անշուշտ նոր ժամանակի արդիւնք չեն, և հնումը նոքա գալիս պիտի լինէին իրար աչք կոխելու թէ զուք չոկ էք-մենք չոկ: Զարգանում էր և ճարակ գտնում մի ինչ-որ տեղական ազգասիրութիւն՝ ոչ թէ տեղական անմեղ

առանձնաշատկութիւններ փացփայելու համար, այլ և ընդհանուր միութեան գաղափարը խախտելու համար։ Աւր բարբառ—այնտեղ իշխան։ և զատ-զատ իշխանները հէնց իրենց գոյութիւնը տեղական առանձնութեան պարտական լինելով—ոչ միայն դէմ չէին կարող լինել ազգի այլ կերպ բաժանւած լինելուն, այլ և առանձին բարբառախօսութիւնը իրենց քաղաքական գոյութեան գրաւական պիտի համարէին։

Մեր նոր ժամանակներս այդ բարբառները իրենց ոյժը պահպանել են լոկ իրեւ աւանդութիւն, առանց կրթական ու քաղաքական անհրաժեշտութեան, և նոցա իշխանութիւնը ազգի ոչ թէ չառաջաւոր հոսանքներին է ծառայում, այլ միմիայն և եթ ժողովրդի նեղնայեցութեան և անջատման։ Նոցա իշխանութիւնը այսօր պահպանում է ի հաշիւ մի աւելի բարձր, աւելի ճոխ, աւելի վսեմ, աւ ելի զարդացուցիչ լեզւի—գրական լեզւի, որը այդ յատկութիւններով հանդերձ՝ ազգային սեփականութեան առաւելութիւնն ունի, ուրեմն պիտի սիրելի լինէր նաև բոլոր գաւառներում։ Դառնալով մայրենի լեզու։ Եւ սկսելով դեռ ևս միայն գրագէտ անձերի լնասանիքներում՝ ընդօրինակման և շփման ոյժով նա իւր ճանապարհը կը հարթի նաև դէպի անգրագէտ ամբոխը։ Ժողովրդի համար դա կը լինի լուսաւորութեան, կրթութեան ու բարեկրթութեան մի անփոխարինելի աղքիւր։

Մենք վերջացնելու էինք մեր խօսքը հէնց այդ վերջին դատողութեամբ, եթէ միայն մեր գրական լեզւի երկութիւնը իւր պահանջը չանէր մեզնից՝ նոյն այդ խնդրի առիթով։ ԶԵ որ ներկայումս մեր զրականութիւնը երկու ճիւղի է բաժանւած՝ սուսահայոց և տաճկահայոց, կամ այլապէս՝ արևելեանի և արևմտեանի։ Եթէ մեր զրական լեզուն յաւակնութիւն ունի ոչ միայն մայրենի լեզու գառնալու, այլ և նորանոր սերունդների մտաւոր ու ոգեկան զարգացման միջոց լինելու, ապա պէտք է նաև որ մեր զրականութիւնը համապատասխան շափով պաշար տայ այդ սերունդներին։ Իսլա, բոլոր հանգամանքները լաւ կշուած՝ վստահ կարող ենք ասել որ այդ երկու ճիւղի զրականութիւններից և ոչ

մէկը պիտի կարենայ լնթերցողների աճող պահանջներին բաւարարութիւն տալ: Այստեղ ուղղակի հարկաւոր է որ արևմտեան բարբառով զրածը կատարելապէս մատչելի և ընտանի լինի արևելցիներիս համար, և հակառակը:

Արդ, տեղական բարբառները գալիս են այդ փոխագարձութեանը խոչնդու լինելու, որովհետեւ գաւառական բարբառների այն լիակատար իշխանութեան ներքոյ, որ կայ մինչև օրս, առանձին ուսում է պահանջւում գեռ միայն մի ճիւղին ընտանալու համար, ուր մնաց որ մի սովորական ընթերցող երկու ճիւղերին էլ կատարելապէս տիրապետել կարենայ:

Գրական լեզուն իսկապէս մայրենի լեզու գարձնելով՝ մենք այդ արգելքին յաղթած կը լինենք. որովհետեւ այն ժամանակ արևմտեան գրական լեզուն կը լինի մերոնց համար իրենց գրական բայց և մացրենի լեզուց միայն քիչ ու միշտ տարբերող լեզու, որին բնտելանալու համար հարկ կը լինի միայն մի փոքր վարժութիւն, լոկ ընթերցանութեամբ: Չոկ կը մնան միայն մանկական գրականութիւնը և այն բարձր գեղարվեստական գրաւածքների թարգմանութիւնները, որոնց արժէքը լիկուի ոգու հետ սերո կապւած է. իսկ բոլոր մնացեալը գոնէ կը դառնայ ընդհանուր սեփհականութիւն:

Մեր գարի կէսը տեսաւ գրական լեզուի բողբոջւիլը, և մենք գիտենք թէ հետևանքներով որքան լիքը եղաւ նորածիլ գրականութիւնը. այսօր, գարավերջին, նա, այդ գրական լեզուն, կէս գար քաղաքացիութիւն վայելելով գրականութեան մէջ, բաղխում է արդէն մեր ընտանիքների գուուը, նա արդէն գրաբարի ժաւաննդը չէ յայտարարում իրեն, որպէս այդ կէս զար առաջ էր, այլ արդէն իրենց ապարդիւնութիւնը և զորա հետ կապւած վիստակարութիւնը ապացուցած գաւառական զառ-զատ բարբառների օրինաւոր ժառանգն է ուզում իրեն ճանաչել տալ՝ յանուն մեր զրականութեան ապագայի, յանուն լեզւական կատարելութեան և յանուն ժողովրդի մտաւոր զարգացման:

## ԵՐԳԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԺԱՑՈՒԻՇԱՆԻ

### I

#### ԱԽ, Ի՞նչ ԱՍԵՄ...

Ա՛խ, ինչ ասեմ ես իմ եարին,  
Անգութ եարըս ինձ խաբեց.  
Աէրիս նետը դիպաւ քարին...  
Սիրտըս արնի ծով կապեց...

Բլբուլի հետ իօսք մէկ արի.—  
«Ե՛կ վարդ սիրենք ու աղջիկ։  
«Դու ալ-վարդի, ես կոյս-եարի  
«Սիրովն ապրենք երջանիկ»...

Բայց ինչ ասեմ անգութ կուսին,  
Պարուն-կեանքս մե արաւ...  
Բլբուլն հասաւ իր մուրազին,  
Սիրտըս արնի ծով դառաւ...

1897 թ. Մովկւս:

II

ԱՅ ՍԵՒ ՕՄՊԵՐ...

Ա՛յ սև ամպեր, վայ սև ամպեր,  
Սիրտըս պատեց սև ու մուժ ..  
Եարաբ ինչ էք զուք ինձ բերում —  
Արև-անձրև թէ կարկուտ ...

Յուսով-լուսով արտ եմ ցանել  
Արին թափել ու քրտինք,  
Աղջ սուրբերին մոմ եմ վառել,  
Աղօթք արել... որ երկինք  
Արտիս նացի, տունս խնացի,  
Կեանք տայ, օր տայ իմ հացին.  
Վայ բալեքիս... Ատուած չ'անի,  
Թէ որ անհաց մընացին...

Ա՛խ, սև ամպեր, ինչ էք գոռում.  
Սիրտըս պատեց սև ու մուժ ...  
Եարաբ ինչ էք արտիս բերում —  
Արև-անձրև թէ կարկուտ ...

## ԵՐԵՅՆԵՐԻ „ՀԵՔԻԱԹՆԵՐԻՑ”<sup>1)</sup>

Թարգմ. օր. Մ. Բ.-ի

ԿՈՐԱԾ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ

Այնուղ, ուր արևի ճառագայթները խաղում են ծովափի վրայ, նստած էր կեանքը:

Զեփիւռը միշտ խաղում էր նրա գանգուր. հրաշալի մազերի հետ ու նրա մանկամարդ քնքոց դէմքը միշտ ջրին էր նայում: Նա նստած սպասում էր, բայց ինքն իրան չէր կարող սղասասխանել, թէ ինչ բանի էր սպասում:

Ալիքները միշտ հեաւում էին միմեանց, աւազանին գիպչում ու յետ մղւում, տանելով իրենց հետ վարդագոյն խխունջներին և նականքը սպասում՝ էր ու սպասում:

Նա նստած էր, իսկ իր աշքերի մէջ արտափայլում էր արևի լոյսը և այնքան ժամանակ սպասում էր, մինչև որ չոգնած, ծանրացած գլուխը խոնարհւեց ու նա ննջեց:

Ացդ ժամանակ մի բան մօտեցաւ ափին և աւազի վրայ քայ-

1) Այս փոքրիկ սիրուն բանաստեղծական էտիւդների հեղինակն է Տ. Կրոնրախտ (Ծրէներ—կեղծ անուն է), որ անգլիական մի պաստորի դուստրն է և այժմ ապրում է հարաւային Աֆրիկայում, ուր իր ամուսինը ազարակատէր է. Տիկինը շատ հեղինակութիւններ ունի, որոնք գրաւել են անգլիական հասարակութիւնը իրենց թարմութեամբ և ինքնուրուն բանաստեղծական տաղանդով: Այս փոքրիկ էտիւդները համակրելի են մանաւանդ իրենց բարոլական իմաստով, որ արտալալուած է ալլաբանօրէն և բանաստեղծական գեղեցկութեամբ:

Թարգմ.

լերի ձայն լսւեց։ Կեանքը զարթնեց։ Մի ձեռք դիպաւ նրա ուսին ու մի ինչ որ արտասովոր ջերմութիւն անցաւ նրա ամբողջ մարմնի միջով։ Նա նայեց ու տեսաւ իր առաջ Սիրոյ տարօրինակ լայն բացած աչքերը—և Կեանքը նոր հասկացաւ, թէ ումն էր սպասում այդքան երկար ժամանակ։

Եւ Սէրը գրկեց ու ամուր սեղմեց Կեանքին։ Այդ գրկախառնումից ծնւեց մի հրաշագեղ ու հազւագիւտ էակ—Ուրախութիւնը։ Նրան անւանում էին Առաջին Ուրախութիւն։

Սրեգակը, որ խաղում է ջրի պարզ ու փայլուն մակերևոյթի վրայ, այդքան հիանալի չէ։ վարդագոյն կոկոնները, որոնք բաց են անում իրենց քնքոյց թերթիկները, առաջին համբոցն արևից ստանալիս՝ այնքան կարմրացտ չեն, որքան որ նա։ Նրա փոքրիկ սիրտը զարկում էր շուտ-շուտ։ Սիրելի էակը այնքան քնքոյց էր, այնքան տաք։ Նա չէր խօսում, այլ միշտ արեւի տակ գւարճանում ու ծիծաղում էր։ Թէ Կեանքը, թէ Սէրը չափից դուրս երջանիկ էին։ Նոքա իրար այդ չէին ասում, բայց ամեն մինը իր սրտի խորքում կրկնում էր։ Այսիտեան, յաւիտեան դա մեզ կը պատկանի։

Յետոյ վրայ հասաւ ժամանակը—շարաթներ, թէ ամիսներ անցան—Սէրն ու Կեանքը ժամանակ չեն շափում—երբ իրենց սիրախառն զաւակը սկսեց փոխւել։ Նա առաջւայ պէս զւարճանում, ուրախանում էր, առաջւայ պէս զայելում էր քաղցր պտուղները, բայց ժամանակ առ ժամանակ նրա փոքրիկ թաթիկները անգօր կախ էին ընկնում և ուրախ աչքերը արտասուբով լցւում։ Կեանքն ու Սէրը չէին համարձակում իրար նայել, չէին վստահանում միմեանց հարցնել։ «Ո՞նչ պատահեց մեր Ուրախութեան հետ»։ և նոքա ինքն իրենց միխթարում էին, ասելով։ «Ո՞նչ, այդ բոլորը կանցնի, վաղը նա նորից կը զւարթանաց։ Բայց օրերը անցնում էին, իսկ նոցա մօտ խաղացող երեխան աւելի ու աւելի մտախոհ էր երեսում։

Երբ մի անգամ Սէրն ու Կեանքը քնելուց յետոյ զարթնեցին, այլ ևս չգտան իրենց Ուրախութիւնը, բայց նրանցից մօտ՝ խոտի վրայ նստած էր մի փոքրիկ անծանօթ, թաղծալի, մեղմ աչքերով։ Սէրն ու Կեանքը չնկատեցին նրան և աղեկառու լալով, անցան նրա կողքից։ «Ո՞հ Ուրախութիւն, մե՛ր Ուրախութիւն, մի՞թէ քեզ յաւիտեան կորցրինք»։

Տխուր աչքերով փոքրիկ անծանօթը կամացուկ մօտեցաւ նոցա, պաղաքշանօք բռնեց երկուսի ձեռքից և իր մօտ քաշեց։ Եւ կեանքն ու Սէրը առաջ գնացին, տանելով նրան իրենց հետ եղը կեանքը խոր թախծի մէջ խոնարհում էր հայեացքը, նա տեսնում էր, որ փոքրիկի աննման աչքերի մէջ արտացոլում էր իր արտասուքը։ Եւ երբ Սէրը անհուն յուսահատութեամբ բացականչում էր. «Ես յոդնած եմ, ես ուժասպառ եմ եղել, այլ ես չեմ կարող առաջ ընթանալ. Լոյսն իմ յետես մնաց, առջևս միայն խաւար է»—մանուկը ցոյց էր տալիս վարդագոյն մատով հեռու հեռու բարձրութիւնների գագաթների վրա!, որոնք արևի լոյսով լուսաւորւած էին, և նրա խոշոր աչքերը միշտ էլ տիսուր ու մատասոհ էին, իսկ շրթունքների վրայ խաղում էր հանգարատ, քաջալերող ժպիտը։

Երբ մանրիկ, սուր-սուր քարերը կեանքի ոտքերը վիրաւորում էին, անծանօթը սրբում էր արիւնը նրա հագուստի վրացից ու քնքշութեամբ համբուրում էր նրա վերքերը. և երբ անապատում Սէրն լնկած էր ուժասպառ—որովհետեւ Սէրն ինքն էլ երբեմն ուժասպառ է լինում,—նա իր փոքրիկ բորիկ ոտքերով առաջ էր վազում տաք աւազի վրացով ու մինչև իսկ անապատում ջուր գտնում ժայռերի ճեղքերի մէջ, Սիրոյ տանջող ծարաւը յագեցնելու համար։ Փոքրիկը ծանրութիւն չէր երկուսին. նա ամենևին չէր խանգարում նոցա ու միայն պահպանում էր և քաջալերում էր ծանր ճանապարհորդութեան ժամանակ։

Երբ որ Սէրն ու կեանքը հասան մութ կիրճը, որտեղ ժայռերից կախւած էին սառցացին լուլաները—որովհետեւ Սէրն ու կեանքը անցնում են զարմանալի ու սարսափելի տեղով—երբ ամեն կողմէ սառոցց, ձիւն ու բուք էր, փոքրիկ անցորդը սեղմում էր նոցա սուսած ձեռքերը իր սրտին, տաքացնում էր ու կամաց-կամաց նոցա տանում աւելի առաջ ու առաջ։

Երբ նոքա հասան արևի ու ծաղիկների աշխարհը, անծանօթի մեծ աչքերը տարօրինակ փայլեցին ու նրա դէմքը լուսաւորեց պարզ ժպիտը։ Ուրախ վազգվերով փափուկ խոտի վրայ, նա հաւաքում էր ծառերի խոռոշների միջից մեզը ու բերում էր բար մէջ նոցա համար. շուշանի տերեւներով ջուր էր բերում, ծաղիկներ էր կարատում ու պսակներ հիւսում երկուսի համար և ու-

բախ ծիծաղում: Կեանքն ու Սէրը զգածւած էին փոքրիկի քնքութիւնից նոյնչափ, որչափ նոցա վրայ ազդում էր Աւրախութիւնը, միայն թէ սրա փաղաքշանքները աւելի ջերմ էին:

Այդպէս շարունակում էին նոքա իրենց ճանապարհը և անցնում թէ մոազը, թէ զւարթ երկիրներով, ու երբէք սիրելի փոքրիկ ուղեկիցը չէր բաժանւում նոցանից: Երբեմնակի նոքա մտաբերում էին առաջին փայլուն Աւրախութիւնը և կամացուկ հառաչում: «Արդեօք կը գտնենք քեզ նորից, մե՛ր Աւրախութիւն»:

Վերջապէս նոքա հասան այնտեղ, ուր թագաւորում է Խմաստութիւնը, այդ ծեր, տարօրինակ կինը, որ մտախոհ նստածինամքով հաւաքում է անցեալի բոլոր լուսաւոր ճառագայթները ասպագայի համար:

Եւ Կեանքն ու Սէրը բացականչեցին. «Ոհ, ամենագէտ, բացատրիր մեզ.—Երբ մենք միացանք՝ ունեցանք մի սիրելի, չքնաղէակ—Աւրախութիւն.—Երբէք արցունքը չի ծածկել նրա աչքերը՝ արեի փայլը չի հաւասարւիլ նրան: —Ի՞նչ յանցանք ենք գործելու որ նրան կորցրինք: Ասա, մւր գնանք նրան գտնելու:

Եւ Խմաստուն ծեր կինը հարցրեց. «Եթէ որ Աւրախութիւնը գտնէք, արդեօք կը հրաժարւիք ձեզ այժմ ուղեկցող անծանօթից»

Սէրն ու Կեանքը բացականչեցին յուսահատ. «Ո՛չ, ոչ:

—«Նրանից հրաժարւիլ—ասաց Կեանքը, ուրեմն իմ խոցուածմարմնից ով պիտի ծակծկող փուշերը հանէ, ով պիտի ծանր սարսափելի երազի ժամանակ իր քնքոյց ձեռքը իմ այրւող ճակատիւ դնէ, ով պիտի ցրտի ու խաւարի օրերին իմ սառած սիրաը տաքացնէ...»

Սէրը բացականչեց. «Առանց Աւրախութեան՝ Կեանքը յիրաւեժանը է, բայց առանց այս ծանօթի՝ անհնարին: Լաւ է մեռնել, քան կորցնել մեր ուղեկցին»:

Եւ ծեր իմաստուն կինը պատասխանեց. «Ո՛հ, անմի՛տներ, կոյցը բեր, այն, ինչ որ մի ժամանակ ձերն էր, նոյնն այժմ էլ պատկանում է ձեզ»:

Երբ Սէրն ու Կեանքը առաջին անգամ հանդիպեցան միմեանց, լոյս աշխարհ եկաւ կեանք սիրող էակ՝ առանց տիրութեան ու առանց սուերի: Բայց երբ կեանքի ընթացքում փուշեր երևացին,

Փրբ ստերները թանձրացան, օրերը աւելի մռայլացան, իսկ դիշերները աւելի երկար ու ցուրտ գարձան, այն ժամանակ նա կամաց-կամաց սկսեց փոխւել: Սէրն ու Կեանքը չէին ուզում այդ նկատել, մինչև որ, միանգամբ զարթնելով, նոքա չբացականչեցին. «Ո՞հ, Աստւած, մենք կորցրինք նրան, որտեղ է նայ: Նոքա չէին ուզում հասկանալ, որ ժիր երեխան—Ռւրախութիւնը, չի կարող անփոփոխ մնալ, հետևելով նոցա անապատների մէջ, ցրտերին ու ձիւնին: Նոքա չգիտեն, որ իրենց ուղեկիցը նոյն Ռւրախութիւնն է, միայն մեծացած, արիացած, կեանքի հաւատարիմ ուղեկիցը, անխոնջ ու անվեհեր, քնքոյց ու սիրող, ջերմ՝ նոյն իսկ ամենախորը ձիւների մէջ, արք՝ արևակէզ անապատներում.—Նրա անունն է Կայքեկցութիւն,—դա է ճշմարիտ սէրը:

### ՆԿԱՐՉԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Մի ժամանակ ապրում էր մի նկարիչ. նա պատկեր նկարեց: Ռւրիշ նկարիչների ներկերը աւելի, հարուստ ու ընտրովի էին, նոցա պատկերները աւելի ճոխ էին. բայց նա նկարում էր մի ներկով—դա զարմանալի, աննման ներկ էր. և մարդիկ գալիս էին նրա մօտ մէկը միւսի յետևից ու բոլորը բացականչում էին ապշած. «Որքան հիանալի է այս պատկերը, որքան աննման է այս ներկը»:

Գալիս էին և նկարիչները ու զարմանքով հարցնում իրար. «Որտեղից է դա ճարում իր այդ ներկը: Նոքա հարցնում էին և իրան նկարչին, բայց նա միշտ ժամունում էր ու պատասխանում. «Ես չեմ կարող ձեզ այդ բացատել և շարունակում էր՝ դլուխը կախած՝ իր աշխատութիւնը»:

Եւ նրա ընկեր-նկարիչներից մինը ճանապարհ ընկաւ դէպի հեռաւոր Արևելքը, գնեց թանկագին ներկանիւթեր ու պատրաստեց նոցանից շատ հազւագիւտ ներկ. բայց անցաւ կարձ ժամանակ—ու նրա պատկերը խունացաւ:

Մի ուրիշը սկսեց ուսումնասիրել հին գրքերը և աւելի թանկագին ու հազւագիւտ ներկ պատրաստեց. բայց երբ դործ դրեց իր պատկերի համար, նա անզօր, մեռած դուրս եկաւ:

Իսկ նկարիչը շարունակում էր ստեղծել ու ստեղծել: Նրա պատկերը աւելի ու աւելի սքանչելի էր գառնում, իսկ ինքը աւելի

և ազում ու թուլանում էր: Վերջապէս մի օր նրան մեռած գտան իր պատկերի առաջ: Ընկերները սկսեցին մեծ հետաքրքրութեամբ բոլոր ամանները ու ասղակեաց ներկերի շիշերը հետազոտել: բայց զուր էր նրանց ջանքը, որովհետեւ նիւթերը ոչնչով չէին զանազանում իրենց ունեցածներից: Եւ երբ նրա շորերը հանեցին, թաղման զգեստը հազցնելու համար, նորա կրծքի վրայ նշմարեցին: ուղղակի սրտի դիմաց մի հին վէրքի հետք, որ ամբողջ կեանքի ընթացքում չէր լաւացել, որովհետեւ նրա եղբները մնացել էին կոշտացած: բայց մահը, որ իր կնիքը գնում է ամեն մի արարածի վրայ, ծածկել էր և այդ վէրքը:

Նկարչին թաղեցին: Բայց մարդիկ շարունակում էին իրար հարցնել: որտեղից էր այդ սքանչելի ներկը:

Անցան տարիներ, զարեր. նկարչին մոռացան, բայց նրա երկը կենդանի է մինչև այժմս.

### ՀԵՌՈՒ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Կայ մի աշխարհ շատ հեռաւոր աստղերից մինի վրայ, ուր այնպիսի բաներ են պատահում, որոնք մեզ մօտ առաջ չեն գալիս:

Այդ աշխարհում ապրում էին մի այր ու մի կին: Նոքա միենոյն գործով էին պարագում, ձեռք ձեռքի տւած առաջ էին ընթանում ու ընկեր-բարեկամներ էին: Այդ երկոյթը երբեմն և մեր աշխարհումն է պատահում:

Բայց այդ աստղատու աշխարհում կար և այն, ինչ որ մեզ մօտ չի պատահում: Մի խիստ անտառում, ուր ծառերը այնպիս մօտ էին բուսել, որ բները իրար հետ միանում էին և ամառացին արեւը երբէք չէր էլ հասնում, կառուցւած էր մի տաճար: Օրւայ մէջ ամեն ինչ խաղաղ էր այնտեղ. բայց գիշերը, երբ աստղերը սրսպղում էին երկնքում և լուսնի լոյսից ծառերի կատարները արծաթի նման փայլում էին, եթէ մէկը մենակ մօտենում էր գիշերային հանդստութեան մէջ տաճարին, ծունկ չոքում սեղանի քարէ առնդուղքների առաջ ու կուրծքը, բանալով, այնպիսի վէրք էր հասցնում ինքն իրան, որ արիւնը կաթում էր սանդուղքների վրայ: այն ժամանակ ինչ էլ որ ցոնկանար ծնկաչոք անձը—կը կատարւէր: Եւ այդ բոլորը, ինչպէս որ ասեցինք, լինում էր այնտեղ, որվհե-

տեւ դա շատ հեռու աշխարհ է. և շատ բան այնտեղ այլ կերպ է կատարւում, քան թէ մեզանում:

Ազգակս ուրեմն այրն ու կինը անբաժան էին, ու աղջիկը ցանկանում էր իր ընկերոջը աշխարհիս ամենամեծ բարիքները: Մի գիշեր, երբ լուսնի լոյսից փայլում էին բոլոր ծառերի տերեները ու ծովի վրայ ալիքները ծածանում էին արծաթի նման, — կինը մտաւ անտառը:

Այնուեղ մութն էր, տեղ-տեղ չոր տերեները նրա ոռքի տակ լուսաւորւած էին լուսնի լոյսով, իսկ վերի ծառերի ճիւղերը խիտ կերպով միացել էին իրար: Բայց որքան աւելի առաջ էր զնում, այնքան աւելի մթնում՝ էր ու վերջապէս լոյսի ոչ մի ճառագայթ չէր կարող հասնել այդ թաւուտ վայրը: Կինը հասաւ տաճարին: Նա չոքեց սեղանի առաջ, բայց սրատասխան չը կար: Եւ նա բացեց իր կուրծքը ու սուր քարի կտորով վիրաւորեց իրան կամացուկ հոսեցին արիւնի կաթիլները քարի սանդուղքների վրայ: և մի ձայն լսեց. «Ի՞նչ կ'ուզես:

Նա պատասխանեց. «Կայ մի երիտասարդ, որ ամենից թանգն է ինձ համար աշխարհիս երեսին: «Ես կը ցանկանայի նրան տալ աշխարհիս ամենամեծ բարիքը:»

Զայնը հարցրեց. «Վյսինքն ո՞ր բարիքը:»

Սղջիկն ասաց. «Ես ինքս չը գիտեմ, բայց կը ցանկանայի, որ նրան տրւի այն, ինչ որ ամենից լաւը կը լինի նրա համար:»

Զայնը պատասխանեց. «Քո աղօթքը ընդունելի է — նա կը ստանայ այն, ինչ որ դու խնդրեցիր:»

Այն ժամանակ աղջիկը վերկացաւ: Նա ծածկեց կուրծքը իր հագուստով և դուրս վագեց անտառից այնպէս արագ, որ նրա ոտքի տակից քամու արագութեամբ դուրս էին թռչում չոր տերեները:

Այնտեղ, անտառից դուրս, լուսինը խաղաղ լուսաւորում էր երկինքը, թեթև քամին փչում էր ծովափի վրայ, ուր փայլում էր աւազը:

Նա վազեց ափի երկարութեամբ և յանկարծ կանգնեց. հեռու ջրի վրայ մի բան շարժւեց: Աղջիկը իր ձեռքը բռնեց աչքի առաջ և սկսեց ուշի-ու շով զիստել, դա նաւակ էր, որ սահում էր ծովի ապականման մասեռեութի վրայ: Ու որ կանգնած էր մակոցի:

մէջ. լուսինը չէր լուսաւորում երեսը, բայց նա ճանաչեց ամբողջ կերպարանքը: Նաւակը արագ հեռանում էր, կարծես ինքն իրան էր առաջ սահում: Լուսնի թոյլ փայլվելու պատճառով, չէր կարելի լաւ դիտելո: միենայն ժամանակ նաւակը հեռու էր ափից և քանի գնում աւելի հեռանում էր դէպի բաց ծովը: Աղջիկը վազում էր ափով, բայց չէր կարող մօտենալ նաւակին: Նրա հագուստը բացւեց կուրծքի վրայ, նա տարածել էր առաջ իր ձեռքերը, ու փայլուն մազերը փռւել էին մէջքին և ուսերին. և նա մօտիկ մի ձայն լսեց, որ հարցրեց. «Ի՞նչ է պատահելու:

Աղջիկն բացականչեց. «Սեփական արիւնովս գնել եմ նրա համար աշխարհիս ամենամեծ երջանկութիւնը. ես այսուեղ եկայ, որ նրան յանձնեմ այդ բարիքը, իսկ նա... նա հեռանում է ինձանից:

Զայնը շշնջաց. «Քո աղօթքը լսւած է. նրան տրւած է այն, ինչ որ զու խնդրել ես:

Նա կանչեց. «Ի՞նչ է տրւած նրան:

Զայնը պատասխանեց. «այն, որ նո պիտի քեզանից հեռանայ:

Աղջիկը մնաց բարացած:

Հեռու, ծովի մակերեւոյթի վրայ, նաւակը կորաւ աչքից, լոյսի գծից դուրս: Եւ ձայնը մեղմ հարցրեց. «Գ՞հհ ես դու:

Նրա ձայնը դեռ զողում էր, երբ նա պատասխանեց. «Ես գ՞հհ եմ:

Աղջկայ ոտքերի տակ ալիքները սահում, իրար հանդիպում էին ու մեղմ ցրւում ծովափին դիսէլով:

### ԳԱՅՐԵՆԻ ՄԵԴՐԱԾՆՁԵՐԸ

Բաց պատուհանի առաջ նստած էր մայրը. նրան համնում էին երեխայոց ուրախ ձայները, որոնք ներքեւ, ակացիաների տակ, խաղում էին, և տաք կէսօրեւայ օդը կամաց-կամաց լցնում էր սենեակը: Վայրենի մեղրածանձերը՝ իրենց ծաղկափողուց դեղնած թաթերով՝ ներս ու դուրս էին անում սենեակից դէպի ակացիայի ճիւղերը ու անժերջ բզզում էին:

Մայրը նստած էր ցածր բազկաթոռի վրայ, սեղանի առաջ և ինչ որ կարկատում էր: Նա հանեց իր առաջ դրւած կողովից իր գործը, որի մի մասը ընկաւ ծնկների վրայ ու կիսով չափ ծածկ իր. առաջ դրւած դիբքը: Մայրը կարում էր և հետեւում իր

ասեղի շարժումներին։ Վերջապէս ճանձերի միակերպ բզզոցը ու երեխայոց ձայների աղմուկը մի խառն շշնջոցի պէս միացաւ։ Նրան ականչին ու ասեղը սկսեց աւելի ու աւելի դանդաղ շարժիլ։ Եւ մեղուներին ու կրետները, որոնք մեղք չեն շինում, սկսեցին բարձր բզզալով, անելի յաճախ մօսենալ ու պատել նրա գլխի շուրջը։

Մանրացած, նա սեղանի վրայ տարածեց ձեռքը ու գլուխը իջեցրեց նրա վրայ։ Երեխայոց ձայները մերթ հեռու, մերթ մօտիկ էին լսում, քանի զնում աւելի էին խառնւում նրա համար ու վերջապէս էլ ոչ մի ձայն չէր ջոկում ու զգում էր։ միայն իր իններորդ երեխային, որ պահում էր սրտի տակ։ Մեղուները շարունակում էին նրա շուրջը բզզալ, իսկ մացրը քնած էր։ ու մի սքանչելի, կախարդիչ երազ տեսաւ։

Նա երազում տեսնում էր, որ մեղուները բոպէ առ բոպէ երկարանում, մեծանում են ու վերջապէս մարդկացին էակներ դառնում, որոնք բոլոր ժամանակ նրա շուրջը պատւում են։ Նոցանից մինը մօտեցաւ մօրը ու ասաց։ «Թոյլ տուր ինձ ձեռքս զնեմ այնուեղ, որտեղ զառակդ սրանկած է։ Եթէ ես նրան դիպչեմ, նա ինձ նման կը լինի»։

Մացրը հարցրեց։ «Իու հի ես։

— Ես—Առողջութիւնը, ասաց նա։ Ում որ ես դիպչեմ, նրա երակներով իսկոցն ուրախ կարմիր արիւն կը վագէ։ Նա երբէք հիւնդութիւն, գագրածութիւն չի զզայ։ իր ամբողջ կեանքը ուրախութիւն կը լինի առանց տիրութիւն և անվերջ ծիծալ։

— «Ո՞չ, ասաց միւնը, թող ինձ, ես դիպչեմ երեխային, որովհետեւ ես—Հարստութիւնն եմ։ Եթէ ես նրան շօշափեմ, նա ազատւած կը լինի նիւթականի բոլոր հոգսերից։ Եթէ որ ցանկանայ, կարող է իր եղբայրների ոյժով ու արիւնով ապրել և ամեն բան, որ նրա աչքը գալթակեցնէ, իր ձեռքում կը լինի։ Նա չի գիտենայ, թէ ինչ է Կարօտութիւնը։

Տեսիլը լոեց, իսկ երեխան պառկած էր առաջւան պէս հանգիստ ու անշարժ։

Եւ երրորդն ասաց, «Թոյլ տուր ինձ ձեռ տալ զաւակիդ—ես—Փառքն եմ։ Ես բարձրացնում եմ մարդուն բարձր բլուրների զագաթը, որտեղ բոլոր մարդիկ կարող են նրան տեսնել։ Երբ նա

կը մեռնի—նրան չեն մոռանալ. նրա անունը ամբողջ դարեր կը հնչե՞ց մէկ սերունդից միւսն անցնելով: Մտածիր, թէ ի՞նչ է նշանակում դարերի ընթացքում մոռացւած չլինել:

Եւ մայրը շարունակում էր հանգիստ ու միակերպ շնչել քնի մէջ, բայց ֆանտաստիկական տեսիլները ամեն կողմից շրջապատել էին նրան:

—Թոյլ տուր, ես դիպչեմ երեխային, ասաց էլի մինը, ես—Սէրն եմ: Եթէ ես նրան ձեռք տամ, նա կեանքի շաւիզը մենակ չի անցնի: Անցոյս, խաւար րուպէներին, երբ նա ձեռքը մեկնի օգնութեան, նա կը պատահի մի ուրիշ էակի, որ նրան կը պաշտպանէ ու կը քաջալերէ: Եթէ ամենքը նրա դէմ լինին—կը գտնուի մի արարած, որ կ'ասի. «Ես քեզ հետ եմ»:

Եւ երեխան դողաց մօր ծոցում:

Բայց երեւաց էլի մի տեսիլ ու ասաց. «Ես—Տաղանդն եմ և կարող եմ ամեն ինչ անել, ինչ որ մի անգամ եղած է: Ես վարձատրում եմ զինորին, փիլիսոփային, պետական գործողին, քաղաքադիտին, որոնք լաջողութիւն ունին, մատենադրին, որ երբէք իր ժամանակից առաջ չի անցնում, բայց յետ էլ չի մնում: Եթէ ես ձեռ տամ երեխայիդ, նա երբէք չի գանգատուի անյաջողութիւնների համար»:

Մեղուները բզզում էին մօր շուրջը, համարեա նրան դիպչելով իրենց երկար, բարակ թաթերով. իսկ երազի մէջ մի նոր տեսով յայտնուեց՝ դեղնած երեսով, խոր կնճիռներով, թշերը փոս ընկած և գողզոջուն ժպիտը շվմունքների վրայ: Նա ձեռքը երկարացրեց. մայրը յետ քաշւեց ու կանչեց. «Ո՞վ ես դուք:

Նա պատասխան չտւեց:

Մայրը նայեց նրա աչքերին ու հարցրեց. «Ի՞նչ կարող ես տալ զաւակիս—Առողջութիւն»:

Նա ասաց. «Ո՞չ, ում որ ես ձեռ եմ տալիս, նրա երակների մէջ մի սարսափելի տենդ է զարդանում, որ նրա արիւնը ցամաքեցնում է, ինչպէս կրակը: Այդ դողը կարող է միայն այն ժամանակ բժշկւիւ երբ որ կեանքն ինքը կը բժշկւի:

—«Դու տալիս ես հարստութիւն»:

Նա գլուխը թափ տեց. «Երբ այն մարդը, որին ես դիպչում

եմ, կռանում է, որ հողից ոսկին բարձրացնի, նրա ուշադրութիւնը գրաւում է երկնքի կրակը, ոսկին նրա ձեռքից դուրս է ընկնում և երբեմն ուրիշ անցորդն է բռնում։

— «Խոկ Փառք»։

Նա պատասխանեց. «Ոչ, ում որ ես դիպջում եմ, նրա համար աւազի վրաց նկարւած է այն շաւիղը, որ աշոքին տեսանելի չէ, բայց որով նա պիտի առաջ ընթանաց Երբեմն դադեպի գագաթն է տանում և յետոյ յանկարծ ուղղութիւնը փոխում է դեպի հովիտը։ Նա պիտի գնայ այդ ճանապարհով, թէև ոչ ոք բացի իրանից չի նկատի այդ շաւիղը։

— «Խոկ սէր»։

Նա պատց. «Նա սէր կը պտուի, բայց չի գտնի։ Երբ նա իր գիրկը կը բանայ սիրելի էսկին փարկլու, հեռու հորիզոնի վրաց լոյսի ճառագայթ կը նշմարէ։ Նա կ'երթաց զեպի այդ լոյսը, բայց իր գանձը չի կարողանայ հետը վերցնել։ Նա պիտի մենակ ճանապարհ ընկնի։ Կամ՝ երբ որ իր այրուղ սրախն սեղմէ թանկագին էակը և բացականչէ։ Ծ'մն, իմ մեփականը», հեռից ձայն կը լսէ։ Հրաժարուիր, հրաժարուիր, դա քեզ չի պատկանում։

— «Յաջողութիւն կ'ունենայ»։

Տեսիլը պատասխանեց. «Ո՛չ, նա անյաջողութիւն կ'ունենայ։ Երբ որ նա ուրիշների հեռ միասին կը ցանկանայ մի նպատակի հասնել, միւսները նրանից առաջ կը հասնեն, որովհետեւ տարօրինակ ձայներ նրան կը կանչեն և սքանչելի մի լոյս իր մօտ կը հրաւիրէ։ Նա ստիպւած կը լինի լսել ու սկսած Բայց աւելի զարմանալին ահա ինչ է. հեռու, հեռու, այրուղ աւագների մէջ, այնտեղ, ուր ուրիշ անձեր բացի անմարդաբնակ անապատից բան չեն նշմարի, նա կապոյտ ծով կը տեսնի։ Այդ ծովի վրայ փայլում է արեւ յաւիտեան, նրա ջրերը կապոյտ են, ինչպէս պարզ երկինքը, իսկ ջրերի մէջ խաղում է սպիտակ փրփուրը։ Մի մեծ երկիր է բարձրանում այդ ծովի միջից, ու նրա լեռների գագաթների վրաց նա փայլուն ոսկի կը տեսնի։

Մայրը հարցրեց. «Եւ նա կը հասնի այդ երկրին։

Տեսիլը տարօրինակ կերպով ժապտաց։

Մայրը ասաց. «Արդեօք դա գոյութիւն ունի։

Տերիլը պատուասխանեց. «Թիթէ ամեն ինչ խաբուսիկ չէ, Բնչը գոյութիւն ունի»...

Եւ մայրը նայեց նրա կիսաքաց աշքերին ու ասաց. «Կարող ես դիմչել»:

Տեսիլը կռացաւ, ձեռքը տարածեց քնած մօր վրայ ու ինչ որ շշնչաց. Նա կարողացաւ միայն այն խօսքերը լսել. «Դու այն պարգևել կը ստանաս, որ իդէալը վառ կը մնայ քո սրտում մինչև կեանքիդ վերջը»:

Եւ երեխան մօր սրտի տակ դողաց:

Մայրը շարունակում էր քնել նոյն ծանր քնով; բայց տեսիլ ները անյացտացան: Եւ նրա խորքում, դեռ չծնւած զաւակը երազ տեսաւ: Նրա աշքերից, որ դեռ օրւայ լոյսը տեսած չէին, նրա դեռ ոչ կազմակերպւած ուղեղի մէջ, անցաւ լոյսի զգացմունքը—այն լոյսի, որ երբէք չէր տեսած, կարելի է էլ երբէք չտեսնէր, բայց որը ուր որ գոյութիւն ունի:

Եւ երեխան ստացաւ իր պարգևը. իդէալը նրա սրտում անխախտելի ու վառ մնաց:

## ԱԽ, ՄԻՆՉԵՒ ՕՐՍ ԷԼ...

ԴՐԱ ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹ

Դ. ԴԵՄԻՌ ՃԵԱՆԻ

Ա՛խ, մինչև օրս էլ անրոյն թռչնի պէս՝  
Անտէր մնացի ցրտին ու աշնան.  
Եւ մինչև օրս էլ մնացի այնպէս  
Անսէր ու անհաց, խեղճ թափառական...

Սիրոյ ապուշին սէրս զիջեցի,  
Ցիմարին խոնարհ ունկնդիր եղայ,  
Երկար ականջին երգս հնչեցի,  
Մի ուրիշին էլ շալակս առայ.

Հարսնացու գտաց շատերի համար,  
Կենացի վրայ երկար ճառեցի,—  
Ա՛խ, նրանց համար կեանքում շատ երկար  
Եւ ջանք թափեցի և քրտընեցի...

Եւ աշքս մնաց խոնարհ խենթի պէս  
Որ ինձ էլ բոխուը կը ժպտայ մի օր,—  
Ա՛խ, դրանից էլ մնացի այսպէս  
Անսէր ու անհաց, անտէր ու մալոր...

# ՕԳՏԱԿԱՐԵՒՄ ՎՆԱՍԱԿԱԲ ՄԻԿՐՈԲՆԵՐ

(ԼՈՒԻ ՊԱՍՏԵՐԻ ԳՈՐծԵՐԸ)

ԳՈՒՍՏԱԿ ՓԻԼԻՊՈՂՈՆԻ

ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱԼՄՈՐ

Թարգ: Ֆրանսերէնից ԲԺ. Գ. ՍԱՐԳՍԵԱՆՑի

Գ. Գլուկս.

ՄԱՆՐԷԱԿՆԵՐ, ԵՒ ՀԻՒԱՆԴԻԼԻԹԻՒՆՆԵՐ

Մանրէակաւոր հիւանդութիւններ. — Բակտերիաների մշակումը. — Պաստէօրի պատւածումը. — Նորա գործադրութիւնը առողջապահութեան եւ բժշկութեան մէջ. — Հակածութիւն (antiseptie), զառումն (filtration), ախտաճանութիւն (desinfection)

Նախորդ երկու դլուխներում, որոնք նւիրւած էին խմորման երեսոյթի ուսումնանիրութեանը, մենք ծանօթացրինք յայտնի քանակութեան մանրամարմինների հետ, և ընթերցողը կարող է այժմ հետու լինել սարսափից, որ առաջացնում է մանրէակ (միկրոբ) խօսքը այն մարդկանց մէջ, որոնք այդ փոքրիկ էակներին ճանաչում են միայն հիւանդութիւններից, որ նոքա տարածում են մարդկանց մէջ: Այն, անկասկած, օգտակար մանրէակներ ել կան:

Բայց կան և այնպիսիները (և զոցա թիւլ շատէ), որոնք մեր ահաւոր թշնամիններն են: Օդը, որով մենք շնչում ենք, ջուրը, որ մենք խմում ենք, կերակուրը, որ մենք ուտում ենք, անհրաժեշտ լինելով մեր գոյութեան համար, այնուամենայնիւ կարող են պարունակել իրանց մէջ վշտալից որհասական մահու բողբոջներ:

Հարինքը (տիֆ), խոլերան, բարակացաւը և շատ ուրիշ հիւանդութիւններ մանրէական ծագումն ունին: Այս թշնամիների դէմք ժկութիւնը և առողջապահութիւնը կարողանում են մաքառել, երբեմն յաջողութեամբ, այն օրից, երբ իմացւեց նոցա գոյութիւնը և ապրելու միջոցները: Մաքրութեան յաջունի պայմանները, խելացիութեամբ դործադրւած, երբեմն արդէն բաւական են շատ ծանր չարիքներից մեզ պաշտպանելու համար:

Վնասակար մանրէակները, որոնք յարձակւում են մարդկանց կամ անասունների վրայ, մտնում են նորա մարմնի մէջ՝ կամ ուտելեղէնի և խմիչքի հետ, կամ շնչառութեան միջոցով, կամ վնասւած կաշւի միջոցով:

Մարդկային մարմինը կարելի է երևակայել իբրև մանրադիտային էակների մի ահագին խումբ, որոնք ապրում են մանրէակների նման, այն տարբերութեամբ, սակայն, որ, զանազան կերպարանք և պահանջներ ունենալով, նրանք պահպանում են մի հաւաքական գոյութիւն և փոխադարձաբար օգնում են միմեանց: Ամեն մէկ բջիջ կատարելով հանդերձ իւր յատուկ՝ գերը, բոլորը միասին աշխատում են ամբողջ խմբի կեանքի համար, և այնպիսի կատարելութեամբ բաժանւած է բոլորի աշխատութիւնը, որ ամբողջ մարմնի կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ամեն մի տարրի մասնաւոր աշխատանքի հետևանք:

Արեան կարմիր գնդակները, կլանելով թոքերի միջից թթւածինը, տանում են նրան դէպի գործարանները, որոնք ունին այդ գազի պահանջը, դէպի բջիջները, որոնք ծածկում են լորձային կամ արնային զեղձերի ներսը, առնում են արեան միջից քիմիական տնհըրաժեշտ տարրերը՝ լորձունք կամ կաթ պատրաստելու համար. ատամի միջուկի տարրերը վերցնում են անհրաժեշտ աղեր՝ առամ պատրաստելու համար, և այլն:

Այս կենդանի միութիւնները, ինչպէս շատ յաջող համեմատում է Դիւկլօն իւր «Մանրէակ և հիւանդութիւն» (Le Microbe et la Maladie) վերնագրով գեղեցիկ գրքի մէջ, իրանց գումարումով կազմակերպում են մի կատարեալ թագաւորութիւն, փոքր ի շատէ ծաղկեալ քաղաքների դաշնակցութիւն, որոնցից ամեն մէկը ունի իւր սեփական կեանքը, բայց և որոնցից իւրաքանչիւրը իւր գոյութեան համար պահանջում է յատուկ պայմաններ: Աստիկանի դեր

կատարող բջիջները պահանջում են առանձին սկզբնկ, որը պիտի բերւի նոցա բաւարար քանակութեամբ բազմաթիւ անօթների միջոցով. անօթներ, որոնք միացնում են մարմնի զանագան մասերը միմեանց հետ, մեր ճանապարհների և ջրանցքների նման: Հարկաւոր է նոյնակա որ ամեն մի բջիջի կեղուոս արաւագրութիւնը արագ ելք գտնի և որ առուների մի ցանց, ներեցէք ինձ այս ոճը, դուրս տանէ նոցա օրական արտաթորութիւնները: Հարկաւոր է, վերջապէս, որ նոքա կարողանան հազորդակցւել միմեանց հետ և հնագանդեն մի կենորոնական ոչժի, որը նոցա կը կառավարէ: Աերջին դերը պատկանում է ջղային սիստեմին, զարմանալի կերպով կողմակերպած, որի ճիւզաւորութիւնները նմանում են, իմ արած համեմատութեան մէջ, հեռագրացին թելերի ցանցին:

Առողջութիւնը հետեանք է բոլոր մասերի լաւ գործողութեան, ամեն մէկի կատարած աշխատութեան գաշնակցութեան, փոխադարձ օգնութեան, որը նոքա միմեանց հասցնում են: Տեսնենք թէ որոնք են այն պայմանները որոնք խախտում են այդ գաշնակցութիւնը: Նախ և առաջ, գա հէնց բջիջների հասակն է. այդ թագաւորութիւնը, որը այդպէս ծաղկում է իւր գոյութեան սկզբում և երիտասարդութեան տարիքում, յետոց տարէցարի կորցնում է իւր ոյժերը: Այսուհետեւ իրանց զգալ են տալիս սպառման և զառամութեան շրջանները՝ մահը վրայ է հասնում, և այդ կարող տէրութիւնից մնում են միայն ողորմէլի մասեր, փառաւոր անցեալի հետքեր, նման այն արձաններին, որոնց գտնում է հնագէտը իւր անընդհատ պեղումների ժամանակ և որոնք ցոյց են տալիս իրանց գոյութեամբ, որ մի երեկոլի քաղաք, կամ մի մեծ ազգ ապրել է այդ երկրում, որը այսօր ամայացած է:

Միւս անգամ դա բջիջների գոյութեան համար անհրաժեշտ անունդն է, որը չի սուացւել հարկաւոր քանակութեամբ. սնունդը հասցնելու համար որոշած ճանապարհը փակւելով, քաղաքը սովոր մեռել է:

Կամ, դիցուք, փակւում են արտաթորութեան անցքերը, և ինչպէս մեծ քաղաքները ապականուում են խողովակների փառ զործունէութիւնից, նոյն եղանակով մարմինը թունաւորում է արտաթորութիւնների կուտակումնից:

Վերջապէս կարող է պատահել որ յախոնի քաղաքներ կը խախտեն դաշնը, որը միացնում է նոցա միմեանց հետ. նոքա կը կամենան ապրել անկախ կեանքով. բջիջները կը սփսեն անկարգ կերպով զարդանալ և, չը հնագանդելով կենորոնի ոցին, պատճառ կը դառնան ամբողջ մարմնի նւազման կամ մահին, այս պատահում է վտանգաւոր ուռոցների դէպքում:

Այս թագաւորութիւնը, այսպէս լաւ կազմակերպած, ունի իւրահանձներում անթիւ թշնամիներ, որոնք անդադար յարձակուում են նրա վրայ Այդ թշնամիները բարբարոսներ են, որոնք միայն մի օրէնք են բնդունում՝ բազմանալու օրէնք. նոքա ունին անհատական կեանք և բաւականանում են շատ քշով, համարիա թէ ոչնչով: Դոքա ախտաբեր մանրէակներն են:

Հէնց որ մի փոքրիկ ճեղք բացւի կաշւի վրայ, այդ միկրոբները կը մօնին մարմնի մէջ, և բաւական է մի քանի ժամ երբեմն, յայտնի պայմաններում, որ վերստին քայլքային մի առողջ մարմին Բայց այսպէս չէ միշտ և, բախտաւորապէս, մարմնի լաւ կազմակերպութեան շնորհիւ, շնորհիւ նրա գեղեցիկ հսկողութեան, որ կատարում է մարմնի բոլոր սահմաններում, արշաւանքը չէ կարողանում զլուխ գալ, կամ, եթէ նա կատարում է, հէնց առաջին դրաւողները իսկոյն դուրս են մզւում երկրից կամ ջարդւում են<sup>1)</sup>.

Յայտնի պայմաններում լնդդիմադրութիւնը, թուլանալով մի քանի կէտերում, մենք կը տեսնենք որ մանրամարմինները գրաւեցին սահմանի մի քանի մասերը՝ լինի զա մնայուն ու վերջնականապէս, թէ անցողական կերպով: Ամրանալով գրաւած տեղում, մանրամարմինները կը ձգտեն նոր արշաւանքներ գործել թշնամու երկրի մէջ, բայց, եթէ լաւ միջոցներ են ձեռք առնւած, եթէ նորա սահմանները լաւ պաշտպանւած են, ապականութիւնը (ինֆեկցիան) կը մնայ իւր տեղում, և նոյն իսկ մարմինը, նոր ոյժ ստանալով կռւելու նոր տարրեր ժողովելով, կարող է դուրս քշել իւր սահմանից բարբարոսներին: Այդ բանը կատարում է շատ հիւանդութիւնների-

<sup>1)</sup> Մարմնի ինքնապաշտպանութեան մի գարմանալի օրինակ է ներկալացնում սիբիրեան ախտաը. դոքա միկրոբները արիւնի մէջ կուլ են. զնում սպիտակ գնդակներին, որոնք նոցա ուտելով ոչնչացնում են: Ծ. Հ.

Նկատմամբ. օրինակ բարակացաւը (տուբերկուլոզ), որը, որպէս տեսնում ենք, երկար տարիներ, երբեմն ամբողջ կեանքը շարունակ, մնում է սահմանափակւած մարմնի մի կէտում և որը կարող է նոյն իսկ լաւանալ առանց որ միկրոբները գրաւեն ամբողջ մարմինը:

Միւս պարագաներում մանրէակների անընդհատ աճումը, որը նոցա յաղթութեան և մարմնի գրաւման պատճառներից մէկն է, իրանց սեւական կորուսով պատճառ է դառնում. սկզբում նոքա նւաճած երկրի մէջ գտնում են հարուստ մժերը. յետոյ նոցա թիւը շարունակ բազմնաբով, վերջանում է անցողական երջանկութիւնը. այն ժամանակ թշշւառութիւնը և մահը իրանց կողմից սկսում են հալածել նոցա և, եթէ մարմնի տնտեսութիւնը մի քանի մասերում դեռ վերջնականապէս չէ քայլայւած, թագաւորութիւնը կը վերածնի իւր մոխիրի տակից և, զանազան շրջանների միջով անցնելով, կը վերականգնի անցեալ զործունէութիւնը և փայլը: Այդ պատահում է այն դէպքերում, երբ հիւանդը առողջանում է փոքր ի շատէ երկար հիւանդութիւնից յետոյ (օր. հարինք):

Վերջապէս, երբեմն, յարձակող թշնամուն ջախջախելու համար, մարմինը կարող է բարձրացնել, այսպէս ասած, առանձին զնդեր և պատրաստել, ինչպէս շատ հանճարեղ կերպով ասել է մեր ընկեր Լեզրին, բջիջների վաշտեր, որոնք ծանօթ կը լինեն յարձակող թշնամու կուելու եղանակին և որոնք վարժւած են արդէն նախորդ արշաւանքների շնորհիւ՝ կուել թշնամու դէմ և ընդդիմադրել արշաւախմբին: Առուս գիտնական Մեծնիկովը այդ յատուկ գնդերին ֆազոցիտներ անուն է տւել....

Ուրիշ դէպքում մարմինը կարող է օգնութեան կանչել ուրիշ մանրէակներ, որոնք կը գան ջախջախելու յարձակող թշնամուն....

Այս կուի մէջ, որը վարում է մարմինը ամեն օր և ամեն րոպէ յարձակող տարրերի դէմ, կարող են արդեօք միջամտել բժշկութիւնը և առողջապահութիւնը և օգնել մարմնին ազատուելու նրան վտանգի ենթարկող տարրերից: Անշնչշտա... (Դիւժարդէն. Բումէոց <sup>1)</sup>):

Վերև բերած տողերը, որոնք պատկանում են գրականութեան

<sup>1)</sup>) Dujardin - Baucietz. Conférences de thérapeutique de l'hôpital Cochin. 1<sup>me</sup> édition.

և գիտութեան մէջ շատ յայտնի մի հեղինակի, բացատրում են մեզ, բնապէս բժշկութիւնը կարող է կատարել ինքն իրան, և որ նա հետեւանք է մի կուի, որը տեղի է ունենում բնական տարրերի, որոնցից կազմւած է մարդուս մարմինը, և ախտաբեր մանրէակների մէջ:

Բժշկական կամ խիրուրգիական (վիրաբուժային) միջամտութիւնը այժմ շատ աւելի յաճախ է, քան երբ և իցէ, չնորհիւ այն բանի, որ այժմ յայտնի են վնասակար տարրերը: Առողջապահութեան դիտութիւնն էլ այժմ շատ հարստացել է պաշտպանողական միջոցներով:

Յայտնի միջոցներ, որ ախտահան անունն են կրում, որոնց մասին կը խօսենք մի քիչ յետոյ, այժմ սովորական միջոցներ են, և պատշաճութեամբ գործ ածելիս, բժշկում են կամ դէպքերի առաջն են առնում, մինչդեռ, անցեալում, յայտնի հիւանդութիւններ անխուսափելի մահ էին բերուց կամ վտանգաւոր բարդութիւններ առաջանում:

Մինչև Պաստէօրի դիւտերը օպերացիա անող խիրուրգը զգուշութիւններ էր գործադրում և յայտնի խնամք էր տանում մաքրութեան համար, լւանալով, օրինակ, կորւելու մասերը կարբոլեան ջրով: Բայց նոքա բաւականանում էին նրանով որ գործիքները զցում էին գոլ ջրի մէջ և յետոյ սրբում: Նրանք մինչև անգամ կարող էին ասել. աւրիւնը կը լւանայ գործիքները: Այն վատ լւացած գործիքների վրայ, ի հարկէ, լինում էին բաքտերիաներ, և նաշտարը յաճախ հիւանդի համար մահացու կործիք էր գառնում: Միմիացն սապոնով լւացած մատների վրայ բժիշկը կրում էր ախտաբեր մանրէակների գաղութներ. նրա ձեռները, որ նա զնում էր նրան հաւասարող հիւանդի վերքի վրայ, ցանում էին մահացու սերմեր:

Խոկ աշխօր խիրուրգների ամենահամարձակ ձեռնարկութիւններն խոկ պատկւում են կատարեալ յաջողութեամբ, որովհետև ամենը, ինչ որ կալչում կամ մօտենում է հիւանդին օպերացիայից առաջ, օպերացիայի ժամանակ, կամ յետոյ, մաքրւած է վտանգաւոր մանրէակներից:

Ախտահան միջոցների մէջ ամենառեւժեղը և ամենագործածականներից մէկը է սուլեման, որը շատ վտանգաւոր թոյն է:

Եւ ահա լուծւած սուլեմի կամ, աւելի լաւ, լուծւած կարբութեան թթուի մէջ պահպառմ են գործիքները, որոնք նշանակւած են

օպերացիայի համար: Սրբում են նոցա նոյնպէս ախտահանած շորերով, նախ և առաջ լւանալով իրանց ձեռները ախտահան հեղուկի մէջ: Այդ հեղուկով նոյնպէս մաքրում է վերքը. բամբակը, որը գործ է ածւում վերքի համար, նոյնպէս ախտահանած է: Ոչ մի օգնական չի մօտենում և չի միջամտում օպերացիային, մինչև որ ախտահան միջոցներ չէ գործադրել, չի լւացւել և չի հաղել ախտահանած սպիտակեղին:

Եթէ բոլոր յառաջարգել (պրոֆիլակտիք) պացմանները կատարւած են, այն ժամանակ օպերացիայի յաջողութիւնը լնուանրապէս ապահով ած է:

Այն օրից երբ գործ են ածւում պրոֆիլակտիք միջոցներ ախտաբեր մանրէակների գործունէութեան դէմ, թարախացին հիւ անդութիւնները, ինչպէս Անտօնեան կրակը (կամ փութախտ) և ուրիշներ, այլ ևս չեն թագաւորում հիւանդանոցների և բժշկական ծառայողների մէջ, ինչպէս շատ յաճախ պատահում եր առաջներում:

Այժմ խիրուրդը (վիրաբոյժ) մի օրում կարողանում է բազմաթիւ ամեսածանր օպերացիաներ անել փորի գործարանների կամ ուղեղի վրայ, և մեծ յաջողութեամբ:

Մենք հիմա կը տեսնենք այս գլխում թէ ինչպէս Պաստէօրը, որոշելով մանրամարմինների կատարած դերը խմորման գործում, ձեռնարկեց ապացուցանելու մանրէակների դերը հիւ անդութիւնների վերաբերեալ, և ինչպիսի լոյսով լուսաւորեց բժշկութեան, մինչ այդ անծանօթ, դաշտի հորիզոնը:

Ահա ինչու այն գովեստները, որ գրւում են Պաստէօրի հասցէով, երբէք չեն հասնի այդ փառաւոր գիտնականի մարդկութեանը արած ծառայութիւնների բարձրութեանը. գիտնականի, որի ամբողջ կեանքը գիտերի և գիտնական աշխատաւթիւնների ահագին շարք է ներկայացնում:

Մենք հեռու ենք մաքից՝ ամփոփել այս աշխատութեան մէջ մեծ գիտնականի գործերի պատմութիւնը. մենք միայն կարող ենք այսուղ նշանակել նորա առաջին գիտերը:

Ոիբիրեան ախտի բաքտերիաների վերաբերեալ գործերն են, որ

Պատահէօրին մղեցին զուտ գիտնական շրջանից դէպիթքչկական շրջանը։ Ո՞վ չգիտէ սիրիրեան ախտը գէմիւր սոսկալի անունով։ Յամախ այս սարսափելի հիւանդութիւնը, որը սակայն բախտաւորապէս սակաւ է պատահում մարդկանց մօտ, կպչում է նրանց, որոնք, իրանց արհեստի շնորհիւ, ստիպւած են ձեռք տալ անային կենդանիների՝ մասնաւորապէս եղան և ոչխարի՝ գիակները, որոնք սատիկել են այդ ախտից։ Ազդ հիւանդութիւնը կարող է նոյնպէս տարածւել ճանճերի միջոցով, որովհետեւ նոքա, նստելով դիսկների վրաց, իրանց թաթիկների մազերով վերցնում են բազմաթիւ մանրէակներ։ Եթէ այդ ճանճը նստէ մարդու վնասւած կաշւի վրաց, բնականաբար կը ցանէ նրա մէջ բաքտերիաներ։

Իւր վարակելու և վտանգաւոր հետեանք ունենալուն պատճառվ սիրիրեան ախտը կոչում է վտանգաւոր պղուկ (rustulus malignus)։ Նա սկզբում երևում է մի փոքրիկ բջտիկի ձևով, շրջապատւած կարմիր, կոլոր շրջանակով և լիքը հեղուկով։ Նա, մրմնջում է բչտիկը պայմենով։ Նրա մէջտեղում երևում է մի կոլոր մէխ, որը արագ մեծանալով սեանում է։ Միենան ժամանակ կարմիր մասի շուրջը ծագում են ուրիշ բջտիկներ, նման առաջինին։ Հիւանդուդութեան ասպատակութիւնը մարմնի մէջ կատարւում է աննշմարելի կերպով։ առաջին նշաններից մի քանի օր անցած հիւանդը սկսում է տաքացնել, շնչառութիւնը խսնգարւում է, փորը լուծում, սիրոը խառնում, և նա համարեա օրհասական կերպով մեռնում է։

Սիրիրեան տխողը կարող է հաւասարապէս ներս մտնել և աղիքների միջով և տաքութիւն առաջ բերել։ Առաջ սկսում է սաստիկ փորացաւ, ցետոց հիւանդը փախում և լուծում է, և մի քանի օրից յիշոց մեռնում է, ինչպէս խողերացից։

Այս հիւանդութիւնը թէեւ սակաւ է պատահում մարդկանց մէջ, սակայն նա համաձարակով տարածւում է անսառնների մէջ։ Վերջիններս, բռնեելով այդ հիւանդութիւնով, մի քանի ժամում սատկում են։

Հարկաւոր չը համարելով այսուղ սիրիրեան ախտի մասնաւոր և լիակատար ուսումնասիրութիւնը տալ, անգամ մանրէական տեսակէտից, մենք կը բաւականանք միայն հարցի պատմութիւնը գծադրելով։

1850 թւին Ռուայէ և Դաւէնը պատւաստեցին սիբիրեան-ախտը անասուններին, սրսկելով նոցա արեան մէջ մի արիւն, որ վերցրած էր ուրիշ հիւանդ անասունների փայծաղից: Նոքա քննեցին այդ միջոցով սատկացրած անասունների արիւնը և առաջին անգամ նշմարեցին: Փողը իկ անշարժ ծեղերի գոյութիւնը. այդ՝ սիբիրեան ախտի բաքտերիաներն էին: Բայց նոցա զիւտը սահմանափակւում էր միայն այս ֆակտով: Դրանից յետով սիբիրեան ախտի բաքտերիան մնում էր խառն մի ուրիշ մանրամարմնի հետ, որը միշտ ընկերակցում էր առաջինին. դա փոխէ վիրեիօնն է, որը, ինքն ըստ ինքեան շատ վատնգաւոր լինելով, բոլորովին տարբեր գեր է կատալ ում, մասնակցելով նեխութեան գործին: Մինչդեռ նրա ընկեր սիբիրեան ախտի բացիլլը միշտ անշարժ է, նեխութեան վիբրիօնը, ընդհակառակը, անդադար շարժւում է շատ բնորոշ կերպով:

1877 թւին Պաստէօրին յաջողւեց բաժանել այդ երկու մանրամարմինները միմեանցից. նա առանձնացրեց և աճեցրեց բացիլլ-անթրաքսը (hæcillus anthracis) միայնակ: Այն ամանը, որի մէջ ցանած էր բացիլլը<sup>1)</sup>, պարունակում էր մի բուլլիօն, որը բոլորովին համապատասխանում էր նրա սնունդի պահանջներին:

Այդ, ըստ երեսոյթին հասարակ, գործողութիւնը բաւականին մանրակրիտ բան է:

Բաւական չէ սիբիրեան ախտի բացիլլը առանձնացնելու համար գտնել բուլլիօնի մի փորմուլ, որը նպաստաւոր լինի նրա աճման համար և աննպաստ նեխացին վիրեիօնի կեանքի համար. անհրաժեշտ էր նոյնպէս և ուրիշ զգուշութիւններ ձեռք. առնել, որպէս զի քչացնւի կամ բոլորովին ոչնչացնւի օտար բողբոջների ներկայութիւնը բուլլիօնի մէջ. այդ պատճառով հարկաւոր է ախտահանել ասեղը, որով ցանում են մանրամարմինները բուլլիօնի մէջ,

<sup>1)</sup> Առաջին գլխում մենք տեսանք որ Պաստէօրը, գարեջրակին խմորի բողբոջումը առաջ բերելու համար, փորձեց ցանել սերմը մի հեղուկի, մէջ, որը կը մատակարարեր բջիջներին անհրաժեշտ նիւթեր նոցա մնունդի համար: Ընդհանրապէս այս մեթոդի գործադրութիւնն էր, որ թուլ էր տալիս այդ գիտնականին պատրաստել զանազան բուլլիօններ յատկապէս մի տեսակ մանրամարմին աճեցնելու համար և որը ուրիշ տեսակին պատկանող մանրամարմին վնասուակար էր:

փորձ անողի մատները, անօթը և վերջապէս հիւթերը, որից պատրաստում է բուլլիօնը. նամանաւանդ վերջիններս, որովհետեւ նոցամշ մանրէակները արդէն գործում են բազմանալու ամենալաւ պայմաններում:

Առանց մտնելու արւեստի մանրամասնութիւնների մէջ, մենք այժմ կը բերենք մի օրինակ թէ ինչպէս են մանրէակագէտները (բաքտէրիոլոժիստ) կատարում իրանց փորձերը, գործադրելով Պատմէօրի սկզբունքները:

Մենք կը վերցնենք մասնաւոր օրինակներ, որոնք կը հասկացնեն հիմնապէս ընդհանուր մեթոդը:

Հարկաւոր է ցանել ուսումնասիրւող մանրամարմինը նպաստաւոր, սննդարար միջավայրի մէջ. վերջինս պիտի կազմած լինի արւեստական կերպով փորձ անողի ձեռքով. դա կը լինի, դիցուք, հաւի բուլլիօն՝ հաւի խոլերա զարգացնելու համար:

Սհա թէ ինչպէս են պատրաստում ամենագործածական աճման բուլլիօնը: Վերցնում են բոլորովին լզար միս (տաւարի, թռչունի, ձկան, նայած պահանջին) և լաւ եփում են ու աղ են անում. յետոց նորա թթւութիւնը ոչնչացնելու համար աւելացնում են սոված Որպէս զի բուլլիօնը ցրտելուց ամրանաց ժելէի նման, նոյնպէս և մանրամարմինների յատուկ ձաշակին համապատասխանելու համար յաճախ նրան աւելացնում են ժելատին (ոսկորների սառած հիւթը): Քամելուց յետոյ թողնում են որ բուլլիօնը հովանաց մի ցուրտ տեղ, և ահա աճման բուլլիօնը պատրաստ է:

Հովացնելուց յետոյ անկասկած բուլլիօնի մէջ ապրում են զեռ մեծ քանակութեամբ մանրէակներ, որոնք պատրաստ են սկսելու իրանց գործը: Հարկաւոր է նոցա ոչնչացնել, այսինքն ախտահանել (stériliser) աճման շրջավայրը:

Նախ և առաջ բաժանում են ժելատինը փոքրիկ խողովակածե ամանների մէջ կամ տարածում են փոքրիկ ապակեաչ ափահների մէջ, նայած թէ ինչ ձեռով են ուզուած աճեցնել գաղութները:

Վերցնենք օրինակ խողովակածե ամանները: Նոցա բերանները փակում են մաքուր բամբակէ խցաններով և ամբողջը ենթարկում են ջրի գոլորշիի աղդեցութեան: Այդ տաքութիւնը կոտորում է բոլոր մանրէակներին, որոնք կարող էին գտնւել ամանների, բամբակի կամ բուլլիօնի մէջ:

Բայց՝ բաւական չէ եռացող ջրի դոլորշիի տաքութիւնը, որ աղէս զի կոստրւեն բոլոր կենդանի բողբոջները. գորա համար հարկաւոր է առելի զօրեղ տաքութիւն. այդ ստացւում է այնպէս, որ գոլորշին ենթարկում են ճնշման, որի հետևանքը լինում է ջրի տաքութեան բարձրանալը:

Այն մեքենան որի մէջ հակախտում են առարկաները, ենթարկելով նոցա տաքութեան և ճնշման ազդեցութեան, անւանում է աւտոկլաւ:

Դա մի մետաղեայ կաթսաց է, որի խոռվը ամուր ծածկւած է և որը օժակած է աղահովութեան խթանով և ջերմաչափով:

Փորձը ցոյց է տւել որ 115° աստիճանում (Յելսիուսի ջերմաչափով) բոլոր մանրէակները կոտորւում են:

Բայց չի կարելի հակախտել այդպիսի բարձր աստիճանի տաքութեամբ այնպիսի առարկաներ, որոնք լուծւում են կամ գոլորշիանում են 115°. ից ցած, դոցա համար հարկաւոր է դիմել ուրիշ միջոցների, որոնց մասին մենք չենք խօսի, քանի որ անհրաժեշտ կը լինի նոնել մանրամասնութիւնների մէջ:

Դիցուք ամանները հանած են աւտոկլաւից, նորքա հակախտած պատրաստ են: Բամբակը, ինչպէս փորձը ցոյց է տալիս, չի թողնում անցնել իւր միջից մանրամարմիններ, որոնց տարածում է օդի փոշին: Յրաեցնելուց յետոյ կուսական միջնավայրը պատրաստ է ընդունել և աճեցնել այն մանրամարմինները, որոնց մենք ուզում ենք այնտեղ աճեցնել:

Ենթադրենք թէ հարկաւոր է ուսումնասիրել արիթրեան ախտի բացիլներին և այն թէ ամանները պարունակում են այն բուլիօնը, որը շատ լաւ համապատասխանում է այդ միկրոբի պահանջներին: Փորձ անողը վերցնում է մի բարակ լմնոսկեաց ասեղ և անց է կանչնում նորան մի քանի անգամ ալկոհոլի (սպիրտի) ճրագի բոցի մի ջուլ: այնուագայ տաքութեան մէջ այն մանրամարմինները, որոնք կարող են գտնել ասեղի վրայ, այբուում են: Ասեղը իսկոյն հովանում է: Զգուշութեամբ ասեղի ծայրը մտցնում են պտուկի մէջ (սիբիրականի), ժելատին պարունակող խողովակածե ամանը բացում են, աշխատելով չկալչել մատներով բամբակի այն մասին, որը ծածկելու է ամանի բերանը: Ասեղի ծայրը իսկոյն իրում են ժելատինի մէջ

ցածից գէսի զերև, որ ասել է թէ ամանը պիտի պահած լինի խլսիվեր։ Սառած ժելատինը իւր բարձրութեան շնորհիւ չի թափւում ամանից, և այս գէսլքում օդի փոշին դժւարութեամբ է մըտնում խողովակի մէջ։ Ամանի բերանը կրկին ծածկում են բամբակէ խթանով և զնում մի ապահով տեղ։ Խօնէ այդ տեղի տաքութիւնը բարեյածող է, մանրամարմինները, որոնք վերցրած են ասեղով պառուկի միջից, կը զարդանան և շուտով կը կազմեն ժելատինի մէջ մի գաղութ, որը բաղկացած կը լինի անթիւ սիբիրախտեան բացիլներից։

Եւ այդ գաղութը ամբողջապէս կ'ունենայ միւնոյն ձեւը բոլոր ամանների մէջ, ուր ցանած է միւնոյն բացիլը և ուր գտնւում է նոյն բուլիսնը։ Եւ այդ ձեւը կը լինի բնորոշ նա կը սովորցնէ մեզ բազմաթիւ գաղութների մէջ ճանաչել բացիլանթրաքսի գաղութը։

Աւելցնենք որ այն ժամանակը, երբ գաղութները զարգանում են մաքուր բուլիսնի մէջ, վերջինս ենթարկում է փոփոխութեան՝ ոչ միայն քիմիապէս, քանի որ նա սնուցանում է մանրէակներին աճման ժամանակ, այլ և ֆիզիկապէս։ Անող բաքտերիանների տեսակին համաձայն ժելատինը կամ պղորուում է, կամ հեղուկ է գառնում և այլն. և որքն նշանաւոր ցուցմունք է դա փորձ անողի համար. դորա շնորհիւ վերջինս կարողանում է ճանաչել մանրէակների տեսակը։

Կան և ուրիշ միջոցներ մանրէակները աճեցնելու համար, բայց նոքա մեծ մասամբ վերը բերած ձեւի զանազան փոփոխութիւններն են ներկայացնում։

Մենք կ'աւելցնենք նորան մի քանի նկատողութիւններ միայն սառն հակախութեան վերաբերեալ, որի ամենապարզ տեսակը զտելն է։ Թաելը գործադրուում է օրինակ այն գէսլքում, երբ հարկաւոր է հակախուել մի բուլիսն, որը չի կարող դիմանալ տաքութեան ազդեցութեան առանց փչանալու։

Ամենազործածական զտիչը այժմ՝ Շամբերլանի<sup>1)</sup> զտիչն է, որը նման է մի ծակոտիկաւոր հողէ մոմի, որի պատրոցի տեղը զատարկ է, միայն ներքեւի ծայրը բոլորովին փակ։ Այդ մոմը ամբա-

<sup>1)</sup> Շամբերլան, Փրանսիացի գիտնական, Պաստէօրի աշխատակիցներիցն է։

Ծան. Թարգ.

ցրած է մի ուրիշ ամանի մէջ, բայց այնպէս որ նորա բերանը մնում է՝ դուրսը. զտուող հեղուկը ամանի միջից յայտնի պայմաններում անցնելով մոմի պատերով՝ դուրս է գալիս նրա բերանից բոլորովին զտած։ Ահա լիդհանուր գծերով զտիչի գտղափարը։

Սակայն նորից վերադառնանք սիրիրեան ախտի բաքտերիացին։ Մենք նորան տեսանք առանձնացրած Պատոէօրի ձեռքով ժելատինի բուլլիօնի մէջ, որը թոյլ էր տալիս գիտնականին աճեցնել նրանց կատարեալ ընտանեկան կերպով։ Յեսոյ Պատոէօրը ապացուցեց որ այդ ահուելի բացիլլները ծերանալով կորցնում են իրանց թունաւորութիւնը և, եթի նոցա թունաւոր զօրութիւնը նւազել է, եթէ նոցա մացնենք այն անասունների արեան մէջ, որոնք ընդունակ են վարակւելու սիրիրեան ախտով (ինչպէս եզները և օչխարները) — վերջիններս այնուհետեւ ազատ են լինում։ այդ սոսկալի հիւանդութիւնից։ Կենդանիները պատաստած են։ Տեսնում էք թէ ինչ ահազին ծառայութիւն է գիւղատնտեսութեան և ամբողջ մարդկութեան համար Զէսնէրի գիւտի (ծաղկի պատւաստումը) այդ խելացի գործադրութիւնը։

Բաքտերիական թոյնի նւազեցումը, որը թոյլ է տալիս պատւատել, առաջին անգամը գործադրեց Պատոէօրը հաւերի խոլերացի դէմ, ցոյց տալով այդպիսով այդ պատուհասի դէմ կուելու միջոցը։

Ահա այդ գիւտի և փոքրիկ անասունների վրայ նորա յաջող գործադրութեան շնորհիւ էր, որ Պատոէօրը արժանացաւ ազդի երախտագիտութեան։

Այդ մեթոդը<sup>2)</sup> զարգանալով հետեցրեց շների կատաղութեան և նրանց կծածի դէմ արած գիւտը, կատաղութիւն որի մանրէակացին ծագումը զեռ ճշտիւ ապացուցւած չէ։ Պատոէօրի նշանաւոր աշխատակիցների օգնութեամբ, Խու և Շամբերլան, և նրան հետեւող փառաւոր աշակերանների շնորհիւ, ինչպէս պ.պ. Դիւկո, Շանտմես, Գրանչէ, Սորօս, Դիւբէօք և Լըսաժ, և այլք, նոր ուղղութեամբ արած գիւտերը արագութեամբ բազմացան Ֆրանսիացում և ուրիշ երկիրներում։

<sup>2)</sup> Տես նոդապէս իմ լողւածու «Եիճաբուժութիւն» «Մուրճի» մէջ 1895 թիւ № 12։

Պաստէօրի առաջին ինստիտուտը հիմնւած է Պարիզում։ Նա բացւած էր մասնաւորապէս կատաղած շան կծածով հիւանդների համար, և ացդպիսի աշխատութիւններին վերահաս էր ինքը ուսուցչապետը։

Ցիշենք այսուեղ անցողաբար և փառաբանենք մի հերոսի լիշտակի, որին այս նոր զիտութիւնը նահատակեց փառաւոր մահով։

Դա երիստասարդ Լուի Թիլլիէն է, որը հազիւ գուրս եկած բարձրագոյն դպրոցից, մեռաւ Եգիպտոսում խոլերայից, որը նա դնացել էր այնտեղ ուսումնասիրելու, որովհետև այնտեղ այդ ժամանակ շատ սաստիկ ստարածւած էր լիշեալ հիւանդութիւնը։

Հակախտական միջոցները գործ են դնում ոչ միայն զիսնականները իրանց աշխատանոցներում մանրէաբանական աշխատութիւնների համար, որպէս և խիրուրգները ու բժիշկները, այլ նոքա գործադրում են նոյնպէս և աւելի մեծ ծաւալով փողոցները և զանազան առարկաներ ախտահանելու համար համաճարակի ժամանակ, կամ նոյնպէս հիւանդների առողջանալուց կամ մահից յետով ախտացին սերմերը կոռործելու համար։

Այդ միջոցների գործադրութիւնը այնքան պարզ և հասարակ է որ հեշտութեամբ կարելի է տարածել բաղաքներում և զիւղերում և, մասնաւանդ, սովորցնել ուսումնաբաններում։

Ախտահան միջոցների մէջ, ինչպէս առաջ էլ ասացինք, սուլիման և կարբոլեան թթուն գլխաւոր տեղն են բռնում։ Մենք օգտակար ենք համարում առաջ բերել այսուեղ ախտահանների մի փոքրիկ ցուցակ յայտնի կարգով։

### I Ամենաուժեղ ախտահաններ.

	գրամմ գրմ. զրի համար
Սուլիմա (Hydrargyrum bichloratum) . . .	0,07      1000
Բորակաթթւային արծաթ (argentum nitricum). . . . . . . . . . . . . . . . . . .	0,08      »

### II Շատ ուժեղ ախտահաններ.

Եօդ .	0,25      »
Ծծմբաթթւային պղիիհա (cuprum sulfur.) . . .	0,90      »

## III Աւժեղ ախտահանիչներ.

Երկ-խրոմային կալի (kalium bichromicum) . . . . .	1,20	»
Խլորային ցինք (Zincum chloratum) . . . . .	1,90	»
Թիմոլ (Thymolum) . . . . .	2,0	»
Կարբովեն թթու . . . . .	3,20	»
Կալի հիպերմանգանիք (kalium hypermang.)	3,50	»
Պաղեղ (շապ, alun, ծորա) . . . . .	4,50	»
Տաննին. . . . .	4,80	»

Վերջապէս կան և ուրիշ ախտահաններ, որոնք շատ իշուլ են. ինչպէս օրինակ բորիքային թթու (acid. boricum) (7,50 գրամմ ջրի մէջ), սալիցիլային նատր (natr. salicylicum) 10,0), ալիոնոլ (95,0), ծովային աղ (165,0), զլիցերին (225,0):

Ախտահանների գործադրութիւնը շատ պարզ է: Հարկաւոր է լուծել նոցառաք ջրի մէջ այն քանակութեամբ, ինչպէս ցոյց է տւած վերել բերած ցուցակի մէջ, օր. 2 գրամմ խլորային ցինք 1000 գրամմ (մի լիսր) ջրի մէջ, և այդ հեղուկով լւանալ ախտահաններու առարկաները: Վերջին գործողութեան համար հնարած են զանազան տեսակ մեքենաներ (առուլերիքատորներ), որոնցով փչում են ախտահան հեղուկը ախտահանների վրա:

Այս տեսութիւնը անկատար կը լինէր, եթէ չխօսէինք յայտնի գաղերի ազգեցութեան մասին, ինչպէս և Փիգիկական ազգեցութիւնների մասին՝ ցրտի և տաքութեան:

Բորսկային կամ խլորային թթուի գոլորշին, խլորը կամ ծծլմբային թթուն—այդ բոլորը փորձւած ախտահան գաղեր են:

Միմիացն ծծմբային թթուն, որը սաացւում է ծծումբ այլեւուց, գործադրւել է հին ժամանակներում, երբ դեռ մանրէակների գոյութիւնն անգամ չէին կասկածում. ծծմբային գոլորշին դործ էր ածւում օդի մաքրութեան համար:

Ադիսեւոը մաքրեց արքունիքը կոտորածից յետոյ, այբելով ծծումբ (Ադիսական, երգ XI):

Օւիգիոսը ասաց հովիւններին «սրսկէք մաքրութեան ջուր ոչխարների վրայ և այրէք ծծումբը կապոյտ բոցի մէջ» (Fastes, դլ. IV):

Պինիոսը պատմում է որ Միլյում մի քարայր կար, որտեղից դուրս էր գալիս ծծմբային, գոլորշի և թէ բնակիչները՝ լայնացնում էին նորա մուտքը համաճարակի առաջն առնելու համար:

Ծծմբային թթուն, իսկապէս, փառաւոր կերպով մեռցնում է կեանքը և, ինչպէս ախտահանի՛, նորա ոյժը յատկապէս ապացուցած է Դիւժարդէն. Բոմետցի փորձերով։ Այս զագը նոյնպէս շատ յաճախ գործ է ածւում նաւերի, անկելանոցների և բանտերի ախտահանութեան համար։

Նորա գործադրութիւնը շատ հասարակ է։

Հարկաւոր է զիցուք ախտահանել մի սենեակի Սենեակի բոլոր լուսամուտները լաւ գոցելով վերցնում են կրակ մի ամանի մէջ, և դնում են սենեակի մէջտեղում և կրակի վերայ ցանում են բաւականաչափ ծծմբային փոշի. յետոյ, սենեակից դուրս գալով, լաւ փակում են գուռը։ Ծծումբի գոլորշին այնուհետև կը կատարի իւր դործը, մտնելով պատերի, առաստաղի, յատկակի բոլոր ծակ ու ծուկերը և սպասելով այնտեղ թագնւած մանրամարմիններին։ Նա ախտահանում է նոյնպէս և զանազան կահ-կարասիներ և շորեր առանց փչացնելու նրանց։

Այժմ մի քանի խօսք Փիդիկական գործոնների մասին։ Մանրամարմինները զիմանում են շատ ցած աստիճաններին (110 աստիճանի)։ Ցուրտը կանգնեցնում է մանրէակների աճումը, բայց նոցաչէ սպանում։

Տաքութիւնը, ընդհակառակը, ինչպէս մենք ասացինք այս գլխի ընթացքում, ամենահաստատ ախտահան միջոցներից է և նա յայտնի է եղել հին ժամանակներում։ Մովսէսը կրակ էր տալիս վարակիչ բնակարանները։

Ճշգրիտ փորձերը ցոյց են տւել որ  $100^{\circ}$  (Յելսիուսի ջերմաշափով), որ հաւասար է  $80^{\circ}$  Ռէօմիւրի) խոնաւ տաքութիւնը (եռացող ջրի գոլորշին) բաւական է որ վտանգաւոր բողբոջները կոռորդեն։ Այսուղից գործնական եղրակացութիւն, որ կասկածաւոր հեղուկը խելու համար գործադրելուց առաջ հարկաւոր է եփ տալ։ Բայց չոր տաքութեան մէջ մանրամարմինները կոտորւում են միայն 140 աստիճանում։

Այս գլուխը մենք կը վերջացնենք կրկին առաջ բերելով՝ Դիւ-  
ժարդէն-Բոմետցի կարծիքը ախտահանութեան մասին:

ԱՄիակ ախտահանը, ասում է յիշեալ հեղինակը, խոնաւ տա-  
քութիւնն է, երբ նա համում է 110-ից մինչև 115 աստիճանի  
(Յելսիուսի). բայց քանի որ այս տաքութիւնը չի կարելի գործադրել  
այն բոլոր պարագաներում, երբ ախտահանութիւնը անհրաժեշտ է,  
ուստի հարկաւոր է դիմել հեղուկացին և գազացին ախտահանների.  
հեղուկ ախտահանների մէջ առաջին տեղը բռնում է սուլեմոն,  
որը անզուգական է, յետոյ ծծմբացին պղինձը. գազացին ախտա-  
հանների մէջ ամենալաւն են ծծմբացին թթուն և խլորը:

Դ. Գլուխ.

### ՄԱՆՐԱԿՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Բաթքուհիաներ.—Նոյա զվարուր տիսակները. — Խնքնարեր ծագումը

Մենք համարեա վերջացրինք, շատ կարճառոս կերպով, մանրա-  
մարմինների վերաբերեալ Պատոհօրի կատարած գործերի տեսութիւնը.  
բայց ընթերցողի մոքում մնաց մի չը պարզւած կէտ' թէ Բնէ բնու-  
թիւն ունեն իրանք, այդ անսահման փոքրիկ էակները, որոնք ամ-  
բողջ բնութեան մէջ առաջնակարգ գեր են խաղում:

Մենք սկզբում խօսեցինք ալկոհոլացին, քացախացին, կաթնացին,  
իւղացին և աւշացին խմորումների մասին և փոխիլը նմանեցրինք  
խմորման. սիբիրախտի մանրէակը մեզ տարաւ գեսղի բժշկական  
խորհրդածութիւնները:

Գործող մարմինը մենք անւանում էինք երբեմն խմոր, կամ  
խմորիչ, կամ միկրոկոկ, կամ բացիլ. իսկ մանրէակ անոնը համա-  
րեա թէ չէինք գործ ածում:

Սրգեօք հետաքրքրական չի լինի մի գաղափար տալ նորա մա-  
սին թէ Բնէ աեղ են բռնում այս մանրէակները կենդանիների եր-  
կար շղթայում:

Նոյա բնական պատմութիւնը գեռ ևս բաւականին մուժ է.  
սակայն մի քանի կէտեր արդէն պարզւած են:

Նոյա պատկանում են ստորակարգ բոյսերի մի խմբի, որը կոչ-  
ում է բակտերիային խումբ:

Բաքտիոբիային խումբը կարելի է բաժանել հետևեալ հասարակ մասերի.

1. Միկրոկրիաներ (*մանրակէտներ*),
2. Բաքտերիաներ (*յատուկ անուն*),
3. Բացիլներ (*ցուպիկներ*),
4. Սպիրիլներ:

Խորները, ինչպէս մենք ասացինք առաջի գլխում, պատկանում են ստորակարգ սունկերի խմբին (théraphores):

Մանրակէտները կոլորակ են, բաքտիբիաները՝ երկարաձեւ. վերջիններս բռնում են մանրակէտների և ցուպիկների (բացիլլ) մէջ տեղը. նոցա ձայրերը շատ ժամանակ լինում են ուռած և շարժուն. ցուպիկները, ինչպէս ցոյց է տալիս նոցա անունը, շատ աւելի երկար են քան լայն, դլանաձեւ են. սպիրիլները նման են զալարունթելի և անդադար շարժուում են:

Այնքան էլ հեշտ չէ ինում ամեն անգամ որոշել մանրէակների կարգը նոցա ձևերի հիման վրայ: Կան որոշ ձևեր, որոնք անցողական միջին տեղն են բռնում:

Ահա մի քանի օրինակներ վերցրած մանրէակների ամեն մի խմբից, որոնցից մի քանիսը վնասակար են, իսկ մեծ մասը անմեղ:

Կատաղած անտուոնների արեան մէջ գտնուում են հատ հատ մանրակէտներ անջատւած, բայց այդ մանրէակը չէ վարակիչ տարրը:

Հատ դէպքերում մանրամարմինների վնասակար գործոնը ապացւած չէ:

Այդ էակները, բոլոր կենդանի մարմինների նման, արտաթորում են կամ այտագրում են արգիւնքներ, որոնք երբեմն մնում են մարմնի մէջ մանր էակների անհետանալուց յետոց էլ. դոքա երբեմն վերին ատտիճանի թունաւոր են և մարմինը ենթարկում են վերջնական կորուսոի: Նոքա շատ նման են փոտոթեան մանրէակների արտադրած արգիւնքներին և նոյնքան էլ թունաւոր են: Վերջիններս կոչում են պտումայիններ և գտնուում են հին դիակների մէջ, շատ թունաւոր են և այնքան նենգաւոր որ անցնում են զտիչի միջով:

Յանախ շատ դժւար է լինում բաժանել բաքտիբիաների արտադրած գործոն հիմքը իրանց բաքտիբիաներից: Սակայն վական բաքտիբի

մի յայտնի քանակութիւն ապացուցանում է որ բաքտերիաների առանձնակի ներգործութիւնը և նրանց արտադրած արդիւնքի ներգործութիւնը իրարից տարբեր գործոններ են, և եթէ յայտնի մանրէակներ սպառասում են պտումայններ, ընդհակառակը, կան և այնպիսիները, որնք անձամբ թունուոր լինելով հանդերձ, արտադրում են անվեսասակար նիւթեր. այդպէս օրինակ այդշափ թունաւոր սիրիք-ալտափ բաքտերիացի արտադրած հիւթը կարելի է անպատճ կերպով սրսկել անասունների արիւնի մէջ (Պաստէոր):

Յաճախ զատ-զատ մանրէակներ կարող են համախմբել մի գաղութի մէջ, ինչպէս աստղերը մի համաստեղութեան մէջ: Այդ մանրէակների համախռումը կոչում է զօօզլէ: Այդ դէպքում միւնոյն զօօզլէի մանրամարմինները խառնւած են իրար իրանց արտադրած արդիւնքի մէջ, որը կապում է մէկը միւսին: Կան մանրակէտների, ցուպիկների, բաքտերիանների կամ վիրիոնների (թրթռուկ) զօօզլէներ:

Ցիշենք այսուղ մանրակէտների շարքում ուկեզոյն թարախածին ստաֆիլոկուլ (staphylococcus rycogenes aureus), որը զարգանում է չչորանիւ թարախի մէջ, կամ որովայնախաղանթի բորբոքման թարախի մէջ. եթէ դա սրսկենք անասունին՝ կ'առաջանաց մահացու թարախացին հիւանդութիւն.

Զարմանալի մանրակէտը (micrococcus prodigiosus) ահագին գաղութներով զարգանում է օսլային մարմինների վրայ (բրինձ, օսլա և այլն), որոնց նա ծածկում է պայծառ կարմիր գոյնով, նման արեան բծերին:

Խարտեաշ մանրակէտը ձիու աղբին տալիս է ժանգի գոյնն:

Ալստաբեր մանրակիրների մէջ ցիշենք նոյնպէս կարմիր քամու (roma) մեկրոկոկը և դիֆտերիոտի շղթայանման մանրակէտները. վերջին հիւանդութեանը խառնւում է մի բացիլ ևս:

Հաւերի խոլերան բնորոշում է ցուպանման բաքտերիաներով, որոնք երբեմն գրկախառնւելով երկու-երկու՝ նմանում են 8 թւանշանին. նոքա երբեմն կարող են միանալ մանրակէտների հետ:

Երբեք ցուպիկների օրինակ բերենք կապտածին ցուպիկը (bacillus cyanogenus) կամ կապոյա կաթի ցուպիկը:

Յայտնի ճահիճների փրփուրը վարդի գոյն է ստանում կարմ-

ռացնող բաքտերիաների շնորհիւ (bacteridie rubescente), որոնք ունին հասած գեղձի կաշի գոյն:

Սիրիակամի, փորհարիճքի, խոլերայի, բարակացաւի, զիֆտերիանի մանրէակները—բոլորը ախտաբեր ցուպիկներինն են:

Դարձահարինքի (возвратный тип) մանրէակը սպիրիլ է:

Մենք այսուղ առաջ բերինք ախտաբեր և ոչ-ախտաբեր մանրէակներից ամենայայսնիները, չչիշելով սպիրալ յայտնիներից նոցա, որոնք տարածւած են օղի, հողի և ջրի մէջ. դոցա մասին կը խօսենք մի այլ անգամ:

Վերշացնենք մեր խօսքը մի փոքրիկ նկարագրով ինքնաբեր ծագման մասին, որը Պաստօրի փառաւոր գործերից մէկն է: Դա մի հրաշալի օրինակ է նորա փորձերի անաշառ խստութեան մի հարցի վերաբերեալ, որ գիտական ֆիլոսոֆայութեան ամենայուզիչ խնդիրներից մէկն է:

Ըսթերցողը գուցէ գիտէ հսոմէական հին աւանդութիւնը Արխանք հովեր մասին<sup>1)</sup>, երբ նա ասսւածներին աղօթելուց յետոց յանկարծ նկատեց որ իւր սատկած անասունների շուրջը թրռչում են մեղուների պարքեր, որոնք ինքնաբերաբար գոյացել էին գիտակների մսի մէջ:

Այսպէս բանաստեղծական կերպով արտայացած այս միտքը ներկայացնում է մի գիտական գաղափար, որը Լուլինի ուսուցչապետ Վան Հելմոնտը ձեւակերպում է աւելի կտրուկ կերպով՝ «վերցրէք, ասում է նա, մի կեղասոտ շատիկ, զրէք նրա մէջ ցորենի հատիկներ, պահէք բոլորը մի տաք տեղ և դուք մի քանի ժամանակից յետոց կը տեսնէք որ ցորենը դառել է մուկու:

Այդ գաղափարը, որ իրը վերին կարգի անասունները կարող եին գոյանալ ամեն մի պատառից, չկարողացաւ զիմանալ գիտական ամենահասարակ ընդգիմադրութեան. այս հողի վրայ արած վիճաբանութիւնները վերջիվերջոյ հանգան այն եղրակացութեան որ կենդանի բողբոջները չեին կարող ինքնաբերաբար գոյանալ:

Մի ուրիշ անգամի թողնելով<sup>2)</sup> այդ շահեկան վիճաբանու-

<sup>1)</sup> Վերզիլիոս «Հովկերգութիւն» երգ IV.

<sup>2)</sup> Դորա մասին կը խօսենք «Յողի մանրէակներ» աշխատութեան մէջ։ Մասն. Թարգմ.

թիւնների պատմութիւնը, որոնք տեղի ունեցան վերջումը երկու զիանականների, Պատմէօրի և Պուշէի միջև, այժմ յիշատակենք միայն Պատմէօրի նշանաւոր գիտական յաղթութիւնը, Պուշէն արաւ մի փորձ, որը նա համարում էր վերջնական և ապացուցիչ. այդ փորձին Պատմէօրը պատասխանեց մի հակառակ փորձով, որը կատարելապէս ոչնչացրեց նրա հակառակորդի եզրակացութիւնները:

Պուշէն վերցրեց մի ապակեայ զանգակ և, լցնելով նրան մնդիկով, ապա պատանեց մեծ ափսէի մէջ, որը նոյնպէս պարունակում էր մնդիկ. յետոյ զանգակի մէջ նա լցրեց բորակածին և թթւածին այն համեմատական չափով, ինչպէս այդ երկու գաղերը գտնւում են օդի մէջ: Տաքացնելով օդը մինչև 100° (Ցել.՝), նա մոցրեց նրա մէջ մնդիկի միջով չոր խոռ: Մի չայտնի ժամանակից յետոյ խոռի մէջ զարգացան մանրամարմիններ: Սորանից Պուշէն եզրակացրեց որ վերջիններս զարգացել են ինքնաբերաբար:

Բայց Պատմէօրը ապացուցեց որ մանրամարմինների բողբոջները գտնւել են մնդիկի մէջ, և որ խոռով, անցնելով վերջինիս միջով, ընդունել է այդ բողբոջները:

Յետոյ նա արաւ մի շարք ուրիշ փորձեր, ուր գործադրւած էին ամենախստ նախազգուշութիւններ, որպէս զի չմնայ ոչ մի բողբոջ ոչ բուլիօնի մէջ, ոչ օդի մէջ, և ապացուցեց առանց որ և է զժւարութեան, որ հակախտած (stérilisé) միջավայրում չի կարող ծագել ոչ մի մանրամարմին, եթէ այդ միջավայրը բաժանւած է ազատ օդից թէկուզ հակախտած բարիսկով:

Զանազան տեսակ բուլիօններ ապակեայ ամանների մէջ հակախտելով և վերջիններիս բերանները կրակով կացնելով՝ նա պահեց տասը-քսան տարի և ոչ մի բողբոջ չզարգացաւ նոցա մէջ: Բայց հէնց որ բաց արին նոցա բերանները, ազատ օդը, ներս մոնելով ամանների մէջ, փոշինների հետ ցանեց բուլիօնների մէջ բողբոջներ, և զարգացան մանրամարմինների գաղութներ:

Ուրեմն մանրամարմինները զարգանում են ոչ թէ ինքնաբերաբար այլ չայտնի բողբոջներից:

## ԺՈՂՈՎՐԴԻՍԿԱՆ ՄՈՏԻՒ

ԱԽ. ԻՍԱՀԱԿԵՍՆԻ

Երազ տեսայ.—Զեր տան առաջ  
Զուլալ աղբիւր կը բխէր.  
Զէնը մեղմիկ, քաղցրակարկաջ,  
Զորս դին: անոնշ ծաղկունք էր:

Ես էլ ծարաւ, պապաք էի,  
Ասի—կուշտմ՝ ջուր խմեմ.  
Վրայ պրծայ... մէկ էլ մէկէն  
Ցամքաւ աղբիւրն, քար դառաւ:

Քնից զարթնայ, սիրոս էր տիսուր.  
Ախ, էս շատ վատ երազ է.  
Ծարաւն ես եմ, զուն—աղբիւրը.  
Սէրդ ինձ համար ցամքեր է...

1894 թ., 16 նոյեմբեր,

Լալացիդ:

\* \* \*

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

---

Ուր էք կորեր, գարնան օրեր,  
Ես զով սարի հովս մւր ա-  
կանչեմ, արեք, նշխուն հաւքեր,  
Հոտոտ-հօրոտ վարդն մւր ա-

Ես քարափէն աղբուր կուգար-  
կաքաւն էստեղ երգ կ'ըսէր.  
Խոր ծմակէն մարալն կուգար,—  
Սիրտս ուրամխ կը զարկէր...

Հիմի ցնւրտ է, ձունն է հկեր-  
Չորս գիս ձմեռ ու սառուց.  
Ախ, էլ չկան գարնան օրերն,  
Սիրտս էլ սառեր է վաղնւց:

1897, թ. գեկտ. 11, Ալեքսանդրապոլ:

---

## Վ. Գ. ԲԵԼԻՆՍԿԻ

(Մահան յիսնամեակի առիթով)

### I

Ազգերի կեանքն ընդգրկող մեծ շարժումները երբէք անհետեանք չեն անցնում այդ կեանքի արտայայտութիւնների համար։ Վերից վար ցնցելով ազգի ամբողջ կազմը, նրանք շատ անգամ շփման մէջ՝ են դնում մինչև այդ ժամանակ բաժան կամ հեռու ապրող մասերը. և այդ շփումը երբէք անհետեանք չի մնում. անջատ մասերը գիտակցում են իրանց կազմը, աւելի կամ պակաս ճանաշում իրար և մօտենում։ Պարսկական պատերազմները հին Յունաստանում, օրինակ, Պունիքական պատերազմները Հռոմում ահապին նշանակութիւն ունեցան այդ գասական ազգերի կեանքի և նրա արտայայտութիւններից մէկի՝ գրականութեան համար։ Այդպիսի մի խթան էր ոռու կեանքի համար նապոլէոն Մեծի արշաւանքը, որ ծայրէ ի ծայր ցնցեց ոռու երկիրը։ Զարթնեց Խոսաստանը, իրար անցան նրա մասերը, խլրում ընկաւ քնած երկիրի ամեն անկիւնում։ ազգի ինքնուրոյնութեան,

1) Մի անգամ ընդ միշտ լիշտակում ենք աշտակութիւն գլխաւոր ազրիւրները. Կыпинъ, Вѣлинскій, его жизнь и переписка, 2 т.—Н. Чернышевскій, Очерки гоголевского периода русской литературы.—Ив. Ивановъ, Исторія русской критики, Миръ Божій, 1897, 1—12 и 1898, 1—5.—А. Скабичевскій, Сорокъ лѣтъ русской критики, Соч. т. I.—Венгеровъ, Великое сердце, Русск. Бог. 1898 г. 3—5.—Н. Михайловскій, Прудонъ и Вѣлинскій, Соч. т. III, ч. II.—Помощь голодающимъ, 1892 г. изд. Русск. Вѣдомостей.—Соч. И. С. Тургенева. т. X.—Соч. Гончарова, т. VIII.—Вѣлинскій, Сочиненія, 4 т. изд. Павленкова. Երկրորդական ազրիւրները լիշտակում ենք իր աեղը.

անկախութեան և ապագայի խնդիր կար մէջ տեղը՝ անկարելի էր անտարբեր մնալ, և գրոհ տւաւ մեծ ազդը ու աջնալէս, որ մեծ աշխարհակալին մինչև Պարիզ մէկ հալածեց։ Ազգը պատով տարաւ փորձութեան ժամը։

Ոռւսներն անցան սահմանը և մոտան Եւրոպա։ Զօրքն ու սպաները, որոնք մինչև այդ ժամանակ իրանց սահմաններից շատ չէին դուրս եկել և ուրիշ կեանք չէին տեսել ու զիտել, դէմ առ դէմ եղան եւրոպական կեանքին ու քաղաքակրթութեան։ Նատ բնական ու անխուսափելի էր իրանց երկրի և տեսածի մէջ համեմատութիւն դնելը. կարող էք դուշակել այն հետեանքը, որին հասան համեմատողները։ Կար մի նոր կիանք, շատ լաւ կողմերով, որ կարող էր գնահատութեան չափ լինել ուստ սպաների համար, և նրանք սկսեցին այդ չափը մօտեցնել հայրենի երկրի կազմի կարեռագոյն կողմերին ու գնահատել. շատ բան, ինչ դժւար և նոյն իսկ անկարելի էր տեսնել ու ճանաչել հայրենիքում՝ համեմատութեան շնորհիւ շատ պարզ կանգնեց նրանց աւանց իր բոլոր այլանդակութեամբ։ Ճորտատիրութիւնը, ուստ կեանքի այդ հիմնաքարը, կալածատէ բերի անկրթութիւնն ու տգիտութիւնը, ճորտի ու տիրոջ աններելի յարաբերութիւնները, համատարած ծեծն ու կաշառակերութիւնը, զինւորական խիստ կարգերը, այս ամենը յարձակմունքի ու քննադատութեան նիւթ դառան՝ ի հարիէ մասնաւոր շրջաններու մ։

Հայրենասէրները խօսքից գործի անցան։ Ընդունած սովորութեան հակառակ՝ նոր մարդկանց մի սոււար մասը թողեց զինւորական ծառայութիւնն ու մոտաւ քաղաքացիական հիմնարկութիւնները անձնական օրինակով ցոյց տալու և քարոզելու ազնիւ ծառայութիւն ու քաղաքացիական պարտիք։ Աւրիշները զինւորական կարգերից վերացրին ծեծը, չտեսնած մեզմ վերաբերմունք մոցրին դեպի զինւորները, զպրոցներ բաց արին նրանց համար։ Միւսները ամեն պաշտօն թողած՝ տեղափոխւեցին զիւղ իրանց ճորտերի դրութիւնը լաւացնելու. բաց արին զպրոցներ, և այն<sup>1)</sup>։

Հայրենի կարգերի քննադատութիւնն ու գնահատութիւնը հասարակական մոքին երկու լնթացք ուին. մի ուղղութեամբ մտա-

<sup>1)</sup> Ա. Շելցուն, Սոչ. տ. I

ծողները սկսեցին անխնայ քննադատութեան ենթարկել ամեն բան ինչ ոռուսական էր՝ լնտանիքից բանած մինչև ճորտատիրութիւնը՝ և սեփական կեանքին դէմ զնել արևմուտքի զարգացած ու եռուն կեանքը. դա մի ծայրացեղ արևմուտական ուղղութիւն էր, որ խիստ ու սուր կերպով արտայայտւեց Զատղաևի նշանաւոր նամակում, որը լոյս տնօսաւ «Մոսկովսկի Տելեգրաֆ» ամսադրում է նա մի յուսահատ ձիչ էր, ուր այն ամենը, ինչ արևմուտքինն էր՝ դովարանւում էր մինչև պապականութիւնն ու կաթոլիկութիւնը։ Միւս ուղղութեամբ մոածողները միւս ծայրն էին վերցրել, այդ ուղղութիւնը թափանցւած էր սեփական մեծութեան և բացառիկութեան զգացմունքով, որ սնունդ էր սուսցել արևմուտքում տարած յաղթութիւններից ու աշխարհաւեր բռնութեան խորուակումից։ Սակայն երկու ուղղութիւններն ևս զեռ շատ անորոշ, մուժը ու բնազդական էին և արդիւնք վիրաւորւած կամ գոհացած զգացմունքի. ապագայում նրանք կերպարանափոխւեցին, հարսաւացան բովանդակութեամբ, զաւեցին, որոշւեցին, ստացան փիլիսոփայական հիմնաւորութիւն և առաջ բերին հռչակաւոր «արևմուտական» և «ալաւեանասէր» ուղղութիւնները, որոնց ընդհարումներն ու կուխները բռնում են 40-կան և յետագայ թւականները։

Հայրենական պատերազմին տւած զարկն ու մոքերի այդ յուղումը չէր կարող անհետեանք անցնել գրականութեան համար։ 20-ական թւականներից մենք տեսնում ենք մի չեղած շարժում գրականութեան մէջ։ Հին արիստոկրատ, պաշտօնեաց-գրողների տեղ, որոնք «ի միջի այլոց» միայն գրում էին, ասպարէզ է գալիս խոկական գրողը. գրիչը վերից անցնում է վար՝ մի բոլորովին նոր գաստկարդի ձեռք, որ մտնում է ասպարէզ նոր զգացմունքներով, մոքերով և իդէալներով, իր գրոշմը զնելու գրականութեան վրայ։ Սկս ում է ռոմանակազմի ու գասական գպրոցների նշանաւոր կուրը, որ կատաղի կերպով մղում է մի ինքնուս ու տաղանդաւոր գրող, վաճառական գասից՝ Պոլեօյ։ Քննադատութեան են ենթարկում ազգի պարծանքները՝ Լոմնոսոսով, Խերասկով և այլն, և փորձում է չափ զնել նրանց տաղանդին ու հռչակին, փորձում են զնսհատել նրանց իսկական արժէքը։ Ռոմանատիզմը պահանջում է, որ ինչպէս գրողն զգում ու մոածում է իւրատեսակ, թող գրի իւրատեսակ. աւելորդ են բոլոր

դասական կանոնները։ Ըստ երեսցթին գրական ձեր կուիւ էր և տաքանալու բան չկար։ Բայց առհասարակ ա.մեն երկրի գրականութիւն, ուր չկայ ներքին քաղաքական կեանք, իր պայքարներով արտայայտութիւն է այն՝ կեանքում գոյութիւն ունեցող՝ աշխարհացքների ու կարգերի կուրի Եւ լնթերցողները ումանափակմի ու դասական դպրոցի կուին ականատես լինելով, լաւ զգում էին թէ կուիւ լինչի համար է խսկապէս, որ այլտեղ ոչ միայն հին ձեւերի դէմ է կուիւ, այլ և հին աշխարհայեացքի ու մոտածութեան եղանակի դէմ։ Իրանք ախոյեաններն էլ շատ լաւ էին հասկանում բանի էութիւնը։ Պոլեօյի ամսագիրը՝ «Մոսկովսկի Տելեգրաֆ», իր մինչև այդ օրը չտեսնւած թարմութեամբ, կենդանութեամբ, հետաքրքրական ու գրաւիչ բովանդակութեամբ ահազին զեր խաղաց ու ուս կեանքում մասնակից անելով գրական շահերին մի չտեսնւած մեծ բազմութիւն։ Նոր մոքերի հետ նա տարածում էր և նոր գիտելիքներինքնուսը շատ լաւ էր հասկանում ժամանակն ու լնթերցողի կարիքը։

30.-ական թւականների դնահատելի ուժերից մէկն էր նաև նաղեժին, որ իր քննադատական ջողւածներով նոյնույթեան էր ենթարկում անցեալ գրողներին և առաջին մարդն էր, որ իր յօդւածներում սկսեց անցկացնել մի ամբողջական փիլիսոփայական ուղղութիւն։ Եելինդի փիլիսոփայութիւնն էր, որին մասնակից էր անում նա իր ընթերցողներին։ Երիտասարդութիւնը ծծում էր իր մէջ Պոլեօյի և նաղեժդինի ողին։ այդ երիտասարդութեան մէջ էր նաև նէլինսկին։ Այս երկու գրողներն էլ գործում էին Մոսկովյան Պետերբուրգում հրատարակւում էր Պուշկինի «Մովլեննիկլ»։ որ արիտատուրա գրողների օրգանն էր և որը չէր ուզում իշնել մինչև խամ ընթերցողի խոպան ուզեցն ու այդպիսով նրան լուսաւորելին։ ասել կ'ուզի, որ հասարակութիւնն էլ նրան գին չէր տալիս, այլ աւելի գնահատում էր իր մասին մտածողներին։ Մինչդեռ այդ երնք գործողները գրականութիւնը համարում էին մի սուրբ ասպարէզ, մինչդեռ Պոլեօյն ու նաղեժդինը պարբերական թերթերն ու գրքերը համարում էին լուսաւորութեան ամենալաւ զէնքերը և ամեն կերպ աշխատում էին լոյս տարածել ու կրթել շրջապատը, Պետերբուրգում ծաղկում էր մի այլ տեսակի գրականութիւն, որի դեկալարները ամեն կերպ օգտւում էին նոր զարթնած հասա-

քակութեան անփորձութիւնից և սեփական օգտի համար շահագործում էին նրա տրամադրութիւնը, չտալով նրան առողջմտացին մնունդ ու շոյելով նրա վատ բնազդները։ Սենկովսկի, Դրեչ և Բուլգարին<sup>1)</sup>, ահա այն անձերը, որոնք՝ մէկը շատ, միւսը քիչ՝ ամեն տեսակ ստորաթիւններով գոյութիւն էին պահպանում։ և հայրենիքի պաշտպանների դիմակով զինւած՝ ձգտում էին մամուլն ու գրականութիւնը իրանց մենաշնորհը գարձնել։

Սյապիսի գրութեան մէջ էր գրականութիւնն ու հասարակութիւնը, երբ պատրաստում էր Բէլինսկին։ Իսկ երբ նա առաջարէզգութւաս եկաւ՝ սոմանտիզմի պատերազմը վերջացած էր, կրքերը նստել էին, նոր պահանջներ ու մարքեր էին պատրաստում ասպարէզ իջնել, մինչ զեռ հասարակութիւնը կամաց կամաց թմրում էր և անտարբեր գառնում։

## II

Վիսսարիոն Գրիգորևի, Բէլինսկին խառը ծագում ունէր։ Պապը՝ հօր կողմից՝ քահանաց էր, բարեպաշտ ու ճգնակեաց։ նրա յիշատակը յարգում էին տանը սուրբի պէս։ Հայրը գաւառական բժիշկ էր, իսկ մայրը փոքր կալւածատիրուհի։ Բէլինսկու հայրը մի անհաշտ բնաւորութեան ու կծու լեզուի տէր մարդ էր։ երբ 1816 թ., Վիսսարիոնի վեց տարեկան հասակում, նա թողեց Սւէաբորդը և հաստատեց հայրենի Պենզայի գաւառի Զեմբար քաղաքում, նա չկարողացաւ տեղի բնակիչների հետ հաշու ապրել։ և որովհետև յարաբերութիւններն այն աստիճան լարւած էին, որ նա վախսենում էր նոյն իսկ պաշոնական գործերով գաւառում ման գալ չլինի թէ սպանեն, նա կորեց կամաց կամաց իր կապերը գաւառի հասարակութեան հետ ու իրան տւեց խմողութեան երեսի վրայ թողնելով ընտանիքը։

Մայրը, որ մի վերին աստիճանի ջղոտ ու դիւրագրգիւհին էր, ամեն օր տանը կռիւ էր սարքում։ որովհետև մարդու սուացած փողն էր տունը պահելու միակ միջոցը, իսկ նա էլ խմելու յետելից

<sup>1)</sup> Այդ ըստ ամենաչնի լիրը գրական գործիչը իր չորքը ցոյց է տւել նաև մեր խաչ։ Աբովեանին. տես նրա կենսագրութիւնը ն. Տէր-կարապետեանի։

ընկած՝ չէր մտածում տան մասին։ Այդ կռիւները գնալով աւելի՛ խստանում էին, և ահա թէ ինքը Բէլինսկին ինչ է ասում իր մի նամակում։ Ընրանք խափի իրար չեն խնայում, իրար գերեզմանի՛ դուռն են հասցնում, խանգարում են իրանց առողջութիւնն ու հոգեկան հանգստութիւնը։ Այս տեսակ պայմաններում երեխայի հոգու վրայ ուշադրութիւն դարձնող չկար ի հարկէ, այնպէս որ վաղ մանկութիւնից նա սովորեց մենակութեան ու ինքն իրան էր զարգանում։ Նա շատ քաշւող էր, ընկերների հետ չէր ընկնում և ընտանեկան կեանքի տպաւորութիւնների տակ այն ասոիճան կեն տրոնացած ու լուրջ կերպարանք էր առել նրա հոգին, որ երբեմն երբ մտնում էր հօր ու մօր կռիւների մէջ, հացը կշիռ էր տալիս նրա ասածներին և լսում առանց ձայն հանելու։

Թէև ընտանեկան կեանքից նա քիչ է լաւ տպաւորութիւններ ստացել, բայց այս մէկն էլ կաց, որ թողնւած լինելով բաղդի կամքին՝ երեխան չի ենթարկել այդպիսի մի ընտանիքի դասութարակութեան, այլ մեծացել է հեռու այդ ազդեցութիւնից, անկախ, ինքնուրոյն։ բացի այդ՝ ամենամեծ ժառանգութիւնն անշուշտ նրա հազւագիւտ բնաւորութեան սաղմերն էին, որ ստացել էր իր ծնողներից։ Հօրից ժառանգել էր սէր դէպի ուսումն ու անկեղծութիւն, մօրից նրա գրգռւող և խիստ զգայուն ջղերը, իսկ պապից անցած պիտի համարել զոհաբերութեան, ճզնաւորական սրբութեան և ճշմարտութեան այն մոլեգին ծարաւը, որով նա բարձր էր կանգնած ամենքից իր ժամանակ և բարձր է մնում մինչև այսօր։

Մի վարժուհու մօտ գրել-կարդալ սովորելուց յետոյ Բէլինսկին, մասաւ Չեմբարի զաւառական ուսումնարանը։ Սա մի նահապետական հիմնարկութիւն էր, ուր ծեծը թագաւորում էր միահեծան։ Բաղդը Բէլինսկու հետ էր. սա ոչ մի անդամ՝ ծեծ չկերա, թէև ականատես էր թէ ինչպէս ուսուցիչներից մէկը յաճախ նոյն իսկ սիրած աշակերտին ծեծ էր տալիս... սիրելով։ Շատ էր պատահում, որ ուսուցիչները խմբով դասը թողնում գնում էին կոնծելու. աշակերտներն էլ յետ չէին մնում. նրանք էլ խմբով լողանալու էին գնում։ Բէլինսկու նման մի քաշով ու ընկերական լայն շրջան չսիրող երեխան չէր կալող ընկերանալ նրանց. ամենասովորական զբաղմունքն այդ աեսակների համար ընթերցանութիւնն է, որի մէջ և ոսում

զլխով իրեց Բէլինսկին։ Ինչպէս յետոյ իր գրախօսականներից մէկում վկայում է՝ նա եռանդուն կերպով կարդում էր սուս գրողների երկերը, արտադրում էր իր հաստ տետրակիներում բանաստեղծութիւններ և անդիր անում, երեմն էլ ինքն էր գրում, ու ինչպէս նկատում է հեղնանքով մի տեղ՝ իրան համարում էր «Փուկովսկու վտանգաւոր մրցակիցը»։ Ահա ինչն էր պատճառը, որ այդ տեսակ չնշին ուսումնարանից սեփական ջանքերով նա դուրս բերեց մեծ պաշար, անկախ զասատուների ու ածից, և ահա թէ ինչու նա իր հասակակիցների մէջ ամենից զարգացածն ու կարդացածն էր։ Ուուս վիպագրող և աժեհնիկով, որ Պենզայի գաւառում զպրոցական վերատեսուչ էր, իր յիշողութիւններում պատմում է Բէլինսկու մասին, թէ նա մի փոքրիկ, լղարիկ, լուրջ դէմքով և հասակից վեր սառը արտայացութիւն ունեցող երեխայ էր. նա աչքի էր լնինում իր սրամիու ու շուտափոյթ պատասխաններով տւած հարցերին, համարձակ էր և սորիկական գիծ չունէր իր մէջ։

Այսպիսի մուազին ու բարոյական դրամագլխով Բէլինսկին 1825 թ. մոտաւ Պենզայի գիմնազը, որ շատ չէր զանազանւում Զեմբարի զպրոցից։ Եատ էր պատահում, որ աշակերտները զասարանից դուրս էին բերում հարբած ուսուցչին ձեռների վրաց ինչ կարելի էր ուսանել այցտեղ, ամեն մարդ կարող է գուշակել. ուստի Բէլինսկին թողած գասատուներին՝ նորից սկսեց իր տովորական անկախ պարապմունքը՝ լնթերցանութիւնը, հարստացնելով իր աեղեկութիւնների պաշարը. գրքեր, սմսագրեր, ամեն պատահած բան կարդում ու քաղւած էր անում. այստեղ դրեց նա իր գրական աեղեկութիւնների հիմքը, որոնց չափ ոչոք չունէր նրա ժամանակ և, Զեռնիշևսկու վկայութեամբ՝ ոչ ոք նրանից յետոյ։ Կամաց-կամաց պարապմունքն այն աստիճան կլանեց Բէլինսկուն, որ նա թողից գիմնազ յաճախելլ. այստեղ զեր խաղաց նաև նրա համալսարան գնալու որոշումը։ Նրան արձակեցին աղասերին չգալու համար, թէև գնահատում էին. այսպէս օրինակ մի ժամանակ, երբ ուսուցիչներից մէկը զես չէր եկել, զասերն առաջարկեցին Բէլինսկուն։

Պենզայի գիմնազում նա շատ մօտեցաւ ուսուցիչներից մէկին, որ մեծ ազգեցութիւն ունեցաւ պատանի Բէլինսկու վրաց։ Մ. Պուկովսէ էր դա, որ մի նորաւարտ ու ոգևորւող անձնաւորութիւն էր և պատ

էր տալիս բնական գիտութիւններ ու բարձր դասարաններում՝ գրականութիւնն: Կրակոտ ու ոգեսորւող աշակերտը և ուսուցիչը գտան իրար, և ջերմ զրոյցները, որ նրանք ունենում էին գիմնազումն ու դուրսը՝ զրօսանքների ժամանակ, լացնացրին Բէլինսկու մտացին հորիզոնը. անթիւ հարցեր էր որ նա տալիս էր ուսուցչին օտար երկիրների գրականութեան, կեանքի, հեղինակների մասին. ուսուցիչը վկայում է, որ Պենզայում ոչ ոքի հետ այնպէս սիրով չէր խօսում ու զրոյց անում ինչպէս Բէլինսկու հետ Այստեղ պիտի նկատենք երկու յանկութիւնն, որ մինչև վերջն էլ Բէլինսկուց անբաժան էին. նախ այն, որ Բէլինսկին բան էր սովորում մեծ մասամբ ուրիշներին խօսացնելով և նրանց իմացածը խրացնելով, և երկրորդ՝ որ նա ոչ մի կարծիք անմիջապէս չէր ընդունում. կը մտածէր, կը մտածէր, և ապա միայն երբ համոզւեց՝ կ'ընդունէր:

Ծնողների աղքատութեան պատճառով Բէլինսկին շատ չքաւոր կեանք էր վարում Պենզայում. նա ապրում էր հոգեոր գպրոցի աշակերտների հետ ամենախեղճ վիճակի մէջ: Այդ ասլրուստը նրան սովորցրեց համբերող լինել դէպի կեանքի նեղութիւններն ու կոփեց նրա բնաւորութիւնը: Ընկերների նեղ ու սերտ շրջանում եղած եռուն վէճերը զարգացրին նրա դիալեքտիկական, վիճաբանական ընդունակութիւնը, որ յետոյ շատ պէտք եկաւ նրան գրական վէճեր վարելիս, և հարստացրին նրա տեղեկութիւնների պաշարը աստւածաբանական ու փիլիսոփայական նիւթերով, որոնցից նա այնքան էլ շատ տեղեկութիւն չունէր: Ինչ վերաբերում է գրականութեան՝ այդ բնագաւառում նա դատաւոր էր և ամենատեղեակ մարդը, այնպէս որ ընկերները նրա գատմունքին էին ենթարկում իրանց շարադրութիւնները:

Թատրոնի սէրը, որ մինչև վերջը վառ մնաց Բէլինսկու մէջ, նոյնպէս այդ ժամանակ զարգացաւ: Հացից զրկում էին թատրոն գնալու համար. Բէլինսկու մէջ որ՝ այդ սէրը հիւանդութեան էր հասնում. ամառւայ արձակուրդներին իր ընկերներից մէկի կալւածքում նա ներկայացումներ էր կազմում և ինքն էլ դերասանութիւն անում: Այդտեղ նա իմիջի այլոց մօտ ծանօթացաւ կալւածատիրական կեանքի հետ, որ և յետոյ նրան պէտք եկաւ: Թէ ինչ մոլեգնութեան էր հասնում Բէլինսկու սէրը դէպի թատրոնը կարելի է տեսնել այս

ոգեռուած հասւածից, որ նա գրել է 1834 թ.: իր առաջին յօդւածում. «Թատրոն! Սիրում էք արդեօք թատրոնն այնպէս, ինչպէս ես եմ սիրում, այսինքն ձեր հոգու բոլոր ուժերով, այն բոլոր ոգեռութեամբ ու մոլեգնութեամբ, որին ընդունակ է գեղեցկի տպաւորութիւններին ծարաւի թափոտ ջահիլութիւնը: Կամ աւելի լաւ ասած՝ մի՞թէ կարող էք չսիրել թատրոնն աշխարքում ամեն բանից առաւել, բացի բարին ու ճշմարիալ: Յ', գնացէք, գնացէք թատրոն, ապրէք ու մեռէք այնտեղ, եթէ կարող էք!»:

## III

Բէլինսկու կեանքն աղքատ է արտաքին դէսլքերով. այդպէս է առհասարակ ամեն մարդու կեանք, ինչքան էլ նշանաւոր լինի նա, այնպիսի երկրում, ուր ազատ գործելու ասպարէզ չկայ. իսկ Ռուսաստանը 40-ական թւերին մանաւանդ այդ կողմից ուղղակի անտանելի էր: Բայց մեծ քննադատի ներքին կեանքը իր հարստութեամբ չափազանց աչքի ընկնող է և իր նմանը հազիւ թէ ունի: Համալսարանից դուրս գտնուց յետոյ՝ Բէլինսկու կեանքը մի շարք նեղութիւններ է ներկայացնում, որ մինչև նրա մահն է տեսում: Նիւթական դրութիւնը բարելաւելու մի քանի փորձեր իր ու ընկերների կողմից՝ ահա բոլորը: Մենք կ'աշխատենք ամփոփ պատոմել նրա կեանքի արտաքին կողմը, որ նրա մոքի ու հոգու զարգացման վրայ աւելի կանդ առնենք:

1829 թ. Բէլինսկին մուա Մոսկվայի համալսարանը և առդրում էր պետական հաշով: Այն ժամանակւայ համալսարանը մի զօրանոց էր իր ներքին կազմով, իսկ գաղափարականի կողմից մի շատ խեղճ բան. նոյն անբովանդակութիւնն ու չնչինութիւնը, ինչ որ նա տեսել էր իր յաճախած առաջին երկու ուսումնարաններում: Պարզ է, որ Բէլինսկին հին սովորութեան համեմատ նորից սկսեց առանձնակի կեանք վարել ու ընթերցանութեան անձնատուր եղաւ: Սակայն եթէ համալսարանն իր զիտութիւնով շատ քիչ բան տւառ, ընկերական կեանքն ու շրջանը անկասկածելի աղղեցութիւն ունեցան նրա հոգեկան ու մոտաչին զարգացման վրայ: Կ. Ակսակովը վկայում է, որ համալսարանում ճշմարտութեան արեւ շատ դժգուն ու սառն էր լուսուրում մեր խելքերը, բայց երիտասարդ ուսա-

նողներն ստանում էին «բարոյական գրդում», որ ինքն առաջ էր գալիս ոգևորւած ջահելութիւնից, այսինքն հէնց ուսանողական շրջանի ազդեցութիւնը ինքն ըստ ինքեան շատ արդիւնաւոր էր:

«Չանձրոցթթը փարատելու. համար» ჩէլինսկին մի քանի ուսանող ընկերների հետ կազմել էր գրական երեկոների պէս մի բան, ուր ամեն մէկը կարդում էր իր գրւածքն ու ենթարկում ընկերնարի քննութեան: Այդ ժողովներից մէկում ჩէլինսկին կարդաց իր հեղինակած ողբերգութիւնը, որ կարելի է նրա երիտասարդ տարիների հոգու արտայախտութիւնը համարել: Նա մեծ յոյս էր զնում իր գրւածքի վրայ և այդ լոյսերին մասնակից էր անում նաև Զեմբարի բարեկամներին: Թէև թէ Զեմբարից, թէ ընկերներից քաջալիրութիւն չստացաւ, բայց նա իր կարծիքին մնաց. յոյս ունէր որ կարող է, թէ պիտական հաշւով ապրելուց ազատւել, որ նրա համար չափազանց անտանելի էր դարձել, թէև անշափ ոգևորութեամբ էր խօսում առաջին օրերը իր ապրուստի մասին, և թէ գրական փառք փաստակել:

Զարմանալի էլ չէր. նա զրում էր, որ իր գրւածքը չչի կարող վիրաւորել ամենամաքուր բարոյական զգացմունքը և նա ամենաբարոյական նպատակին ունի: ուրեմն ինչի յաջողութիւն պիտի չունենայ: Եւ ահա փայփայած յոյսերով ողբերգութիւնը յանձնում է գրաքննական առեւանին... և թիւշ. ոչ միայն գրւածքը չեն թոյլ տալիս տպագրել, այլ և անւանում են «անբարոյական», համալսարանի անունն արատաւորող: ու այդ բաւական չէ. լքումը կատարեալ անելու համար, հեղինակին էլ վոնդում են համալսարանից... և անընդունակութեան համար:... Իայց թիւշ էր ողբերգութիւնը. նախքան այդ՝ մի քանի գծեր նրա այն ժամանակւայ հոգեկան կեանքից:

Վէլինսկու ուսուցիչ Մ. Պոպովը դիմել էր նրան, որ բանստաեղծութիւններ ուղարկի իր հրատարակելիք ժողովածուի համար, և ահա թէ ինչ է պատասխանում ჩէլինսկին. Յաճախ հոգուս մէջ առաջ են դալիս անսովոր շարժումներ, հոգիս շատ անդամ լինքն է լինում հզօր զգացմունքներով ու տպաւորութիւններով, խելքիս մէջ ծնւում են բարձր, աղնիւ մոքեր—ուզում եմ այդ բոլորն արտայայտել բանաստեղծական տողերով, և չեմ կարողանում!... Եսուն

ու բոցոտ սէր ունիմ դէպի ամեն գեղեցիկ ու բարձր բան, ունիմ կրակոտ հոգի. և դրանց հետ՝ զգացութերս թեթև ու ներդաշնակ տողերով արտայայտելու տաղանդ չունիմն։ Այդ ժամանակ նա Եկլ-լերի ամենաթռնդ և երգւեալ երկրպագուն էր. «Նրա «Աւազակ» ներն», ասում է Բէլինսկին, «Ֆիէսկօն»... մէջս վայրենի թշնամութիւն էին մոցրել դէպի հասարակակին կարգերը յանուն՝ զարգացման աշխարհագրական ու պատմական պայմաններից պոկւած, օդի մէջ կառուցած հասարակութեան վերացական իդէալին Կողմնակի պարապմունքները գնում էին իրանց ընթացքով, հարսուացնելով նրա զրական տեղեկութիւնների պաշարն ու զարգացնելով նրա գեղարւեստական բնածին ճաշակը, ու թէե «Ճծում էր իր մէջ Պոլեօցի և Նաղեթդինի յօդւածների ոգին», բայց այն ժամանակ նա աւելի շատ զգացումններ ունէր, քան գաղափարներ, աւելի զգայուն ունուրբ սիրտ, քան զարգացած ու կշռադատող խելք։ Խսկ այդ զգացումնները շատ էին հզօր և եռանդուն, այդ սիրտը շատ էր մաքուր, սիրող ու զգայուն. ամենաթեթև դէ զքը նրա վրայ մեծ տպաւորութիւն էր անում. խսկ թէ ինչ կարող էր անել այլակիսի մի բարոյական կազմի հետ ժամանակի անարդարութիւններով ու բռնութիւններով լի կեանքը, շրջապատող մտաւոր խաւարն ու ստրկութիւնը, ստորութիւնն ու անսրտութիւնը, տիսմարութիւնն ու տգիտութիւնը և ժայռի պէս ամուր անարդարութիւնների հանգրւանը՝ ճորտատիրութիւնն իր քոլոր այլանդակութեամբ ու կեղտով—կարող էք գուշակելի Եւ ահա Բէլինսկու առաջին գրական վաստակը նրա մինչև խորը խոցւած սրսի, նրա վիրաւորւած զգացմունքի յայտարարն է գառնում, և անսովոր հոգեկան շարժումները, բարձր ու ազնիւ մոքերը՝ գըտնում են իրանց արտայայտութիւնը։

Ահա թէ ինքն ինչ վկայութիւն է տալիս իր ողբերգութեան մասին. Այդ հեղինակութեան մէջ սրտիս բոլոր ջերմութեամբ, որ բոցավառում է դէպի ճշմարտութիւնն ունեցած սիրով, հոգուս բոլոր զայրցիով դէպի անարդարութիւնը, բաւականին կենդանի և ստոյգ պատկերներով ես ներկայացրի մարդկանց բռնութիւնը՝ որ սեփականել են անարդար ու կործանիչ իրաւունք իրանց նմաններին տանջելու։ Հարցը ճորտատիրութեան մասին է. և ի հարկէ նրա դրւածքը չէր կարող վիրաւորել ամենամաքուր բարոյական

զգացմունքն անզամ, բայց Յ թւ. գրել նորտառիրութեան մասին ու այն էլ ինչպէս գրել!... Դեռ լաւ է որ նէլինսկու պատիժը համալսարանից վանդեւին եղաւ... Աղբերգութեան բովանդակութիւնը մենք չենք սպառմի, այսքանը կ'ասենք, որ նրա իդէան ըստրուկտուսի մէջ է ամփոփւած: Գրւած է Եիլլերի Աւազակներին ազեցցութեան տակ, գործող անձերը ոոմանտիկական հերոսներ են, խօսում ու գործում են կատաղած, բուսն կրքերով, խիստ զիմաշարժումներով: շատ թոյլ է նաև գեղարւեստական տեսակէտից: Էացցայդ բոլորի հետ հազիւ կարելի ինչի գանել մի գրւածք, որ զգացմունքների կատաղի թափով նրան հաւասար լինի. այսուղ նո փրփրած յարձակւում է ոուս կեանքի շատ պակասաւոր կողմերի վրայ, զլսաւորապէս ի հարկէ նրա յարձակման կէտը ճորտական իրաւունքն է. քարոզում է մարդկանց արժանաւորութեան հաւասարութիւնը, սիրոյ ազատութիւնը և այլ այնպիսի գաղափարներ, որոնք այն ժամանակ կամ չկացին և կամ եթէ կացին էլ, չէին արտացյալւած, իսկ ացդպէս ուժով երբէք:

Մի նմուշ, այստեղից կարող էք տեսնել նաև թէ ինչպէս էր գրում նէլինսկին. այդ տեսակ էջեր նրա գրւածներում շատ շատ են. նրա սգևորութիւնը անսպաս էր կարծէք: Դիւզացին պատմում է թէ ինչպէս իրանց տէրը նեղացնում ու չարչարում է ճորտաերին, և ահա թէ ինչ է գոչում Դիմիտրի Կալինինը՝ հերոսը. «Միթէ այդ մարդիկ հէնց միայն նրա համար են աշխարհ գալիս, որ իրանց նման մարդկանց քմահաճոցքներին ծառայեն... Ո՞վ է տւել մարդկանց այդ կործանիչ իրաւունքը, իրանց իշխանութիւնով ուրիշներին, իրանց նման էակներին ճնշելու, նրանց սրբազն գանձը՝ ազատութիւնը խելու: Ո՞վ է նրանց թոյլ տւել հայնոցի լուրնութեան ու մարդկացին իրաւունքները: Տէրը կարող է թմրութիւնը ցրելու կամ քէֆի համար իր ստրուկին մաշկել, կարող է նրան անասունի պէս ծախսել, փոխիլ շան, ձիու, կովի հետ, մինչև մահ հեռացնել հօրից ու մօրից, քոյզերից, եղբայրներից ու այն ամենից ինչ սուրբ ու թանկ է նրա համար!... Ազորմած Աստածէ! Ո՞վ մարդկանց հայր! Պատասխան տուր ինձ, քո ամենաիմաստուն ձեռքն է արդեօք աշխարհ բերել այս օձերին, կոկորդիլոսներին, վագրերին, որ կերակրում են իրանց մերձաւորների մսով ու ոսկով և ջրի պէս խմում են նրանց արիւնն ու արցունքը»:

(Վերջը լաջորդ համարում):

## ՍԻՐԵՆՔ ԻՐԱՐ

ԱՐԱՄ-ԶԱՐԵԳԻ

Սիրենք իրար, ընկեր, ինչ փոյթ,  
Որ մեր կրօնքով ենք օտար.  
Ահա սէրը մեզ կրօն անսուտ—  
Պաշտենք, սիրենք մենք իրար:

Սիրենք իրար, աղջութեամբ թող  
1.ինենք տարբեր ու օտար,  
2.որ մայրը մեր է նոյն հոգ,—  
Սիրենք մեր մօրն ու իրար:

Սիրենք իրար, հոգ չէ թէ մենք  
Լեզու ունինք այլ, օտար,  
Սիրոյ հանուր լեզուն գիտենք,  
Արի սիրենք միշտ իրար:

1898 թ. 30 մարտի,  
Լարսլիդ:

## ԱՍԱՑԵՔ ՆՈՐԱՆ

ԱՐԱՄ-ԶԱՐԵԳԻ

Խորին գիշերով երբ աշխարհ հանուր  
Նիրհում է գրկած կեանք, մահ, լաց ու սուզ.  
Չեղի եմ դիմում, աստղեր մշտալուռ,  
Գուցէ օտար չեն ձեզ մեր արտասուք.

Ասացէք նորան ով կեանքն ստեղծեց,  
Որ երկրի վերայ մարդկութիւնը հետ  
Խեղճ է ու թշուառ, և ցաւերին մեծ  
Չունի կարեկից բարեկամ աննենգ:

1898 թ. 2 մարտի,

Լաւագիգ:

## ԵՐԿՈՒ ՕՐՈՇՈՅՆԵՐ

ԱՐԱՄ-ԶԱՐԵԳԻ

Այնտեղ,ուր մարդը առաջին անգամ  
Նիրհեց մանկական աներազ քնով,  
Օտար էր նորան տանջանքի շղթան,  
Եւ նա նիրհում էր անցաւ, անվրդով:

Ահա և այնտեղ, ուր վերջին անգամ  
Քուն մտաւ մահւան աներազ քնով,  
Օտար է կրկին տանջանքի շղթան,  
Եւ նա նիրհում է անցաւ, անվրդով:

97 թ. դեկտ 10

Լաւցիցից

## ՀԱՆՐԻ ՀԱՅՆԵ<sup>1</sup>

(1799—1856)

ԱՐԵԱԿ 20ՊԱՆԵԱՆԻ

Զառանցանք՝ բանականութիւնէ առաջնորդւած, իմաստութիւն որ կը ձափոտէր ոգևարի հառաջներ որոնք լանկարծ քըրքիջի կը փոխւին:

Հայնե. —Աթթա Թռու.

Օր մը, բնութեան մէկ յիմար քմահաճոյքովը, հրէայ զզայնութիւնը, հնդիկ խոկումը, հելլէն ներդաշնակութիւնը, գերման երազանքը և Փրանսական ծիծաղը իրարու խառնւեցան, և այդ արտակարգ ձուլումէն առաջ եկաւ ամենէն զմայելի հրէշը, որ երեցած է մարդկացին լնոտանիքին մէջ։ Հանրի Հայնէ իրականացուց հին առասպելը Ցնորք-Անսասունին, որ առիւ ծի մարմին, կնկան զլուխ և վիշապի թեւեր ունէր։ Իր գէճքը, մօսաւորական պատմութեան մէջ, ամեն կարգէ ազատ, կորոշւի եզական կնճռոտութեամբը, բազմապատիկ խնամութիւններով հիւսւած, առանց ո և է տան հետո ուղղակի կապ ունենալու։ Տեսակ մը անհուն աղջկորդի, կեանքին մէկ խորհրդաւոր քառուղիէն ծագած, և որ բոլոր դարերուն ու բոլոր ցեղերուն հոգին իր մէջ կը ցոլացնէր։

<sup>1</sup> Այս ուսումնասիրութիւնը գրւած է Հայնէի «Բանաստեղծութիւններ ու Քերթւածներու-ի հակերէն թարգմանութեան առթիւ, որ կատարեց Ատոմ Շահէն Մուրծ'ի սոխն աարւալ Նոն 1—5 և որ արտատպութեամբ լուս տեսաւ նաև առանձին զրքով։ Խմբ Մուրծ'ի

ԺԼ. դարու Ֆրանսան ազատ մտածման սուրը շողացու ցեր էր և միջնադարեան ոդիին բոլոր զնոտաններուն վերեւ պայծառ մոքեր աւանդական լուծը թօթափեր, դարաւոր խարէութիւնը երեան հաներ և ոճրագործ սխալը մատնանիշ ըրեր էին: Քննութիւնը յաջորդեր էր հաւատոքին. և արի մերունդ մը բողոք կը բարձէր կատանքներուն դէմ, որոնք միտքը դէպի հորիզոնը քալելէ կ'արգիլէին: Մզմաւանջը, որ մարզոց վրաց կը ծանրանար, այս ցերեկւան լոյսի ժայթքումէն փարատեցաւ. զիտութիւնը աղետաւոր կուռքերը կը կործանէր, հեռաւոր ու պատրողական յոյսերը կը քանդէր, կեանքը ինք իրմով կը մեկնէր, ու կը մզէր բնութեան օրէնքին համեմատ ապրիլ: Անվախ հեկնութիւն մը հին անուրջներուն, պատկառելի ստութիւններուն, վեհաշուք ասուշութիւններուն քթին կը քրքջար, և աւանդութիւններուն կմախքը կը ծաղրանկարէր՝ խարուսիկ պատմումաններուն փողփողումէն մերկացած: Յոյներէն յետոչ երկրորդ անգամ ըլլալով, ազատութեան և գեղեցկութեան սկզբունքնուն վրաց հիմնած ընկերութիւն մը կանգնելու խանդը կ'արթնար, ընկերութիւն մը, որ իր զլիսուն վերեւ միակ աստած պիտի ունենար—Իանականութիւնը, ինչպէս Ելլագան հովանաւորւեցաւ իմաստութեան զիցուհի Աթենասով. ցասում մը եռաց, ժողովուրդը իր ուժն և իրաւունքները ճանճառ, ցնցում մը ընկերութիւնը վերէն վար սարսեց, և մեծ Յեղափեխութիւնը պայմեցաւ:

Գերմանիա, նմանողութեան տժգոյն երկայն շրջանէ մը յետոչ, վսեմ աւելնով մը ոտքի կ'ելլէր ԺԼ. դարու հէսէն: Ռուսոչի կոշը, Վոլոտէրի քքքիջը, Դիբոոյի մտածումը Հաենոսէն անդին ճաճանչեր ու գերման հոգին արթնցուցեր էին: Նիբունգըններուն ցեղը, նոր կեանքով մը ելեկտրացած, կը ցցւէր միահազոյն, անօրինակ եռանդով, իր հանճարը արտայալտելու համար:

Ֆրանսական պողովարիկ մտածումը, ամուր և որոշ, հեգնութեան յեսանովը սրւած, զերման հոգիէն անցնելով՝ կ'այլափոխւէր խորին խոհանքի, մինչև աղջամուղջ հասնող մանւածապատ խուզարիումի, և աղատութեան տարտամ տարփանքի մը որուն մէջ կարօտը կար գէպի բարձր ու անծանօթ գեղեցկութիւն մը: Անդրհոենոսեան իմաստասէրները, աւելի ծանր, ինքնամփոփի, ներքսահայեց, բնութեան հողին ու զեցին թափանցել խիզախ ու միան-

գամայն պատկառու նայւածքով մը. Բէօմ, Եէլլինդ, Քանտ, Ֆիխտէ,  
կեանքին տիեզերական առեղծւածը հասկնալ փորձեցին. իրենց մէջ  
ալ տենչը կը միսար դէպի մեծ ազատութիւնը, իրենք ալ կ'ըղձային  
երջանկութեան ճամբան գտնել, բայց իրենց քալւածքը ոչինչ ունէր  
մարտական, գործնական՝ ինչպէս ֆրանսական մոքինը. իրենք, հէ-  
քեաթներու, բնազանցութեան, անտաներու և ոգիներու երկրին  
զաւկներ, կեանքը աւելի կնճռու կը տեսնէին և զանի աւելի բարդ  
կ'արտացայտէին, խորին ու հանդարա՛ ինչպէս ինքն խսկ կեանքը։  
Անմիջական բարեկարգութիւններին, ընկերական մակերեւոյթին փո-  
փոխումներէն անդին կը փնտռէին, մարդուն ու տիեզերքին հան-  
գոյցը կ'որոնէին, սկզբնական պատճառներուն կը ձգտէին հասնիլ, և  
կը խիզախէին մինչև սահմանը ուր մարդկային իրերուն շղթան կը  
կորսւի անծանօթին անհունութեանը մէջ։ Այդ ահեղ խուզարկու-  
ներուն դէմքը ծանր էր, վեհ տրամութեամբ մը օծւած, ամէն կա-  
տակէ զգոյց։ Բանաստեղծները կենդանի պատկերներու մէջ խոտ-  
ցուցին իմաստասէրներուն խոհանքը. Քլոայշոռք արդէն շատոնց գեր-  
ման ներշնչումը արթնցուցեր ու կրօնական խանդավառութիւնը  
հնչեցուցեր էր. Հէրդէր նոր մարդկութեան Աստւածաշունչը ուզեց  
կերտել. Ուլանդ միջին դարուն արհաւիրքն ու մելամաղձութիւնը  
երգեց և Քիւրգը, հեքեաթներու ծաղկին մէջ բնութեան ցոլքեր  
սողացուց. Լէսինդ գաղափարի բանաստեղծութեան դուռը բացաւ և  
դէպի Արևելք ու Յունաստան նայող արւեստ մը ուրւագծեց. Նիլ-  
լէր բարութեան, մեծութեան ու սիրոյ երգ մը բարձրացուց, ազա-  
տութեան բաղձանքը արտայացեց ու կարօտը գաղափարական աշ-  
խարհի մը. Գէօթէ արտազրեց գործ մը որ բնութեան ուզակի թե-  
լադրութեամբը կը թւի ձեւացած ըլլալ, գործ մը ներդաշնակ ու  
մթին, թաւալուն և հանդարա՛ և ուր, որպէս զի ամբողջութիւնը  
ըլլար՝ ինչպէս բնութեան մէջ, հեգնութիւնն ալ կը մտնէր խանդա-  
վառութեան հետ կից։

Մաքառող ու ծիծաղիոտ Ֆրանսային և ծանրախոհ երազուն  
Գերմանիային միջև, յանկարծ անակնկալ դէմք մը կանգնեցաւ և  
վայրկեան մը ամէն բան անհետացուց իր շուքին տակ։ Նապոլէոն  
ժայթքեցաւ ֆրանսական յեղափոխութենէն, ամբողջ գարու մը  
գործը կասեցուց, ազատութիւնը իրեն պատւանդան ըրաւ, գաղա-

փարը կոխոտեց, և ուժը տիրական տարածեց սարսափահար Եւրոպացին վերև։ Իր երկաթէ ձեռքը պահ մը ամբողջ աշխարհի վրայ երկնցաւ, և մատներուն մէջ մարդկութիւնը սեղմեց։ Սարսուռ մը անցաւ երկրիս երեսէն, ուղեղը կանգ առաւ, Երազն ու մտածումը սահմոկած սպասեցին, և Սուրը թագաւորեց։

Այս տեսդուս ու կնճռուս վայրկեանին էր որ երեցաւ Հանրի Հայնէ։ Ծնողքը հրէայ էին, և իր մանկութիւնը հրէական կրօնքին խիստ սկզբունքներով տոգորւեցաւ. ծննդավայրն էր Դիւսէլդորֆ, գերմանական պղոփհէ քաղաք մը՝ Հռենոսին վրայ, իր հէքիաթներով, դպրոցներով, փիլիսոփաներով և խանութպաններով։ Դիւսէլդորֆ այդ միջոցին նապոլէոնի լուծին տակ կը գտնւէր և ֆրանսական ազդեցութիւնը հոն հզօրապէս կը միանեար գերմանականին։ Ճղայութենէն, կը գրէ Հայնէ նամակի մը մէջ, Ֆրանսացի օդ ծծած եմ։ Զինքը զրկեցին քաղաքին ֆրանսական վարժարանը, ուր ֆրանսացի ուսուցիչներէ սորվէցաւ լեզուն ու գրականութիւնը այն ազգին, որուն հետ այնքան սերու մտաւոր կապեր պիտի ունենար. ատեն մը նոյն իսկ ֆրանսացի զինուրներ իրենց տունը բնակած էին, և անոնցմէ ուսած էր Ֆրանսան սիրել և ֆրանսերէնը մայրենի լեզուին պէս խօսել. իր մայրն ալ, ազատամիտ կին մը, Վոլտէրի և Ռուսօջի սիրահար, քաջալերեց իր տղուն հակումը դէպի Ֆրանսա. կանուխէն կարգացած և հասկցած ըլլալու է ֆրանսացի մեծ հեղինակները, մանաւանդ Վոլտէրը։ Օր մը նապոլէոնը տեսած էր, որ կ'անցնէր բարձր երիւարը մը հեծած, իր յաւիտենական աչլըներով, որոնք մարմարէ կայսերական դէմքին մէջէն՝ կը նայէին, ճակատագրին պէս հանդարտ, ոտքին տակէն անցնող զինուրներուն։ իր մանուկ զգայնութիւնը ընկծւած էր անոր գրեթէ դիցական մեծութենէն, և զանի մարդկացին զօրութեան խորհրդանշան մը ու Ֆրանսացին կենդանի պատկերը նկատած էր, ըմբռնում զոր անխախտ պահեց մինչև կեանքին վերջը՝ հակառակ իր ծայրացեղ վոռփոխութեան։ Իր թարմ ու ճկուն միտքը հիացումով ձգտեցաւ դէպի այն երկիրը ուր Վոլտէրին քրքիջը հնչած էր և ուրկից կուգար հրեղէն պատերազմիկը։ Գերմանական միջավայրին անխուսա-

փելի ազդեցութեամբը հանդերձ, Հայնէ իր գրական թոթովու մներուն մէջ իսկ արդէն կը զզացնէ հեգնութեան հակում մը, և իր առաջին գեղեցիկ ներշնչումը (Երկու Գործատիէ) <sup>1</sup> Նապոլէօնին սուերէն կը բղխի:

Հայնէ այն բանաստեղծն է, որ ոչ մէկ դպրոց, ոչ մէկ վարպետ կը յիշեցնէ և որ հետեւող չի կրնար ունենալι Բազմազան ազդեցութիւններու խաչաձեւումը այդ ժայրայեզօրէն ջղուտ խառնւածքին մէջ՝ առաջ բերած է ուրուացին ճապիութեամբ միոք մը, որ իրերն ու գաղափարները ցուցուցած է ամենէն անկացուն պրիսմացին մէջէն: Միոք մըն է անընդհատ շարժման մէջ, միշտ անհանդարաւ, բաց՝ ամէն գեղեցկութեան, ամէն բան իր ամէն երեսներովը ըմբռնելու կարող, ծիծաղելիին դէմ սպառազէն, ատեցող ամէն պայմանադրութեան և ամէն բանաձեւի, ինք իր մէջ գտնելով իր բացատրութիւնն և իր զոյնը, լայնօրէն ընտրողականն և սակայն երբէք անցարիր, կնճռուտ բայց երբէք անբնական, ոչ մէկ կուռքի երկրպագու, ոչ մէկ օրէնքի հնազանդ, ինքնավստահ և ապստամբ, միշտ դժորն, միշտ գալարւած, ու հակառակ աներևոյթ միմոսութեան մը՝ ահաւորապէս տիսուր: Այս ապշեցուցիչ խառնուրդը այն մեծ ժամանակաշրջանին միայն կրնար կազմէիլ, երբ փեռեկաւած հին աշխարհը հակայական երկունքի մը մէջ էր՝ նոր աշխարհ մը ծնելու համար, երբ ֆրանսական ազատ մատածումն ու գերման անդընդասոյզ խոհանքը իրարու հետ կը մրցէին, և երբ աշխարհ՝ Հաւաքական Ուժին պայթումէն և Անհատական կամքին յաղթական կանգնումն կրկնակի դղբգած, դանդաղկոտ ու սարսուագին, ճամբայ մը կը փնտռեր:

---

Հայնէի կեանքը ուղղակի ծնունդն է իր խառնւածքին, և իր գործը բնսկան ծաղիկն այդ կեանքին: Հայնէ անհատին յաղթանակն է միջավացքին վրայ էականապէս ազնւապետական միոք, հազւագիւտին և նուրբին հետամուտ: Խորշելով ամէն իդէալէ, որ մեծամասնութիւններէն կ'որդեգրւի, Հայնէ միշտ ինքզինքը անհա-

<sup>1</sup> Տես Հայնէ, թարգմ. Առում Շահէնի. Մուրճ № 5, էջ 614.

մաճացն գտաւ միջավայրի մը հեռ որ, իրմէ խորապէս տարբեր, զինքը կը ճմկէր և կը վիրաւորէր. իր զզայնութիւնը, ծալրայեղօրէն փափուկի, շրջակաց կոշտութենէն չարաչար գրգուած, ինք իր մէջ խոտացաւ, ինքզինքը ատով աւելի ուժգին շեշտեց, մինչև որ զատւեցաւ ելաւ այդ անսպատշան շրջանակէն, և ստեղծեց այն կեանքը, որ իրեն հարկաւոր էր: Թէև զուտ մտաւորական, Հայնէի կեանքը անդադրում գործունէութիւն մըն է, մշտական պայքար մը, որ նախ անմիջական միջավայրին դէմ կ'ուզդուի, և որ յետոյ կ'ընդարձակւի, ամէն բանի դէմ, ամբողջ տիեզերքին դէմ, ամբողջ կեանքին դէմ և նոյն իսկ ինք իր դէմ կոխւ մը կը դառնայ: Եւ քիչ անգամ ուհատ մը, իրմէ այդ աստիճան տարբեր միջավայրի մէջ ընկած է: Հայնէ, ազատ մտածման և ազատ կեանքի մարդ, առջի օրէն իր բոլորտիքը գտաւ հրեայ բարքեր, որոնց դրամի տարփանքը իրեն կ'ուզէին փոխանցել: Հայրը, վաճառական, ուզեց իր տղան առեւտուրի պատրաստել: Հայնէ կը խեղդւէր այդ բորբոսնած մթնոլորտին մէջ: իր հօրը խանութէն աւելի, անտառը զինքը կը դրաւէր, ոսկեգրամին շղիւնէն աւելի երազներու ոսկին զինքը կը քաշէր: Դեռ աղաց, գտեր էր իր ճամբան. ինքզինքը բանասսեղծ կը զգար: Առաջին ուսումն առնելէ յետոյ, Հայնէ Հոմբուրգ զըրկւեցաւ իր Սալոմոն Հայնէ միլիոնատէր հօրեղբօր քով: Իրեն առջև մէծ հարստութիւններու փայլուն կեանք մը կար պատրաստ: Հայնէ յամառեցաւ իր ընտրած ճամբուն մէջ մնալու. ողորմելի հաշւակալ մը ցուցուց ինքզինքը, և հօրեղբայրը, հակառակ իր ամբողջ ներողամտութեանը, սովորեցաւ զայն իր քովէն հանել: Այդ միջոցին էր որ Հայնէ ամենէն սուր հարւածներէն մէկը ընդունեցաւ արտաքին աշխարհէն: Համապուրզի մէջ, առաջին սիրոյ յիմար խանդրվը աղջիկ մը սիրեր էր, որ իր սիրոյն սրատախաներ և յաւիտենական հաւատարմութիւն խոստայեր էր, աղջկան ծնողքը, Հայնէին հարուստ ազգականներէն շլաշւած և անոր ապագայ զեղեցիկ դիբքը գուշակելով, հաւանութիւն տւած էին անոնց ամուսնութեան. բայց երբ Հայնէ ճամբու դրւեցաւ հօրեղբօրը գրասենեակէն, աղջիկը՝ ծնողքին հրամանով՝ լրբութիւն ունեցաւ իր սիրականին երեսն իվեր ըսելու թէ խաբւած էր զանի սիրել կարծելով և թէ լաւագոյն էր որ ան իրար չտեսնէին, և քիչ յետոյ, ունե-

ւոր ապուշի մը հետ ամուսնացաւ։ Հայնէ, սրտէն զարնւած, կնոջ կեղծուորութիւնը և ընկերական կազմւածքին անբարոցականութիւնը զգաց ամբողջ դաւնութեամբ։ Այդ առաջին պատրանքը հայնէի մէջ յաւիտեան մնաց մշտակործան աւերակի մը պէս, և անոր մոլխիրը կը զգացի իր գործին մէջ ծացրէ ծալր։ Բայց այդ սէրը որ մեծ ու անկեղծ յուզումը ճանչցուցեր էր իրեն, տւաւ անոր սրախ շեշտալ որով իր առղերը կը պողան, երբ հեղնութիւններուն մէջէն իր հոդիին խորքը ընդնշմարել կուտայ։ այդ սէրը իրեն սորվեցուց բնութեան աշւըներուն մէջ կարդալ, և զինքը կարող ըրաւ լալու այնպէս ինչպէս՝ երբեմն՝ Հայնէ գիտէ լու։ Այդ յուսախարութիւնը անոր սիրուը վերջնապէս թունարկեց, և հոն տարապայման կերպով հասունցուց դասոնութիւնը, որով հետզետէ կնանքը պիտի նկատէր իրը ահաւոր ու շքեղ թշնամին և կինը իրը գողտրիկ ու վասնպատոր թէրէքը (Եսեց) որոնց դէմ պէտք էր զինւիւ անհողութեամբ, ծիծաղով և արհամարհանքով։ Նստաւ իր ցաւ երը երգեց, իր սիրոյն առաւօտիլը պատմեց, և իր վէրքին կածանքը աղաղակից։ գիւտ տղայ բանաւոնկղծութիւն մըն էր, ուր հեգնութիւնը իր իմի զլուխը շատ վախկոտ կերպով կը ցուցընէր անուշ տրտմութեան մը ծաղիկներուն տակէն։ Այդ ողբերու փունջը, զոր հրատարակեց Առաջին տառապանք տիտղոսով, անհշան անցաւ Թարմութեամբ երգ մըն էր, և հանրային ճաշակը, այն միջոցին ռոմանահիկ երժներանգութիւններուն մոլի, պարզ զգացումէն հեռացած էր։ Հայնէ, շւարած, ապրուտի միջոց մը ունենալու համար, որոշեց իրաւագիտութիւն ուսանիլ։ հօրեղբայրը յանձն առու իրեն օգնել, պայմանով որ աւելի յաջող լլլար իրը ուսանող քան ինչ որ եղած էր իրը հաշւակալ։ Հայնէ Բէրլին գնաց և համալսարանին գասերուն հետեցաւ քանի մը տարի չարաչար ձանձրանալով հանգերձ, ընթացքը աւարտեց և իրաւագիտութեան դոքտորի վկաչական ստացաւ։

Բէրլին անցուցած տարիները Հայնէի մտաւորական զարգացմանը նպաստեցին. այդ ամբողջ ուսանողական շրջանին մեծագոյն մասը՝ օրէնքներու հետ որոնութենէն աւելի, զերման զբականութիւնն ու իմաստասիրութիւնը ուսումնասիրելով անցուց։ Իերլին մէջ ճանչցաւ ժամանակին ամենէն երևելի զիտնականներն ու դրա-

գիրները, մասնաւորապէս Շամիօն, Ֆուքէն, Սաւիյնին, Վարնհագէնը, և մանաւանդ Նեգէլը, որուն դասերուն հետևեցաւ և որուն գեղեցկագիտական—իմաստասիրական վարդապետութիւնից խորապէս ազգւեցաւ։ Նախապաշարումներու թշնամի, կրօնամոլութենէ զգուոյ իր միտքը խանդով յարեցաւ վարդետին խօսքերուն, որոնք մարդագիտար ասուածներուն ծիծաղելի վաքրոգութիւնը կը նշանակէին և կ'ուսուցանէին թէ մարդը ինքն իսկ ասուած մըն է, ստեղծագործ իր տիեզերքին, և մանրաստակեր տիեզերական ասուածութեան որ անհունը կը լիցընէ։ Հայնէ, որ յետոց Նեգէլն ալ սլիտի կառակէր, անկից ընդունեցաւ միակ կրօնքը որ իր ծփանուու ու միանգամայն յուզումնական բնութեանը կը պատշաճէր, —հա Խաստածութիւնը։

Նոյն առեն, Հայնէ ինքզինքը դուռ գերման գրականութեան ամենէն ազմկալից մէկ շարժումին մէջ։ Նիլէր մեռած էր արդէն և իր բանաստեղծութեան վսեմ անսուածին խորը կը քնառար. Գէօթէ, վեհափառ ծերութեան կատարէն՝ հանդարտ ու ներդաշնակ լոյս մը կը տարածէր հորիզոնին մէկ ծայրէն միւսը. երկու հսկաները ամենուն հիացումը գերած էին։ Հայնէ անոնց առջեւ երկիւ դաճօրէն խոնարհեցաւ, մէկուն դիւցազնական հոգիին պքան. չանալով ու միւսին ասուածային հաւասարակշռութիւնը պաշտելով, թէն. երկուքէն ալ ինքզինքը հականապէս տարբեր կը զգար։ Սակայն, օրւան մտահոգութիւնները, ձգուումները և ճաշակը արդէն հեռու էին երկու բանաստեղծներուն շրջանին ոգիէն։ Նապոլէոնի լուծէն աղատելու համար, 1813-ին Գերմանիոյ ցնցումը՝ որ յաջողած էր, հայրենասիրական բանաստեղծութեան մը ծնունդ էր տւեր, որուն դրօշակիին եղած էր Փէօրնէր. Փրանսաստեաց երգեր, պատերազմի աղաղակներ, արինհեղութեան մանչիւններ բանաստեղծութեան մէկ կարեւոր սեռը ձեւացուցած էին, որ իր հետեղներու խումբն ունէր. միւս կողմէ, վրանսական զրականութեան տիրապետութենէն զերծանելու համար, Նիլէրէն յետոց, որ ազգային մատենագրութեան մը ճամբան բացած էր, Նեգէլները ուղղութիւնը շափականցած, վրանսական վարդետները գետնէ զետին զարկած և զուտ գերմոնն արւեստ մը ուզած էին ձեւակերպել. ատոր համար, փորձեցին Աւլանդին գործն ընդարձակել, միջին գարու կեանքը վերակենդանացնել իր աւանդութիւններով, իր հզօր ու մթին պատ-

կերներով, և զայն արտայայտել գերման զբայնութեան ու երեա-  
կայութեան ինքնուրոյն ոգիովը: Գերման ոսմանուիկ գրականութիւնն  
էր որ դպրոցի մը իմաստակ ձեւը կ'առնէր: Հայնէ, դիւրագրղիս, նախ  
հրապուրւած էր այդ գունդեզ ու ցնորական դպրոցէն, ինք ալ անոր  
մէջ մտաւ, նոյն իսկ Շլէզէներուն ի պատիւ հնչեակներ ձօնած և  
միջնադարեան բալլագներ գրած էր. բայց շուտով զգաց այդ գըպ-  
րոցին ծանրաբեռնւած սնամէջութիւնը, անոր թառձր և անհամ-  
անկենդանութիւնը, ու ետ քաշւեցաւ:

Նոյն միջոցին, Անգլիոյ մէջ, ուրիշ բանաստեղծութիւն մը կը  
բարձրանար, նոյն ոսմանուիկ ձգտումէն ծնած, բայց տարբեր հո-  
գիով. անոր յատկանշական վարպետն էր Բայբըն: Այդ բանաստեղ-  
ծութիւնը կրակոտ, տենդոտ, թևաւոր էր. անոր մէջ, միջնադա-  
րեան երանգապնակը կ'ոգեսոր էր ջղային գալարումով մը որ անծա-  
նօթ է գերմաններուն. մտածումը, դանդաղ խոկման մը մէջ թուլ-  
նալու տեղ, կը պրկւէր հոն, կը ցատքէր, կը ցցւէր մինչև երկինք,  
վիհերն ի վար կը գահավիժէր. արագ, ցիմար, հիւանդ ոստումներ  
ունէր, վախկոտ սովորականութիւններէն, ամօթխած պատշաճու-  
թիւններէն, հւաւանդ ծանրաբարոցութիւններէն զուրս կ'ելլէր. ամ-  
բարիշտ ու կատաղի աղաղակներու կը յանդգնէր, ամէն յարգանք կը  
նետէր, ամէն երկիւղ կը կոխոտէր, ամէն ամօթ կ'արհամարհէր. կը  
կռւէր, կը բողոքէր, կը հայնոցէր, կը հեգնէր ու կ'անիծէր: Հայնէ,  
իր խառնւածքին ամբողջ ուժովը դէպի այդ նոր ձախնը մղւեցաւ:  
Անոր մէջ կար Վոլտէրին քբքիչը՝ աւելի կծու դարձած, Դէօթէին  
հայեցողութիւնը՝ աւելի խանդոտ, նւազ պայծառ, այլապէս թա-  
փանցական, և Շիլլէրին վեհանձն մաքառումը՝ մոլեգնած, փրփրած,  
յուսահատութեան մօտիկ: Հայնէ ցնցւեցաւ այդ մըրիկին շունչն.  
անոր կապարագոյն փայլակին լոյսովը՝ ինքզինքը տեսաւ, ինքզինքը  
ճանչցաւ, և հասկցաւ ինչ որ ունէր ըւելիք: Ֆրանսայի մէջ, նա-  
պոլէօնի անկումէն յետոյ, ազատ մասածնան շարժումը վերսկած էր՝  
յստակ, առողջ ու աշխոյժ աւիւնով. ռոմանուիկ ոգին հոն խիզախ  
ու վառվուն ձեւ մը զդեցած էր. Նապոլէօնին տիտանեան ճնշու-  
մէն ազատւած, Փրանսական միոքը անցուսազ ոստումով վեր կը նետ-  
էր, կ'ուգէր յեղափոխութեան դործը շարունակել. հակառակ կրօ-  
նական ցու զման տարտամ ձգտումի մը որ մաքերուն մէկ մասը սքօ-

զած էր, Ֆրանսայի մէջ պայքար մը կը պատրաստէր՝ ընկերական ու մտաւորական հին բանաձևներուն դէմ Թագաւորութիւնը, որ կայսրութեան յաջորդեր էր, կը սկսէր դղրդւիլ իր հիմերէն. ռամէ կավարական գաղափարներուն վերականգնումը կ'ուրեադեւէր. Ֆրանսան նորէն գործունէութեան դաշտ մը, շարժուն կեանքի ասպարէզ մը դարձած էր: Հայնէ զգաց իր մէջ հզօրապէս կազմէիլը մաքառողին. ուժերը ժողւեց, ինք իր մէջ ամփոփւեցաւ, և կոխւը սկսաւ:

Այդ անջատումին, այդ ինք իր մէջ առանձնացման, այդ պայքարի տենչանքին զինքը մղող մեծ շարժառիթ մըն ալ՝ իր ցեղն էր: Հրէաները հալածւած ու արհամարհւած դասակարգ մըն էին Գերմանիոյ մէջ: Հայնէ իր ցեղակիցներուն տղեղութիւնները և թերութիւնները չանտեսելու չափ ուշիմ էր. «Հրէաները, կը գրէ նամակի մը մէջ, հոս ինչպէս ուրիշ տեղ, վաշխառուներու և գրաւառուներու ջոկ մըն են, հին քուրչերու ազտոտ ու զազիր գէզի մը երևոյթով»: Բայց կը տեսնէր որ հրէաները արհամարհող քրիստոնեաները անոնցմէ աւելի չէին արժեր, տարբեր գոյնի տակ՝ նոյնչափ զզւելի և ծիծաղելի էին, ու կը տառապէր ինքզինքը արհամարհւածներուն մէջ զդալով: «Արնաք գուշակել, կը գրէ, թէ բարձր դասակարգի մարդիկ, ինքնակոչ աղնւականները, ինչպէս կը վարւին մեզի հետ. իրենց շուներն անգամ մերիններուն հետ գոռող ձեւը կ'առնեն...»: Այդ հպարտ և նրբազդաց մարդուն համար, զիծեցուցի: չարչարանք մը ըլլալու էր աս. և իր առաջին գործերէն մէկը, Ալմանսոր ողբերգութիւնը, որ բայցընեան ազդեցութեան տակ գրւած քերթւած մըն է, Միջին դարուն Սպանիոյ մէջ հրէաներուն կրած հալածանքները կը նկարէ՝ ծայրագին գոյներով: Ծնունդովն իսկ հալածւածներու խումբին պատկանիլը Հայնէն զրպեց անօրինակ ուժգնութեամբ մղել իր ատելութիւնը հալածողներուն դէմ. իր ցեղին մասնաւոր կացութենէն զգացած ցաւը աւելի խորին կերպով իրեն հասկցուց բոլոր հարսուահարեալներուն տառապանքը... Գերման զգացնութեան խաւը, որ խորին էր իր մէջ, թոթվւեցաւ այս սարսուեն, թափանցւեցաւ ֆրանսական ցասումին կրակովը, ու թեթե, հեղուկ, շարժուն, եսուն նիւթը դարձաւ, որ իր ասպարազ էջերուն մէջ հազար գոյն, հազար ձեւ, հազար զիզզագ պիտի տանէր: Օր մըն ալ, սրանեղութենէն»

յանդուղն որոշում մը տւաւ. անխուսափելի արհամարհանքէն զերծանելու համար, հրէաց կրօնքը թողոց, բողոքականութիւնը ընդունեցաւ, և ինք որ ծիծաղելի ըլլալէն կը գողար՝ մկրտիլ չանչն առաւ իրաւ է որ այս դարձը կատարեց ամենէն սկեպափիկ անհոգութեամբ՝ ուր քիչ մը հեգնութիւն կը խառնէր: Արեսին նետեցին որ շահու համար կրօնք փոխած էր. այն ատեն, կատագած, լրբութիւնը ձեռք առաւ, բացէ ի բաց յայտարարեց թէ կրօնքը փոխած էր՝ զործ մը գտնելու համար. անշուշտ իր ծշմարիտ զգացումը հետու էր ունենալէ այն անամօթ շահասիրութիւնը զոր կատակով կը խոստովանէր, և նոյն իսկ, եթէ այդ զեպքին հոգեբանութիւնը քննենք, իր աղատական գաղափարներուն զոհացում տալու առիթ մը գտած էր հետանալով հրէական կրօնքէն զոր հին բռնաւորական աւանդութեանց մէկ յետամնաց հետքը կը համարէր և ընդունելով բողոքականութիւնը զոր կը նկատէր, — ինչպէս ետքէն զրած է նամակի մը մէջ — ոչ միայն աղատամիտ կրօնք մը, այլ և չուկետը զերման յեղափոխութեանու իր վարմունքը, իրեն համակրութիւններ բերելու տեղ, նախատինքներ բազմապատկեց իր շուրջը և զգանքներ իսկ յարոց. թշնամիները շատցան իր կատաղութիւնը հետզետէ աճնցաւ ու սրւեցաւ, աւանդական պատկառութիւններուն վերջին մեացորդները վանեց, և աւանց զիմակի սկսաւ իր ամբողջ խորհածը ամենուն երեսին նետել: Իր զայրոցթը հիմա կը ցցէր ոչ միայն հրէութեան հարստահարիչներուն, այլ բոլոր կեղեքողներուն զէմ: Հրէաներուն տառապանքէն ետքը, տեսաւ նոյն իսկ զերման ժողովրդին սորկական համակերպութիւնը բռնակալ ուժերու և ճնշող պայմանադրութիւններու հանդէպի ֆրանսացի օրինակը զինքը կը քաջալիկէր ու կը խանդական արձակեցին, անոնց թերթերը արիւնի գոյներով վասեցան. իր վարդերն իսկ թունաւոր բոլոր փուշերը, որոնք վարդերուն տակ ծածկւեր էին. իր վարդերն իսկ թունաւոր բուրդներ արձակեցին, անոնց թերթերը արիւնի գոյներով վասեցան. իր բանաստեղծութիւնը տարբազագրութեան զոյներով եռաց, իր արձակիլ լուծիչ թթուներով զինւնցաւ. յօդւածներով, երդերով, վէճերով, երդիծանքներով արորեց ու բզքտեց թանձը անշարժութիւնը, որուն մէջ երկրին հողին թաղւեր էր: Իր Ռայզէշարժութիւնը, որուն մէջ երկրին հողին թաղւեր էր: Իր կատարած ըիլլէթը, որ Գերմանիոյ, Խոտալիոյ և Անդիլոյ մէջ իր կատարած

Ճամբորդութեան տպաւորութիւնները արտայացտելու պատրւակը ունէր, սովորական ուղևորի յուշագիրներէ հիմնապէս տարրեր, ամէն քոնէ առաջ պայքարի զիրք մըն էր: Ոչ թէ թիթուան անհոգ թուշկոտանք մը ծաղիկներու շուրջը, այլ մեզի վազվուսուք մըն էր սացրասուր երգով, ծաղիկներուն հոգիին իսկ սիրահար, ապագայ մեղրին մարմաջովը վառւած, բայց ունենարով խաչթոցը ապուշ խոշընդուներուն համար: Խաչթոցը ահա որ էր, թէւ զմացլելի կերպով նուրբ ու սիրուն: ոչ մէկ բանի խնայեց. բարքերուն կոշտութիւնը, գրականութեան դանդաղ ճոռումութիւնը, գրաքննական ծիծաղելի խստութիւնները, գորոցներու թմրած իմաստակութիւնը, ժողովրդին մէջ ամրացած անձկամիտ հացրենամոլութիւնը, պաշտօնեաններուն ամբարտաւան անբարոյականութիւնը, կառավարութեան ճնշողական կազմակերպութիւնը, ամբոխին անդիտակից համբերութիւնը, բոլոր այս վերքերն ու պալարները երեան հանեց իր անվախ յարձակումներովը ու մահացու խածւածքներովը: Առանց վարանելու կը յացանէր իր համակրութիւնը խալիոյ ջղուտ ժողովուրդին համար որ զեղեցկութեան բնապական բմբոնումն ունի, և ֆրանսացի խրոխտ ժողովուրդին համար որ ազատութեան տարփանքն ունի: Գիրքը մըրիկ հանեց երկրին մէջ. ոչ միայն կուի գործ մըն էր ան, այլ և նոր զգացնութեան մը, նոր ձեւի մը, նոր ոգիի մը բողբոջումը. անհամար դժոհներուն հետ, հիացողներ ալ յառաջ բերաւ. ամենէն կծու յարձակումներուն մէջտեղւանքը, քնարերգական գորովի էներ կացին հոն, որոնց մէջ զերման հոգիին ճշմարիտ մեծութիւնը հասկցւած ու երգւած էր՝ ինչպէս թերես երթէք չէր եղած այդ շեշտով. բայց միենոյն ատեն, այն ազեղ ու նեղ հագուստները որոնց մէջ սեղմեր էին մեծ զեղեցիկ հոգին, չարաչար կը բզբաւէին այս յանդումն ու նոր մոտածումնն: Արձակագրին հետ, զուդահեռական զարգացումով մը, բանաստեղծն ալ, նոյն շունչն մզւած՝ կը յառաջանար: Ծիկնոյն ողին կը թրթաւացնէին իր երգերը որոնք իր արձակին խսկութիւնն էին՝ խտացած ու նրբաքանդակ ոսկի խնկամաններու մէջ ամփոփւած: Իր լիդնը ը, Բայլաղները, երդիծանքները՝ աղամանդի կաթիլներու ձեռվ կը ցրցընէին քբքչացող տենդը իր անհանդարա հոգիին: Իր ներշնչումը, միշտ անհանգիւտ, միշտ անկայուն, հազար հագուստ, հազար դէմք կը փոխէր,

ժողովրդական երգի վճիռ սպարզութենէն վոլոկրեան լիտի կատակին կը ցատքէր, հոգեպաշտ խանդավառութենէն անասուած հայնոյանքին կը դիմէր, և երբեմն ամենքը իրար կը խառնէր արտասովոր համարձակութեամբ մը, և միշտ անկեղծ կը մնար, անձշմարտանման, բացց իրական։ Մերթ ալ, ծաղրէն յոգնած, ինքզինքը կը ձգէր իր հոգիին ճշմարիտ խորքը կազմող ազնիւ յուզմունքներուն, և իր զմացանքներն ու երազները կը պատմէր. Հիւսիսային ծովին երգերուն մէջ բնութեան մեծ հոգիին հետ կը հաղորդակցէր, անոր քմայքները, զայրոյթները, ժաղամազնութիւնները, կը նաւագէր. Ինթերմեցցոյին մէջ սիրոյ հեղնական եղերերգութիւնը կը հիւսէր, արծաթ բոժոններու թօթվառքի մը մէջ իր հեծկլաւնքները խեղդելով. ու վերաղարձ'ին, մէջ, իր առաջին սիրոյն արտում՝ յիշատակը կը բրբրէր և, յուզմունքէն զինաթափի, ծիծաղը մէկ կողմնետած, ցաւին դիմացը ծնրադիր, կնկան որէս կը հեծկլաւար։ Այս յուզմունքն իսկ թեթև էր սակայն՝ շունչի պէս, ողբերգական ծանրութիւններէ զգոցը, շատ սուր բացց շատ ալ բարակ՝ չափազանց թանկագին ու փափուկ բռւրման մը նման։ Այդ կարճաւոև անձնատուութիւնները միշտ կ'ընդհատուէին ալ աւելի անզութ հեզնութեամբ մը, և յուզումը նորէն կը փութար լկութեան հասնող չարութեամբ մը զիմակի իլ։ Այս բանաստեղծութիւնը, մտածումովը, զգայնութեամբը, ձևովը նոր ու խոռոշիչ, անհանդիսու ըրաւ ամբողջ գերման լնկերութիւնը. գրականութիւնը; գարոցները, վարչութիւնը, ժողովուրդը, բարքերը, անձնաւորութիւնները, ամէնքը զիրենք վիրաւորւած զզացին իրենց հանդարտութեան և իրենց սովորութիւններուն մէջ։ Փոքր մաս մը այս ձայնին հրապոցն ու զօրութիւնը լմբռնեց, և հին հիացումներու աւերակին վրայ ուզեց Հայնէի փառքը բարձրացնել իր նոր գեղեցկութեան մը արշալոցը. ռոմանտիկ զպրոցը տեղէն խախտեցաւ։ Մեծամասնութիւնը յամառեցաւ վտանգ մը տեսնել ուր որ պատիկ խումբը վերակենդանացում կը տեսնէր. հալածանքները բազմացան. Հայնէ ամէն կողմէ զինքը հակարութեամբ ու ատելութեամբ պաշարւած զգաց. իր հարուստ ազգականներն անգամ, որ իրեն կ'օգնէին, սպառնացիննապասար դադրեցնել եթէ ընթացքը շարունակէր։ Այդ միջոցին, 1830-ի ֆրանսական յեղափոխութիւնը պայմանացաւ Պարիզի մէջ. ազատ գաղափարները յաղթանակեցին. Հայնէ, ձանձրացած իր երկրէն, ուր պայքարն անգամ ալ անհամ կ'երեար իրեն, որոշեց թողուլ իր մարմնական հայրենիքը, ուր կը խղզւէր, և իր մտաւոր հայրենիքը երթալ։ 1831-ին հեռացաւ Գերմանայէն և Պարիզ հուստատուեցաւ

(Շարունակելի)

## ԵՂԲԱՅՐ

ԱՐԴԱԿ ԱԹԱՑԵԱՆԻ

Արմի, եղբայր, վերջին ոյժըս  
Քեզ համար եմ խընայել.  
Ճամբաց ունենք, գընալ պէտք է,  
Քանի գիշեր չէ եկել:

Կը գայ խաւար, մեր բախտըն էլ  
Տերեւի պէս կը դողայ,  
Ահ կը պատեն մեր սրտերը,  
Կեանքը մեզնով կը խաղայ:

Քամին զարկեց ահա դուռըս,  
Զարկեց քամին բօթաբեր.  
— Ի՞նչ ես երգում, ասա՞ քամի',  
Թափառական անվեհեր:

Քամին զարկեց, շառաչ հանեց,  
Մտաւ, պտոյտկալ արաւ  
Եւ վայրենի մի խաղ սարքեց,  
Պարեց, նետւեց ու թուաւ:

— Ո՞ւր ես վազում պատմի՛ր, քամի',  
Ինչեր եղան հարաւում,

Ինձ ի՞նչ բերիր, արիւն—արցմոնք,  
Դարձիր, քամի՛ անդադրում։

Բայց նա կորու... ինչու, եղբայր,  
Նա ինձ չասաց իր գաղանին--  
Չլինի՛ թէ նա բերաւ, տարաւ  
Մըրմունջները քո վերջին!..

Բայց քեզ համար վերջին ոյժըս  
Ինչպէս էի խընայել,  
Դեռ ճամբայ կար, պիտի գնայինք,  
Քանի գիշեր չէր հասել...

1898թ. 20 ապրիլի  
Բաքու.

---

## ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓԵՐԻՆ

(Ցիշողութիւններ ու տեղեկութիւններ թիւրքահայ զաղթական-ների կեանքից ու աշխարհից)

### ՅԱԿՈԲ ՄՈՒՐԵԴԻԵԼՆՑԻ

(Կարունակութիւն <sup>1</sup>)

### II

Տրապիզոնի վիլայէթը կամ հին Պոնտոսը նեղ չնրտով տարածւում է Սև ծովի հարաւային ափերին, արևելքից հասնելով մինչեւ ռուսաց սահմանը (Բաթումի շրջան), արևմուտքից անցնելով Սամսոն և Բաֆրա քաղաքներից ան կողմբ, հարաւայից կցւելով էրզրումի ու Սիւասի և Սիրաւտիա (վիլայէթներին). Տրապիզոնի վիլայէթը կազմում են չորս սանջակներ՝ Լազիստանի (Քիդէի), Տրապիզոնի, Գիւմիւչհանէի ու Ջանիկի (Սամսոնի). Այդ բոլոր սանջակներն ել ձգւում են ծովի ափերին. միմիայն Գիւմիւչհանէի սանջակն է կորուած ծովից: Տրապիզոնի վիլայէթի հայերի թիւը համեմատելով լոյների ու մուսուլմանների թիւի հետ՝ անհան է: Այս երեսութիւ սպաժճառուը, ինչպէս տեսանք, թիւրքական բռնութիւններն են, որոնցից տիփուած՝ հայր դարերի ընթացքում կամաց-կամաց կրանւել է մահմէդական տարրից, անպէս որ՝ այսօրւան օրս նուն իսկ վիլայէթի մահմէդական ժողովրդի մեծ մասը մասնէդականացած հայեր, լոյներ, լազեր ու աջարացիներ են, Վիլայէթուում հաները աւելի տարածւած են Տրապիզոնի ու Ջանիկի (կամ ինչպէս հայ զաղթականներն են ասում՝ Ճընիկի) սանջակներում: Տասնեակ տարի առաջ այդ երկու սանջակներում մօտ 18 հազար հայ էին հաշւում <sup>2</sup> առաջն.ում՝ 9200, միւսում՝ 8240. իսկ Լա-

1. Տես Մուրճ 1898 թ. № 4:

2. Լ. Արդուսեանց. «Այց Թ. Հ.».

զիստանի ու Գիւմիւշնանէի սանջակներում նրանց թիւը շատ քիչ է եղել։ Հազիւ երեք հազարի է հասել. Այժմ Կոտորածներից ու անվերջ շարունակող գաղթական շարժումների պատճառով հաւանական է որ հայերի թիւը շատ աւելի քչացած կը լինի. գուցէ նրանց կէսն էլ մնացած չլինի։

Տրապիզոնի սանջակում հայերը ապրելիս են եղել զլխաւրապէտ երկու գաւառամասերում՝ Յօմուրալի ու Աղջաբաթի վիճակներում և մասմբ էլ Կարադէրէ առած տեղում. Յօմուրան գտնուում է Տրապիզոնից արենելք և բռնում է Դէլերմէնդէրէ ու Սամալու գետերի մէջ տեղը, մօտ 8 ժամ տարածութեամբ արենելքից արևմուտք, և ծովափից մի 4-5 ժամ դէպի հարաւ, լեռնակողմը. Յօմուրան կազմելիս է եղել մի առանձին վիճակ՝ նահիչէ, որի միւղիրը մշտապէս թիւրք է եղել և նշանակւել է Տրապիզոնի վալիից. Դիրքով ալդ վիճակը մօտիկ նմանութիւն է ունեցել Սև ծովի Անատոլիական ափերի միւս բոլոր տեղերի հետ. մկուելով բոլորովին ծովի մօտից, ցածր ու դաշտազին ափերից, հետզհետէ քանի քնացել դէպի երկրի խորքը՝ անհարթ և լեռնալին դիրք է ստացել, լեռնալին երկրին յատուկ առողջարար, զով կլիմալով ու պաղ ազրիւրներով, խկապէս աչդ վիճակի հաջարնակ զիւղիրը ալդ լեռնալին մասումն են գտնւել, բացի Տրապիզոնին մօտիկ մի-երկու հայ զիւղիրից. Նոյնն է եղել և միւս վիճակում՝ Աղջաբաթում և, եթէ չեմ սխալում, նոյն դիրքն են ունեցել շատ քիչ բացառութիւնով Անատոլիական ափերը հաջարնակ զիւղերի մեծ մասը. Հայ զիւղերը սովորաբար շինաւած են եղել կամ լեռների ու բլուրների լանջին կամ ստորոտին. Ցածր տեղերից հայը աշխատել է միշտ հեռու մնալ, չուզենալով զրկել լեռնալին մաքուր ու պաղ ջրերից ու օղից Քայլ չուզենալով հեռու մնալ լեռներից, նա միշտ լաւ ու չարմար հողի պակասութիւն է զգացել. Ալդտեղ, ինչպէս և ամեն տեղ իր հայրենական ափերում ոչ միան սեփական հող շատ քիչ է ունեցել, համարեա թէ չէ ունեցել, ալլ ունեցած, վարձով վերցրած հողերն էլ մի բան չեն եղել—մաշւած ու տարւած, քարքարոս ու անբեր. Տրապիզոնի սանջակում չիշւած վիճակներում հողը՝ բացի անբեր լինելուց, լեռնալին ու անհարթ դ'րքի պատճառով նոյն իսկ մշակութիւն ստիպւած է եղել միայն ձեռքով անելու, եկ ու սալլ նա չէ կարողացել բաննեցնել իր անմատչելի ու դժւար պառակներում. Բոլոր տեղերը նա ձեռքով ու ինտասով է դարձրել և շալակով կամ ձիով բերքը տուն կամ քաղաք կրել, Կրելու համար նրանք ոչ սալլ են ունեցել, ոչ էլ եղներ պահել, չնայելով, որ նրանք բոլորն էլ երկրապարծ են եղել. Նրանց բոլորի կերակրողն էլ հողն է եղել.

Տրապիզոնի ամենամօտիկ զիւղն է Զէֆանող, քաղաքից 7-8 վերստ հեռու, առաջ ունեցել է 50 տուն հայ բնակիչ, քարաշին եկեղեցի ու հըպորոց. Այժմ եկեղեցին տան տեղ է ծառալում. կոտորածից ալդտեղ են ա-

պաստանւել անտուն հայերը, որոնց աներն ուրիշ կալքերի հետ միասին թիւրքական զաղութների գոհ են դարձել. Միմիան 36 շէնք արդ գիւղումն են արել թիւրքերը վերջին կոտորածի ժամանակ, բացի աներն ալրելուց ու թալանելուց, 10 հոգու էլ սպանել են, չխնաւելով նույն իսկ մի 95 տարեկան զառ ամեալ ծերին. սպանւածների մէջ է և գիւղի քահանան: Թէ այդ և թէ միւս գիւղերում, ինչպէս պատմում են, կոտորածի ժամանակ սպանւածների մեծ մասը ծերերից է լինում, որոնց բոլոր մեղքը այն է լինում, որ երիտասարդների արէս որդ չեն ունեցել սարերը փախչելու. դրանց վրայ է գործ զրել իր զազանալին քաջադործութիւնը բարբարոս ու բռնաւոր թիւրքը: Զէֆանողը քաղաքի ամենալաւ ու ամենագեղեցիկ ամարանոցներիցն է, ինչպէս պատմում են՝ աները քաղաքի չէնքերից չեն չոկնել, և իր մօտիկութեան ու մի քիչ էլ լեռնալին զիրքի համար (Քաղաքից թէն բարձր, բաց վիճակի միւս հայ գիւղերից աւելի ցածր) մեծ չարմարութիւն է ունեցել իրեն ամարանոց ծառալելու: Գիւղին մօտիկ կան և շատ թիւրքեր, որոնք ջոկ թագ են կազմում և ջոկ էլ տանուաէր ունին իրանց համար—կոօմիլա. զուա հալաբնակ գիւղ, ալզտեղ էլ մի 50 տուն բնակիչ է եղել. ունեցել են և եկեղեցի: Կոտորածի ժամանակայդ գիւղի քահանաւին էլ սպանել են:—Կուարա. թիւրքաբնակ գիւղ է, մի հ-հ տուն հայ էլ ալզտեղ է եղել:—Խօց. լունաբնակ գիւղ է. լուների հետ խառը ապրել են մի 20-ի չափ հայ տներ, համարեա ամենքը քաղաքացիներ. նրանցից մի ընտանիք միան գիւղացի է եղել: Կումլու՝—Զէֆանողի չափ քաղաքից հեռու և նրան չառ մօտիկ. բնակիչների մեծ մասը թիւրքեր ու լուներ են. մի քանի տուն հայ էլ ալզտեղ կան:—Շանա (կամ հայերի ասկով՝ Շոնա)՝ Յօմուրայի վիճակի հայ գիւղերի մէջ ամենամեծն է ու անւանին. Տրապիզոնից 3 ժամ հեռու. մեծ դիւզ է, մի քանի թաղերից կազմւած. 100 տունից աւելի բնակիչ է ունեցել, երկու եկեղեցի ու դպրոց: Տրապիզոնի մօտիկ գիւղերի հայ դպրոցների մէջ ամենից աւելի արդ դպրոցն է հոչակւած. ալզտեղ սովորելիս են եղել և հայ աղջիկներ: Յալտնի է իրեն ապահով ու անմատչելի տեղ աւազակների կողմից: Կոտորածի ժամանակ ալզտեղ միան երկու մարդ է սպանել և թալան էլ չէ եղել՝ ինչպէս լսել եմ՝ մի թիւրք բէկի չնորդով, որ աշխատել է նրանց թիւրք գաղաններից պաշտպանել:—Շանաւից այն կողմը գալիս են Ռւզ կոչւած աեղի լեռնալին ու բարձր հայ գիւղերը. Քիօն, Գալաֆկա, Աքիօն ու Սիֆտէր. դրանք քաղաքից աւելի հեռու են եղել. ամենքից հեռուն Սիֆտէրն է. քաղաքից 10 ժամ. ունեցել է 30 տուն հայ բնակիչ:

Գալաֆկան՝—8 ժամ հեռու է քաղաքից. ունեցել է 40 տուն հայ բնակիչ: Դրանք բոլորն էլ բացի Սիֆտէրից, ունեցել են լատուկ և կեղեցիներ: Մի քանի տուն էլ եղել է կադարուկաս գիւղում, ուր աւելի ցուներ ու թիւրքեր են ապրում: Յօտաւորապէս Յօմուրայի ամբողջ վիճակում հայերի թիւն եղել է 4—5 հարիւր տուն:

\*  
\* \*

Աղջաբաթը կազմում է Պլատոնակի դաւառակի մի մասը։ Այդ վեճակը տարածւում է Տրապիզոնից արևոտահարաւ մինչև Պլատոնանա նաւահանդիստը։ Տրապիզոնին ամսնամօտիկ գիւղն է Բարիսն, որտեղից մի ժամի ճանապարհ է եղել մինչև քաղաքը։ Տրապիզոն, Աւնեցել է 40 տուն հայ բնակիչ ու եկեղեցի։ զուա հայաբնակ գիւղ է եղել Կոտորածի ժամանակ թիւրքերը ազտեղ էլ մեծ անգթութիւններ են արել։ աներից շատերը թալանել ալրել են, մի քանի առև էլ թիւրքերը ազտեղ են վասել։ Կրանցից վատու գալիս են Սրապիքէսի կոչւած համանքի հայաբնակ գիւղերը։ Ծիփրիկա, Զիզաքսա (10-15 տուն), Վերոնա (Նունքան առև էլ արդտեղ)։ Ազա գալիս են՝ Լազունա, Միմէրա (35 տուն առաջ), Սաթարի, Ախունտա, Ազուրու ու Մալա, Գրանց մէջ Մալան ամենից հեռաւորն է Տրապիզոնից, մոտ 7 ժամի ճանապարհ իսկ Պլատոնակից 6 ժամ հեռու։ Այդ գիւղն ու Զիզաքսան Աղջաբաթի ամենաբարձր հայաբնակ գիւղերն են եղել։ Մալան Ազուրուի հետ մի եկեղեցի են ունեցել։ Գրանց մէջ Պլատոնա քաղաքին ամենից մօտիկ եղել է Մաթարի, 1/2 ժամի ճանապարհով հեռու, իսկ Տրապիզոնից 4½ ժամ հեռու։ Այդ գիւղում կոտորածից առաջ 40 տուն հայ է եղել, որոնք ունեցել են եկեղեցի։ թէե այդ գիւղում ոչ ոք հայերէն չէ իմացել ու չէ խօսել, բացի կահանցից, և ալսօր էլ Տրապիզոնի մօտերքից եկած հայ գիւղացինների մէջ զրանք լաւտնի են ու որչում են իրանց թրքախօսութիւնով։ Այդ գիւղի հայերին մօտիկ շատ թիւրքիր են ապրել, որոնք մի ժամանակ՝ գաղթական հայերի ասելով՝ մեծ մասով հայ են եղել։ Կոտորածից վետու այդ գիւղից 12 տուն թողնում են գիւղը և զաղթում, հաստաւում Պլատոնակին մօտիկ, ½ ժամ նրանից հեռու, իսկ մեացածները ամենքն էլ անցնում են Կովկասեան ափերը, Սուխումի շրջանը։ Նունն են արել և Ախունտա գիւղի հայերը, ազտեղ էլ 28 տուն հայ է եղել առաջ։ իսկ ալսօր նրանցից միան 2 տուն է մեացել գիւղում, միւսները բոլորը գաղթել են։

\*  
\* \*

Կարաղէրէ կամ հայերէն։ Սե գետի լիճակը տարածւում է Յօմուրացից ան կողմը, զէպի արեւէք, մինչև 0ֆ, Համէնից հիւսիս-արևմաւաք, գտնում է Սիւրմէնէի գաւառակում։ Այդ վիճակը լաւտնի է իր թանձրախոտ անտառներով, լեռներով ու անալաներով։ լաւտնի է նոյնակս երկաթի հաճքերով ու իւղով։ բանելու բարձար հող շատ քիչ ունի։ Բնակիչ

Ներն են աւելի մուսուլմանները ու լոկներ. վերջինները մեծ մասով պահպանել են իրանց ազգային խնքնուրութիւնը և հաէբրի նման չեն կորել. Ազդ վիճակը, որ մի ժամանակ հարիւրի չափ հաչ զիւղեր է ունեցել, այսօր հազիւ 60 տուն հաչ բնակիչ ունի. մնացած հազարաւոր հաէբրի մեծ մասը որը փախել, ցրւել է Տրապիզոնի ափերը, որն էլ ուրացել հաւատը. մահմէդականացած հաէբրն էլ մասամբ դեռ պահպանել են իրանց լեզուն ու հարենաւանդ սովորութիւնները. Վերջին պատերազմից վետու և կոտորածի պատճառով այդտեղից մի 20 տուն հաչ գաղթողներ են եղել. դրանց մեծ մասը այսօր Խօշի կողմներն են մնում, այնպէս որ նոյն իսկ 20 տարի առաջ էլ այդ վիճակում հաէբր քիչ են եղել - 80 տան չափ, կամ շատշատ՝ մի 100 տուն, դրանք են մնացել Ան գետի հազարաւոր հաէբրից, Խնչպէս վերեն էլ առեցի, Համշէնից փախչողները առաջ արդաեղ էլ հաւածւելով՝ շարժւում ու ցրւում են հիւսիս-արևմտաք, Տրապիզոնի ափերը. Հայրենիքում մնացած այդ 60 տներն էլ մի տեղ կենդրուացած, իսմբւած չեն, ցրւած են զանազան թաղերում ու զիւղամասերում, դրանք են՝ Մախթէլա 2 հատ, մեծ ու փոքր. Կաղրա, Խաթէս, Ալչաքէրէ, Ժուֆք, Էլէմնոս, Ծիմլա. Խնչպէս պատճում են, Զէֆանողցինները այս վերջին գիւղիցն են գնացել. դրանցից Կաղրան ունեցել է եկեղեցի և ուսումնարան:

\*  
\* \*

Տրապիզոնի սանջակի այդ բոլոր վիճակներում էլ հաչը հողի կողմից անբաւարար ու անհախանձելի վիճակի մէջ է. Բացի այն հանգամանքից, որ հաէբրը սովորաբար նստած լինելով լեռնապին մասում, լեռնալին թեքերի ու պառակների վրա՝ բանեցրած հողերի մեծ մասը քարքարոտ է ու լեռնալին, մեծ մասով անտառի տակ և մշակութեան համար չատ անլարմար, էլ չեմ ասում — ամուլ ու ըբ բերող, պապենական ժամանակներից բանւած ու մաշւած, այնպէս որ չատ տեղ միան պարարտացնելով ու ազդի ուժով են կարողանում մի բան ստանալ, միւս կողմից եղածն էլ մեծ մասով իրանը չէ եղել, ուրիշի, օտարի, զանազան թիւրք աղաների սնիփականութիւն է եղել, որոնցից նա վարձով վերցրել ու բանելիս է եղել. Աղջաբաթի վիճակում, Պլատանալին մօտիկ, տեղ - տեղ հաչը բոլորովին սեփական հող չէ ունեցել. միմիան Սաթարիում եղել են տասնեակ կալւածատէր թիւրքեր, որոնք ապրելիս են եղել հաէբրի հետ խառը. Ազդ բոլոր վիճակներում հաչը սեփական հող չատ քիչ է ունեցել. բոլոր ունեցածն էլ իրանց փողով զնած. Ազդ բոլոր վիճակներում ոչ մի տեղ տէրութիւնից հաէբրին հող չէ եղել տրւած, բոլորը իրանց գնածն է եղել. Սեփական առած հողը մեծ բան չէ եղել, սկսած <sup>1/2</sup> գեսեատինալից մինչև ամինաշաշտը 2 զեսեատինա. Հող չունեցող, ազալուրդ տեղերը նստողները, կամ ինչպէս զաղթականներն են ասում՝ «մարաբաները» առաջ աւելի շատ էին, հիմա քչացել են, նրանց մեծ մասը

դաղթել է Կովկասնան ափերը, Քիչ-շատ սեփական հող ունեցողները գաղթել են, ինչ պիտի անէր անհող գիւղացին, որ չը գաղթէր. Ունեցած հողը, սեփական թէ օտար, այնքան քիչ է եղել, որ «փարա» չէ արել—չէ բաւականացել. բանածը, բերքից ստացածը տուրքին չէ հերքել. ինչ անէր, որ չը գաղթէր. Մասնաւորապէս Եամուրալի վիճակում հողի կապալավարձը շատ ծանր է եղել, Զանիկի կողմերի պէս չէ եղել. անտեղ սովորաբար քերքի կէսը ազային է եղել, մնացածը իրան՝ յիւղացուն. ի՞նչ պիտի անէր ազդ մնացածով, ինքն ուտէր, ծանր սուրքերը տար, թէ միւս կարիքները տեսնէր. այն ինչ նրա ստացած ամրող բերքը իրան էլ չէ հերքել. Ալպէս ազդ բոլոր վիճակներում էլ, ինչպէս և ամեն տեղ համշենցիների մօտ, հայրենական ափերում, սիմինդրը ամենազլիւաւոր բերքն է եղել. Նրա հացն են կերել ամեն տեղ էլ. ցորեն համարեա թէ չեն արել. Բայց տեսէք, որ ազդ միակ ու գլխաւոր հացարուսն էլ այնքան չեն ստացել, որ գոնէ իրանց բաւականանար. երբեմն հագիւ մի 3—4 ամիս է քաշել. Հապա ինչ ծանր ու տաժանելի աշխատանք է զնացել զրա վրայ, մինչև որ բերքը տուն են կրել. ով գիտէ ինչպիսի անմատչելի թեքերի ու պառակների վրաք է եղել ցանւած, որտեղից քանի-քանի անգամ ստիպւած է եղել մեջքով-շալակով կրել ազդ բերքը մինչև իր տունը. չէ որ, ինչպէս վերեն, էլ գրել եմ, տեղի լեռնոտ դիրքի պատճառով, ևզ ու սազ չէ բանել. բոլորը շալակով ու շատ-շատ ձիերով են կրել, եթէ այն էլ ունեցել են. Շատ անգամ էլ բաց հող, վարելահող չունենալուն համար, նրանք ստիպւած են եղել անընդհատ կուիւ մղել հսկաց անտառների դէմ, և նրանցից խլել բանելու հողը. Տեղի կլիմաֆական պայմանները շատ տեղ չեն նուրեն, որ թութուն անէին. Նրանց գիւղերը մեծ մասով լեռնալին են եղել. Ամբողջ Յօմուրալում համարեա ոչ մի տեղ թութուն չեն արել. տեղերը բարձր են եղել. Թութուն արել են աւելի Աղջաբաթի վիճակում, այն էլ տեղ-տեղ, ցածր-ծովափին մօտիկ գիւղերում, ինչպէս օրինակ Բարխանում, բայց այն էլ ուէժիի թութունի մենավաճառութեան չորհով մի առանձին օգուտ չէ տւել մշակողներին. թութունի գներն ընկնելու պատճառով. Մի տուն արտադրելիս է եղել մօտաւորապէս 30-40 լիտր թութուն (լիտրը՝ 18 փունտ է). լաւ թութունի լիտրը ծախւել է 40-45 դուրուշի (դուրուշը ալժմեան կուրսով մօտ 8 կոպէ), Յօմուրալի վիճակը աւելի լայտնի է կաղինի մշակութիւնով. միակ արտահանւող բերքը դա է եղել, ամենքն էլ ունեցել են. գիւղացին մի քիչ փող միմիաններանից է տեսել. Սկսած 500 օխալից (օխան 3 փունտ) մինչև 50—100 բեռ (բեռը՝ 100 օխա է) կաղին արտահանողներ են եղել. Կաղնի համար ծրապիզոնից լատուկ վաճառականներ են զալիս եղել առնելու, և առնասարակ լաւ ծախւելիս է եղել, մանաւանդ տուած, երբ օխան մինչև 4 դուրուշի է զնացել բայց հիմա զներն ընկած են. սովորաբար օխան 60 փարալից (դուրուշը 40 փարա է) մինչև 2 դուրուշի է զնում:

Անասնապահութիւնը բաւական տարածւած է եղել նրանց մէջ, մասնաւանդ Յօմուրավի կողմերում, ուր երբեմն տասնեակներով կովեր են պահել և կաթնատնաւութիւնով պարապել. Ոչիսար էլ ունեցել են, բայց վերջերը շատ փշացել, ծախծիսել են ոչխարի տուրքի և մասամբ էլ աղիծանր մաքսի պատճառով. Մի լիսր աղի համար  $4\frac{1}{2}$  դուրուշ են տւել-մօտ 40 կոտէկ. ան ինչ առաջ 8 կոտէկ է եղել:

Նրանց տունը քանողովը, հարենիքից քշողը, օտար ափերը ձգողը—հէնց ազգ տուրքերն են եղել, որոնք քամել, զուր են շինել զիւղացու աշխատանքը, մանաւանդ ամենքից աւելի առշարու կոչւած տուրքը. Խ՞նչով պիտի նա այնքան տուրքելը տար և որ մէկը տար, կաղնից կամ թուժունից ձեռքն անցած մի քանի մանէթով որ մէկն անէր.—իր հացը զնէր, տան պակասներն հոգար, պարտքերը վճարէր... Ինչեր ասէք որ նա չէ արել այդ ծանր դրութիւնից դուրս գալու համար; Լեռներից նա շալակ-շաւակ ածուխու ու փաչտ է տարել քաղաք ծախելու համար, որ միերկու զուրուշ ձեռքն անցնի. ոտով ժամերով ճանապար է կտրել, անձարթ ու լեռնավին ճանապար խիտ ու անմատչելի անտառների միջից, շալակը մէջքին. աշխատանք է միշտ էլ, ցրտին ու տաքին, տանն ու զուրուշ, բայց էլի մի բան չէ եղել, միշտ էլ աղքաս է մնացել, պարտքերի տակ ճնշւած, տուրքերի մէջ խեղդւած. Նոյն իսկ շալակով կրած, անտառից բերած, աղավից զնած ազգ ածուխի, փալուի ու տախտակի համար նրանից ճանապարհին տուրք են վերցրել. Եթէ խեղճ մարդը պարապ ժամերին մի զամբիւլ կամ կողով է շինել ու տարել քաղաք ծախելու, նրանից այդ ճնշին բանի համար էլ տուրք չառած չեն թողել քաղաք մտնել. Գնացած ճանապարհները բացի այն՝ որ ճանապարհ չեն եղել, միան իրանց պիս չարքաշութեան սովորած մարդու համար զույց չեն թւացել, բայց ի հարկէ, ինչ ասել կուղի, որ ճանապարհի ոչ մի չարմարութիւն չեն ունեցել. ձիերով հազիւ են կարողացին զնալ-գալ, եղածն էլ ոչ այնքան ապահով, ոչ է թիւրքին ճանապարհ տւել. Այսքան տարի է զրանց մօտիկ հազիւ մի խճուղի է շինւել (Տրավիզոնից—Երզրում), որի պատճառով ով զիսէ՝ քանի-քանի օրեր ու ամիսներ է կորցրել հաւ զիւղացին, և ինչքան տուգանք տւել.

Անհողութեան, աղքատութեան ու ծանր տուրքերին չէ զիմացնել զիւղացին. Դեռ կոտորածներ չեղած, սկսել էին զաղթել այդ կողմերից, բայց վերջին կոտորածից էիտու այդ զաղթական շարժումները մեծ ծաւալ տառացան: Արդէն կոտորած էլ չլինէր, նրանք դժւար թէ մնալին, ճարչունէին մնալու, իսկ ջարդ ու կոտորած տեսնելուց էնոտի, տների թալնը-մելուց և ալրւելուց էնտու, ունեցած աղքատիկ կալքից զրկւելուց էնտու, սիրելիների ու աղքականների իր աչքի առաջ մորթելուց ու նահատակ-ելուց էնտու—ով սիրտ կանէր մնալ այդ աւերակ ու ամայի երկրում, այդ

բարբարոս ու գաղան կառավարութեան ձեռքին։ Գիտենալիք, թէ ինչե՞ն է արել, ինչ անգթութիւններ է զործ դրել կոտորածի ժամանակ կառավարութիւնը իր մոլեռանդ զօրքի ու խուժանի ձեռքալի, ինչ սարսափելի ամայութիւն ու շափշտակութիւն է տեղի ունեցել անիմնայ կերպով զործ դրւած սպանութիւնների ու գաղանութիւնների հետ միասին, քանի քանի տներ աղքատացրել են, ունեցած չունեցածը քաշել տարել են, նոյն իսկ ակնպիսի հասարակ բաներ, ինչպէս են փետակի ու բանի նման գործիքներ և տանը պահած ու մնացած հագուստներ, նրանց որբ, մերկ, անօթի, անսուն ու բոլորովին լուսահատ ու լքւած վիճակի մէջ թողնելով սարերի գլխին, անտառներում, զաղանների մօտ ապաւինած... Ել մնալու տեղ ունէր հայը, որ մնար ու չգաղթէր, չգաղթէր այդ սարսափի ու բռնութեան երկրից. Եւ մինչեւ ալսօր էլ դեռ գաղթում է կոտորածի սարսափները քաշած հայը. .

(Յարունակելի)

## ԵՐԳ ՈՒ ՎԵՐՔ

(Իսահակիան, Աւ.—Երգեր ու Վէրքեր)

Նիկ. ԱղբԱկնարի

Ես սիրում եմ մրմնանչ-տրտունջ,  
Տանջւած սրտի երգ ու վէրք...  
Իսահ. Աւ.

I

Մի փոքրիկ հաշիւ ընթերցողներին,

Անցեալ տարւայ վերջերը մի փոքրիկ գրքով լուս տեսաւ Ալեքսանդրապոլում «Երգեր ու Վէրքեր» խորագրով, որ արտաքինով գրաւիչ բան չէր. բայց զզացւեց իսկոն, որ գրքովի հեղինակը կարողանում է երգել իր աերգերն ու վէրքերը» ժողովրդի լեզով ու ոգով, որ այդ գրքովն իսկական բանաստեղծութիւնների հաւաքածու է:

Բայց թէ ընթերցողի և թէ հեղինակի համար շատ ու շատ կարեոր հարցեր ու կէտեր անորոյ մնացին. թնչ են իոկապիս պ. Խսահակեանի բանաստեղծութիւնները, թնչ մի նոր բան է բերում մեզ, կամ բերում է արդեօք, թնչ չսակաւթիւններ ու չափեր ունի նրա տաղանդը, որպէս բանաստեղծ թնչ նշանակութիւն է, ստանում և թնչ տեղ բռնում, ոճի արդեօք պակասութիւններ և որո՞նք են այդ պակասութիւնները, ինչումն է նրա ուժն ու թուլութիւնը, և այլ ալսպիսի հարցեր՝ մանր ու խոշոր, դոքա դեռ մնում են անպատասխան ու անվճիռ.

Սրանից մօտ տաս տարի առաջ պ. Աղասիանը «Աղբիւրում» մի նկատողութիւն է անում թէ բանաստեղծներ շատ ունինք, բայց բան ստեղծողներ՝ շատ սակաւ, սա մի լիովին ճիշտ դիտողութիւն էր, որ պիտի վկաչէր, և վկաչեց Դ. Աղասիանը. Եւ այդ ճշմարիտ էր ոչ միայն այն ժամանակ, այլ և է ալժմ, Եւ իրաւ, նոյն իսկ ալսօր և թէ ուզենաք մեր բանաստեղծների անունները թւել, պիտի մի քանի անգամ անցնէք մի ձեռքի մասներից գէպի միւսը. բայց ձեր քավերն արդէն դանդաղանում են, հէնց որ փորձում էք բան ստեղծողների անունը տալ. կէս ճամբին հան-

գտանալ էք ուզում։ Այդ սակաւաթիւ անունների փոքրիկ ցանկին եկաւիր անունը կցելու պ. Խսահակեանը։

Ովքեր հետևում են մեր պարերական հրատարակութիւններին, նրանց ծանօթ է անշուշտ պ. Խսահակեանի անունը, որ 4-5 տարի է արդէն ինչ տպում է իր բանաստեղծութիւնները «Ժարագում», «Արաքսում» և «Աղքիւրում»։ Բայց այս 4-5 տարին, սխալւած չենք լինի որ ասենք, թէ նրա մասին մի էջ բան չի տպւած։ Այդ չի նշանակում սական թէ նրա դրւածները անուշաղիր էին անցնում և հետաքոքրութեան ու խոռք ու զրոյցի նիւթ չեին զառնում։ Ընկերների ու զրականութիւնը սիրողների փոքրիկ ու նեղ շրջաններում նրա մասին խօսում՝ ին, նրան հետևում էին. կարդում, անզիր էին անում նրա ոտանաւորները, վեճ ու զրոյցի նիւթ էին զառնում նրա չնորդքն ու գրածները, որոց կարծիք էին կաղմում նրա մասին, Բայց այդ խօսք ու զրոյցը և կարծիքները ուժեղ չեին թէ ինչ՝ ալսքանը պարզ է, որ արձագանք չին զանում հրատարակի վրայ Պ. Խսահակեանը «Գոյութիւն ունեցաւ» միան ան ժամանակ, երբ տեսան թէ զրական հրապարակն իջնելիս նա իր գիրքն ունի ձեռքին։ Մինչեւ այդ օրը նա անլաւս աշխարհ էր» մեծ հասարակութեան համար, թէեւ, ինչպէս տեսանք մեր հաշւից, նա համարեա թէ աանլաւս աշխարհ» էլ մնում է մինչև ալժմ։

Ասենք՝ ինչ որ կարող ենք առ ալժմ ասել նրա մասին։

## II

## Նախ՝ երեակալութիւնը։

Այս երեակալութիւնը հարուստ է և փարթամ. ալս լատկութիւնն արդէն պ. Խսահակեանին մի առանձին տեղ է տալիս մեր նոր զրոյների մէջ։ Նա կարողանում է վառ ու պալծառ պատկերացնել տեսարանները, նրա փոքրիկ գրքովում ցողի նման փռւած են հրաշալի պատկերներ, խորը, գուրս ցցւած, փալլուն ու կոկ, Ալստեղ ամեն բան կարծէք առաջնոց հաշւի է առած. վերցրած են պատկերների խոշոր, էական, աչք զարնող մասերը. այդ մասերի էական կապերն ու դասաւրութեան բնականութիւնը. գրչի շարժումը՝ վրձինի շարժում է, և պատկերները զալիս անցնում են ձեր առաջից՝ մէկը միւսից վառ, թարմ, աշխով ու կենդանի։ Անրգերն ու Վէրքերն» այդ կողմից մի հիանալի ցուցարան է, ուր աչք են ծակում բազմաթիւ գոյն ու երանդ ունեցող շացուցիչ պատկերներ։

Մեր բանաստեղծը բնութիւնից վերցնում է այն ինչ վեհ է կամ գեղեցիկ, ինչ կենդանի է և աշխով, ինչ դիւթում է և հրացնում։ Իր ընտրած գծերը խմբում է զանազան տեսակ, և ահա պատկերները պատրաստ են. Ալդպէս չը բնութիւնը իր չափահանական արեով, ամպերով, լուսնով, աստղերով, ծաղկով ու ցողով—որ ամեն ըստէ նոր պատկերներ ու նկարներ է լորինում, նոր տեսարաններ կաղմում ու դիւթում մարդկանց,

—Պարզկալ գիշեր...

Աստղերն երկնքում լուս պաղպում են,

Լուսնի շողերը դիպել են սարի

Զիւնոտ կողերին—կողերը ցողում,

Պէջին են տալիս,

Ի՞նչ է սա. Նկար է թէ բանաստեղծութիւն, այս պատկերը վրձինի գհրծ է թէ խօսքերով է արտաքալտած! Ո՛քան հասարակ խօսքեր, որքան սովոր գծեր—բաց և ինչ պակածութիւն, աչք ծակող փառ ու լուս Ակսպիսի պատկերները ուղղակի միտում են մարդու լիշողութեան մէջ, մեռմ են անշարժ, կարծես դրոշմում են. ակսպիսի պակածառ երեակալութիւն ամեն բանաստեղծի չի վիճակում... իսկ շարունակութիւնը...

Ցրտաշունչ քամին  
Թերը փռած վնչում է, թռչում,  
Սառած երկիրը ճաքում-ճաքճ.քում,  
Չեան հատիկներով քարափի կուրծքը  
Ծեծում ու ծեծկում..

Տեսէք մի քիչ առաջ հանդարտ լեզուն ինչպէս է դառնում շարժուն ու թափոտ, ինչպէս խօսքերն իրար դլխով ընկած թռչում են, վաղում, ինչպէս ձաները լարմար են գալիս նիւթին. կարծէք քամին է, որ ձիւնն իրար խառնած՝ կատաղած փշում է...

Ահա ձեզ մի ամբողջ գիշեր չորս կարծ տողում ամիսոված.

Գիշերու եկաւ, զով-հովը ընկաւ,  
Աստղունք լուսնին ձէն տւին.  
Լուսինն ելաւ, մով-ծովը ընկաւ,  
Հաւքերն ինձի ձէն տւին,—

Սա մի շարժում պանորամ է, ուր իրար յաջորդում են գիշերւազ կտորները մինչև լուսաբացը, մինչև հաւախօսը. այս չորս տողում հովը ընկնում է, աստղերը դուրս են գալիք՝ կանչում լուսնին, որ երեսում երկնքի երեսն է ընկնում, և հաւերը խօսում, ձան են տալիս բանաստեղծին... Ակսպիս է ամեն տեղ թէ անշարժ և թէ շարժուն պատկեր տալիս. կարծ խօսքեր, հակիրծ տողեր, բաց մինենդ ժամանակ բովանդակիչ խօսքեր ու տողեր, Պ Խոհակեանի բանաստեղծութիւնները ոչ միան հարուստ են պատկերներով, այլ և լաճախ իրանք պատկերներ են, որոնց մէջ կարելի է բովանդակութիւն զնել... Ալս բոլորը խսկական բանաստեղծական չնորհքի նշաններ են, այս բոլորից երեսում է, որ հեղինակը խսկական տաղանդի տէր է...

Ի՞նչ տանըք պ. Խահակեանի լեզվի հարատութեան, թարմութեան, ճկունութեան, ուժի ու թափի մասին. նրա համեմատութիւնների, նմանութիւնների, լարմար ածականների, շքեղ դարձւածների, պատկերաւոր

ոճերի և արտաչափութիւնների մասին, որոնք անթիւ են. որ էջը կ'ուզէք բաց արէք, որ կտորը կ'ուզէք կարդացէք, ամեն տեղ, ամեն քաջափոխում նրանք շաղ են անցած աջ ու ձախ. Այսպիսի լեզու մեր բանաստեղծներից ոչ ոք չունի և չի ունեցել. լեզուի հարստութեան կողմից միան Շանթը կարող է մրցել պ. Խանակեանի հետ, ուրիշ ոչ ոք. միւսներն աղքատն շատերն էլ մինչև անգամ շատ են աղքատ նրա հետ համեմատած. Մեր լեզուն մի զէնք է հեղինակի ձեռքին, որ նա կարողանում է վարժ ու թեթև դործ ածել. Բաց ամենազլխաւորն այն է, որ պ. Խանակեանը թափանցել է մեր լեզու ողու ներսը. ան աստիճան հայերէն է գրում, որ մեր կիսահաւաք լեզուն սովոր ականջին երբեմն խորթ են հնչում նրա դարձւածներն ու արտաչափութիւնները. կանգնում էք, մտածում, վիշողութիւնը քչփորում և նոր նկատում, որ հայերո հէնց ալղակս էլ ասում ենք: Նա ոչ միան կարողացել է օգաւել ուժը ներածին չափ մեր լեզուի հարստութիւնից, բառերի անհատակ ամբարից, ճոխ ձեռից, փարթամ դարձւածներից ու ճկուն ոճերից, այլ և լիովին իւրացրել է նրա կազմը, դասաւորութեան եղանակը. Եւ այս ասելիս մենք միան նրա բարբառով գրած տողերը չունինք աչքի առաջ, այլ և մանաւանդ նրա աշխարհիկ զրական լեզուի զրածները. Մի խօսքով այս լեզուն մի չտեսնած լեզու է մեր զրականութեան մէջ, ալղակս ոչ ոք չի գրում. մարդու աչքը շանում է մալրենի լեզուի ալղ հարստութիւնից...

## III

«Երգերն ու Վ. Էրքերը» նոյն խակ հարեանցի թերթելիս, գուք ընկնում էք ինչ որ նոր աշխարհ, ուր չէք եղել բնաւ. Ակսեղ ամեն բան նոր է լեզուց ու ձեից սկսած մինչև զգացմունքներն ու նրանց արտաչափութիւնը. Այսպէս ոչ ոք չի գրում և չի գրել, ալղակս ոչ ոք չի զգացել ու արտաչափել. Տպաւորութիւնն այն է, որ կարդում էք մի ինքնուրոյն դրովի երկեր, որ իր նմանը չունի մեր զրականութեան մէջ, որի զգացմունքները, մտքերն ու խոհերը իրանն են միան և ուրիշ ոչ ոքի չեն պատկանում. Դա ոչ թէ որ և է մէկի հետեւող է կամ նմանող, այլ լիովին անջատ է ուրիշներից և առանձնակի տեղ տնի<sup>1)</sup>. Սա շատ լաւ նշան է մի բանաստեղծի, այն էլ սկսնակի համար. ինչ էլ որ լինի, ալսքանը պարզ է, որ հեղինակը նոր զգացմունքների աշխարհ է դնում մեր առաջ և այնտեղ ինքը լիազօր տէր է, մրցակից չունի:

Բանաստեղծը գրելիս զուրս է թափում իր զգացմունքներն ու սրտից բղխած մոքերը, արտաչափելով նրանց պատշաճ ձեռրով, որոնք շշափելի

<sup>1)</sup> Եւ սական, մեզ թւում է պ. Խանակեանը շատ անգամ նիշէի դորեղ աղղեցութեան տակ: Ման. Խ.թ.

ան և տեսանելիք. աղղպէս է ոչ միայն բանաստեղծը, այլ և առհասարակ ամեն մի արւեստագէտ. արտազատութեան զէնքերն են փոխւում, բայց էութիւնը միշտ նոյնն է ամեն տեղ. և առ են այն գրւածները միայն ուր նիւթն ու ձեր իրար բանում են, ներդաշնակ են, համապատասխան. Եւ հէնց աջստեղ է թագնւած գեղարւեստական երկի գաղտնիքը. ուր նիւթն ու ձեր, զգացմունքն ու միտքը և նրանց արտավազութիւնն իրար չեն գալիս, աճնտեղ միք ինստիք գեղարւեստականութիւն. աճնտեղ գեղարւեստ չկայ, և այցը չի երգւում ծաղրի խօսքերով, թռուցիկ զգացմունքը ծանր ու երկար տողերով, խորին վիշտը չորչոր բառերով ու դարձածներով. Ամեն զգացմունք, ամեն նիւթ իր արտավազութեան ձեն ունի՝ իր լեզուն, իր չափը, իր պատկերն ունի. Ուր այդ երկու տարրերն իրար չեն համապատասխան, աճնտեղ լւում է աններգաշնակ երաժշտութիւն, զգացւում է ծաղրական կամ անախորժ հակադրութիւն. Միայն նիւթի ու ձեփ, էութեան և արտաքինի ներդաշնակ հիւաւածքը կարող է ոչ միայն գեղարւեստական, այլ և առհասարակ ախորժ տպաւորութիւն անել: Կիանքումն էլ աղղպէս չ... Պ. Խանակեանի բանաստեղծութիւնները այս կողմից սակաւ բացառութեամբ (մասամբ որովհեան նիւթը մեղ անմատչիլի է) կշտամբանքի չեն կարող ենթարկել, անմեղ են: Ալսպիսով նա մեր առաջն է դնում ոչ միայն մի նոր աշխարհ, այլ և զրա հետ մի գեղարւեստական աշխարհ...»

Սակայն գրւածքի չափը միայն գեղարւեստական լինելը չէ. քերթողի զգացմունքները կարելի է դասաւորութեան ենթարկել, տեսակների վերածել իրանց բնութիւն, յատկութեան և ապա՝ ուժի կողմից: Ամեն զեղարւեստական երկ զեռ հարասութիւն չէ, կամ աւելի ճիշտ ասած՝ գեղարւեստականութիւնը չի որոշում երկի կարենորութեան չափը, նրա որ աստիճանի հարստութիւն լինելը, Ալստեղ արգէն գնահատութեան են ենթարկում գրւածքի բովանդակութիւնը և այդ բովանդակութեան յատկութիւնները. Զէ որ իմար ու թեթե կինն էլ կարող է գեղեցիկ մարմնագծեր ունենալ, նոյն իսկ կլասիկական դէմքի տեր լինել. Աղղպիսի կանաց կարելի է ասել՝ շատ գեղեցիկ ես, բայց ինձ պէտք չես, կամ՝ շատ քիչ պէտք ես: Դեղեցիութիւնը չափւում է իր արած ազգեցութեամբ, իսկ այդ աղղեցութիւնն իր տեսակով: Ալսպիսով գեղարւեստական քննադատութիւնը քննադատութեան մի մասն է միայն և ոչ ամբողջութիւնը: Իր գործը վերջացնելուց չետող, նա տեղ է տալիս երկի հասարակական, հոգեբանական և պատմական գնահատութեան, երկը դառնում է բարոյական տեսակէտի զատման առարկա: Եւ պ. Խանակեանի երկերի նոր ու գեղարւեստական լինելը խոստովանել՝ դեռ չի նշանակում նրա դնահատութիւնը տալ:

Բայց մեղ հարկաւոր է բանաստեղծի հոգին ուրւագծել ակստեղ:

Ահա ձեզ մի հարուստ, բազմակողմանի և տարօրինակ ու բնուրոցն հոգեկան կազմ։ Նա իր հոգին դրել է իր զբքովի մէջ, այդ հոգին մեզ երեսւմ է մի ձիւնապատ լեռան նման, որի ստորոտները, փեշերը լայն վուած՝ խրածեն իրական կեանքի մէջ, ծածկւած են արդաւանդ և քերրի հողերով, մատչելի են բազմաթիւ մարդկանց, լանջը սիրուն արօտատեղեր են, ուր ամենքը չեն բարձրանում, բայց ուր կարելի է բարձրանալ, իսկ գագաթը սառն է սառուցի ալս և թալած անթափանցելի մշուշում ու գորշ ամպերում։ Պր. Խաճակնանը ալս զբքովի մէջ տալիս է իր հոգու հակագիր, շրջման կէտերը. Նրա հմաքը պարզ է, արմատները կենսունակ են և հիւթառատ, բունը հաստատունէ, թէե սուր ու դժւարակոխ, իսկ զլուխը չոր ու անկեանք։ Ո՞րտեղից է սկսում և ուր է գնում՝ դժւար է ասել՝ որտեղ է գագար առնում, որն է նրա բնական, սովորական դրութիւնը՝ նույնպէս։

Եւ հէնց իր հոգեկան կազմով ու տուած պտուղներով նա բնուրոցն մարդ է, ոչ նման միւսներին, կատարելապէս անսովոր ու ինքնուրոցն ։ Նա լաւ է ու լայն քանի ժողովրդի հետ և երդում կամ ժողովրդի սրախց է խօսում. Նրա սիրուը ուժեղ է զարկում, զրւածները փալ ունին, ձայնը խրոխտ է և աղղեցիկ, ցաւը խորն է և համակող. Նրան շրջապատող համակրողների թիւը սաւար է, հաղարներ են՝ ցրւած մեր երկրի ալս ու այն խորշում, ալս ու այն խրց՛ի կամ գաշտի մէջ։ Երբ ձեռք է զարիւմ իր սրտի միւս լարերին և հնչեցնում իր երգը կամ վէրքի մեղեղին, նրան համակրողների օզակը նեղանում է, աւելի քիչ սրտեր են բարախում նրա հետ, աւելի քիչ մարզիկ են ձայնակցում նրա վշտին ու ցաւին. այն էլ միանութեան ժամանակ, երբ զլուխող զատարկում է օրւայ տպաւրութիւններից և ընկնում ևս ինչ որ կախսարդական, անիծւած հարցերի մթնոլորտի մէջ, ոչ առօրէական, հանսապազօրեալ, ալլ սակաւ պատահող ու մէկ-մէկ ալցելող մտքերի շրջանը. ալսոեղ զգացմունքները նեղ են ու սուր, արտավատութիւնները համեմատաբար աղքատ ու անորոշ. Բայց երբ բանաստեղծը գնում է գնում, հեռանում է, վերանում դէպի իր «հեռու ափերը», ժաւուերն ու անսապատները, ալլ ևս անկարելի է լինում նրան հետեւել. Նա մնում է միախակ, կորցնում ես նրան աչքիցդ մշուշի ու գորշ անորոշութեան մէջ, ալլ ես նրա շորջը չի լսում ոչ մի սրտի բարախում, բացի իր սրտի զարկը, որ խուլ կերպով հնչում է սառը բարձունքներում, լուռութեան միջին, զգացմունքները անորոշ են զառնում ու ցուրտ, մտքերը մթնում են ու խառնում իրար, արտավատութիւնները փոխում, զաւուում են անհասկանալի և անըմբոնելի, և զուգ շւարում, մնում էք. այնտեղերը ոչ մի մահկանացու չի կարող նրան հետեւ, նա մենակ է իր «վէրքերի» հետ, անընկեր...

## IV

Ոլոնք են ազդ սառը բարձունքները, ինչ անորոշութիւն ու միար-նութիւն,

Խոստովանում ենք, շատ էլ պարզ ու որտ չենք հասկանում, թէև ահա քանի ամիս է կանգ առած մտածում ենք և շարունակում ենք մտածեր Երբ բանաստեղծը կտրատում է այն բոլոր թելերը, որոնցով նա կապւած է ժո-ղովրդի մեծ սրտի հետ, երբ այլ ես ժողովրդի կամ շրջապատողների ձախը չի հասնում քերթողի ականջին, որովհետեւ նա շատ է հիւանում ու վերա-նում. երբ նա, թում է թէ, բաց է, անում ամենքի առաջ իր հոգու ծածկւած խորչերը, իր ցան ու կսկիճը, իր վերքերը—այլ ես մենք չենք կալ ողանում նրան հասկանալ, հետեւ չի լինում նրա թռիչքին. և ոչ միան անմիջապես, սրտով չենք ըմբռնում նրան, այլ և երեակալութեամբ. մառվին նոյն իսկ թափանցել նրա հողին անհնար է դառնում մեղ հա-մար, ինչ որ ձայներ են լսում «ոչ ալս աշխարհից», ինչ որ տանջանք-ներ, որ իրական կեանքը չի հասցնում, այլ մեկուսացած, ուրիմն և ան-ձուկ հողեկան աշխարհը, որ մերինին նման չէ. դրա համար էլ համազ-գալն ու հասկանալը ոչ միան դժւար, այլ և անկարելի է դառնում...

Այդ տարօրինակ ձայների խուլ արձագանքը լսւում է նրա վոքը ինչ հասկանալի ոտանաւորներից մէկի մէջ.

Տիեզեւքի պերճ հիւսւածքն եմ.  
Իմ մէջ երկինքն է երգում,  
Բունկում է սիրու հրդեհն,  
Վշտի հեղեղն ազմիւում...

Ինչ է նշանակում «իմ մէջ երկինքն է երգում», կամ ես առեգերքի պերճ հիւսւածքն եմ... Բանաստեղծի երգերից մի քանի կտորներ իրար մօտ գնելով կարևոր է հանել մի շարք մտքեր, չափանի համակարգի տակ դնել նրանց,—և մի իւրատեսակ աշխարհականացքի հիմունքներն արդէն պատրաստ են. Բայց ալդ աշխարհականացքն ամբողջովին առած, որքան պարզում է «Երգերից ու Վերքերից», հակառակ է թէ զիառութեան, թէ առողջ զատողութեան և թէ մարդկային՝ բնական զրութեան մէջ գտնւող՝ խելքին. Այդ աշխարհականացքը բանաստեղծի ինքնօրինակ հոգու պտուղն է. արտակարգ զգալունութեան, արտօրինակ, հիւանդութեան հասնող ջղերի և անսուրը զգացմունքների ու մտքերի արդինք է միան. Հեղինակի հոգին բնուրուն բան է, նա չի ենթարկւում մարդկանց սովորական տի-պարներից որև է մէկին:

Տաղանդաւոր մարդիկ կարող են մարմնացնել մի հոգեկան աշխարհ, որ լախնի տեսակի պատկանող մարդկանց հոգեկան աշխարհի խոչըրավոյն ու էական տարրերն իր մէջ աւելի ուժեղ, պալծառ ու որոշ ունի, քան թէ այն մարդկանցից իւրաքանչիւրն առանձին առած. նրանք չակտնի տե-

սակի մարդկանց պսակն են կազմում, նրանց հոգեկան աշխարհների սինթեզն են, ալսպէս ասած, Նրանք բացառութիւն են ոչ որպէս սոսկ տիպ, այլ որպէս չափանի զարգացման հասած տիպ: Այն մարդկանց մէջ, որոնց հոգեկան աշխարհի ներկայացուցիչն են դրանք, դրանց նման մարդ չկաչ. ոչ ոք դրանց պէս ուժեղ, պարզ ու պայծառ չի գգում և զիտակցում: Եւ երբ ասում ենք թէ տաղանդները հազարդիւտ են, հատ-հատ են պատահում—պիտի վերը ցոյց տւած մտքով հասկանալ, ալսինքն որ՝ ոչ թէ նրանց տիպին պատկանող մարդիկ չկան, այլ որ նրանց տիպին պատկանող մարդկանցից նրանց զարգացման աստիճանին հասածներ չկան:

Բայց ալսպէս չէ պ. Խսահակեանը. երբ սա առանձնանում է՝ ոչ ոքի նման չէ. ընդհանրապէս էլ առած՝ նա միան իր մի քանի կողմերով է նման միւսներին, և ոչ թէ իր ամբողջ հոգեկան կազմով. նա անսովոր անհատ է իր հոգով և նրա արտավայտութիւնով: Քանի նա մեզ մօտ, մեր մէջ է ապրում, քանի նա մասնակից է սովորական, ընթացիկ կեանքին, քանի նա ժողովրդի զաւակ է կամ լախտնի հասարակութեան անդամ—նրա սիրտը ծանօթ ձալներ է հնչեցնում, մեզ կարողանում է համակել իր ցաւով կամ վշտով, աւելի կամ պակաս թւով մարդկանց զգացմունքների թարդման է (պէտք է հնիթաղբել՝ պատահաբար, որ և կը պարզենք վարը), բայց հէնց որ հեռանում է մեզանից՝ նա դառնում է մի անօրինակ անհատ, իսկոն տեսնում ենք, որ նա կարծես պատահմամբ էր մեզ նման, որ նա ուրիշ մարդ է իր ցաւով ու վշտով, «երգով ու վէրքով»...

Եկէք ու հասկացէք, մեր բանաստեղծը կարծում է, ինչպէս վերն էլ տեսանք, որ ինքը «տիեզերքի պերճ հիւածքն է», որ «իր մէջ երգողը երկինքն է», որ իր «արնոտ ու խոցուտ վէրքերը» «մեծ տիեզերքի հսկաչ վէրքերի կաթիլներից են», որ իր երգերը աւդ նոյն «մեծ տիեզերքի հըսկաչ վէրքերի ցաւն ու կսկիծն են». նա կարծում է, որ «աստղերի ցանցում» կարևոր է լսել պոռութեան խոր, լախն երգերը», որ... և այլն, և այլն. Այս բոլորը մի լիովին անհատական հոգեկան կազմից կարող են բղինել, ալսպէս ովք է մտածում ու գգում<sup>1</sup>): Այս աշխարհակեացքի բեկորները ուղղակի հակառակ են գիտութեան, փորձին, տրամաբանութեան, առողջ խելքին. ալսպէս կարող է մտածել ու զատել կամ նախապաշարւած կամ հիւանդ զլուխը, ալսպիսի զլուխներ կարող է ծնել կամ կարճատես բնազանցու. Թիւնը կամ ժամանակից ու տարածութիւնից պոկւած հոգին: Առողջ բան չկաչ դրանց մէջ. դրանք մտալին ժամանախտի բացիլներ են, որ նորութեան ու գեղեցկի դիմակի տակ գալիս են պղտորելու առողջ մարդու առողջ զիտակցութիւնը... Էլ չենք ասում, որ ինքն ըստ ինքեան շատ ծաղրական բան է աղդ մտքերի կենդրուական սիւնը, եթէ «երկինքն է» բանաստեղծի մէջ երգողը, այն ժամանակ մի քալ առաջ դնելով կարելի

<sup>1</sup> Խահակեանի այդ ոսանաւորները Նիշէ՛ն են լիշեցնում: Խմբ.:

է ասել որ և երկինքն է բանաստեղծի մէջ լաց եղողը, ծիծաղողը, պարողը, հաց ուսողը...

Եւ տեսէք թէ ինչպէս լեզուն էլ տարօրինակ է դառնում. ինչպէս մինում են արտակարութիւնները, գորշանում. բառերն իրար խառնում. ու այդ խղճալի աւերակների վրա երբեմն միայն փալատակում է մի գեղեցիկ պատկեր, մի սիրուն արտակարութիւն—ու նորից ամեն բան վարագուրսում է անորոշութեամբ, պղտորում աչքներիդ առաջ. Ի՞նչ է նշանակում «լաճն երգեր», «հեռու ափեր», «երկրի ոլորտում թափառել ամբոխի վրաց. իմաստուն նղիպոս զու վճռիր ալս հանելուկները»... Կամ ով ինչ կը հասկանալ ալս խոսքերից. «զւարթ երկնքում—հեռու ափերում հոգիս վառում էր—բոցերի ծով էր»... Ո՞ր մէկն ասի մարդ. ի՞նչ է նշանակում հիւանդանալ. «երկնքի ցաւոխ, և վերջապէս ի՞նչ են ալս բոլորը 48-րդ էջի ամբողջ IV-րդ ոտանաւորի հետ միասին. հիւանդի զառանցանք, ցնորւածի մենախօսութիւնն, ցաք ու ցրիւ խենթ ու խելառ մտքեր ու զգացմունքներ...

Պ. Խանակեանի ալդ տեսակի բանաստեղծութիւնները (վառք Աստծու, որ քիչ են) հէնց մնուած են ծնւել. Նրանք հիւանդացած ու գրգռւած ջղերի արգիւնք են, անորոշ, մութ, ամենքին անծանօթ ու խորթ. Մենք ուժներս ներածին չափ կրկին ու կրկին կարդալով՝ մտածել ենք ալդ մի քանի հատիկ ոտանաւորների մասին. խելքներս որոշ բան չի կտրել, բայց աւելորդ չի լինի մեր ընդհանուր եղրակացութիւնը լաւտնելը. դրանք, ինչպէս մեզ թւում է թէ գրւածքից երեսում է, ալսպէս ասենք՝ ուղեղալին զգացմունքներ են և նոյն իսկ գրողի ու զգացողի համար մութն են ու անորոշ...

Բայց ուրախալին ալս է, որ թէն դրանք, անկասկած, հիւանդ բաներ են, բայց քիչ են. և բացի ալդ, ալս չպիտի մոռանանք երբէք, որ բանաստեղծի աւած պատկերները ամաներ են, ուր միայն նրա տւած բովանդակութիւնը չի դրւում, ալև և ամեն բովանդակութիւն, որ կարելի է դնել նրանց մէջ և որ չի թափտում ամանի ափերից...

## V

Ցած իշնենք մի քիչ նկատելու արժանի է ցած իշնելիս ան, հանգամանքը, որ ոտանաւորներն աւելի և աւելի հասկանալի են դառնում և կարդանում են համակել. Միքանի կտորներ, որ «հեռու բարձունքների» և հասկանալիների միջին օղակն են կազմում, թափանցւած են ինչ որ սեփական մեծութեան և հսկացութեան զգացմունքով, որ նոյնպէս անջաւած լինելու արդիւնք է. Ապրելով մարդկանց հետ, շիւելով շրջապատին, մարդ միշտ առիթներ է ունենում իրան և ուրիշներին հասեմատելու և ճանաչում է կամաց-կամաց իր ուժն ու կարողութիւնը, իր զգացմունքների ու չնորքների իսկական չափերը. ամեն դրական ու կիրթ խելք հե-

ոռւ է մեծամտութիւնից և բացառիկ դիրքի թեկնածութիւնից. Անջատ գրութեան մէջ մնալն է, որ ստեղծում է մեծամրտ կարծիք, որ մարդկանց մէջ մտցնում է մի տհակ մեծամոլութիւն՝ mania grandiosa. Երբ համեմատութեան առարկաներ չկամ՝ մարդ իրան և մհծ է կարծում, և՛ հզօր. իրականութեան մի շունչ և... ապերճ որազը ցնդում է օդում...

Դուք արդէն լիշում էք՝

Բռնկւում է սիրու հրդեհն,

Վշախ հեղեղն աղմկւում...

«Հրդեհ», «հեղեղ» շատ մեծ խօսքեր են, որ չեն գալիս բանաստեղծի խական չափերին. ալդայս կարող է կարծել նա, որ ուրիշների վիշտն ու սէրը չի տեսն, Մեծութիւն է թէ ուժ, հսկակութիւն է թէ թափ, ալդ բոլորը խօսքերով ասելը դեռ բոււական չէ, ազդուղ ամենագլխաւորը լաւ էլ չէ. լինելն է և ոչ տակը. Գրքովկը մեր առաջն է և մենք այնտեղ ոչ անդեհն ենք տեսնում, ոչ «հեղեղ»... Մի ուրիշ տեղ բարձր լայտնում է.

— Սիրտս երկինք է.

Սէր կուտակ կուտին,

Ամեն արարած

Կեանք կուտակ անկիանք

Աստղ ունի այնտեղ —

Չոր անապատին —

Խորշ ունի այնտեղ.

Ամայի որտին...

— Սիրտս երկինք է,

Բույր կուտակ ծաղկին,

Բույր կուտակ ծաղկին,

— Սիրտս երկինք է...

Ոիրտն ոտանաւոր է, լաւ համեմատութիւն է, բայց... իրական չէ. — Ճշմարդիտ չէ ամբողջովին. Ճիշտ է որ մեր բանաստեղծի սիրտը արձագանք է տալիս շատ բանի, բայց այդ «շատ բանը» շատ էլ սահմանափակ է, եթէ ի նկատի տանենք «ամեն արարած», Կոյն մանիան լսում է խուլ ձաշնով մի ուրիշ գեղեցիկ ոտանաւում.

Խմ սար—գարդեր, ախ, ծով—ցաւեր,

Դուք էլ մուշ-մուշ քուն եղեք ..

Ոչ միան ամբողջ գրքովկը, այլ և անմիջապէս ինքը բանաստեղծը հակառակ ցուցմունքն է տալիս, այս անգամ, սական, ճշմարտութիւն ասելով իր մասին.

Ես երգիչ եմ—երկնի որդի (Կոյն մեծամոլութիւն!)

Ես գանձ չունիմ—լեռ ու բեռ,

Ես սիրում եմ ծաղկիկ, աղջիկ,

Ծաղկի բուրմունք, կուսի սէր,

Ես սիրում եմ մրմռնջ-արտոնչնջ,

Տանջւած սշտի երգ ու զէրք...

Ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է, և ոչ ոք ոչինչ չի ասի այդ ճշմարտութեան դէմ. Աւելացնենք մեր կողմից, որ այդ «արմունջ-տրտունջը» սիրոց առաջ՝

եկած հոգեկան դրտթիւն պիտի հասկանալ և ոչ ուրիշ մրմունչ ու արտունչ, այդոր և երգն ու վէրքը սիրու կամանսովոր, ոչ-իրական կեանքի պատճառած տանջանքների աերգն ու վէրքն է։ և բանասաւեղծի պատկերը զծած է՝ մեր առաջ զրած, Խոստովանեցք, որ աստեղ իսկի չի երեւմ թէ բանասեղծի մէջ «ափիրու հրդեհ» լինի փոթորկւելիս, կամ «վշտի հեղեղ» աղմկւելիս. աճ էլ ինչ չափերով!

Եթէ վշտիս ջերմ հեղեղից  
Մի ջինջ կաթիւ, սիրելիս,  
Զքնալ կրծքիդ միան ծորէ,  
Սև վշտերով կը լցւիս...

Եւ ազգիս շարունակ. . . Առ նախասպաշարւած մհծամոլութիւն է. . .

Սական փոքրիկ վշտերը՝ թէկուզ հէնց սիրու վշտերը, մանր տանջանքները՝ թող նրանք սիրու տանջանքներ լինին, անուամենանիւ մարդու հոգին ևն հանում, հանգստութիւնն ևն խորմ, մելամաղձոտ ու լոգնած ևն դարձնում, և բանաստեղծը կարծէք խոնջացած տպաւորութիւններից ու մտքերից, զժզո՞ զիտակցական կեանք վարելուց ցանկանում է նմանել վար ու վեր թռչող «ալ-թիթեռներին», Դրանց նման «երգել կեանքի երգը» (?) ու սիրել պիրան և իր կեանքը», որ նշանակում է թէ նա ցանկանում է կտրել բոլոր կապերը, ապրել անհոգ, անդիսակցական, բուսական կեանքով, Բայց այդ մի բատէական ցանկութիւն է անշուշո, որ առաջանում է տանջւած ու լողնած բանաստեղծի և անհոգ թիթեռնիկի հակազրական գրութիւնից. Շուտավ նրան իրանց ձեռքն ևն առնում անլուծելի ու ծանր հարցերը, սիրու ծարաւը և հանգստութիւնը նորից վըրդովում. Մահւան խնդիրն է ամենից առաջ գլուխ բարձրացնում:

Ծանր ու տանջող, նոյն իսկ սարսափեցնող է մահւան հարցը. անհատի, սեփական ես-ի ոչնչանալու խնդիրը. բայց այս կաչ, որ ինչքան էլ մտածէք՝ բան չի գուրս դալու, անլուծելի մի հանելուկ է, որի հետ պիտի հաշտել ու դառնալ իրական կեանքին, ապրել «մինչ կաչ կեանք, մինչ նորոգ լուսի կախարդ հորիզոն»։ Մանաւանդ թէ մարդկանց ահագին մնամանութիւնը, համարեա ամենքը, Փանոսիական առածի առած՝ գիտեն որ մեւնելու ևն, բայց չեն հաւատում. և այդ չհաւատալը կարծէք բնազդական լինի, կեանքի զարկը չի թուլ տալիս կասկածել. . . Բայց էլի երբեմն հանկարծ, կաչծակի նման վալլատակում է մարդուս մէջ այդ սոսկալի միտքը և դառնացնում նոյն իսկ ամենաքաղցր բոպէները. Այդ սոսկալի զգացմունքն ու մտածութիւնն է արտավագտած «Միթէ պիտի թոռմին, թոշնին» (էջ 17) ստանաւորում, որ կարծէք թոյն ունի իր մէջ. (Վերջին երեք տողը վչացնում են ստանաւորի սիրուն շէնքը). Այդ նոյն տրամադրութիւնը ափսոսանքի և ցափի մեղմ նւագով հնչում է նաև «Ահհհուն երկնում ջինջ ասաղերը» (էջ 46) ստանաւորի վերջում:

Չնակած իր ուռցրած հոգու վէրքերին, որոնք իրական կեանքի պառւղ չեն, նա շատ աւելի մեծ չափով երգեր ունի, որոնց բղխողը՝ թկրի և երկրի պառւղ՝ դեղնեցկուհիների հետ ունեցած նրա հոգեկան կապն է։ Սէրն է այն լայն ծաւալ ունեցող և բանաստեղծի սրառմ մեծ տեղ բռնող զգացմունքը, որ նրա գրչից շատ երգ է խլիլ Մինչեւ անգամ նա ալլ զգացմունքը միակն է համարում. երբ կտրատում են նրա որտի լարերը՝ միայն մէկն է անվաս մնում.

Մենակ սիրու լարը մեաց  
Արտիս անհուն խորքերում,  
Մենակ սիրու երգը չողաց  
Կեանքիս ամեն ծալքերում:

Այս զօրեղ զգացմունքն է, որին չի դիմանում համարեա ոչ մի մարդ, ինչքան էլ աերկնքի ցաւով» հիւանդ լինի, և որը մեր բանաստեղծին էլ միշտ կապւած է պահում մեր հողի հետ. Այս կողմից նրա սիրտը շատ է զժբախտ, մեծ կարիք ունի և շատ է վէրք ստացել, իրական վէրք. Ինչեր առէք չի խոստանում, որ աղջիկն իրան սիրի.

Ե՞նչ որ ցանկաս, կուզես լինիմ,  
Լինիմ երկինք ու երկիր,  
Ծով, ժայռ, աղբիւր, արե, լուալին  
Լինիմ—միայն ինձ սիրի...

Զերմաջերմ խնդրում է «նազանի-նազելուց» սէր, պատրաստ է իր «հոգին» տալ նրան, բաց Շուշանները շատ էլ սիրով չեն բանաստեղծի հետ. մէկը իր «սուտ-սիրով» նրա սիրտը «անապատ» է դարձնում. —և մռալ մտքերն իրար ետեից գալիս են բախելու բանաստեղծի թափուր սրտի դրները. «Քարի պէս ժէռ» սրտերը անպատախան են թողնում նրա սիրու ծարաւը, որ հանգիստ չի տալիս, կրծում է ներսից—և նրա սիրտը կամաց-կամաց չոգնում է, թուլանում, տխուր, տրտում, թոշնած մնում, շրջապատի կենդանութիւնն ու թուրմանալը նրան չի ստիպում «անամպ ժըպտալ» կամ «ուրախ բախելու» Նա նախանձով նայում է հեռուց կեանքի լաջողակներին,—և աճա գերեզմանի մտքեր, մահւան ցանկութիւն ու կորչելու վճռականութիւն... Սէրն էր, որ նրա սրտին ուժեղ զարկ էր տալիս. առանց սիրու աշխարը չքանում է նրա աչքին, կորցնում է իր հմակքը. բանաստեղծի կեանքը վշրում է... Ու այս բոլորը մի մռալ ու լուսա-հատ հեծծանքի մէջ ամփոփած դնում է իր գրքուկի մէջ:

Ա՛խ, ալ-վարդի, սիրու վարդի

Չոր վշերը մնացին...

Է՛ն վշերը մատաղ սիրտս

Քրքրեցին ու կերան,

Կարմիր-կանաչ իմ օրերը  
Սիրու սպով սեացան...  
Ա՛խ, ափսոս իմ գարուն կեանքիս,  
Սուր փշերը մնացին...

Ի՞նչ ասենք ակս ութ տողի համար. ալսպիսի գոհարներ քիչ կան ոչ  
միայն պ. Խսահակեանի զրբուկում, այլ և մեր բանաստեղծութեան մէջ.  
այդ ձեւ, այդ արտալաւտութիւնը, այդ գեղարւեստականութիւնը իր չա-  
փով, ներդաշնակութեամբ, համաշափութեամբ. ալդպէ, ամիտի, կոկ...

Անգատասիսան սէրն իր ելեէներով՝ վշտով, ցաւով, կոկիծով,  
լուսահատութեան հասցնող երս զների ցնդումով, քնքչութեամբ և ազն  
բռնում է զրբուկը. համարեա բոլորի վրա ինչ որ մռայլ ամպ է ծանրա-  
ցած, անմիտթար տրամադրութիւն ցանցած. Այդ միօրինակ սգի ձախները  
երբեմն պատում են արթնացող լուսի կամ լուսի կարելիութեան մի նոր  
նուագ. Մի տեղ բանաստեղծը շեշտում է երկու լուսադրական, սիրտ տւող  
խազ (նոտա). «տանջւիք, լուսա...» դիմելով իր երերւոց սրտին, ուր թւում  
է թէ կորչում է «անքննին ուժը, սրբազն սէրը» և ուր ուզում է մռաւք  
գործել «ամենի օձը—անլու կասկածը»... Բայց բաւական է որ լուսը,  
լաշողութեան լուսը շողալ հեռում, և բանաստեղծը թարմանում, կենդա-  
նանում է:

Միակ միսիթարութիւնը բնութեան մէջ է առաջմ. ալսուել է բա-  
նաստեղծը մի կարեկից սիրտ գտնում, մի համազգացող. նա բնութեան  
հետ մի տեսակ է զգում. քնի պատկերները քուն են բերում նրա վրայի  
նրա մոքերը և հոգու ելեէները զուգընթաց են բնութեան տրամադրու-  
թիւններին. ալսուել բանաստեղծը փոքր ինչ հանգստանում է կարծէք...  
Ել մարդ չկալ, ել սէր չկալ, ել հոգս չկալ, վիշտ չկալ... Կարծէք նրա ներ.  
Քինը աներենութ թելերով կապւած է բնութեան հետ, և այդ կապը նա-  
լաւ է արտալաւտում (Էջ 45, V, և Էջ 43, III).

## VI

Պր. Խսահակեանը իր զգացմունքները շատ տեղ արտալաւտում է  
ժողովրդական բանաստեղծութեան արտաքին ձևով. ալսուել թէ լեզուն,  
թէ չափր, թէ ոճը ժողովրդական է. վեր էք առնում այդ խախտաճամուկ  
ու փարթամ ծածկոցը և տակին տեսնում էք բանաստեղծի սեփական  
զգացմունքը. Երբեմն էլ ժողովրդական նիւթերը մշակում է զրական  
ձևով. օրինակ նրա երկու սիրուն բալլագաները. Այս երկու տեսակի բա-  
նաստեղծութիւնները կամուրջի նման կապում են անհատական բանա-  
ստեղծին ժողովրդական բանաստեղծութեան հետ. զա մի հազորդակցու-  
թիւն է, որից մեծապէս օգուտ է քաղում բանաստեղծը շատ ու շատ կող-  
մերից. Ժողովրդական ձևով զրած կտորները տեղ տեղ լարմար են նիւթի

ու ձեի կողմից։ Թէս զգացմունքը ժողովրդական չէ, բայց մօտ է, կամ չի խրտնում, երբ արտալարտում է ժողովրդի ձեռփ։ Բայց կան կտորներ էլ, ուր չկայ ալդ ներդաշնակութիւնը և թուլանում է տպաւորութիւնը։ (Օրինակ էջ 51, I, 55, V, և ալլ։) Ալդ բոլոր բանաստեղծութիւնները կարող են բարբառապին գրականութեան հիմք դառնալ, մի բան որ ցանկալի չէ մեղ համար, մենք գեռ զօրեղ ու մշակւած լեզու շունինք, որ համատարած լինի ու ամենքի բերանում։ և հարկաւոր չէ, ոչ ել խելացի բան է, երբ տաղանդի տէր մի գրող բարբառով է գրում իր զգացած ու երեակածը։ Ալ բան է ժողովրդական լեզուվ զրել, նրա հոգով զրել, ալ բան է ժողովի զի լեզով գրել, մէկը ցանկալի է մեր գրական լիզի կենդզանութեան համար, միւսը վեասակար է, նա բաժանում է ստեղծում։ նա չի միացնում գաւառները, ալ փակում է նրանց իրանց նեղ սահմաններում...

Բայց ալդ ի հարկէ մեզ չի փրկում պ. խանակեանի երկերի թովիչ ներգործութիւնից, ան էլ հէնց ալդ տեսակ երկերի, նրանք գեղեցիկ բաներ են, շատ սիրուն, շատ տեղ զեղարեւստական։ Համարեա բոլորի վրա էլ մի թափիծ, մի դառնութիւն կաչ, մի մելամաղձոտ տրամագրութեան արգիւնք հն ալդ ստանաւորները, ուր նա երգում է իր սիրու ծարաւն ու հողու ցաւը, ուր նա խոցւած սրտով ու անտատասիան մնացած սիրով վազում է մօր մօտ հանգիստ ու մէր գտնելու, ուր երդում է իր զժղոնութիւնն ու գանգասը մեր սսառն ու սառուցը աշխարհից, իր դարդոտ և մենակ ու անընկեր եարից հեռանալը... Տեղ-տեղ միան հնչում են աշխուժ խաղեր, ան էլ շատ քիչ։ Բայց ալս ստանաւորների թում կան երկու երեք ակնպիսի կտորներ, որոնք հրաշալի բաններ են, որպէս զեղարեւստական երկեր։ Տեսէք «Նւէր մարիթիկա» ստանաւորը, ինչ անկեղծ, անմիջական թարմ ու կենսանի զգացմունք, ինչ բնական արտալայտութիւն, ինչ սիրուն կարօտ։ Մօրը շատ շատերն են բանաստեղծութիւնն նւիրել, բայց անկեղծութեան կողմից Պ. Աղալեանի լաւանի բանաստեղծութիւնն է միան, որ սրա հետ կարող է մօտ-մօտ զրել։ Միւմները շաբլոնական ֆրազներ են, չոր բացականչութիւններ, քար սողեր, սիրոտ չկաչ նրանց մէջ, անտեղ չի զարկում ազմիւրի նման իսկական սէրը, անտեղ հոգի չկաչ... Եւ ձեւ ալտեղ չի թուլացնում տպաւորութիւնը, որովհետեւ ալս զգացմունքը, ալս վերաբերմանը ունենալը դէպի մալրը լատուկ է նաև մեր ժողովրդին։ նա նոյն տեսակ է համարեա զգում։ Այս և միւս երկու բանաստեղծութիւնները (58, X և 63 XVI) աւելի սերտ մօտենում են և կցւում ան բանաստեղծութիւններին, որոնք պ. խանակեանի գանձերն են, հարստութիւնն են...

Նացելով մեր բանաստեղծի հոգեկան կազմին, ինչպէս վերն էլ ասինք, նա իր նմանը չունեցող անհատական բնութ ունի, նա համարեա ամին տեղ լինքն իրան հաւատարիմ է մնում։ Բայց ան երկերում, որոնց մասին խո-

աելը մենք թողել ենք վերջը, նա կարծէք հալւում է ժողովրդի մնձ սրտի ու հոգու մէջ, և ազլ ես նրան անկարելի է ջոկել ժողովրդի մարդուց. ախտեղ ազլ ես անհարազատ ոչինչ չկայ Մեզ թւում է, որ աչդ պատահական բ ո՞ն է, որ երգչի զգացմունքները պատահմամբ նոյնանում են ժողովրդի զգացմունքների հետ. ձեմն էլ արդէն տիրում է վարպետի նման, և ահա ստանում ենք մի շարք բուն ժողովրդական բանաստեղծութիւններ. Ալստեղ ալլ ես մենք չենք կարողանում մեր սքանչացումն ու հիացքը պահել. այդ հարազատ ձախների առաջ մթնում է դիտակցութիւնը և սիրտը լցում է ինչ որ ծանօթ, բայց հեռու նւազով, ինչ որ ընդհանուր լարեր են հնում ընթերցողի սրտի մէջ, լարեր, որոնք մեր սիրտը տանում կապում են ժողովրդի սրտի հետ. մենք ալլ ես օտար չենք նրան. Նրա հետ ենք, նրա կրծքին, նրա մօտ. Թող որ պատահմամբ, թող որ դիպւածով, բայց բանաստեղծն իր կախարդի գաւազանով փշրում է բոլոր պատճեշները, չարգում է բոլոր պատերը և մեղ ձուլում մեր միծ մօր, մեր հարազատ ժողովրդի հետ...

Ալստեղ երեան է զալիս բանաստեղծի մի նոր լատկութիւնը՝ ժողովրդականութիւնը, որ նրա ընդհանուր բնագծի չէ, բայց բնագիծը ամենաաթանկագին ու կարեռ մասն է. ախտեղ նա դեր է խաղում, կենդրոնական մարդ է զառնում, իրար է շփում կտրւած մասերը և սրտեր է բարախուլ տալիս միենողն չափով: Խճչումն է այդ ժողովրդականութիւնը. Նրա աշխ լատկութեան մէջ, որ կարողանում է ժողովրդի պէս զգալ, նրա սրտով ապրել խակ ինչ է հշանակում ժողովրդի պէս զգալ. այդ նշանակում է համանման հոգեկան զրութիւններում զգալ աշխ, ինչ կը զգալ ժողովրդի մարդը. սիրում էք դուք թէ ատում, վիշտ կաէ ձեր սրտում թէ ուրախութիւն, կորցրած սէրն էք ողբում թէ խանդաղատանքով էք լցւած, եթէ զուք զգում էք աշխ, ինչ կ'զգար ժողովրդի մարդը, ապա դուք ժողովրդի պէս էք զգում և ուրեմն ձեր երգերը ժողովրդական են՝ ձերը մնալով: Եւ մոռանում էք առժաման ձեր կարւած, ժողովրդից խորթացած զրութիւնը, ձեր միանութիւնը իր կրծող ցաւով, ձեր օտարացած ու ինդած հոգին, ձեր բոլոր անիծւած հոգսերը... Դուք մնակ չէք, զուք հազարների հետ էք դուք կորչում էք ալլ ձախների խմբերգի մէջ, լուծում, մի զանգւած դառնում... Օ՛, օրհնւած լինի թող աշխ ձեռքը, որ ընդունակ է թէկուզ մի քիչ ժամանակ ու սրտի մի քանի լարերով միացնել մօրն ու որդուն!... Ահա թէ նրտեղ է բանաստեղծի մնիրական վէրքերի սպեղանին, ահա թէ նրտեղ նրա սիրտը կը հանգստանայ, ահա թէ ուր պիտի իջնի նա, ում սիրտը պիտի մանի, ում ջղերով զգայ, ում վիշան ու ցաւը երգի. թող զա լինի նրա սիրու երգն ու վէրքը միան, նրա սերին կարօտը, նրա համեստ կենցաղը, նրա կեանքի վարդ-կողմը... Սառը բարձունքները ոչինչ չեն տաչ բանաստեղծին. անստեղ բարձրացել է իր

երևակաչութեամբ և՝ ժողովուրդը ու հիասթափանել, երգել է իր հիասթափութիւնը պարսկական հակաց ու խոր քառատողերով և դարձել դէպի իրական կեանքը...

Ժողովրդական ոտանաւորներում ալ, Խահակեանը ցուց է տալիս, որ ունի ստեղծագործելու չնորք, մի չնորք, որ ամեն բանաստեղծի չի տւած։ Ստեղծագործութեան առաջին և անհամաժեշտ պահմանը համազգալն է ուրիշի սրտին։ առանց ուրիշի դրութիւնը մտնելու ընդունակութեան չկալ ստեղծագործութիւն։ մարդ պէտք է կարողանալ ապրել ուրիշի կեանքով, մտածել նրա նման, գատել ու խօսել, զգալ ու կշռադտել։ Թէե կարելի է ենթադրել, որ ալ, Խահակեանի ժողովրդական ոտանաւորները պատահմունքի արդիւնք են, նրա սիրուը այդ բոպէներին ժողովրդի սրտի հետ ու նրա նման է բարախել, բայց կատ մի կտոր, որ անկասկած է դարձնում նրա ուրիշի հոգին մտնելու չնորքը—ստեղծագործելու չնորքը։ Տեսէք «Բալէս ունի հնդու-մաթալ» ոտանաւորը, (34, IV) ուր մի մօր խօսքերն են մէջ բերած երեխալին խաղացնելիս, ալսուել նա ոչ միայն հաւաքել, իրար մօտ է զրել բոլոր ան խօսքերն ու արտաքալտութիւնները, որ գործ է ածում ժողովրդի մակրը ալդպիոփ դէպքերում, այլ և արդ հաւաքածուն մկրտել է զուտ հակ մօր զգացմունքով, մտել է նրա հոգու մէջ, ապրել ու զգացել նրա նման...»

Ժողովրդական բանաստեղծութիւնները շատ չեն թւովի բայց որակով թանկագին են։ մանրամանն զբաղմունքի նիւթ զարձնել նրանց՝ նշանակում է մէկ-մէկ արտագրել ու քննել, որ շատ ժամանակ կը խլի մեզանից։ Նրանք բոլորը հիանալի բաներ են, որպէս զեղարւեստական երկեր... Բայց մենք չենք կարող այդ խմբի պասկը կազմող երեք սքանչելիքներից գոնէ մէկը չըներել ալսանեղ։ (Այդ երեքն են՝ 54 IV, 59 XI և 60, XIII):

Արեն հասաւ սարի զլսուն,  
Դմար ու դաշտում լսա չկան,  
Հաւք ու թռչունք մտան խոր քուն,  
Ա'խ, լինձ համար քուն չը կան,  
Լուսնակին ընկաւ երթկից նես,  
Կշիռքն ելաւ երկնքում,  
Զով հովերն էլ մըթնշողէս  
Աստղերի հետ են զրցում։  
Սիրուն աստղեր, անուշ հովեր,  
Եարս ուր ա էս գիշեր,  
Պարզ երկնքի նշխուն աչեր,  
Էարիս տեսանք էս գիշեր...

Լուսը բացւաւ, դուռը բացւաւ,  
Ամպ ու զամպ է—թօն կուգաէ.  
Ալ-ձին եկաւ, ահտէր եկաւ,  
Եսրա մւր ա, տնւն չի գաէ...

Ահա ձեզ մի սիրող ու սպասող սրտի անցկացրած անքուն գիշեր մինչև առաւօտ, հերոսուհին իր տեղը պարկած՝ մէկ-մէկ նկատում է զիշերւաց մասերը, սպասում եարին մինչև առաւօտ, երբ դուռն է բացւում և ձին է զալիս անտէր... Ու երազնամ էք, մտքով թռչում այն սարերն ու դաշտերը, ուր տաճջւում ու սպասում են ալդ «եարուերը, դուք էլ մասնակից եք լինում նրանց զգացմոնքին, ու մտքերը խառնում են իրար, լորդուրդ թափւում են, երազները լաջորդում են մէկ... Խսկական բանաստեղծութիւնը միշտ երազել է տալիս, որ իր կողմից շարժում է միտքը...

Պ. Խսահակեանը, որպէս անհատական բանաստեղծ արժէք ունի անկամած, բայց իր տաղանդի որոշ կողմերի արժէքը շատ չնչին է և հետաքրքրական է, միան ինչպէս մի տարօրինակ նորութիւն, ալդքան. Խոկ որպէս ժողովրդական բանաստեղծ, նա շատ մեծ արժանիք ունի և այս կողմից է նա մեզ թէ զբանում և թէ մեր մտածմունքի ու լոյսերի առարկան դառնում. Նրա տաղանդի սուր-սուր և տարօրինակ կողմերը մեզ համար հետաքրքրական են, բայց թանկագին չեն... Նա զեռ սկսնակ է համարեա, քիչ բան և գրել, բայց գրածների մէջ ոչ միայն լաւ բաներ, ալլ և գոհարներ կան. Նա ունի վառ երեակալութիւն, լարատես ոգեորութիւն, հարուստ լեզու և փորձւած դրիչ. Ինչի՞ կը ծառալին ալդ բոլորը, ահա ամենահետաքրքրական հարցը. Ալդ բոլորը ոչինչ են և շատ բան են միանգաման. Սալտիկովն ասում էր թէ «չէ որ տաղանդը զատարկ շիշ է, որ կարելի է և զինով լցնել և՝ ինչով ասես». զա ձշմարիտ է և օրւաէ լոյսի պէս պարզ դրովին անմահացնում է ոչ թէ նրա տաղանդը անկախ իր ընտրած նիւթերից, ալ նրա տաղանդով մշակւած բովանդակութիւնը... Մենք տեսանք, պ. Խսահակեանի հոգու շրջման կէտերը՝ մէկը ժողովրդի մէջ, միւսը վերացականութեան սառուցներում. սիրով նա կապւած է երկրի հետ, իսկ ինչ որ անհասկանալի վէրքերով «հեռու ափերի» հետ, Ո՞րտեղից է սկսել և մւր է զնում. միթէ դէպի սառն ու մեռած բարձունքները...

ԶԵՆՔ ուզում հաւատալի...

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

DAUDET Alphonse.—*Soutien de Famille.*

ԴՐԱՅ, Ալֆոնս.—Հնտանիքի յենարան: Պարիզ, 1898թ. 445էջ.  
դիմու է Յ Ֆրանկ 50 սանտիմ:

Այժմ հւրոպական հասարակութիւնը կարդում է Դոդէի վերջին մի նշանաւոր վեպը, որ իր մէջ պարունակող ինդրի մեծութեան պատճառով՝ պիտի գարձնի իր վրաչ քննագաւութեան լուրջ ուշադրութիւնը, Աւրոպական ընթերցողը այլ ևս չի տեսնիլ Դոդէի նոր երկերը, որոնք անշուշտ կը լուսաբանէին դեռ ևս մի քանի բարդ հասարակական խնդիրներ, Զը կայ այլ ևս այն նշանաւոր զրողը, որ Զոլաի կողքին կանգնած՝ մարտնչելով հասարակական վերքերի դէմ, կազմում էր ֆրանսիակի փառք և պատիւը: Դոդէն նոր կնքեց իր մահկանացուն: Բայց բազմարդիւն կեանքից հրաժեշտ տալուց առաջ նա տեսց իր հաջրենի գրականութեանը մտածելու խոշոր պաշար մի խնդրի մասին, որ ծագում է դարձեալ գույութեան կուի պալմաններից և լառաջ է բերում զգւելի և պահարակելի բարքեր ի վասս հասարակական բարոկականութեան: Վէպի համեստ, բայց խորիմաստ վերնագիրը արդէն մեղքացնում է Դոդէին լատուկի շիտակութիւնը և նրբութիւնը, որով նա մօտենում է իր առաջադրած խնդրի քննութեանը: Ում չեն չափանի այն պարտաւորւթիւնները, որ վիճակւած է կատարել բազմամարդ ընտանիքի անդամին: Որքան պատրաստութիւն է հարկաւոր այդ անդամին՝ ընտանիքի բարեկեցութիւնը ապահովելու և սորա հասարակական դիրքը պաշտպանելու համար: Եթէ սա մի սուրբ և ծանր պաշտօն է, տալիս է արդիօք հասա ակտութիւնը իր անդամներին: Հնարաւոր զէնքեր՝ ալզ արժանաւոր պաշտօնին ծառակելու, որ ինքը հասարակութիւնն է աւանդաբար զնում մարդկանց առաջ:

Պարիզի մի մնանկացած ատաղձագործ գործարանատէր սպասում է իր չքաւոր ընտանիքի դրութեան փրկութիւնը իր աւագ որդի Ռէմոնդից, Դորա համար դժբաղդ հայրը աշխատում է մտցնել իր աւագ որդի համեստ, բայց խորիմաստ գուն միջնակարդ ուսումնարան տէ-

րունական հաշտով. Այս գործը լա-  
ջողցնելուց չետոյ՝ ինքը հայրը, չը  
տանելով խճճւած պարտփերի հետե-  
ւանքները ինքնասպանութեամբիլերջ  
է տալիս իր չարատանջ կեանքին:  
Ռէմոնդի ծնողների կարծիքով պէտք  
է աւագ որդին զժբաղդացած ընտա-  
նիքի էնարանը լինէր: Նա պիտի  
կատարեալ ուսում ստանար՝ ապա-  
գայում ընտանիքի նիւթական կեան-  
քի ապահովութեան վրաչ հոգալու  
համար: Ռէմոնդը միջնակարգ ուս-  
ման ընթացքում չափազանց զգում  
է իր ապագաչ պարտաւորութեան  
ծանրութիւնը: Նորան սպասող կեան-  
քի համար պակասում են կամքի  
խստութիւն և եռանդ: Նա միշտ  
տրտնջում է, որ նրան են լանձնել  
ընտանիքի սպագաչ բաղդը, թէն  
նրա հայարտութեանը սահման չըկար,  
տեսնելով, որ իր հայրական ընտա-  
նիքի և իրան շրջապատող այլ մարդկանց  
ուշադրութիւնը նրա վրաչ է  
զարձրած նրան սպասող գործունէու-  
թեան նկատմամբ: Անկասկած ամեն  
տեսակ կանոնաւոր և լուրջ ուսում  
ընդունակ է մարդուն օժտել զէն-  
քով պարտաւորութիւններով հիւսած  
գործութիւնը պայտպաններու: Ռէմոնդը  
թոյլ արարած է, և նա, այս չատ-  
կութեամբ, ստանում է կլասիկական  
և զրական կրթութիւն, որ ուրիշի  
ձեռքում զէնք կը լինէր, իսկ նորա  
մօտ զառնում է աննպատակալարմար  
և իր կոչման բոլորովին հակառակ:  
Նրանից սպասում են զրական և չու-  
տափոյթ կրթութիւն: Խոկ նա սովոր-  
ում է զրեթէ չկամութեամբ հին լե-  
զուներ, որոնց գիտութիւնը իր վերջ-  
շական հստեանքով կարում է նորա

մերձաւորների չոլսերը:  
Ընտանիքի պահանջներին հակա-  
սող ազդ տեսակի միջնակարգ կրթու-  
թիւնը ենթարկում է մի անսպա-  
սելի ալլանդակման, որ առաջ է գա-  
լիս Ռէմոնդի վաղաժամ սիրու ար-  
կածից: Ռէմոնդը չաճախելիս իր  
ծնողներին ծանօթ մի ընտանիքի,  
անտեղ կրկնում էր իր գասերը իրա-  
նից տարիքով մեծ մի օրիորդի հետ,  
որ արդ ժամանակ ուրիշի հետ պէտք  
է ամուսնանար: Բայց Ռէմոնդի սի-  
րու անպատասիանատու և բռնի աղ-  
գեցութեան տակ՝ օրիորդը չետ է  
կանգնում իր նպատակից: Աւսպէս  
ուրիշներ Ռէմոնդը մի կողմից շատ  
հպարտ է կրելով ընտանիքի պաշտ-  
պանողի անւանական կոչումը: միւս  
կողմից նա բարովապէս ուժառապառ  
է՝ այն մտքի հետ հերոսարար հաշտ-  
ւելու համար, որ նրան կոչել են հա-  
րազատ ընտանիքի կարիքների լուծը  
տանիելու: Աւելանալով այս բնաւո-  
րութեան վրաչ երիտասարդի սիրու  
և միտք մաշող վաղաժամ սիրու բոր-  
բոքը՝ ստացելում է մի բարովական  
զանդւած, որի մէջ Ռէմոնդը չի կարող  
իր ճանապարհը հարթել զէպի առողջ  
կեանքը: Միջնակարգ ուսումից չետու չ  
Ռէմոնդը ուսանում իրաւաբանութիւն  
և աւարատում: Բայց ազդ ժամանակա-  
միջոցում նորա կրտսեր եղբար: Ան-  
տոնինը արդէն արհեստ էր սովորել  
և նորա քուր Դինան հեռազրատան  
մէջ պաշտօն էր վարում: Սոքա եր-  
կուսն էլ, առանց սպասելու, արդէն  
սկս'լ էին իրանց աշխատանքով պա-  
րուսա հալթալթել և մօրը սկանել:  
Ազդ բաւական չէր: Աոքս էին  
տանում իրանց աւագ եղբօր սկըզ-

բնական անհրաժեշտ ծախսերի վրայ համալսարան աւարտելուց չետոք՝ չուսալով ստանալ նրանց արած բոլոր զոհողութիւնների հասուցումը Ռէմոնդի ապագայ գործունէնեւթիւնից, որով պիտի վերականգնէր ընաանիքի նախկին վարկը. Այս վերաբերութեամբ Ռէմոնդը ոչ ոքի չուսը չի արդարացնուած. Նա նմանում է ան էակներին, որոնք շարունակում են իրանց տիտուր գոլութիւնը ուժեղների խնամութեամբ. Նա աննպատակ ուսում է ստացել լոկ խնամութեան չնորհով. Այժմս էլ ապրում և սպասումէ ամեն բան խնամակալութիւնից, որ խմորել է նորան տգեղ յակումնելով՝ խլելով նրանից ինքնուրութիւնն և նրան ստրուկ զարձնելով ան ամեն հանգամանքի, ուր զլիմաւոր դիբակատարը ինքը խնամակալութիւն է. Ռէմոնդը սկսել էր չանախել բարձրաստ, ձան մարդկանց մօտ. Նա ընդունուում էր նոյն իսկ մինիստրի մօտ, ուր նա զւարձանում, մարդկանց շուզում և գուրեկան լինել էր աշխատում, բոլորը նորա համար, որ իբր թէ մի գործ չաջողցնի. Իսկ ապդ բարձրաստիճան մարդկանց մըթնուրդը իր մաւթ գործերով և վատքարքերով ապականում են Ռէմոնդին ցնորդենի և ապարդիւններով և հեռացնում նորան իր պարտաւորութիւնից. Դըդովն և անհամապատասխան շրջանում դեգերով երիտասարդի կեանքը պատճառում է ծախսեր, որ ինքը չէր կարող ծածկել. Դորս համար միջոցներ տալիս էր կրտսեր եղբար. Այս նախատը կամքը, նոր կամքը, այս կամքը ուներ. Ահա նա չաճական լինելով էր նոր տեսակի գրողների շըր-

պողոքի և լանդիմանութեան համարի պէր Յանդիմանողի դերը կատարում է Ռէմոնդի քոլորը որ իր աւագ եղբար անկարգ կեանքը հերքելիս՝ պընդում է թէ իրանց ընտանիքի վեհարանը միան կրտսեր եղբարըն է. Սա է միակ այս զժբազզ ընտանիքի սիւնը, համեստ գործող, աղնւաբար կատարողը իրանց հօր կամքի, զուր էր կտակել աւագ որդուն ազգ ծանր պաշտօնը.

Քրոջ լանդիմանութիւնը սասափկ հարւած էր, ամօթանք բերող էր, դատապարտող էր Ռէմոնդի սկսած կեանքի, որ անարժան էր կացուցանում կրթւած մարդու անունը առհասարակ և, իրենց ընտանիքի տեսակէտից, աւագ որդու պատիւը մասնաւորապէս Ռէմոնդը կրելով իր հպարտ և անարժան կեանքի պատիժը, աշխատամ է արհեստական կերպով թօթափել իրանից քրոջ արդար չանդիմանութիւնը. Նա փոխ է առնում փող իր հետ միջնակարդ ուսման ժամանակ զպրոցական զամեր կրկնող օրիորդից, որ ալժմս Ռէմոնդի հետ ապօրինի կենակցում է և նրան փող է տալիս իր օժիտից կրտսեր եղբօր, իբրեւ պարտք հատուցանելու համար. Հարկաւ բարձրական պարտքի հատուցման ալս անվանել և աղեղ ձեզ անկարտ էր փրկել նորան քրոջ խիստ լանդիմանութիւնից, որ համարեա թէ վիճելի էր դարձնում նորա բարձրական կացութիւնը.

Անկատար թողնելով իր հօր կտակած կամքը, Ռէմոնդը զուցէ այլ ձգտումներ ուներ. Ահա նա չաճական լինելով էր նոր տեսակի գրողների շըր-

Հանը, որոնք փաստաբանում են մի նոր ուղղութիւն գրականութեան մէջ, չհաւանելով ներկայ եղածները, մասնաւանդ իրական վիճակութիւնը: Նոյա կարծիքով բնական իրերի մէջ պէտք է որոնել ոգեկան տրամադրութիւններ և դրութիւններ, պէտք է թափանցել իրերի գաղտնիքի մէջ և ալսպէս չարաբերութիւն գտնել ոգու և իրի մէջ: Այս մկրտունքը, որ խորհրդական պատկերով (ցածրեալ, սիմբոլ) է ուզում բացատրել իրերի էութիւնը, դրաւել էր Ռէմոնդին: Առ ես գրել էր մի վէպ, «Մի ֆրանսիական ընտանիք», վերնազրով, ուր հերոսը խաչած և նահատակւած մարդու դեր է կատարում լանուն իր հարազատ ընտանիքի: Այս գիրքը պատմում էր կրքով և թոշնով հէնց իր սեփական թշուա կեանքի ընթացքը՝ պախարակիլով իր սիստաների համար առաջներում իրան ըրջապատած անձնաւորութիւնները և պաշմանները: Իր թէ այս գիրքը պէտք է ուշադրութեան արժանանար և հոչակւեր, հետևաբար և շատ մուտք տար իրան: Ատկան գիրքը արդ նպատակին չի համուռմ, և իր այս ասպարէզն էլ անհետեանք է մնում:

Այս ամեն տեսակ անկաջողութիւններին նա ենթարկուում է շնորհիւ այն միջնավայրի անառողջ բարքերին, որ նրան ալլանդակել և թուլամորթ էին դարձրել: Նա ինքը խոստովանում է իր անկարողութիւնը՝ դիմանալու և տանիելու արդի կեանքի պալմանների լուծը: Յատնելով հերոսաբար իր կրասեր եղբօր իր կեանքում արած սխալների և մեղքների սոսկալի խոստու-

վանքը, նա գնում է ֆրանսիական կոլիխին գաղութը իր եղբօր տեղը զինւորի պաշտօն կատարելու, որ գուցէ նորա անսանձ կեանքը կարգի ենթարկեր: Նա լավաճնում է իր վերջին ցանկութիւնը, որ իր որդին, որ կը ծնի իր հետ կենակցող լողի կինը, կլասիկական ուսում չստանալ, որ իրան այնքան դժբաղդացրեց:

Դոդէն բոլորովին նպատակ չունի դասական գիտելիքներով օժտւած մարդու արժանիքը նսեմացնել: Ընդհակառակն հասարակութիւնը շատ պէտք ունի այդ պաշարով զինւած մարդկանց: Եթէ դասական և գրական կրթութիւնը ունեցող մարդը ասպարէզ գալով իսկական ծառալութիւնները մատուցանի այն որոշ նպատակներին, որ հասարակական պալմանները առաջացրած են, այդ դէպքում երբէք ինսդիր չէր ծաղիլ վիշեալ կըրթութեան նպատակակաչարմարութեան մասին: Ի հարկէ հանգամանքները շատ անզամ ուղղակի պալման առորում են մարդու գործունէութեան ընթացքն ու եղանակը և չեղել են տալիս նորան հնարաւորութիւնից՝ ցանկացած օղակ կազմել ընտրած ասպարիզում: Յարգելի պատճառները կարող են արդարացնել այդ երեսովը և ըստ այնմ անպատասխանատու դարձնել մարդկանց գորա հետեանքի համար: Սակայն այդ չէ խնդիրը: Դոդէն վրդում է, որ մարդկանց չաճախուսում են տալիս կամայականաբար, նոցա բնական ձերքերին անհամապատասխան, դնելով միենոյն ժամանակ նոցա վրաց հէնց ուսման մկրտից անտանելի պարտաւորութիւններ: Ամեն մարդ ի բնէ զի-

տակցում է այն պարտաւորութիւնը, որ հասարակութիւնը նրա վրայ է դնում արդիւնաւոր կերպով գործելու և աշխատելու ։ Դողէն նկատում է, որ, բազդի որոշմամբ ինսամակալւած ուսումը, որ պիտի զենք լինէր գոլութեան կուի համար, սպասելիք արդիւնք չէ տալիս։ Դուք տալիս էք զասական ուսում մի չքաւոր երիտասարդին կեանքի այն պամաններում, որոնք ծագում են խնամակալների կեանքի բարքերից, նորան չիջապատող միջնավարից, ուր ևսամոլութիւն, արծաթասիրութիւն, կիրք և արհասարակ բարոյականութեան հուկասող կացութիւնը ազասեռում են ազգ երիտասարդի ողեկան չատկութիւնները։ Դուք սպասում էիք երիտասարդի խնամակալւած կրթութիւնից նպատակաւոր, չոշափելի արդիւնքներ, որ տալիս է, ըստ Դողէի տաճ օրինակի, միան նա, որ զուրկ էր մեացել, արդարեւ, խնամակալութիւնից և կարենոր կրթութիւնից, բայց զինւած է ինքնուրունիթիւննով և ինքնօգնութեան կամքով։ Ըստ երևութիւն ալս հանգամանքը բացասող է, բայց ըստ էռութեան դրական է, որովհետև մէկը ինսամակալների միջնավարի չնորհով՝ ապարդիւնլուսերիմէջ զեգերելով ստըրկանում է և կորցնում ինքնուրունքար գործելու ընդունակութիւնը, իսկ միւսը, որին վիճակւած է չէզօք դիրք բոնել, ազատ է ստորացնող միջավարի բարքերի ազդեցութիւնից, որ բթամտացնում է առաջինին՝ ապար-

դիւն գարձնելով սորան հասարակական գործի համար։ Զէ որ ինդիր է թէ՛ որ աստիճան արդիւնաւէտ և նպատակակարմար է նկարազրած պալմաններում ստացւած ուսումը։ Եւ աչդ ինդիրը լուսաբանելու մտքով՝ Դողէն տալիս է իր սիրուն երկը, որ իր փառլուն գործունէութեան վերջը լինելով՝ միծ գանձ է բնթներցողի համար, որ նախանձախնդիր է չնաշխարհիկ քրանտիական գրականութեան։ Դողէն վրդովեցնաւմ են կեանքի երեսովները, որոնք իրանց ագեղութեամբ և վեասակարութեամբ խանգարում են իրերի զարգացման ներդաշնակութիւնը և բերում ամեն ինչ որ պահանջում է բարոյական մաքրութիւնը հասարակական գործերի մէջ, նիթէ մի որ և է հասարակական գործի վեասակար կողմերը պիտի զերակշռեն, այն ժամանակ նորաառաւելութիւններնէլ չէզօքանում, նումանում և մինչեւ անզամ անզաւանում են։ Հասարակութիւնը իր չառաջացրած ազպի սի գործից ոչ մի դրական օգուտ չունի բայցի վեասից, որ պիտի երեան հանել, որովհետեւ նա հանդիպում է բողոքի և վրդովմունքի իր ամենավատ հետեանքներով։ Այս է Դողէի հայեացքի ծանրակէտը, որ արտավալտուում է նորաերկերի մէջ և մասնաւորապէս գրախուող ներկաւ վէալի մէջ, որ արդիւնք է նուրբ քննութեան և դիտողութեան։

Գրիդր Վարդանեան

## ԴՐԵՅՖՈՒՍԻ ԳՈՐԾԸ

Գործի համարության պատմովթիւնը՝ Մինիստր կաւենեակի յայտարութիւնը

Անցեալ տարւայ վերջերքը, որպէս յայտնի է մեր ընթերցողներին, խնդիր յարուցւեց այն մասին թէ արդեօք 1894-ին զինուրական դատարանու մ քննւած ու դաւաճանութեան յանցանքի համար Սատանաների կզզին ցմահ աքսորի դատապարտած Ալֆրէդ Դրէյֆուսը իր ծք մեղաւոր էր թէ ոչ։ Դուրս եկան մարդիկ, բարձր դիրք վայելող, որոնք պնդում էին թէ Դրէյֆուսը անմեղ է, և որ իսկական յանցաւորը գնդապետ Էստերհազին է։ Նոքա պնդում էին, որ այն դոկումէնտը (բորդը), որ վերագրւում էր Դրէյֆուսին, սորմ ձեռագիրը չէ և ոչ էլ սորմ կեղծածն է, այլ որ այդ ձեռագիրը իսկ և իսկ էստերհազինն է, թէև վերջինս, իրը թէ, 1894-ից դէս իւր մինչև այդ սովորական ձեռագրութիւնը մի շարք տառերի համար փոփոխել էր և այժմ այլ և այդ և միայն այդ տառերը այլ կերպ է գրում։ Բացի այդ նոքա պնդում էին, որ Դրէյֆուսին դատապարտել են ոչ թէ այդ բորդը որի հիման վրայ, այլ կայ նաև մի աւելի կարեոր թուղթ, որը զինուրական գլխաւոր շտաբը և պատերազմական մինիստրը ցոյց են տւած եղել զինուրական դատարանի անդամներին միայն, բայց ոչ նաև Դրէյֆուսին ու սորա փաստաբան Դլմանժին։ Եթէ ցոյց տւած լինէին, պնդում են նոքա, Դրէյֆուսը կը հաստատէր որ այդ զրութեան մէջ և Այդ կանալիս Դ... խօսքերը իրեն՝ Դրէյֆուսին՝ չեն վերաբերում, և որ այդտեղ ՇՊ տառը Դրէյֆուսի անւան սկզբնատառը չէ։ Արդարադատութիւնը, ասում էին նոքա, պահանջում էր որ այդ թուղթը Դրէյֆուսին իրեն ու սորա փաստաբանին ցոյց տւած

լինէին։ Ուրեմն պէտք է Դրէյֆուսի գործը վերաքնննել, եզրակացնում էին նոքա։

Յօդուտ Դրէյֆուսի և ի վեաս Էստերհազիի այս արշաւանքը սկսողների մէջ առաջին տեղը պատկանում էր սենատի փոխ նախագահ Նէյբէր-Քէստնէրիին, չնորհիւ նորա բարձր դիրքին։ Էմիլ Զոլան ևս արդէն յայտնել էր իւր կողմնակցութիւնը յօդուտ Դրէյֆուսի և ի վեաս Էստերհազիի։ Նոքա իրենց գլխաւոր տեղեկութիւնները առել էին գնդապետ Պիքարից ու սորա փաստաբան Ալբլուայից։ Պիքարը այն անձն էր, որը 1894 ին պատերազմական մինիստրութեան մէջ լրտեսութեան բիորդի պետն էր։ Նորան ասկա հեռացրին այդ պաշտօնից ու Թունիսիա դրկեցին այլ ծառայութեան համար։

Սնցեալ տարւայ վերջը զինւորական դատարանը քննեց Էստերհազիի վրաց բարդած մեղադրանքները և, վերջիններս անապացոյց գոնելով, անպարտ արձակեց Էստերհազիին։

Ահա այդ ժամանակն էր, որ Էմիլ Զոլան «Ասորօ» լրագրում տպեց իւր «բաց նամակը» հանրապետութեան նախագահ Ֆորին, որը ոչ միայն ահազին ազմուկ հանեց, այլ և մեծ իրարանցում գցեց թէ Ֆրանսիայում, և թէ Ֆրանսիայից դուրս բոլոր երկիրներում; ուր մամուլ կայ Զոլան, որպէս յիշում կը լինեն մեր ընթերցողները (Մուրճի № 2-3-ից էջ 328) բացարձակ կերպով յայտնում էր որ Դրէյֆուսը անմեղ է, Էստերհազին մեղաւոր է, և որ երկրորդին անպարտ արձակող զինւորական դատարանը գործել է ուղղակի հրամանով զինւորական գլխաւոր շտաբի (որի պետն է գեն. Բուադէֆը)։

Զոլան ուրեմն, ոչ միայն մի դատաստանական պրոցէսային սխալի վրաց էր շեշտում, այլ և ուղղակի յայտնում էր թէ Փրանսիական զինւորական բարձր կառավարութիւնը պաշտպանում է մի դաւաճանի, որպիսին պիտի լինէր Էստերհազին։

Յուղւեց Ֆրանսիան այդ տեսակ ամբաստանութիւնից։ Ֆրանսիական ազգը չէր կարող հաւատալ, որ այնքան մեծ զոհաբերութիւններով կազմակերպւած մի զօրքի կառավարութիւնը կարող է

ընդունակ լինել իրեն յայտնի մի դաւաճան զինւորի հովանաւորել։ Նա բացարձակ կերպով բռնեց կառավարութեան կողմը և ամենա-անպատիւ խօսքերով ցեխոտեց Եմիլ Զոլայի անունը։

Դրու հակառակ՝ Ֆրանսիայից գուրս երկիրները նոյնքան բուռն կերպով բռնեցին Զոլայի կողմը և, նոյն իսկ առանց սպասելու դա-տաստանական քննութեան, հոչակում էին Պրէֆուսին անմեղ, Էս-տէրհազիին՝ դաւաճան։

Մեր լնթերցողներին յայտնի է թէ Մուրճ-ը ինչ դիրք բռնեց այդ խնդրի մէջ։ Մենք գովեցինք Փրանսիական ժողովուրդը, որը մինչև խնդրի պարզելը մի այսքան յուղիչ ու վանգաւոր գործում իւր հաւատը իւր հանրապետական կառավարութեանն է ընծա-յում, և ոչ Եմիլ Զոլային և մի այլոց, որոնք դեռ ևս միայն ամ-բաստանութիւններ էին անում. պարսաւում էինք այլ երկիրների մամուլը, որը, առանց գործի վերաքննութեան՝ Փրանսիական դա-տարանից դաւաճան ճանաչւածին անմեղ էր հոչակում և մի-միայն Զոլայի ու մի քանի ուրիշների խօսքերով՝ անպարտ ար-ձակւածին դաւաճան էր անւանում։ Մենք պարսաւում էինք նաև այդ երկիրների մամուլի խօսելու տոնը, որով այդ մամուլը, մի գոր-ծում, որը ամեն ուրիշ երկրում հրապարակով չի քննուում և որը մեծապէս շօշափում է Ֆրանսիայի զինւորական սպասարկանութեանը, գալիս ու Ֆրանսիային դասեր էր տալիս թէ ինչպէս պէտք է դա-ւաճանութեան գործերը քննել... Եւ վերջապէս մենք այս էինք յախնում, որ եթէ որ և է դատաստանական սխալ պատահած լինի, այդ սխալը կարող է ուղղել Ֆրանսիայի պէս մի երկրում, առանց ագիտացիայի դրսից...

Պատերազմական մինխատը երգւեալների դատարանի առջեւ պա-տասնանատութեան ենթարկեց Եմիլ Զոլային, սորա այն խօսքի հա-մար, թէ իրը զինւորական դատարանը էտոերհազիին արդարացրած լինի զինւորական գլխաւոր շտաբի հրամանով։ Դատը տեսեց 15 նիստ երգւեալների դատարանը դատավարտեց Զոլային։ Վերջը վճռա-քեկ ատեսնը թեկանեց երգւեալների դատարանի վճիռը այն հիման վրայ, որ դատը սկսել էր զինւորական մինխատը, մինչդեռ Զոլային դատի ենթարկողը պիտի լինէին զինւորական դատարանի անդամները։ Վերջիններս, ժողովւելով, որոշեցին իրենք դատ բանան. այդ գործը

Նորերումն քննւեց Վերսազլում, և Էմիլ Զոլան դատապարտւեց Յամիս բանտարկութեան ու 5.000 ֆրանկ տուգանքի: Բայց Զոլան, դատավճիռը իմանալուց՝ թողեց ֆրանսիան. ենթադրում է որ դա իսկական փախուստ չէ, այլ նա օգտում է մի օրէնքից, որով դատավճիռը, դատապարտւածի բացակայութեան դէպքում՝ իրագործւում է աւելի ուշ: Խսկ մինչև այդ՝ նա յոց ունի որ Դրէջ-Փուսի գործի համար Զոլացին դատարան կը կանչեն:

Զնացած, սակայն, որ Էմիլ Զոլան դատապարտւեց դեռ ևս անցեալ սպրիլին, բայց դորանով խնդիրը չվերջացաւ, որովհետեւ Զոլացի սկնդածների մէջ մի կարեւոր հէտը վերաբերում էր ԴրէջՓուսին. Մինչդեռ ապրիլին չթոյլ տրւեց ԴրէջՓուսի մասին խօսելու: Թէև երդւեալների դատարանը այդպէս վարւելով՝ ձևականապէս ճշդութիւն էր պահապանում, բայց ի դիմաց այն յամառութեան, որով Զոլան և սորա փաստաբան Լաբորին շարունակ աշխատում էին ԴրէջՓուսից խօսել, ընդհանուր պահանջն էր զդացւում ԴրէջՓուսի խնդիրը պարզելու: Այդ պահանջին բաւարարութիւն տալու համար գեն. Բուադէֆրը, գեն. Պելիէօն, գեն. Մերսիկն հարկ համարեցին դատարանում բարձր յայտնել իրենց համեզմունքը, որ ԴրէջՓուսն է դաւաճան և ոչ էստէրհազին: Բայց թէև դորանով հանգստացան նոքա, որոնք գոհ էին այդքան բարձր հեղինակութիւն ունեցողների համոզմունքը լսելու, բայց հակառակ կողմը շարունակեց իւրը պնդել:

Կառավարութիւնը, սակայն, կամեցաւ որ առաջմ երկիրը խաղաղւի, որովհետեւ մայիսին ընդհանուր պարլամէնտական ընտրութիւններ էին լինելու: Ըստրութիւնները կատարւեցին, Մելինի մինիստրութիւնը, թէև յաղթող, հրաժարական տւեց, և ապա կազմւեց Բրիսանի ներկայիս արմատական մինիստրութիւնը, ուր անդամներ են նաև Լէօն Բուրժուան: և պատերազմական մինիստր Գոդֆրիդ Կաւենեակ'ը:

Այժմ արդէն հաստատապէս յայտնի է, որ Բրիսանի մինիստրութիւնը կազմւել մի շարք կարևորագոյն խնդիրների մասին համաձայնութեան գալուց յետոց, և որ կարեւոր խնդիրներից մէկը և առաջինը եղել է ԴրէջՓուսեանների մզած ազիտացիալի դիմաց

բանելիք դիրքը եւ նոր մինխարութեան հէնց առաջին յայտարարութիւնց իմացւեց, որ այդ մասին ներկայիս արմատական մինխարութիւնը կատարելապէս նոյն կարծիքն ունի գործի մասին, ինչ ունէր Մելինի մինխարութիւնը։ Մի կէտի տարբերութեամբ սակայն, Մելինը չէր կամենում պարլամէնտի առջև Դրէյֆուսի դործի մասին մանրամասնութեամբ խօսել, մատածելով որ պարլամէնտը դատաստանական առեան չէ, այժմեան մինխարութիւնը, սակայն, տեսնելով որ խնդիրը չափողանց մեծ զզրդին է բարձրացրել և որ կառավարութեան լոռութիւնը կարող է նաև սխալ թարգմանւել, հարկ դատեց պատգամաւորների ժողովում նոր տոմարով 7 յուլիսի մի ֆակտացին ու երկար յայտարարութիւն անել պատերազմական մինխար կաւենեակի բերանով։ Այդ յայտարարութիւնը պատգամաւորների ժողովը միաձայնութեամբ վճռեց պետական հաշւով տպել և փակցնել պատերին ամբողջ ֆրանսիայում։ Ահա այդ յայտարարութիւնն է, որ դնում ենք այժմ Մուրճի ընթերցողների առջև։

### ՄԻՆԻՍՏՐ ԿԱԻԵՆԵՍԿԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Կատենեակի, պատերազմական մինխար։ — Կառավարութեան առաջին գրադմունքն է եղած որոնիլ թէ ինչ միջոցներով նա կարող էր վերջ գնել մի ագիտացիացի որ արտայցաւում էր երկրի մէջ։

Դուցէ նա կարող էր լոկ յայտարարել իւր յարգանքը դատւած գործի հեղինակութեան համար<sup>1</sup> և իւր կամքը՝ հայկանգնել ամենակարուկ միջոցներից՝ այդ յարգանքը ապահովելու համար։ Ես կարծում եմ որ հասարակաց խիղճը անբան կարիք է զզում իւր հանգստութեան անհրաժեշտ գրաւականները ունենալու համար, որ այս յայտարարութիւնը նորան բաւական կը լինէր։ այդ կարող է վաղւայ գործը լինել։ բայց այսօր մենք ո նինք ուրիշ գործ կատարելու։ Մենք պարտք ունինք ժողովի և երկրի առջև զնելու։

<sup>1</sup> Ըստ օրէնքի՝ ամեն ոք պարտաւոր է դատարանի հեղինակութիւնը ձանաչել, և երբ մի գործ դատւած, վերջացած է, այլ ես չի կարելի կտրած դատաստանի արդարութիւնը կասկածի ենթարկել, մինչև որ ցոյց չտրւեն առանձին հանգամանքներ, որոնք կարենը լինելով հանդերձ՝ ի նկատի չին առնւած դատաւորների կողմից։

ինչքան ճշմարտութիւն որ կարող ենք հաղորդել: (Շատ լաւ! շատ լաւ!):

Ո՞րն է դրութիւնը:

Եթակ մարդիկ, որոնք կազմում էին առաջին զինւորական գատարանը, վճիռ են կորել իրենց խղճի մոք և առանց կրքի:

Փորձել են այդ գատաստանը արատու որել (infirmer) Դրէֆուսի տեղը զնելով մի սպայ, որը վաղը կը սուանայ կարգապահական պատիժը, որին նա արժանի է<sup>1</sup> (Յուռն ծափահարութիւններ ծայրայնը ծախակողմիսանների կողմից):

Երկրորդ զինւորական խորհրդի գատատորները<sup>2</sup> իրենց խղճի մտօք գտել էին որ նոցա ապացոյցներ չեն տալիս այդ սպալին (Եստէրհազիին) վերագրած յանցանքի համար, թէւ այդ ապացոյցները չեն կարող անմեղացնել Դրէֆուսին:

Ինչ էլ որ փորձեցին անել՝ ոչինչ չկարողացաւ արատաւորել զինւորական գատարանի վճիռները. մենք կ'իմանանք թէ նոցա վճիռները և թէ նոցա անձն ու օրութիւնները յարդել տալ: (Շատ լաւ! շատ լաւ! միևնույն նստարանների վրայ):

Բայց մենք կարծում ենք որ նոյն իսկ ամենանեղ մոքով հասկանալով գատաւած գործի հեղինակութիւնը, այդ չպիտի խանգարի որ մենք առաջ բերենք այն իրողութիւնները, որոնք եկան այդ հեղինակութիւնը հաստատելու<sup>3</sup>:

Օրէնքը նախատեսել է գատաւած գործին վնասելու հնարաւորութիւնը<sup>4</sup>. և երբ օրէնքը այդ թոյլ է տւել, նա ի նկատի է

<sup>1</sup> Խօսքը ակտաեղ կատերհազիի մասին է, որը, ինչպէս երեաց, անպատկառ խօսքեր է ասել իւր մեծաւորների մասին:

<sup>2</sup> Որոնք խստէրհազիին դատեցին ու անպարտ արձակեցին:

<sup>3</sup> Այս ոճը հասկանալու համար հաեկաւոր ենք համարում այս բացատրութիւնը. մինիստրը չի կամենում խօսել այն իրողութիւնների մասին, որոնք հիմք են ծառայել դատաւորներին՝ Դրէֆուսին դատապարտելու համար. որովհետեւ այդ կը նշանակէր նորից քննել գործը: Դորահով կը վնասէր դատարանի հեղինակութիւնը, Մինիստրը ուրեմն խօսելու է այն իրողութիւնների մասին, որոնք կատարել են Դրէֆուսին դատապարտելուց լետու և որոնք հետևապէս դատաւորներին չեն վերաբերում:

<sup>4</sup> Գատաւած գործը, այսինքն դատավճիռը վնասւում է այն ժամանակ,

ունեցել որ զործի վերաքննութիւնը պիտի պահանջի ոչ թէ գատարանը, այլ կառավարութիւնը։ (Ծատ լաւ, շատ լաւ. ծախում):

Մեզնից, կառավարութիւնից, պահանջել են որ կառավարութիւնը իւր ձեռներէցութիւնը գործ դնի, որոնի նոր իրողութիւններ, որոնք կարող կը լինեն աղարտել գատուած գործը. և երբ կառավարութիւնը որոնեց այդ իրողութիւնները, երբ նա գտաւ որ այդ իրողութիւնները ոչ թէ աղարտում են այլ աւելի ևս ամենասփազուն կերպով հաստատում են արւած գատավճիռը, ապա չի կարող կառավարութեանը արգելած լինել յայտնելու, թէ ինչու նա, որին պատսսխանառու են շինել, պատսսխանառութիւնները իւր վրայ է առնում։ (Ժափա՞նարութիմներ ծախում):

Բայց, սակացն, պարոններ, կան շահեր, որոնք վեր են նոյն իսկ իրաւական վիճաբանութիւններից, որքան էլ սոքա վեհ լինեն, և վեր՝ ներկայ բոպէի քաղաքական պահանջներից։ (Ժափ. ծախում և աչում):

Եթէ կայ երկրիս մէջ մի բարեհաւատ փոքրամասնութիւն, որը կարող էր խաբել յայտնի խաղերից, մենք պարոք ունինք նորան լուսաւորելու։ (Ժափ. ծախում):

Ո՞վ կարող է ուրանալ թէ ինչ կբքեր են աշօր սանձերը կորցրել, և թէ ինչ վնաս կարող են՝ նոքա բերել ֆրանսիացի բարոյական միութեան? Որքմն վնաս այս երկրի համար, եթէ հնարաւոր լինէր նորանում առաջ բերել մի թիւրիմացութիւն նոցա մէջ, որոնք ներկայացնում են ոչ թէ ամբողջ ֆրանսիական միոքը, — որսվհեռեւ ես նոցանից եմ, որոնք ընդունում են որ ֆրանսիական միոքը նոյնպէս ընդհանուր ձայնատութեան մէջ, և<sup>1</sup> (Ծատ լաւ, շատ լաւ, ծախում), — բայց որոնք ներկայացնում են ֆրանսիական մոքի մի գնահատելի մասը, և այս զօրքի մէջ, որը սրբազն պաշտօն ունի պահպանել և պաշտպանել ֆրանսիացի ամբողջ հայրենիքը, մի

---

երբ գտնում է մի կարեոր հանգամանք, որը դատաւորներին էալտնի չի եղել և որը եթէ աբտնի լինէր՝ վճիռը կարող էր ավ լինել.

<sup>1</sup>. Ազգի ընդհանուր ձայնատութեամբ է որ ընտրւում են պարլամենտի համար պատգամաւորներ. և մալիսին կատարւած ընտրութիւններին նոքա, որոնք Դրէլֆուսի ու Զոլալի կողմն էին — պարտութիւն կրեցին,

թիւրիմացութիւն, որի հետևանքները աղետալի կը լինէին: (Ժափ. բազմաթիւ նստարանների վրայ):

Ես կրկնում եմ, մենք պէտք է ամեն ինչ անենք բարեհաւատ մարդկանց լուսաւորելու համար: Հարկաւ, ներկաց ժամին, ազգային զգացմունքը այն աստիճանի վիրաւորւած է, որ նա կ'ընդունէր նոյն իսկ եթէ այդ յարգանքը դէպի զօրքը ապահովցնէինք ճնշող միջոցներով, և միմիայն ճնշող միջոցներով: Բայց զօրքը իւր համար պահանջում է ոչ այդ տեսակի յարգանք, քանի որ ես պատիւ ունիմ այսօր նորա անունից խօսելու:

Զօրքը, յարգալիր արդարադատութեան առաջ, որպէս և յարգալիր քաղաքացիական իշխանութեան գերիշխանութեան առաջ, (Բուռն ծափահարութիւններ ծայրահեղ ծախում եւ ծախսի այլ եւ այլ նստարանների վրայ)... նա (զօրքը) կարիք չունի թաքնւելու հասարակաց փրկութեան պատճառաբանութիւնների ետել, և չպէտք է երկրի վրայ այս տպաւորութիւնը թողնել, թէ նա մոտադիր է ճշմարտութեան դէմ պաշտպանելու համար՝ հասարակաց փրկութեան միջոցներին գիմել, մինչդեռ նա միայն ճշմարտութեամբ է ուզում պաշտպանել<sup>1</sup>. (Սոր ծափ. նոյն նստարանների վրայ)...

Ալֆոնս Հիմնէր: - Տիսէք, որ կենարոնը լուսում է: (Աղմուկ այլ եւ այլ նստարանների վրայ):

Մինիստր Կաւեննեակ: (Նորունակելով): Ես պէտք է մի վերջին պատճառ ես յայտնեմ. մենք գիտենք թէ ինչ է սպասում երկիրը մեղնից. Ի դիւնաց այն մերժ ուղղակի, մերժ անուղղակի փորձերի, որ արւել են՝ կառավարութեանը դրդելու որ սա գործի վերաքննութիւնը պահանջէ, որով պիտի քանդեէին տրւած դատավճիւնները, երկիրը սպասում է որ մենք յայտնենք մեր անցողդողդ վճռականութիւնը այդ փորձերին, ինչ էլ որ սոքա լինեն, ընդդիմադրել: Այդ յայտարարութիւնը ահա ես այստեղ անում եմ, որովհետեւ ես ամնահաստատ կերպով գիտեմ որ Դրէյֆուսը մեղատը

<sup>1</sup>. Սա մի ակնարկ է Մելինի (չափաւոր հանրապետական կամ կենտրոնի) մինիստրութեան վրա, որը չէր կամենում պատգամաւորների ժողովում բացատրութիւններ տալ Դրէյֆուսի գործի մասին:

Հ: (Բուռն ծափ. զանազան նատարանների վրայ ծախում եւ աջում):

Մի ծայն ծայրահեղ ձախակողմեաններից:—Վերջապէս:

Մինիստր Կալենեակ: (Նարունակելով):—Եւս սա լաւ իմացէք, որ եթէ ես այդ համոզմունքը չունենայի, հասարակաց գրկութեան ոչ մի պատճառաբանութիւն չէր կորզիլ ինձնից այն յայտարարութիւնը որ ես արէ և ինձ չէր հարկադրի մի անմեղի տաժանակիր պահել:

Ժիւլ Մէլին, նախկին մինիստր-նախագահ:—Պր. գեներալ Բիլ-  
լօն<sup>1</sup> նոյն բանն է ասել: (Աղմուկ ծախում):

Մինիստր Կալենեակ: (Նարունակելով):—Եթէ խօսքը մի անմեղի մասին լինէր—ինչ որ կամենաք, բայց քանի որ խօսքը մի յանցաւորի մասին է, ոչ մի բան: Եւ երբ ես մի այդպիսի պատասխանատութիւն եմ վերցնում, որի ամբողջ ծանրութիւնը և ծաւալը ես զգում եմ, ծողովը ինձ կը ների, որ ես իմ համոզմունքի բոլոր պատճառները չեմ կարող յայտնել, բայց որ կը յայտնեմ գոնէ բոլորը ինչ կարող եմ:

Կախու և առաջ ես խնդրում եմ ժողովից ոչ մի կապ չտեսնել այն ֆակտերի, որ ես այսոեղ յիշելու եմ, և այն բոլոր ֆանտազիաների միջև որ դուրսը տարածել են: Մենք տէր ենք մեր գործերը կարգադրելու այնպէս, ինչպէս կամենում ենք: (Բուռն եւ միաձայն ծափահարութիմներ):

Եթէ մենք պէտք է այլոց նկատմամբ միշազգային ոլատշաճութիւնները յարգենք, ուրիշներն էլ պարտաւոր են նոյնպէս վարւելու մեր զիմաց: Եւ սակայն ինչ որ պիտի խօսեմ ոչնչով չի վերաբերում ոչ օտար պետութիւններին և ոչ նոցա դեսպանատներին:

Այս ասելուց յետոց, ամբիոնի վրայ եմ գնում այն իրողութիւնները որ ես կարող եմ յայտնել նոքա երկու կարգի են: Նախ պատերազմական մինիստրութեան տեղեկութիւնների բիւրօն<sup>2</sup> վեց տարում հաւաքել է 1000 (հազար) կտոր թղթակցութիւններ—բոլորը բնագիր—որոնք փոխանակւել են այն անձերի միջև, որոնք գործունեաց և յաջող կերպով լրտեսութեան համար զբաղւում էին: Այս

<sup>1</sup> Պատերազմական մինիստր Մելինի մինիստրութեան մէջ.

<sup>2</sup> Լրտեսութեան բիւրօ:

թղթերը, թէ իրենց ծագումով և թէ իրենց թւով, բնաւորութեամբ ու խորհրդանշաններով ոչ մի բարեհաւատ անձի համար կասկածի տեղիք չեն տալիս թէ նոցա իսկականութեան և ոչ էլ այն անձերի մասին, որոնք նոցա ուղարկում կամ ստանում էին:

Այդ թղթերի մէջ կան աննշաններ և կան շատ նշանաւորներ: Ես այսուեղ չեմ խօսելու նոցա մասին, որոնք գործի վերաբերմամբ միմիայն իրար հետ համաձայնութիւն են ցոյց տալիս, թէև հէնց իրենց այդ համաձայնութիւնով իսկ վճռական կերպով ծանրանում են մեր ովու վրայ:

Փողովի առջև ես աչքի կ'անցնեմ այդ թղթակցութիւններից միայն երեքը: Առաջին երկուսը փոխանակել են վերը ակնարկած թղթակիցների միջև և ակնարկում են մի անձի, որի անունը նշանակւած է Դ (D) սկզբնատառով:

Ահա առաջին նամակը, որը կրեց մարտ 1894 թւականը, երբ նա հաստ պատերազմական մինիատութեան տեղեկութիւնների բիւրօն:

«Երէկ երեկոնեան, ես ստիլած եղակ բժիշկ կանչելու, որը ինձ արգելեց տանից դուրս դալ. չկարենալով վաղը ձեղ մօտ գալ, խնդրում եմ որ դուք դաք մօտս առաւտու, որովհետեւ Դ... շատ բան է բերել մօտս շատ հետաքրքրական, և պէտք է աշխատանքը բաժանենք, քանի որ միայն տասն օր ժամանակ ունինք»:

Երկրորդը, թւագրած 16 ապր. 1894, այսպէս է.

«Շատ ցաւում եմ որ չկարացաք ձեզ տեսնել իմ միկնումից առաջ: Բայց ես մինչեւ ութ օր կը վերադառնամ: Ներփակ զրկում եմ՝ տասներկու գլխաւոր մակարդակներ (պլաններ)... (Այստեղ տրւած է մեր բերերից մէկի անունը, ոչ ես չեմ տալիս), որ այս կանալիս Դ... տւել է ինձ ձեզ համար: Ես նորան ասի թէ դուք մտադիր չէք լարաբերութիւնները շարունակել: Նա լաւակնում է թէ թիւրիմացութիւն է եղած և որ ինչ կարող է կ'անէ ձեզ դոհացնելու: Համար: Ասաց թէ ինքը լամառել է և թէ դուք այլ ես նորան չէք կամենում: Ես նորան պատասխանեցի թէ նա տխմար է և որ չեմ կարծում թէ դուք կամենակիք նորա հետ լարաբերութիւններ վերսկսել: Արէք ինչ կը կամենաք»:

Թէև իմ աչքում հաստառ է, որ այսուեղ խօսը Դրէյֆուսի մասին է, շնորհիւ այն բանի, որ բազմաթիւ թղթեր իրար համաձայն են, որ էս վերը ասացի, բայց անա և մի թուղթ, ուր

Դրէյֆուսի անունը լրիւ տրւած է: Երբ, հոկտեմբերին թէ նոյեմբերին 1896, ող. Կաստլըն հարցապնդումի պահանջն արաւ, երկու թղթակիցները, որոնց մասին ես խօսում եմ, անհանգիստ եղան այն պատճառներով, որոնք նշանակւած են նամակներում, որ ես ունեցել եմ աչքիս առջև. և այդ ժամանակ նոցանից մէկը մի. սին գրեց հետեւ նամակը.

«Ես կարդացի, որ մի պատգամաւոր հարցապնդում է անելու Դրէյֆուսի մասին: Եթէ... (այստեղ նուխադառնթեան մի կտորը չեմ կարող կտրդալ), ես կ'ասեմ, որ երբէք ես ազդ հրէափի հետ գործ չեմ ունեցած: Այդ աղդպէս: Եթէ ձեզ հարցնեն, նունն ասէք, որովհետեւ չպէտք է իմացւի թէ ով է նորա հետ եկած անձը (il faut pas que on sache personne ce qui est arrivé avec lui»: (Բացականչութիւններ):

Այժո՞նս Հիմնէք: - Դա պարզ է!

Մինիստր Կալենեակ: (Շարունակելով): Ես կշռել եմ այս վկայաթղթի նիւթական և բարոյական իսկութիւնը: Նորա նիւթական իսկութիւնը ինձ համար բղխում է ոչ միայն հանգամանքների այն տմբողջութիւնից, որի մասին ես արդէն ասացի, այլ և մի իրողութիւնից, որ պիտի յայտնեմ. այդ գրութիւնը չափազանց նման է կարևորութիւն չունեցող մի այլ գրութեան, որը գրել է նոյն անձը, և որպէս առաջինը՝ սա ել գրւած է կապոյտ մատիտով միւնոյն առանձին տեսակ թղթի վրայ, որը ծառացել է նոյն անձի բոլոր սովորական թղթակիցութիւնների համար: Այդ նամակը, թւագրած 1894, այդ ժամանակից ի վեր պատերազմական մինիստրութեան արխիւներից չի գուրս բերւած:

Նորա բարոյական իսկութիւնը բղխում է անվիճելի կերպով այն բանից, որ նա 1896 թւականին փոխանակած թղթակցութիւնների մասն է կազմում: Առաջին նամակը այն է որ կարդացի: Մի պատասխան պարունակում է երկու բառ, որով գրողը ակնյայտնի կերպով կամենում է հանգստացնել առաջին նամակի հեղինակին: Վերջապէս մի երրորդ նամակ, որը մթութիւնները ցրում է, ամենաորոշ կերպով պարզում է, այնքան որոշ, որ ես չեմ կարող նորանից մի բառ անգամ կարդալ, թէ ինչու երկու թղթակիցները անհանգիստ էին լինում:

Այսպիսով Դրէյֆուսի մեզաւորութիւնը ոչ միայն հաստատւած

է այս գատաստանով՝ որը նորան գատապարտել է. նա հաստատել է նաև երկու տարի յետոյ գրւած մի թղթով, որը խրացն է բըռում այն երկար իւղթակցութիւնների մէջ, որոնց խկութիւնը անվիճելի է. այս վերջին թղթով խկանութիւնը հաստատում է անհերքելի կերպով: (Ճափահարութիւններ):

Դեռ այդ բոլորը չեն: Կան նաև մի այլ կարգի իրողութիւններ, և ես յայտնում եմ, որ, ինձ համար, գոքա բաւական կը լինէին իմ համոզումը կազմելու անպայման կերպով: Ես ուզում եմ խօսիլ Դրէժ-Փուսի խոստվանութիւնների մասին: (Շարժում):

Կարգալոյն լինելու առաւտորը Դրէժիուսը մի քանի ժամ մնաց երկու սպաների հետ, որոնք նորա բերնից ընդունեցին յանցանքի խոստվանութիւնը: Նոքա այդ մասին խկոյն հազորդեցին, որ երեւում է հետեւեալ հաղորդադրութիւնից, տպւած ԹԱԱՆ լրագրում 5 յունւար (1894):

«Մենք կարող եղանք լսել նորա (Դրէժիուսի) խօսքերը. ահա նոքա զրեթէ բառ առ բառ, «Ես անմեղ եմ. Եթէ ես մի օտար երկրի գոկումէններ եմ տւել, այդ նրա համար էր որ կերտամ և զորանով աւելի կարեորները նորանից ստանամ. մինչև երեք տարի ճշմարտութիւնը կ'իմացւի, և մինիստրը ինքը իմ զործը իւր ձեռքը կ'առնի»:

Այդ վկայութիւնը հրատարակւելուց յետոյ կատվառան Լըբրէօն-Ռընօ կանչւեց պատերազմական մինիստրի մօտ, և այնտեղ, պատեր մինիստրի աւաջ, նա պատմեց իւր լսածը: Նորան մինիստրի մօտ բերաւ գեն. Գոնզ, որը յունւարի 6-ին հետեւեալ նամակը դրեց գեն. Քուադէֆրին:

Իմ գեներալ, շտագում եմ զեկուցանել ձեզ, որ ես ինքս անձամբ տարալ հանրապետական պահապան զօրքի կապիտան Լըբրէօն-Ռընօ'ին մինիստրի մօտ, որը, նորան լսելուց յետոյ, ուղարկեց պ. Նախագահի մօտ: Ընդհանուր առմամբ, Լըբրէօն-Ռընօի խօսակցութիւնը Դրէժիուսի հետ եղել է մահաւանդ վերջինիս մենախօսութիւն, կարճ ընդհատումներով: Գլխաւոր կէտերը եղել են հետեւեալները».

Չեն տրւած բնագիր դոկումէնտներ, այլ միայն պատճէններ»  
Եւ գեն. Գոնզը աւելցնում էր:

Մի անձի համար, որը շարունակ պնդում էր թէ ոչինչ չգիտէ, այդ խօսքը առնւազն տարօրինակ է: Յետոյ, չափանելով թէ անմեղ է, նա վերջացրել է ասելով:

«Մինիստրը գիտէ որ ես անմեղ եմ. այդ նա լավանել է ինձ կոմմանդան զիւ Պատի զը Կլան'ի միջոցով, բանտի մէջ, երեք թէ չորս օր առաջ, և նա գիտէ որ եթէ ես զոկումնատներ եմ տւել, զորքա տննշաններ են եղած, և որ զոցա փոխարէն կարեորները պիտի ստանալի»:

Լապիտանը վերջացրեց կարծիք լավանելով որ Դրէյֆուսը կիսախոսովանութիւններ է անում կամ սկիզբն է անում խոստովանութիւնների՝ խառը լուսնեան և ստերի հետ: (Շատ լաւ, շատ լաւ!):

Ինքը կապիտան Լըբրէօն-Ռընօ արձանագրել է հետևեալ նկատողութիւնը, յունւ. 6-ին (1894) մի թերթիկի վրայ, որ պոկւած էր նորա ծոցատեարից և որը միշտ նորա մօտ է գտնւել:

Երէկի կապիտան Դրէյֆուսի կարգընկեցութիւնը: Պատւիրւած լինելով որ ես ուզեկցեմ նորան Շէրշ-Մդի բանտից Զինւորական դպրոցը, ես նորա հետ մնացի ժամը ութից մինչև իննը: Նա շատ կոտրւած էր, պնդում էր թէ, մինչև երեք տարի, իւր անմեղութիւնը ճանաչւելու է: Ութից մօտ կէս անց, առանց որ ես հարց տալի նորան, նա ինձ ասաց. «Մինիստրը լաւ գիտէ որ եթէ ես զոկումնատներ էի ատլիս, նոքա անարժէք էին, և որ այդ՝ աւելի կարեորները ձեռք բերելու համար էր»: Նա ինձ խնդրեց հրամագել ադիւտանտին, որը պիտի նորան կարգընկեց անէր, կարելիին չափ արագ վերջացնի իւր գործը:

Դորանից գէս կապիտան Լըբրէօն-Ռընօ հասոատեց այդ մի զրաւոր և սոորագրած վկացութեամբ, որ ես ձեզ չեմ կարդաց, որովհետեւ նա յատովւաց ժամանակից է, մինչդեռ ես նախընտիր եմ համարում նոյն օրւանից վկացութիւնները: (Ժափահարութիւններ):

Բայց կապիտան Լըբրէօն-Ռընօն միակը չէ որ ընդունել է Դրէյֆուսի խոսովանութիւնները. կայ և կապիտան գ'Աստէլ, որը լսել է և հազորդել ուրիշ սպաների:

Կապիտան գ'Աստէլ մեռաւ ողբերգական հանգամանքներում, բայց կան օֆիցէրներ որոնք ընդունել են նորա վկացութիւնները:

Ահա այդ յայտարարութիւնները.

Յայտարարութիւն Անտուանի.

«Լապիտան Անտուան պատիւ ունի հաշիւ տալու, որ Դրէյֆուսի

կարգընկեցութեան օրը, երբ նա<sup>1</sup> դուրս էր գալիս այն դահլից ուր Դրէփուսը պահւած էր, հանդիպեց կապիտան դ'Ատաէլի՛ն, իւր բարեկամին, որը այդ օրը իւր ծառալութեամբ ներկաց էր, իր պատկանող հրապարակի շտաբին, Դ'Ատաէլը ասաց կապիտան Անտուանին թէ Դրէփուսը նորա առջև հէնց նոր առել է. «Իմ տւած թղթերը բանի պէտք չեն. (Pour ce que j'ai livré, cela n'en valait pas la peine). Եթէ ինձ թողնէին՝ ես վոխարինարար աւելի կարեռները կ'ունենալի»: Կապիտան Անտուանը անմիջապէս կրկնեց այդ խօսքը կոմանդան դը Միտրի՛ին»:

Յայտարարութիւն դը Միտրի՛.

«Ումանդան դը Միտրի պատիւ ունի հաշիւ տալու, որ Դրէփուսի կարգընկեց լինելուց անմիջապէս լետով արտիլէրիալի կապիտան Անտուանը նորան կրկնեց մի խօսակցութիւն որ նա նոր ունեցել էր կոմանդան դ'Ատաէլի հետ՝ Դրէփուսի խոստավանութիւնների մասին որ արել էր նորա առջև կապիտան Անտուանը ասում է, որ Դրէփուսը, կարգընկեցութիւնից լետով, ասել է դ'Ատաէլի ներկայութեամբ խօսքեր, որոնցից բղխում է այս, որ եթէ նա թղթեր է լանձնել, դա եղել է վոխարէնը աւելի կարեռները ստանալու համար»:

Կամ մարդկալին վկայութիւնը այլ ևս ոչ մի արժէք չունի, կամ այս վկայութիւններից, որոնք վճռական են, իրար համաձայն, կատարեած գորանից դէս պատահած յուզմունքներից առաջ, որ Դրէփուսը արտասանել է այս խօսքերը. «Եթէ ես յանձնել եմ դոկումէնտները...»:

Այս խօստավանութիւնները ժխտում են. վաղն էլ գուցէ ասեն թէ դոքա դուրս են կորզւած սպառնալիքներով կամ խօստումներով: Բայց երբէք ես չեմ կարող ժողով տալ որ մի մարդ այս խօսքերը արտասանի՝ առանց դոկումէնտներ յանձնած լինելու (ծափահարութիմներ):

Ես վերջացրի: Ուժեղ ոչ միայն անյողդողդ վճռականութիւնով, այլ, որ աւելի արժէ, ուժեղ մեր պաշտպանած դատի ճշմարտութիւնովն ու արդարութիւնովը, մենք չենք թոյլ տայ որ դիպէն ազգային շահերին, որոնց պարտք ունինք պահպանելու, (Բուռն ծափահարութիմներ):

<sup>1.</sup> Երրորդ գէմքով ինքը զեկուցանողն է խօսում,

Զայներ ձախումն—կեցցէ Ֆրանսիա!

Մ' ինիստր Կալենեակ:—Ինձ մնում է միայն մի ցանկութիւն զայտնել—գուցէ սա միայն մոտապատրանք է, յամենայն դէսս սա իմ մեծ յոյսն է—այն է որ վաղը բոլոր Փրանսիացիք կարողանան միանալ յայտարարելու համար թէ այս զօրքը, որ իրենց պարծանքն է և իրենց յոյսը (Բուռն ծափահարութիւններ) զօրեղ է ոչ միայն իւր սեփական ուժովը և երկրի վստահութիւնովը, այլ որ նա ուժեղ է նաև իւր կառարած գործողութիւնների արդարութիւնովը: (ծափահարութիւններ բուռն եւ յաճախ:—Մինիստրը, վերադառնալով դէսփի իւր աթոռը՝ ընդունում է բազմաթիւ շնորհաւորութիւններ):

---

Պատգամաւորների ժողովը, բաց քւէարկութեամբ, միաձայնութեամբ 545 ձայնի, կարգադրեց որ պատերազմական մինիստրի այս ճառը փակցնեի ամենուրեք Ֆրանսիայում: (ծափահարութիւններ):

---

# ՄԵՐՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՃԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԳՈՂՑԱՆ ԳԱԻԱՌՈՒՄ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻՑ

Յունիսի 14-ին

Ներամապահական գլխաւոր շրջաններից մէկը կարելի է համարել՝  
Գողթան զաւառը, ուր ժողովուրդը վաղոց է պարապում զրանով։ Դրան-  
գլխաւորապէս նպաստում է դիրքը և կլիման։ Գործին տեղեակ մարդիկ-  
վկանում են, որ մեր գաւառը կարող է դառնալ կովկ սահ Բրուսան-եթէ  
ուշադրութիւն զարձնուի, կարող է ամրող կովկասին սերմ մատակարա-  
րել։ Այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով, տեղացի մի քանի երի-  
տասարդներ, գլխաւորապէս միջնակարգ դպրոցից աւարտածներ, սկսեցին  
պարապել սերմագործութիւնով, լուսալով, որ թէ իրենք կը շահւեն և թէ  
երկիրը. բայց դժբաղդաբար նրանց աչք լուսերը չարդարացան։ Ամբողջ  
4—5 տարի պարապելով այդ արհեստով, նրանք ներկանումն անպէս են  
լուսահատւել, որ եթէ հնարաւորութիւն ունենան, կը թողնեն և կը հեռա-  
նան, առանց փոշմանելու, Անվործ մտնելով աչք ասպարէզը, ունենալով  
միան աչքի առաջ սակէ երազներ, նրանք չեն կարող նախատեսնել ան-  
բոլոր արդելքները, որոնք պիտի խորտակէին իրենց լուսերը։ Դառն փոր-  
ձերից լետով նրանք եկել են այն եղրակացութեան, որ ներկաէ պաշ-  
մաններում անկարելի է առհասարակ առաջ տանել սերմագործու-  
թիւնը կովկասում։ Այդ պալմանների բարեփոխութիւնը գլխաւորապէս  
կախւած է կառավարութիւնից, որին և տեղական սերմ պատրաստողները  
գեռ անցեալ տարի են դիմել, խնդրելով ներկաէ գործում նրա աջակցու-  
թիւնը։ Խնչում պիտի կախանակ աչք աջակցութիւնը։ Կոնտրոլի մէջ, աչ-  
սինքն որ արդելւի երկիրը վատ, անառող սերմ մտցնելուն և լաւերի  
վրաէ չափով մաքս նշանակւի։ Ներկայում Առուսաստանը ինքը  
մեծ կարիք ունենալով սերմի, քանի որ ինքը գրեթէ ոչինչ չի արտա-  
դրում, թողլ է տալիս առանց արդելքի սերմ ներմուծել։ Այդ հանգա-  
մանքը աչքի առաջ ունենալով, արտասահմանից մեր երկիրն են թափում։

2—3 հարիւր փութ շերամի սերմ, համարեա թէ բոլորն էլ Թրուսալից<sup>1)</sup>, Ազգ քանակութեան հաղիւ 1/10-ականը քննւած է լինում. միւսը առասարակ որքան կարողացանք հաստատ աղբիւրից տեղեկանալ, պատրաստում է նահապետական ձեռվ, ալիքնքն թողնելով թիթեռներին ձու ածել՝ սաւանների վրայ, որից ուղղակի ժողովում են արկդիկների մէջ և անցկացնում մեր երկիրը ծախելու համար։ Պարզ է որ այս եղանակով պատրաստածը կապւած չէ առանձին ծախքերի հետ։ մի քանի հարիւր մանէթ ունինալով, կարելի է արդէն գործ սկսել։ Ազգ ձեռվ պատրաստածը ամենաշատը մսխալը կը նստի 5 կոպէկի, այն ինչ մեր երկրում ծախում են 30—60 և աւելի կոպէկով և ազդպիսով վաստակում են ահազին տոկոսներ։ մինչդեռ տեղացին ստիպւած է ահազին աշխատանք թափել, ամբողջ 40 օր տաժանակիր աշխատանք կրել, մի ամբողջ շաբաթ թիթեռների փոշիները ծեռվ, իսկ աճնուենաւ ամիսներ խոշորացուցի կողքին նստել, աչքերը կուրացնել—և այդ ամենի փոխարէն վարձատրւել աչքան, որ հազիւ կարողանաւ ծախքերը ծածկել, իսկ անձող տարին էլ դեռ վեաւել։ Մրցելը անհնարին է գառնում նաև այն պատճառով, որ էժան ծախքելով, կարողանում են միամիտ ժողովրդին գրաւել դէպի իրենց։ Ժողովուրդը, բացի էժանութիւնից, խաբում է նրանով, որ նա «զագրանիցի» է (արտասահմանի) և շաս անդամ դրա համար աւելի է վճարում, թէ եղանից լաւը և աւելի պակաս գնով կարելի էր տեղացիներից ձեռք բերել։ ինչ կարիւր է անել օտարամոլութեան զէմ, չէ որ մարդարէն իր գաւառում պատիւ չի ունենալ, և ահա օգտելով նրա ազդ հաւատից, օտարները ամենաանխիղ կերպով հարստահարում են նրան, ալսինքն ժողովրդին մատակարարելով ամենավատ սերմ, որից կամ ոչինչ չի ստանում, կամ ստանում է մսխալին 12—15 գրանքայ, ալսինքն տեղականի կէսը։ Աչքի առաջ ունենալով վերուիշեալ հանդամանքները, որից տուժում են թէ իրենք և թէ երկիրը, սերմ պատրաստողները խմբովին դիմեցին կառավարութեան, խնդրելով նշանակել նախ՝ կոնտրոլ և ապա՝ մաքս, չարակցելով, որ եթէ մաքսը առայժմ անհնարին է զնել, գոնէ կոնտրոլը մտցնեն։ Զմուանանք, որ կոնտրոլը միայն արտասահմանից եկածների համար չեն պահանջում, աչ և տեղականի համար, կոնտրոլ նշանակելով նոքա կարծում են, որ երկու բան վաստակած կը լինեն։ նախ երկիրը պահատած կը լինեն այն ահազին նիւթական կորուսալից, որ ունեն նում է ժողովուրդը հիւանդ սերմ գնելուց, և երկրորդ՝ իրենց սերմը այդ պակասորդի տնկը կը բռնի։ իսկ չափաւոր մաքս նշանակելով, նոքա կարծում են, որ գների մէջ հաւասարակշութիւնը չափնի չափով պահպանած կը լինին, որով հնարաւորութիւն կ'ունենան արտասահմանից ներմուծած։

<sup>1)</sup> Փոքր-Ասիալում, Մարմարա ժողին կից, և Պոլսին մօտ նահանգ,

լաւ սերմի հետ մրցել, Վերոբիշեալից պարզ է որ տևղական սնրմ պատրաստողները, վաստահ լինելով իրենց պատրաստած սերմի վրաչ, ամեննեին չեն փախչում մրցութիւնից, միայն թէ այդ լինի ազնիւ միջոցներով, առաջարկելով ժողովրդին առողջ սերմ և թողնելով միանգաման նրա ընտրութեանը:

Կոնտրոլի, ալսինքն արտասահմանից ներմուծած սերմի վրաչ հսկողութեան բացակալութիւնը, թէ ինչ ահագին վեստներ է հասցնում ժողովրդին, այդ ցոց է քաղիս հետեւալ բնորոշ ֆաքտը, Զորս տարի առաջ տաճկաստանցի ոմն Փ. Ռաֆաէլեանց բնորում է առաջի տարին մի քանի հարիւր արկղ ընտիր սերմ, որից ստացըւում է առատ հունձ: Ձեռք բերելով ժողովրդի վատահութիւնը, նա հետեւալ տարին բերում է 2—3 հազար արկղիկ, վաստահ լինելով, որ միամբա ժողովուրդը պիտի նոյնակէս չափակութեամբ գնի, ինչպէս և նախընթաց տարիին: Եւ իրօք պարոնը չի սխալում իր հաշիւներում: Ժողովուրդը ուրախութեամբ գնում է և այն էլ կանխիկ, սպասելով առատ հունձին: Սակայն իզուր, ձարպիկ պարոնը անսպիսի սերմ չի տեևլ, որ կարելի լինի ստանալ նրանից բոժոժ: և այդ տարին հարիւրաւոր ընտանիքներ, որոնք ինչ-ինչ լուսերով էին սպասում գարնան բացւելուն, բոլորովին զրկուում են իրենց նկամուտի ամենազլաւոր աղբիւրից: Ամրողջ զաւառի կորուաթը լինում է մօտ 30,000 ռ., իսկ ամբողջ երկրի կորուաթը հրանի կը համնի կոնտրոլ չլինելու պատճառով, այդ միայն Աստծուն է լաւանի:

Արդէն նկատելի է ժողովուրդի հայեացքի մէջ փոփոխութիւն դէպի տեղական սերմը և վերանում է նախապաշարմոնքը նրա վերաբերմամբ: Սակայն շուկան նւաճելու համար դեռ երկար ջանքեր և նիւթական զոհողութիւններ են հարկաւոր, իսկ մինչ այդ՝ հարց է, արդեօք կարող են իրանց սուղ միջոցներով:

Հոււմ ենք, որ մինհստրութիւնը տեղիս սերմագործների խընդիրքը վերադարձրել է Թիֆլիսի շերամապահական կալարանի կառավարիչ պ. Շաւերովին՝ վերջինիս կարծիքը լսելու համար: Թէ ինչ է պատասխանել նա, ալդ մեղ լաւանի չէ: Գործին մօտ անձնաւորութիւններ վկացում են, որ այդ տեսակ առաջարկութիւններ շատ են արւած բարձր կառավարութեան, սակայն վերջինս դժւարանում է դրական քայլ անել, կարծելով, որ եթէ կոնտրոլ կամ մաքս նշանակի՝ զրանից երկիրը կ'վեասւի, որովհետեւ ալ ես սերմ չեն բերիլ արտասահմանից: Այս չեն բերել միայն վատերը, անառողջները, որոնցից հենց ներկալումն էլ երկիրը ոչինչ չի ստանում, բացի վեասից: Զէ որ այդ տասնեակ և հարիւրաւոր փութ վատ սերմի տեղը կը բռնէր տեղական լաւ սերմը, որից զիւզացին մի բան կ'օգտւէր: Կառավարութեան երկիրը մի ալ կողմից անտեղի է և ահա ինչու: Մենք աչմ շերամապահական կալարանի շնորհիւ ալնքան մասնա-

գէտներ ունինք, որ կարող են երկրի կարիքի չափ սերմ պատրաստել, իսկ եթէ ալսօր նրանք ասպարէզ չեն գալիս, դա պէտք է վերագրել վերոնիշեալ անլաջող պայմաններին: Մենք այս օրերս առիթ ունեցանք լսել կարծիքը մի պարանի, որը շատ մօտ է շերամապահական կայարանին: Նա ևս հաստատեց վերոնիշեալ կարծիքը, ասելով, որ իրենք ծառավողները կը թողնէին իրենց պաշտօնը և կը պարապէին սերմ պատրաստելով, եթէ միան պայմանները նպաստաւոր լինէին: Նրա վկայութեամբ Թիֆլիսում փորձեր են եղել սերմագործութիւնով պարապելու, բայց հէնց չաջորդ տարին թողել հեռացել են, ստանալով ահազին վասներ: Նոյնը մեզ մօտ ևս տեղի է ունեցել, ալգապէս հեռացել են ասպարէզից՝ պ.պ. Մելքոն Զանեանցը, Յովհաննէս Նումնուսեանցը, Կարապետ Սարուխանբէկնանցը, Խորդան Կիրեակով, Եանիկ Վասիլիդիս, Ալէսիօս Խոսիֆիդէս, Մկրտիչ Մուսինեանցը, իսկ ուրիշ տեղերում հրաժարել են ալզ գործից՝ պ.պ. Կոստանտին Մելիք Շահնազարեանցը, Աֆրիկեանցը, Դառիկը և մի քանի վրացիք և վրացուհներ, որոնք ինձ չախնի չեն:

Ներկայում մեզ մօտ գտնութիւն ունեն հետեւալ ֆիրմանները. Օրիորդ Շուշանիկ Փանեանցի, տիկին Սառա Թաղէսոսեանցի, պ.պ. Արշակ Թաղէսոսեանցի, Սամսոն Թաղէսոսեանցի, եղբայրներ Լևոն և Յովհաննէս Արասխանեանցների, Յ. Քալանթարեանցի, Մկրտիչ Մելիք Մուսեանցի և Յովհաննէս Կոստադինեանցի իսկ. Ներքին Ագուլիսում՝ պ.պ. Առաքել Օլմէնինանց, Մկրտիչ Մակինցեանց և Աւատիս Խոսրովեանց: Օրդութաթում՝ պ. Կ. Բարակեանց: Ցղնալում՝ պ. Արսէն Մահտեսի Օհանեանց, Մեղրիում պ. Խաչատուր Շաւառարեանց: Այսքան Փիրմաններ առաջմ պատրաստում են մինչեւ տասը փութ. մինչդեռ ձեռնտու պայմաններում նրանցից իւրաքանչիւրը կարող է պատրաստել մօտ 3 փութ.

Գործին պակաս չեն վնասում մի քանի ուրիշ հանգամանքներ, որոնք են՝ գործողների անապահովութիւնը, ընկերութիւնների բացակայութիւնը, սերմ տարածելու սիստեմը՝ սեփական թթենիներ և շերամատուն չունեալը և ալին:

Այս գործով պարապողը նախ պիտի առնւազը երեք տարւակ ապահովութիւն ունենայ, թէ ապրելու և թէ ծախքերը ծածկելու համար. հակառակ դէպքում երբէք չի կարող թէ գործը ընդարձակել և թէ ապահովութիւն ստեղծել իր համար, ալզ դէպքում կարող է միավն մի կերպ քարշ առալ իր կեանքը, գոլութիւնը, մինչեւ չաջող հանգամանքների առաջ գալը. Ալդ՝ չաջող տարին. իսկ եթէ հակառակի պէս միան մի տարի անչաջող անցնի, աճսինքն անառողջ սերմ ստացւի, ալզ աճնպիսի հարւած կը լինի, որից դժւար թէ երկար տարիներ սերմագործը կազդուրւի: Չունենալով չաջորդ տարւակ համար միջոցներ, նա ստիպւած պիտի զիմի վաշխառուի. իսկ մի անգամ ընկնելով նրա ձանկը, դժւար թէ կարողանալ շարունակել

գործը. Ազդ է ցուց տալիս տեղից սերմագործներից շատերի ներկաւ դրութիւնը, որը հետեանք է անապահովութեան. Չունենալով հարկաւոր ապահովութիւն, սերմ պատրաստողները չեն կարողանում ձեռք բերել սեփական շերամատուն և տնկարան (թթենու պլանտացիա), մի հանգամանք, որից քիչ չէ կախւած գործի աշողութիւնը. Դոցա չունենալը ծանրապէս ազդում է նրանց առանց այն էլ ազգաւ գրապահների վրաց ծշմարիտ է, գիւղում կարելի է բնակարան գտնել, ուական նրանք համապատասխան չեն լինիլ պահանջներին, իսկ փոքրի շատէ լարմարի համար էլ մնած վարձ են պահանջում. Ի՞նչ անի սերմ պատրաստողը, եթէ չվարձէ թանկը և դիմելու լինի վատ բնակարանի—ազդ կը նշանակի գործը հէնց սկզբից գտանգի ենթարկել և ուրեմն չսկսած՝ անաշողութեան մատնել, որովհետեւ վատ բնակարանի պատճառով աւելի մեծ տոկոս անառողջ սերմ կը ստացէի քան լաւ բնակարանի դէպքում. և հաշելով սերմի կորուսը և նոյն իսկ առողջների էլ աւելի կասկածելի լինելը, նա համաձայնում է հակառակ իր սուլ գրապահի վարձել աւելի թանկը. Ազդ տեսակ բնակարանների թիւը որովհետեւ քիչ է, իսկ վարձողները լինում են մի քանիսը, ուստի դրանց գինն էլ տարեցտարի բարձրանում է. բայց եթէ աչքի առաջ ունենաք անաշող տարին, արևին հեջա կարելի է երեսակալել, թէ որքան զդալի կը լինի վարձողի համար ազդ աւելորդ վճարածները. Անփական շերամատունը բացի նրանից, որ ազատում է սերմագործին աւելորդ հոգսերից և ծախսերից, նա, արտակս ասած, աւելի է երաշխաւորում առողջ սերմ ստանալը, որովհետեւ շերամատունը կառուցանելիս աչքի առաջ են ունենում և բոլոր առողջապահական պալմանները և լարմարութիւնները, որոնցից զուրկ են գիւղական բնակարանները:

Նոյնը մենք պիտի ասենք թթենու տնկարանների մասին, որոնք բնակարանի չափ կարեոր են, եթէ ոչ աւելի. Վատ սերմ ստանալը ոչ միայն բնակարանի վատութիւնից է, անձեռափին եղանակից, ազ և անառողջ թթենիներից և առասարակ թթենիների վրաց վատ խնամք տանելուց. Մեր գիւղացիք առասարակ շատ հեռու են կանոնաւոր տնկարաններ մշակելուց. Նատ քչերը գիտեն թէ հարկաւոր է միշտ հերկել փորել թթենու տնկարանները, թթենիները հարկաւոր հեռաւորութեան վրաէ անկել մէկը միւսից, ջրել լաւտնի ժամանակ, կտրտել ճիւղերը առանց ծառը վիրաւորելու և կտրտել այն էլ չատկապէս զրա համար որոշած մկրատներով և ոչ թէ տեղական մուրճի չափ ծանր զանակներով, որը սեղական լեզուով կոչում է դարա, և այն. Եթէ դանում են այնպիսիներն էլ, որոնք փոքրիշատէ տեղեկութիւն ունին, նրանք էլ նկատելով, որ ստացած եկամուտը ծախքը չի ծածկում, ուշադրութիւն չեն դարձնում. իսկ ունենորը կարողանում է միայն շուտ շուտ հերկել, միւս անելիքները մատնում է անուշաղրութեան, իբրև միայն ծախք կլանողներու Ամբողջ

Ալուլիսում մատներով կարելի է հաշել փոքրիշատէ կանոնաւոր տնկարաններ ունեցողներին և ալդ էլ ունեւորներինն է: Այդ տնկարաններն էլ եթէ վարձելու լինի, որը չի կարող չանել, ստիպւած է մէկին-մէկ վճարել, որը կրկին աւելացնում է ծախքը Ազգակով առաջանում է անհրաժեշտութիւն ունենալ սեփական տնկարան և շերամատուն: Բայց ինչ գումարից և ինչ լուսով ձեռնարկի սերմ պատրաստողը այդպիսի տնկարան առաջցնելու և շերամատուն կառուցանելու, երբ տարւաչ վիրջը աշխատածը միան ծախքն է ծածկում, իսկ երբեմն էլ դեռ վեաւում է:

Սակայն այն, ինչ անկարելի է անել անհատական ուժով, նոյնը կարելի է զլուխ բերել ընկերութիւններ:

Մեզանում փորձ է եղել ալդ ուղղութեամբ գործելու, բայց վերջացել է անհաջողութեամբ: տարին դեռ չբոլորած, նու քարքարւել է: Ընկերութիւնը գոյութիւն և էարատնութիւն կ'ունենաէ այն ժամանակ, երբ 1) անդամների մէջ մէր և համերաշխութիւն կը լինի, 2) երբ ընաւորութիւնները կը համապատասխաննեն, 3) երբ ամենքը բոլոր ուժը կ'ուղղեն ջգուտ նրան, 4) երբ անդամները կ'ունենան մը նպատակ, այն է ընկերութեան լաւածադիմութիւնը, 5) մի շահ ընկերութեան շահը և ազն: Ահա հէնց ալդ կողմերն են, որ նախատեսնւած չէին, ուստի և տեղի տւեց անքան ցաւալի վախճանի: Ցանկալի է, որ այս միակ դէպքը չը լուսահատեցնի մեր ժողովուրդին կամ սերմագործներին, այլ ընդհակառակը նրանց անհաջողութիւնը առաջնորդ ունենալով, հիմնեն ընկերութիւններ այլ հիմունյերի վրայ, քաջ համոզւած լինելով, որ առետրական ասպարէզը նւաճելու և արտասահմանի հետ մրցելու համար, բայցի կառավարութեան աջակցութիւնից, հարկաւոր են ընկերութիւններ: Ներկայումս տեղական ֆիրմաները պակաս չեն վեասւում այն բանից, որ առանձին են դործում ի վեաս մէկը միւսի բաւական չէ, որ մէկը միւսի ջիպրու սախուած է պակսացնել սերմի արժեքը, այլ և կոտրում է տեղական սերմի վարկը, անւանարկելով մէկը միւսի պատրաստածը: Ասկայն այն, ինչ պակասում է անդական սերմագործներին (գրմնեօր), ընդհակառակը նրանով օժտւած են Տաճկաստանի սերմագործները: Նրանք գործի լաջողութեան համար կամ միացած ուժով են գործում, կամ իբրև ճարպիկ վաճառականներ իրենք անձամբ են տարածում, և կամ մեր երկրում որսում են ճարպիկ գործականներ, խոստանալով մեծ տոկոսներ տարածելու համար: Աւ ինչ են կորցնում մեծ վարձատրութիւնից: Ոչինչ, որովհետեւ արկղը իրենց նըստելով՝ 30—50 կ., նրանք մեզ մօտ ծախում են 1.ր. 50 կ.

Տեղական սերմագործներին պակաս չեն վեասում և սերմ տարածելու սիստեմները: Բայց ամենից զգալի հարւածը ստանում են տեղական գործարանատէրերից, որոնք և սպառողն են լինում բոժոժիւ: Նրանք բերել տալով Բրուսալից (Տաճկաստանից) միջակ տեսակի սերմը, ծախում են գիւ-

զացիներին այն պարմանով, որ փողը վճարւի բոժոժը ստանալուց հետո հաշելով արկղը 2—3 ո''. միենուն ժամանակ պարտաւորեցնում են, որ անպատճառ բոժոժը իրենց ծախի չուկալի գնով։ Ստկան այդ միան խօսք է, երբէք չուկալի գնով չեն հաշում։ Պատահում է, որ գիւղացին կարիք ունի փողի։ սերմ բաժանողները օգուա քաղելով այդ կարիքից՝ աւելի ևս կաշկանդում են նրան, Վճարելով մի քանի ռուբլի, գործարանատէրը ստանում է գիւղացուց պարտամուրհակ, որի մէջ մտցնում է սերմի և պարոք տւած գումարը, տակոսն էլ հետը, Ի՞նչ անի գիւղացին, Նթէ չվերցնի՝ փողի կարիքը նրան կը խեղտի, թէն իրա համար պարզ է, որ իրեն խարում են թէ սերմի մէջ, որը կարող է ամենալաւը առնել տեղացիներից 2—2 ո. 40 կոպէկով և թէ բոժոժի գնի մէջ, որը միշտ պակաս են հաշում։

Կայ և մի ուրիշ տեսակ միջոց էլ, որը պակաս չէ վնասում սերմ տարածողներին։ Այդ այն է, որ կան թուրք բէկեր, որոնք պարտաւորեցնում են իրենց գիւղացիներին սերմը իրենցից գնել։ Ակդպէս է Փ. թըրքաբնակ գիւղի բէկը։ Մեր հարցին, թէ ինչու են աղպէս թովլ տալիս վարւելու իրենց հետ, թուրք գնուղացին պատասխանեց։ աղա, եթէ իրենից չվերցնեք, ասում է ազ ես ձեզ չեմ օգնել փողով։ իսկ մենք թէ հարկը վճարելիս և թէ ուրիշ կարիքի համար ստիպւած ենք դիմել նրան, իբրև միակ փողատէրին։ Դիւղը, որ չետին ծալը չքաւորութեան մէջ է, այդ հանդամանքից ստիպւած տեղի ևս հարստահարում է։ Ցաւալի է, որ մի նոյնատեսակ հրէց էլ կայ մի հայկական գիւղում ի դէմս հայ քահանալի, Վերջինս պարապում է վաշխառութիւնով։ Սա ևս թուրք բէկի պէս գիւղացոց պարտաւորեցնում է իրենից վերցնել սերմը, սովառնալով, որ եթէ իրենից չը գնեն, նրա ոչ երեխին կը մկրտի և ոչ էլ ննջեցեալը կը թաղի։ Ալդպիսով ստիպւած են լինում շատ անգամ խոնարհել նրա պահանջի առաջ։ Միւս գիւղերն էլ զերծ չեն հարստահարողներից, միան զուցէ աւելի փոքր չափով լինի անտեղերքում։

Ահա թէ ինչ հանդամանքների մէջ են ստիպւած գործել մեր տեղական սերմագործները։ Կարող է այդ գործը չառաջադիմել զո՞նէ առանց արտաքին օգնութեան։

Մի քանի խօսք ես տեղիս շերամապահութեան մասին։

Սերմագործների ներկալութիւնը բարերար կերպով է աղդել մեր երկրի վրաց։ Եթէ ակսօր մեր մէջ կատարելագործութիւն, չառաջազիմութիւն է նկատում շերամապահութեան մէջ, այդ պէտք է վերագրել նրանց, և այդ ամենը նրանք մտցնել են թէ կենդանի խօսքերով և թէ իրենց օրինակներով։ Նոր կարգերը միանգամակն պարտական են նրանց ջանքերին։ Մինչդեռ մի քանի տարի առաջ բնակարաններ ախտահանելը, դարակների (էտաժերկա) վրաէ որդներին կերակրելը, շերամապուն տաքացնելը, ջերմաչափեր գործածելը որդներ մեծացնելիս և ազն համարում էին աւելի

լորդ բաներ և միշտ ծաղրի էին մատնուում, ակաօր շատ ընտանիքներ կարելի է զտնելյ որոնք հետևուամ են վերովիշեալ կանոններին և սուանում են ամենալաւ արդիւնք. Անշուշտ մի քանի ժամանակից լետու նոյն արդ սովորովթիւնը կը տարածւի և հարեան գիւղերում, ինչպէս և ուրիշ սովորովթիւններ, որոնք նոյնպէս մեր գիւղից են տարածւում:

Ներամապահական դործը մեր գաւառում, մանաւանդ վերջի 8 տարիներում, հակասական լառաջադիմութիւն է արել. Մինչդեռ տասը տարի առաջ մսխալից (զոլոտնիկ) 20 գրւանքա (գրւանքա=ֆունտ) սուանալով, կարելի էր ամենքին զարմացնել, ակաօր դա կարող է ծաղր լարուցանել. մեզանում 25-ից պակասը միջակ է համարում, իսկ 30 և 30-գրւանքից բարձրը՝ լաւ Եղել են դէպքեր, որ նոյն իսկ 42 գրւանքա էլ է սուացել մսխալից, և այդ պ. պ. Արշակ և Սամոն Թաղէսոսեանցների պատրաստած սերմից, իսկ այս տարի եղբարք Լեռն և Յուշաննէս Արասխանեանցների պատրաստածից, տիկին Սոփիա Արեանցի պահելով մի մսխալից սուացւեց 41 գրւանքա, ներկաւ եղողները վկայում են որ 131 հատ մի գրւանքա էր քաշում, մինչդեռ 140-160-ը մի գրւանքա քաշողը համարում է լաւ. իսկ երկու տարի առաջ մենք վկայ էինք օր. Շուշանիկ Փանեանցի պահած որդներին, որոնցից սուացւած բոժոժը էր 123-ը մէկ գրւանքա,

Դալով տեղական բոժոժի լատկութեան, պէտք է խոստովանած, որ նա զերազանցում է Կովկասի բոլոր տեղերի բոժոժներին. Այդ նոյնը հաստատում են և բոլոր մասնագէտները, որոնք պաշտօնով ալցելել են մեր Կողմերը:

Նոյնը պիտի ասել գների վերաբերմամբ. Մինչդեռ մեր կողմի բոժոժը գնահատուում է փութը 15-20 ո., իսկ մի քանի տարի առաջ նոյն իսկ 25 ո., ուրիշ տեղի բոժոժը 9-12 ուռելի է, Բոժոժի գինը առհասարակ կախած է Մոսկւայի թելի արժեքից. Իսկ ներկայում մո թելի արժեքը, նախ կին տարիների հետ համամատած, շատ ընկած է:

Չնայած մեր բոժոժների ալսքան առաւելութեան, նրանցից սուացւած թելը Մոսկւայում աւելի բարձր չի գնահատուում քանի, դիցուք, Ղարաբաղի թելը, դեռ փութին 20-30 ուռելի նրանցից պակասով է ծախւում. Լուչ է զրա պատճառը. Գործին մօտ մարդիկ բացատրում են լոկ պատրաստած թելի վաս լատկութիւնով և գործարանների լետամեացութիւնով. Մինչդեռ Ղարաբաղում թելը քաշում են հաւասար հաստութեամբ, մեղանում արդ չի պահպանուում, և այդ լոկ բանւորների քմահաճութեան և ոչ թէ գործարանատէրերի անհասկացողութեան պատճառով. Վերջինս կատարեալ գերի է թուրք բանւորների ձեռին, որոնք գրէթէ ամբողջութիւն են կազմում. Օրավարձ աւելացնելն էլ չի կարողանում ազգել նրանց վրայ, անքան անբարեխնդան են, իսկ խիստ միջոցները միան վնաս կարող են պատճառել տիրոջ, որովհետեւ մի գեղեցիկ օր կարող է կամ գործարանը

մատնւել կրտկի կամ ինքը տէրը գնդակահար լինել; Բայց այդ նոյն երևովն դուք չեք կարող հանդիպիլ Դարաբաղում, որովհետեւ բանւորները բաղկացած են զրէ՛՛ սուրողապէս խաղաղ հայ գեղջկուհիներից, որոնք այդ տեսակ վարդենի ձգտումներից շատ հեռու են և վարւում են համաձան պակմանի:

Թելի պակաս գնահատելու երկրորդ պատճառը մենք վերագրեցինք գործարանների հեռու լինելուն այն կատարելագործութիւններից, որոնք ներմուծւած են ուրիշ տեղերի գործարաններում: Դա բացատրում է ոչ միայն նիւթականի պակասութիւնով, այլև և անհեռատեսութիւնով և դանդաղովառութիւնով: Գողթանի վաճառականին ընդհանրապէս չի կարելի գովել: Նա ժամանակից շատ չետ է մնացել. չունի համարձակ քալ և նախաձեռնող ուժ: Նա նորաձեռութեան սիրահար չեւ. ընդունում է նրանց անժամանակ, երբ նկատում է, որ իր երկրացին, հետեւելով նրանց, շահւում է:

Ական աեղական վաճառականների և գործարանների մասին մի ավագամ:

Յունիս 98. Ագուլիս

ԱԻԵՏԻՍ ԴԱԻԹԵԱՆՑ

# ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Խրաւոսուները, — Տժգոհները, — Երկաթուղու խնդիրը, — Քաղաքի նախահաշիրը,

1898 թ. լուլ. 7 Երևան

Մարտ ամսին կալացած ընտրութիւնների համատառութիւնը տեղի ունեցաւ չունիսի սկզբներին միայն, ինտրւած անձներից են. Վ. Տէր-Սարգսեանց, բժ. Լ. Տիգրանիսանց, Գ. Տէր-Խաչատրեանց, Կ. Կամսարական, Ե. Մուրադեան, բժ. Ռուբազով, Սմանով, Ֆոնդերնոնէ Տարդան, Ա. Մինասեանց, Գ. Խանազդեանց, Բ. Եղիազարեանց, Յ. Մելիքեանց, Կ. Ադրիկեանց, Տ. Աֆրիկեանց, Միր Բաբաև, Միրզա Զարբար կազիեւ, Փաշախան Մակինսկի, Թ. Քալանթարեանց, Ա. Բունիաթով, Ա. Տէր-Ցովակիմեանց, Ա. Խաչատրեանց, Է. Տէր-Գրիգորեանց, Զ. Գէորգեանց, Հ. Գէորգեանց, Ա. Գուլամիրեանց, Կ. Դատամեանց, Ե. Միրզոյեանց, Գ. Խեցումեանց, Գ. Անտոնեանց, Ա. Խորառանեանց, Ա. Աղամեանց, Ա. Ենդիբարեանց, Գ. Բունիաթեանց, Խ. Գիլանեանց, Գար. Մնացականեանց, Վ. Տէր-Ցովիսնիսեանց, Գ. Ամիրեանց Ե. Տէր-Սահակեանց, Յ. Ղօրդանեանց, Ա. Ղօրդանեանց, Խ. Մելիք Աղամալեանց, Յ. Մելիք-Աղամալեանց, Գ. Գալաստեանց, Ա. Տէր-Գամբրիէլեանց և Ա. Տէր-Աւիտիքեանց:

Այս անգամւակ ընտրութիւնները համեմատաբար լաջող ելք ունեցան. Դիմուարոր չաջողութիւնը նրանունն է, որ ձախաւորների մօտաւորապէս կէսը ինտելիգենտ մարդիկ են—ալոինքն բժիշկներ, իրաւաբաններ, ուսուցիչներ և զանազան պաշտօնեաներ, միւսու կէսը վաճառականներ են, ինտելիգենտ մարդկանց մուտքը այս ասպարէզը լաջողութիւն է խոստանում:

Մի ուրիշ երեսով, որ բնորոշ էր այս անգամւակ ընտրութիւնների համար, զա՞ հաերի և թուրքերի մէջ չառաջացած խիստ մրցումն էր, որի հետեանքը այն եղաւ, որ թուրքերից միայն երեք հոգի ընտրւեցին. Միաւներից երեքը ոռւս են, մէկը ֆրանսիացի կան մնացածները հայեր:

Այս երկու երեսով մենք համեմատ էլ երկու տարր դժգոհ մնաց ընտրութիւններից. նախ թուրքերը, որոնք նաև բողոքեցին ընտրութեան դէմ, պատճառաբանելով, որ իրենցից շատ քիչ մարդ է ընտրւած, մինչդեռ քաղաքի շինութիւնների մեծ մասը իրենց է պատկանում, և քաղաքը անազին քանակութեամբ իրենցից է օգտուամ. Վերջին պատճառաբանութիւնը ոչ մի հիմք չունի, ինարկէ, քանի որ քաղաքի շահերը պաշտպանողների համար նշանակութիւն չունի կալւածների թուրքի կամ հայի մենը, ազ աչն, որ մինը ի վկա ուրիշ չօգտի. Սակայն ճիշտ է այն, որ հայերը այս անգամ կուսակցաբար վերաբերելով թուրքերից նաև մի քանի արժանաւոր անձնաւորութիւններ մեացրին, մի հանգամանք, որ ինքն ըստինքեան տգեղ բան է, քանի որ դեռ խակ ժողովրդի մէջ կարող է թշնամութեան սերմեր առաջացնել. Երկրորդ խումբ դժգոհներն էին մեր տգէտները, որոնք նաև ալսպիսի պատճառաբանութեամբ են դժգոհում ինտելիգէնսների ընտրութեան առթիւ. Դոցա կարծիքով ինտելիգէնսները միան խօսքով կարող են պաշտպանել քաղաքի շահերը և ոչ գործով, այն ինչ հարուստ վաճառականները կարենու դէպում, այս կամ այն քաղաքապատկան հողը կապալով տալու ժամանակ, անձամբ կանգնում են աճուրդի և դինը բարձրացնում, խակ եթէ մինչն անգամ կապալը իրենց վրա էլ մնաց՝ ոչինչ քանի որ իրենք կարող են դրանց օգտել. Այն ինչ ինտելիգէնտ բայց այդ տեսակէտից ոչ գործնական մարդիկ այդ չեն կարող անել, որի պատճառով քաղաքի հողերը էժան գնով կը մնան կապալառուների ձեռքին. Թէ որքան նշանակութիւն ունի այս տեսակ պատճառաբանութիւնը, դա երեսում է նրանից, որ քաղաքի անազին քանակութեամբ հողերից այնքան էլ արդիւնք չի ստացւում, ինչպէս, շատերի ասելով, կարելի էր սպասել. Բացի դրանից անա նաև ինչպիսի վկասներ են հասցնում քաղաքին այդ հարուստ կալւածատէր ձախնաւորները. Քաղաքի հասարակաց պարտէղներից մինը, «Անդլիական» կոչւած ալգին մեծ չարմարութիւն ունի իւր մի կողմում մի շարք խանութներ պարունակելու, որոնցից քաղաքը լաւ եկամուտ կ'ունենար. Եւ այս հարցը մի քանի տարի առաջ դրւած է եղել ձախնաւորների առաջ վճռելու, բաց պ-պ. ձախնաւորները չեն բարեհաճել լօգուա շինութեան ձախ տալ, որովհետեւ նոյն աչդ տեղի դիմաց գտնւող մի շարք խանութները, որոնք պատկանում են հէնց իրենց ձախնաւորներին իրենց անչարմար դիրքի չնորհիւ, չը կարողանալով մրցել նորերի հետ, կընկնէին. Եւ ալսպիսով քաղաքը զրկւեց ահազին եկամուտից. Այն ինչ ինտելիգէնտ ձախնաւորների օրով այդպիսի բան դժւար թէ լինէր:

Նոր ձախնաւորները դեռ չեն մտել գործի մէջ, ուստի ամեն բան դեռ չին կարգով է դնուամ. Ակժմ մեր քաղաքապին ինքնավարութիւնը զբաղւած է երկաթուղու գծի հարցով. Ներկայում ձախնաւորն է որոշուամ երկաթու-

դու գիծ ացկացնելու Աղէքսանդրապոլից միջև ԶուկՓ. Բանից դուրս եկաւ, որ գիծը չէ անցնում Երևանով, այլ Երևանից 9 վերստ հեռու զէպի Էջմիածնի ճանապարհը Փարաքար գիւղով: Թէ ինչ հարւած է դա Երևանի համար, այդ շատ պարզ է. Երևանը կը զաղարի տնտեսական կենտրոն լինել, որի փոխարէն կը բարձրանալ Նախիջևանը, հէնց Փարաքարը և այլն: Այդ պատճառով ճանաւորները մի արտակարգ նիստ գումարեցին, որին, չը գիտենք ինչպէս, պատահմամբ ներկալ դժոնեց և ինժեներ Կիրակոսով, որ ճանապարհները որոշող լանձնաժողովի անդամ է: Երբ ճանաւորները դատում էին այն մասին, թէ ինչպիսի միջոցներով ազդ չարիքի առաջն առնեն, այ. Կիրակոսով խորհուրդ տակց, որ մ: նչեւ անդամ ինժենէրները իրաւունք ունին ի նկատի առնել ազ կամ այն տնտեսական պայմանը և ծուել ճանապարհը այս կամ այն ուղղութեամբ, թէն պարզ է, որ ճանապարհը զինուրական նպատակով է շինուած: Աւստի հարկաւոր է ամենից առաջ ինժենէրներին դիմել և ազն: Դրա համար կազմեց մի լանձնաժողով որը պիտի մտածէ գիծը Երևանով անցկացնելու հնարաւորութեան մասին:

Վերջում բերենք ինքնավարութեան հրատարակած նախահաշւից <sup>2</sup> առնւած մի քանի թւանշաններ: Ծախք ինչպէս և մուտք նախատեսնւած է 1898 թւի համար 115.536 ր. 45 կ. որից ի միջի ալլոց,

Քաղաքակին վարչութեան վրայ ծախւելու է 17.464 ր.

Զինուրականներին բնակարանի համար 16.163 ր.

Քաղաքակին ոստիկանութեան համար 20,676 ր. և այլն.

Բժշկական և սանիտարական գործի համար 10.737 ր.

Ժողովրդական լուսաւորութեան համար 3.551 ր.

Նոր ճանաւորների վրայ դրւած երկու ծարքահեղ լուսերից մենք հակւած ենք այն կողմը, որ ալտուհետեւ ինքնավարութեան գործերը լաջող կը գնան, եթէ չաջողով մի լաւ քաղաքագլուխ ընտրել: Խնտելիքէնտաների շատութիւնից պիտի բարիք սպասել և ոչ չարիք:

ՄԱՐ. ՅԱՐ.

<sup>1</sup> Смѣта доходовъ и расходовъ гор. Эривани на 1898 г.

## ԱԶ ՈՒ ԶԱԽ

Դ.

«Մենք ու Դուք».—Մի քննադատին հոչակաւոր յայտնութիւնները.—Թէ ո՞րն է յառաջդիմում. —Լեզվին ասհանջները.—Իբրար ճանչնանք.

Ուստիու մէջ գրագէտ և զրականութեամբ հետաքրքրող հալերու մեծ մասը գրեթէ ոչինչ որոշ զաղափար չունի տաճկահաչ արդի գրականութեան նկատմամբ: «Ճաճկահայերը Պարոնեանից զատ ուրիշ լաւնի գրականագէտներ ունեցել են վերջին տասնեակ տարիների մէջ» կը հարցնէր ինձի գիմնազիոնի բագուցի հաչ աշակերտ մը...

Այս իրողութիւնը կարելի է թերես բացատրել անով որ ոռուսահաչ «ինտելիգէնտ» դասակարգը «հոսհոսներ» համարելով տաճկահայերը և «հոսհոսական» անոնց գրականութիւնը՝ հետաքրքրութեան արժանի ոչինչ չի տիսներ աչդ գրականութեան մէջ Պարոնեանէն զատ, որուն տիսուր հեղնութիւնները, դառն ծիծաղները, սուր քրքիջները իրանց քէքը կը բերեն:

Հետաքրքրողները կը համոզին սական որ հեռուները, բերրի և անկանոն մշակւած հողի մը վրայ, մուազ ամպերու տակ, խղղիչ տատասկներու կէտաւորումի մը շուրջը, անրան կենդանիներու ճմլող ոտքերէն՝ և կրծող դրւնչն զողացող՝ ծաղկատան մը կը փթթի, տաճկահաչ զրականութեան ծաղկատանը, բազմազան, զունագեղ ծաղիկներու չորդումով: Համակրելի թերթեր ու հանդէմներ պակաս եղած չեն երբեք Պոլսի մէջ. «Հայրենիք» օրաթերթը, «Մասիս, և «Ծաղիկ» հանդէմները, քանի մը տարի առաջ, իրենց առաջնորդող և մանաւանդ գրական ու գեղարվեստական լոդւածներու կողմէ անհամեմատ բարձր էին կանգնած Թիֆլիսի օրաթերթերէն ու միակ շաբաթաթերթէն: Տարակուսելի է սական որ աչդ թերթերէն—խմբագրութիւններուն զրկւածներէն զատ—գոնէ չորսական օրինակ ստացւէին ամբողջ Ռուսիու մէջ: Ալապէսով, բնական է, շատ զարմանալի չլինի որ ոռուսահաչ ընթերցասէր (?) զասակարդին անծանօթ են մնացած տաճկահաչ բարոնի գրողներու, Զօհրապի, Բաշալեանի, Տիկ. Սկաճեանի, Միպիլի (Կին), Զարդարեանի, Գ. Անդրէասեանի և ուրիշ տասնեակներու անունները, Բայց լինչի վերագրել աչն զարմանալի վերաբերմունքը. կարդ

մը գրողներու, որ, լախուռն քննադատականներու մէջ, անպէտք դիտողութիւններու շարականներ կը սկսին երգել, Տաճկահայի մի նոր հրատարակած մէկ գրքին վերջին էջի ընթերցումը լրացնելուն պէս: Թարմ օրինակ մը.

\*  
\* \*

Պր. Շ., Տարագ'ին մէջ, քննադատելով Պր. Շանթի ռևերժինը, լարմար առ.իթ կը սեաբէ իր հետազոտութեան արդիւնք եղող նոր ճշմարտութիւններ բացարձակ լայտնելու ամենքին. «Ժամանակ է արդէն ասելու, կը զրէ Պր. Շ., որ վերջին տարիները ուուսահաւ գրականական բարբառը աւելի է առաջդիմել; քան պոլսականը Պոլսականի հիմքը միայն գրաբառն է, ուուսահալոցը թէ գրաբառը և թէ ժողովրդականը: Պոլսահաւ բարբառը արտաքուստ թէն աւելի սահուն է և հարուստ է գրաբառ բառերով, (ներքուստ ալ աղքատ վերելի), բայց ուուսահալոց բարբառը աւելի ուժեղ է, աւելի կենսունակ և հիւթալիու: (Փափաքելի էր որ տաճկահակ գաղթականները վերադառնալու ատեն ուուսահաւ բարբառի ուժէն, կեանքէն, հիւթէն չմոռնալին միասին մէկ մէկ քիչ վերցնել՝ անոնցմով իրենց աղքատ լեզուն պատւաստելու համար...): «Պոլսականը չետադիմում է, ուուսականը լառաջդիմում: Տաճկահակ գրողները անխտիր գործ են ածում ամեն մի գրաբառ բառ, ուուսահաւ գրողները այս կողմից զգուշ են... պր. Շանթ տաճկահակ բարբառով է գրում, ուստի հակւած է դէպի գրաբառը»:

Պր. Շ. Պոլսահաւ աշխարհաբարը բաղդազութեան դնելով ուուսահաւ գրական աշխարհաբարին հետ կը լայտնէ, առանց որնէ ապացուցի, առանց օրինակներու և համոզիչ խուքի, թէ «Մուսահաւ գրական բարբառը աւելի է առաջդիմել»:

Մեծ տարբերութիւն մը, զդալի լառաջդիմութիւն մը նկատելի չէ ուուսահաւ գրական լեզվի վրաէն երբ թերթենք վերջին տարբերու կովկասեան հալ օրագրերն ու հանդէսները: Մուրնի նախորդ տարւան 7-8 թւին մէջ հին հանդէսէ մը: Կուռնիկէն՝ օրինակներ բերմացան աշխարհաբարի մը, որ կը մօտենար, քիչ տարբերութեամբ, արդի ուուսահաւ գրական լեզվին <sup>1)</sup>, իսկ տաճկահաւ աշխարհաբարին համար 8-10 տարբերու անջրպետ մը անջըրպետու մըն է նաև լեզվի զանազանութեան տեսակէտով: Նոյն իսկ մեր աշխարհաբարի մշակներէ մէկուն 5 տարի առաջւան լեզուն բաւական աչքի գարնող տարբերութիւն ունի իր ալսօրւան աշխարհաբարէն: Նոր գրողնե-

<sup>1)</sup> Հարկ ենք համարում մեր աշխատակցին դիտել տալ, որ Մուրմի ակնարկան լոգամծում նմուշներ բերւած էին նաև կոռունկ'ից, ոչ թէ մեր ալժմեան գրական լեզվին քիչ լառաջաղիմած լինելը ապացուցանելու համար, այլ ուրիշ նպատակով: և եթէ մեր ալժմեան գրական լեզուն աչքան մօտ է երեսուն-քառասուն տարի առաջ եղածին, այդ միայն ցուց է տալիս, որ մեր արդի արենելեան աշխարհաբարի հիմքը ուղիղ էր գրւած: Խմբ:

ըէն անոնք որ քանի տարի առաջ հրատարակւած իրենց մէկ գործը կրկին կ'ուզեն տպել, հարկ կը տեսնեն փոփոխութիւններ ընել՝ լեզւի տեսակէտով։ Աս կ'ապացուցանէ տաճկահայ աշխարհաբարին կազուն վիճակ մը չունենալը, անոր փոփոխուելու, շինւելու, կատարելագործելու շարժումը, որ երբէք յետադիմական չէ։ Պր. Շ. կը կարծէ թէ «Պոլսահայ բարբառին հիմքը միայն գրաբառն է, և տաճկահայ գրողները գործ են ածում անխտիր ամեն մի գրաբառ բառ»։ Անհասկնալի կը մինաւ ինծի «պոլսականին հիմքը միայն գրաբառն է» խօսքը։ Եթէ գրաբարաւատուկ ոներու, բառերու հուլովներու մասին է ալդ զիտողութիւնը, բոլորովին անարդար է, քանի որ տաճկահայ լեզւի մշակները կը խուսափին արդէն ալդ ամենէն։

Մեր «գրաբարեան» ասպետները, առհասարակ հին զպրոցներու աշակերտներ և կդերականներ, Գարագաշեան, Գուրգէն, Պէրպէրեան, տիկ. Տիւսար, Նարալէ, Պոլսի և Վէնետիկի գարդապետներէն ու եպիսկոպոսներէն շատուրը և ուրիշներ՝ խորթ, դժւարահասկնալի լեզւվ մը գրած են. որ ոչ աշխարհաբար կարելի է համարել և ոչ գրաբար. երկուքէն խառնապուր մը։ «Աշխարհաբարի մշակները» սկսած Դուրեմանէն, Զերազէն, Պարոնեանէն—օրոնց լեզուն ալ զեռ զրաբառական ձեւերէ բոլորովին չէ ազատւած—, մինչև վերջերս, Ա. Արփիարեան, Չոսպանեան, Հ. Ասատուր, Զօնրապ և ուրիշներ՝ լրագրական հակածառութիւններու հետ փորձած են գրական դրեթէ ամեն ճիւղի ձեռք զարնել, բանաստեղծականին ու երդիծաբանականին, վիպականին ու քննադատականին։ բաց համարէ միշտ պարբերուկան հրատարակութիւններով։ Մինչդեռ «գրաբարեան ասպետները», թերսս աւելի զործնական մարդիկ քան «նորերը», շարունակեցին գրքեր հրատարակել իրենց նահապետական անփոփոխ լեզւով, գրաբարաւանրձ աշխարհաբարով մը։ Պոլիս և Վէնետիկ հրատարակւած տասը զիրքէն հազիւ երեքը բովանդակութեամբ և լեզւով ալ զարու արդիւնքը կարելի լինի համարել. իսկ միւս եօթին մէջ կը տեսնի զօրեղ ջանք մը կնտաղարձ գալիքով ու կարօտալի նալւածքով դէպի և. Դարը, դէպի մեր հին գրականութեան շացուցիչ Ուկեգարը դիմելու՝ հողի, քարի, թիթեղի, զէնկի, պղնձի, երկաթի զարերու վրաէն ոստնելով. Քանի տարի առաջ, Յ. Գուրգէն երեք հատոր հաւաքածոներ հրատարակեց տաճկահայ ալ և ալլ գրողներու անտիպ գործերէն. Հաւաքածոներու լեզւի մասին կարելի է գաղափար մը կազմել հէնց միայն անունէն. «Պատկեր աշխարհիկ գրականութեան, ի վերջ կուս իննեւտասաններորդ զարու, խնամօք Յ. Գիշու. Բնական է ալդ հաւաքածուներու մէջ «նորերուն գրւածքներ շլինէն։ Ալդ «Պատկերները» պատկերն էր գրականութեան ու լեզւին անոնց որ վշատակ մը թողուլ կ'ուզէն իրենց դէպի նզնիկի դարը ընելիք ճամբորդութիւնէն. Նզնիկին պիտի հաղորդէին ներկաւ դարու բոլոր գիտական նորութիւնները, որպէս զի ան փոփոխէ իր «Եղծ Աղանդոցի»

մտքնրը՝ պահելով նոյն հրաշալի լեզուն՝ այդ «գանձերու շտեմարան» գիրքը  
նոր սերունդին ձեռքը տալ կարելի ընելու համար...

\*  
\* \*

Տամնեակ տարի առաջ լեզական անկախութենէն ու խառնաշվութութենէն սիրտ առած՝ ամեն զրիչ շարժող իր լատուկ լեզուն կ'ունենար և կը ստեղծէր. ալսօր, սական, գաւառացի ու պոլսեցի հարիւրաւոր գրողներ կը ցուցնեն լեզվի գրեթէ կատարեալ նոյնութիւն մը, ինչ որ ուրախ առիթ է ի հարկէ. Տաճկահայ աշխարհաբարը Փրանսական գրականութեան և լեզվին ազդեցութեանը շատ բան կը պարտի իր ներդաշնակութենէն, Ֆոխութենէն, գանձերէն, Բալց նոյնպէս սկսած է օգտի արդէն Պոլսի ժողովրդի լեզւն և, գաւառացի նոր գրողներու միջոցով, գաւառական բարքառներէն. Տարիների ի վեր զանազան թերթերու մէջ հրատարակւած են ու կը շարունակեն հրատարակիլ գաւառական բառերու հաւաքածոները ժողովրդականի բառարանի մը պէտքը շատ զդալի է՝ հայերէն կանոնաւոր բառարանի մը անհրաժեշտ պէտքին հետո. Պնդուն, երեսպաշտ, կերմնայ, բռու բռու, ժում, ասղնտել, պտղունց, ասկիլ, ճանազի (demoiselle, միջատ), պատտակ, մթնշաղ, մութնուլուսուն, հաւկուր, շալակ, նզալ, երծկոտալ, գետնզայ, թոռալ և ուրիշ շատ ու շատ ժողովրդական բառեր գրական լեզվին սեփականութիւնը դարձած են ալսօր. Ուրեմն մէկ կողմէ ալ զաւառական ընտիր բառերն ու ոճերը զործածական դարձնելով՝ տաճկահայ աշխարհաբարը կարծեմ չի ազտաղիմում»: Միենոյն ատեն կարելի է զիտել տալ ոռւսահայ գրողներէն. քանիները՝ իրենց լեզուն դաստապարտած են լճացած վիճակի մէջ պահել՝ օտար բառերու պատճեշով մը շրջափակած:

Ոռւսահայ շատ զրողներու համար կարգ մը օտար բառեր ալնքան ընտանեցած են, որ հայերէնները իրենց օտար ու խորթ կը թւին: Ազապէսով, բնական է լեզուն ճճոխանակ նոր հայերէն բառերով, որոնց պակասը կը զգացւի. բառերու և հայերէն ձեռքու մեծ պաշար կը գտնէ ինտոողը գաւառական բարբառներու և ի հարկին դրաբարի մէջ, Դժւար է ոռւսահայի մը համար Տէնը, Հիւգոն, Բուրժէն թարգմանել: Տաճկահայ աշխարհաբարը սահուն, ներդաշնակ և բառերով ճոխ է, ոռւսահայոցը՝ աւելի կորով ու չաճախ աւելի լատուկութիւն ունի: Երկորեակ լեզուներ, որ կարծես իրարու քէն ըրած են, իրարմէ չեն օգտիր. իրենք իրենց առանձին կը զարգանան. թող ալ ալսպէս շարունակեն... <sup>1</sup>:

<sup>1</sup> Այդ զիտողութիւնը բարեբախտաբար սխալ է. գեթ մեր արեելեան գրական լեզվի նկատմամբ կարող ենք վկաչել, որ նա մասամբ ազդեւել է և շարունակում է աչժմս էլ ազդւել արևմտեան հայերէնից. արեելեանը բառեր ունի ալսօր, որոնք փոխ են առնւած արևմտեան գրականութիւնից. օրինակ՝ շաճեկան, շաճագրգիռ, դաշնակ, կոչում անել, սուհմանադրութիւն,

\* \*

Ճոխացնելու է լեզուն. որքան հարուստ լինի ան բառերու կողմէ, այնքան աւելի լարմար ու լաջող գործիք մը կը դառնայ ամեն անոնց ձեռքը որոնք արտադրել զիտեն, և նոյնքան ընդունակ կը լինի օտար մտածումը թարգմանելու, Նեղինակի մը ճոխ լեզուն իր բեղուն մտքի մը տէր լինելուն ապացովն է շատ անգամ. Ազատ մտածումը, տիսուր ու սառն խոհանքը ինքինքնին լստակօրէն, ճշգրտորէն բացատրելու համար բառերու, շատ ու շատ բառերու. կը կարօտին: Մանկիկին պահանջներուն և ըմբռնելու, մտածելու կարողութեանը հետ աստիճանաբար կ'աւելնան անոր բառերու պաշարը. Երբ հայ զրականութիւնը զարգացնելու ջանքեր կը լինին նոր գրքերով և պարբերական հրատարակութիւններով, ուուսահալ աշխարհաբարը սական ալ և այլ հեղինակներու և թարգմանիչներու քով ամանկան լեզու» կը մնայ զժբախտաբար: Օտար նշանաւոր հեղինակներու վիպական և գեղարւետակոն գրւածքներուն հայացած թարգմանութիւնները մեծապէս կը նպաստեն լեզ-ի զարգացմանը. ալդ կարգի թարգմանութիւնները սական շատ ցանցառ են: Իրաւ թէն շատ դժւար է հայերէն թարգմանել Հիւգօն, — որուն հանճարեղ ստեղծագործութիւններուն համար ֆրանսերէն լեզւի անհատնում բառերն իսկ կարծես քիչ կուղան, — բայց անկարեիլ ալ չէ: Ու պարծանք մըն է տաճկահայ զրականութեան համար որ քանի մը տասնեակ տարիներ առաջ արդէն Հիւգոյի, Դիւմա-հօր ու Խօֆէն Սիւլի և ուրիշ Փրանսացի ու անգլիացի վիպասաններու գործերը թարգմանւած են Խօմիցի թարգմանիչ-զբագէտներու ձեռքով: Կարող անձերու միջոցով թարգմանւած են վերջերս և կը թարգմանւին Ռուսօլի, Ռընանի, Լոտտիի, Տէնի, Մոպասանի և ուրիշ լազոնի ֆրանսացի հեղինակներու զործերը, բայց զեռ մամուլին չյանձնած: Ճեռագիրները դարակներու խորքը Քիստոսի մը լարուցանող ճաշնին կը սպասեն. «Ե, ճեռագիր զու, արի եկ արտաքսու: Եւ մեռեալը... հա, ակսինքն ճեռագիրը որուն վրայ ամիսներով աշխատանք դրւած է, օր մըն ալ կը կորչի: Պատճառը միշտ «տնտեսական տագնապն» է, քչիկ մըն ալ սբարուական տագնապը», որոնք դրախտավին երկրի մը ու ժողովրդի մը ամեն կարգն ու սարդը եկան խառնափորեցին...»

Խնչքան բաղձալի է որ իրար աւելի աղէկ ճանչնալինք, մեր մէկ մէկու վերաբերմամբ ունեցած անմիտ հակալրութենէն և նախապաշարմունք-ենթադրութիւններէն թոթւըւէինք, ու արենակցալին եղբրի մը

---

սկսնակ, միտումաւոր և շատ ու շատ ալ բառեր Բարդ բառեր կազմելու կամ երկարներին կրծատ ձեռք տալու համար արևմտեան զրոյները արևելեանների համար լաճախ օրինակ են ծառալած. Արևմտեանը երլիմն աղջած է նոյն իսկ արևելահալ գլուխների ոնի վրայ Խմբ.«

թեան կապը աւելի ամրապնդէինք գրական եղբայրակցութեամբ մը։ Փափաքելի էր որ կովկասեան թերթերը Պոլսի և տաճկահազ քաղաքներու մէջ թղթակից-աշխատակիցներ ունենալին, որոնք աական վարդապետի, տէրտէրի մասին բամբասանք-լուրեր հաղորդելէ աւելի ջանալին ազգագրական նիւթեր տալ, ժողովուրդը ճանչցնել, կրթական և գրական նորութիւններն ու հարցերը ծանօթացնել, նոյնպէս ոռւսահայերը, իրենց ընտանեկան, մտաւորական կեանքով անձանօթ մնացած են տաճկահայերու. մեծամասնութեան մը։ կովկասցի գրողներ գովելի ծառակութիւն մը ըրած պիտի լինին՝ տաճկահազ համակրելի թերթերուն երթեմն թղթակցութիւններ դրկելով։

Երբ իրար լաւ ճանչնանք, ալն ատեն չըսենք թերես ալնպիսի խօսքեր, որոնք լուրջ քննութեան, առողջ դատողութեան արդիւնք չէ կարելի համարել։ Տեսակ մը անիրաւ ամբաստանութիւն է լալտնել թէ Շանթ, Չոպանեան, Հրանտ «հակւած են դէպի գրաբար, քանի որ տաճկահայքարբառով են գրում» և թէ «տաճկահազ լեզուն լիտադիմում է»։

## ԻՍՊԱՆԱԿԱՆ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Անցեալ անգամ մեր աեսութիւնը վերջացրինք այն րոպէով,  
երբ Ամերիկացիք ուոք դրին Կուբացի հողի վրայ, որի առիթով  
յայտնեցինք թէ այդ րոպէից պատերազմի ընթացքը ընդունում է  
արդէն այլ կերպարանք:

Մի ամսւայ ընթացքում Կուբայում Ամերիկացոց ոտք գնելուց  
յետոյ ամերիկական ծովակալ Սամիսոն իսպառ ջնջեց Սերւերայի  
նաւազին հսկադրը, իսկ գեներալ Շավտէրին անձնատուր եղաւ Սան-  
տիագո քաղաքը: Ֆիլիպպեան կղզիներում ապստամբները դրեթէ  
կատարելապէս տէր են, բացի մալրաքաղաք Մանիլայում, և ապօս-  
տամբների գլուխ Ագւինալդօն իրեն յայտարարել է դիքտատոր,  
մինչդեռ ամերիկական նաւերը այտեղ վազուց ոչ մի որոշ գործո-  
ղութիւնների չեն դիմում, միշտ սպասելով օժանդակ զօրքերի Ամե-  
րիկացից: Ֆիլիպպեան կղզիները Խսպանիացի համար ներկայում կա-  
տարելապէս կորած պիտի համարել, մինչդեռ Կուբայում իսպանա-  
ցիք դեռ ևս տէր են կղզու ամենամեծ մասին: Այդտեղ Խսպանիան  
ունի զեռ ևս շատ մեծ զօրք և բազմաթիւ ամուր տեղեր. բայց  
Կուբայի ոչ մի փորտացին քաղաք չի կարող դիմանալ ամերիկական  
նաւերին և ոչ էլ Խսպանիան կարող է նոր զօրքերով ու. ռազմա-  
մթերքներով օգնութեան գալ Կուբացին. իսկ այդպիսի հանգամանք-  
ներում Խսպանացցց վերջնական պարտութիւնը անխուսափելի է,  
թէև ամերիկացիք իրենց յաղթութիւնը կը գնեն շատ թանկ գնով,  
եթէ Խսպանիան յամառելու լինի մինչև ծայր: Ամերիկան սովոր չէ  
մեծ պատերազմների և ոչ էլ ամերիկական ազգը կարող է ժեթթեռ-  
թեամբ տանել մարդկացին մեծամեծ զոհեր, քանի որ խնդիրը իւր  
սեփական անկախութեան մասին չէ: Սանտիագօի մօտ եղած կոիւ-  
ներում ամերիկացիք կորցրին սպանւածներով ու վիրաւորներով մին-

շե 1500 մարդ. և չնայած չաղթութեան՝ Ամերիկան սկսեց անհանգստանալ. պարզ է որ Ամերիկան բնաւ այդպիսի մեծ կորուստներ իւր հաշւի մէջ չէր անցկացրել Կուբայի անկախութեան համար կուելիս. և սակայն Սանտիագօն Կուբայի համար ռազմագիտական կարեորագոյն կէտը չէ. Ամերիկան պէտք է, Կուբան նւաճելու համար, պատրաստ լինի ոչ միայն մեծ զօրք Կուբա դրկելու, այլ և մեծ զօրք զոհաքերելու. իսկ այդ հանգամանքը չի կարող չաղդել Ամերիկայի քաղաքական ծրագրի վրայ, որը սկզբում՝ Կուբայի անկախութիւնն էր, Եթէ պատերազմը շարունակելու լինի, եթէ այժմ սկսուծ բանակցութիւնները հաշտութեան դաշնի չհանգեն՝ մեծ վտանգ կայ որ Կուբայի անկախութեան ծրագիրը ազաւաղւի: Բայց Ամերիկան ոչ մի կերպ չի կարող այժմ դաշն կապել՝ առանց պահանջելու Կուբայի անկախութիւնը, քանի որ դորա համար էր սկսած պատերազմը. միւս կողմից Ֆիլիպինեան կղզիները մեծ մասամբ ապստամբների ձեռքումն են, և գործը այդտեղ այնքան է յառաջացել, որ առանց ապստամբների համաձայնութեան՝ Ամերիկան չի կարող Խսպանիայի օգտին բան բռնել այդ տեղ. իսկ ապրատամբները չեն կամենաց այլ ևս խսպանացոց լուծի ստւերն անգամ տանել: Այս երկու կէտերը վէճից դուրս լինելով՝ Ամերիկան, Կուբայում պատերազմը՝ շարունակելու համար, ստիպւած է մի այլ տեսակի զիջում անել Խսպանիային, որին վերջինս չի կարող կարևորութիւն չտալ. դա պատերազմական տուգանքն է: Եթէ Ամերիկան ստիպւած լինի շարունակել պատերազմը՝ վերջը սոսկալի կը լինի Խսպանիայի համար Ամերիկայի դրամական տուգանքի պահանջը. այդ տուգանքը կարող է ապագայում լինել մի-երկու միլիարդ ֆրանկ, որը Խսպանիան անկարող կը լինի վճարել, և դա առաջ կը բերի մի այնպիսի տնտեսական քայլայում երկրի, որից այլ ևս անկարող կը լինի Խսպանիան գուրս գուլ մինչև մի քանի մարդկային սերունդ: Բացի այդ՝ Խսպանիան չունի քաղաքական կայունութիւն, և նա չի կարող դիմանալ քաղաքական ու տնտեսական այդպիսի տագնապների՝ առանց իւր քաղաքական պարտութիւնը ակներև է այսօր նոյնքան, որքան այդ ակներև էր պատերազմի սկզբում:

Գանք այժմ անցքերի տեսութեան:

Յուլիսի 1-ին (ն. տոմ.) սկսւեց Սանտիագօի պաշարումը ծովից (ծովակալ Սամփուն) և ցամաքից (գեն. Նաֆուկը): Ապա երկու օր յուլ. 2--3 կռիւ եղաւ, իսայանացիք ետ քաշւեցին դէպի քաղաքի ներքին ամրութիւնները: Ամերիկացիք այդ կռիւներում կորցրին 22 սպազ (օֆիցէր) և 208 զինւոր սպանւած, 1203 հոգի վիրաւորւած, 79 հոգի կորած. ծովի կողմից ևս ոռումբեր էին արձակւում: Ամերիկացիք բռնեցին արտաքին ամրութիւնները, հասնելով բրուտուերին, ուր նոքա հանդիպեցին փշոտ երկաթաթելից շինած բարձր պատւարի:

Յուլիսի 3-ին, իսպանական ծովակալ Սերւերան փորձեց իւրէսկադրը ազատել պաշարւած դրութիւնից. նա կարողացաւ առաւտուաչ ժամ՝  $9\frac{1}{2}$ -ին դուրս գալ ծովածոցից և ուղեորւեց դէպի արևմուռք: Ամերիկական նաւերը այդ նկատեցին և սկսեցին հալածել Սերւերայի նաւերը, որոնցից մէկը հեռացած էր մինչև 60 անգլ. մղոն Սանտիագօից: Զարհութելի էր ամերիկական նաւերի թափած կրակը. իսպանական նաւերից Cristobal Colon չգիմանալով՝ նստեց աւազի վրայ ժամ՝  $2\frac{1}{2}$ -ին և դրոշակը վար իջեցրեց. Infanta Maria Theresa, Oguendo և Vizcay սորիպւած եղան աւազ նստել. նոքա այրեցին և պայմանագիր Սանտիագօից 20 մղոն հեռու. Terror և Pluton ջարդեցին Սանտիագօի ծովախորշի մուտքից 4 մղոն հեռու. վերջին նաւը՝ Reina Mersedés ոչնչացաւ ծովածոցից դուրս գալու ժամանակ. նա իրան գցեց աւազի վրայ Մորրօ ամրոցի տակ: Այսպիսով Սերւերայի ամբողջ նաւախումբը ջնջւեց: Ամերիկացիք կորցրին միայն մի սպանւած և 2 վիրաւորւած. Իսպանացիներից 1300 հոգի գերի ընկան, որոնց մէջ և Սերւերան. բացի այդ՝ հրդեհից, պայմանագիր ու ջրասոյզ լինելուց կորան իսպանացիներից շուրջ 600 հոգի: Սերւերայի նաւերը ամերիկացոց ոռումբերով բոլորովին ծակորւած էին. և երբ այրեող նաւերի կրակը խառնւեց նոցա շրջապատող ծուխի հետ՝ Սերւերան և իւր զօրքը ափ իջան ու իրենք վերջ տուին նաւերի խորտակման: Սերւերան տարւեց ամերիկական Քլուտէրը նաւը իրը գերի: Զուր ընկածներից 150 հոգի լողալով հասել էին Սանտիագօ:

Նոյնաժամանակ գեն. Նաֆուկը պահանջեց Սանտիագօի յանձ-

Յումը, և ժամանակ տւեց մինչև յաջորդ ցերեկւայ ժամ՝ 10 դուրս բերել քաղաքից օտարներին, կանանց ու երեխաներին։ Ապա զինադադարը քաղաքի մօտ երկարացւեց որպէս զի խսպանական գեներալ Հինարէս հար ունենայ բանակցելու իւր կառավարութեան և գեն։ Բլանկօֆ հետ։ Ապա ծովակալ Սամփոնը հեռագրով առաջարկեց գեն։ Բլանկօֆին 48 ժամում կուրայից դուրս բերել բոլոր խսպանական զօրքերը, հակառակ դէպքում պիտի ոմբակոծւեն կուրայի բոլոր ծովափնեայ քաղաքները։ Բլանկօֆն մերժումն զրկեց։ Մադրիդում մինիստրների միջև տարածայնութիւն ծագեց հաշտութեան ինդրի մասին։ Նաև կառավարութիւնը անհանգստանում էր կարլոսեան կուսակցութեան շարժումներով։

Սանտիագօի գարնիզոնի պետ գեն։ Տորրալ յուլ. 9-ին (ն. տ.) սովաներ զրկեց Շափտէրի մօտ յացոնելու, որ պատրաստ է յանձնել քաղաքը, միայն թէ իւր զօրքին թուլ տրւի գէնքով ու զինւորական պատրիւներով դուրս գալ քաղաքից։ Ամերիկական կառավարութիւնը սակայն պահանջում էր բացարձակապէս անձնատուր լինելը (որպէս պնդում են՝ Շափտէրը համաձայնում է եղել խսպանացոց պայմանը ընդունելու), և 12 յուլ. (ն. տ.) սկսում է ոմբակոծումը, որը տեսում է մինչև երեկոյ։ յաջորդ օրը ոմբակոծումը նորոգւեց և տևեց երկու ժամ։ Նաւերից գցած ուումբերը նպատակին չէին հասնում, բայց մէկը ընկաւ եկեղեցու վրայ, որը վառօղի պահեատ էր։ Նա պայմեց ահագին գզրդիւնով։ Յուլիս 13-ին ընդհանուր հրամանատար գեն, Մալլս (Miles) Vule նաւի վրայ հասաւ Սանտիագօ և խորհրդակցեց Սամփոնի ու Շափտէրի հետ։

Սապանիացում այդ միջոցին Սադաստացի մինիստրութիւնը հրաժարական տւեց և թագուհի-կառավալարչուհին յանձնեց նոյն Սագաստացին նոր մինիստրութիւնն կազմել։ մարշալ Կամպոս նշանակեց Մադրիդի ընդհանուր-նահանգապետ։

Սանտիագօն նորից ոմբակոծւում է ցամաքից և ծովից։ Շափտէրը պահանջում է Տորրալից Սանտիագօի յանձնումը, յացանելով որ 18.000 փախստականներ քաղցից մեռնում են, Ամերիկական զօրքը նոցա համար բաւարար պաշար չունենալու պատճառով։ Այդ ամենից յետոյ Տորրալ անձնատուր եղաւ մօտ 23.000 զօրքով, յուլիսի 18 (6)-ին։ Նա իւր զօրքով դուրս եկաւ քաղաքի ամրու-

թիւններից ու մերձեցաւ ամերիկական շարքերին, վարդրեց զէնքը գունդ գնդի ետևից։ Շաֆտէր մնաւ Սանտիագօ և կանգնեցրեց ամերիկական դրոշակը։ Այդ հանդէսին Եաֆտէրը չհրաւիրեց մասնակից լինելու ապատամբների գեներալ Գարսիային, որը, առհասարակ նեղացած Եաֆտէրի արհամարական վերաբերմունքից, յայտնեց թէ իւր զօրքով (5000 մարդ) հեռանում է լեռները առանձին գործելու հոմար։ Իւր դժգոհութիւնը նա յայտնեց Եաֆտէրին ուղղած մի նամակով։

Խսպանական կառավարութիւնը, ներքին խոռվութիւնների դէմն առնելու մոքով, վերացրեց մի քանի սահմանադրական ազատութեան երաշխատորութիւններ, հաստատելով լրագրական ցենզուր, վերացնելով խմբւելու ազատութիւնը, խստացնելով ձերբակալման վերաբերեալ օրէնքները։

Սերւերայի խորտակումից յետոց էր դեռ ևս, որ խսպանական կառավարութիւնը վերադառնալու հրաման ուղարկեց ծովակալ Կամարային, որը մի էսկադրով ուղևորում էր Ֆիլիպպեան կղզիները։ Առւգուստիի օգնութեան Կամարան գտնւում էր այդ ժամանակ Սուէզեան ջրանցքի մօտ։ Որովհետև Ամերիկան ծովակալ Վաստոնին ուղարկում էր Խսպանիա, որ սորա փորտերը ումբակոծի, այնպէս որ Խսպանիան պիտի մոածէր իւր սեփական ափերի ապահովութեան մասին։

Ֆիլիպպեան կղզիներում, ուր հաշւում են 130.000 առատամբներ, որոնցից 30.000 հոգի զինւած, նոցա գլուխ Ագլինալդոն յայտարարեց զիքտատորութիւն և պատերազմական դրութիւննեց նաև թէ կղզիները յոյս ունին անկախութիւն ձեռք բերելու։

Յուլիսի 21 (9) Ամերիկացիք, Կուբայում, ափ իջան Մանզանիլյայի մօտ, որի խսպանական գարնիզոնը ընդդիմացաւ։ Ամերիկացիք ափ իջան նաև Տայա-Բակուա և շրջապատեցին Տուանաս-Սագա՞ն։

28 (16) յուլիսի գեն. Մալլս ափ իջաւ Պորտո-Ռիկօ կղզու վրայ Գւանիկայի մօտ, և 30-ին (18) Պոնսէ քաղաքը անձնատուր եղաւ։

Բայց արդէն նոյն 28-ին յուլ. Խսպանիան դիմումն արաւ Հիւսւ-

Ամերիկայի նախագահ Մակ-Կինլէյին, առաջարկելով սկսել բանակցութիւններ հաշտութեան ժամանակ, ֆրանսիական դեսպան Կամբոնի միջոցով։

Ամերիկայի պատասխանը ամփոփում է հետեւեալ կէտերը. Պորտօ-Ռիկօ և բոլոր այլ կղզիները Ամերիկայի ջրերում զիջանւին Ամերիկային. Կուբան յայտարարւի անկախ. Ամերիկային տրւի նաև Մարիանեան կղզիներից մէկը քարածուխային կայարանի համար, գուցէ և մէկը Կարոլինեան կղզիներից. Նոյն նպատակով Ամերիկան ունենայ Ֆիլիպպեան կղզիներում մի քարածուխային կայարան. Ֆիլիպպեան կղզիների խնդիրը վճռւի մի կոնֆերենցիայով կամ մասնաժողովով։ Պատերազմական տուգանք Ամերիկան չի սպահանջում։

Իսպանիան, ըստ ամենայն հաւանականութեան, լնդունելու է այս պայմանները, թերևս թեթև առարկութիւններով։

Z.

## ԶԱՆԱԶԱՆ ԼԱՒՐԵՐ

Գր. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ՝ ից ստացանք մի կարևոր գրւածք, ուր, թւռմէ թէ, ծերութեան հասակին հասած գրական ու հասարակական գործիչը պարզում է իւր հայեացքները կեանքի կարեորագուն խնդիրների մասին, որաէս լեզու, կրօն, հալքենիք, սեփականութեան խընդիր, ժողովուրդ, դասակարգավին խնդիրներ և ալին. Հայոց գրականութեան պատկառելի վետերանը իւր ալդ գրւածքը մեղ ուղարկելով զիտաւորութիւն է ունեցած պատել Մուրճը, որի համեմատ և նա օժտել է զրւածքի ճակատը մի լիշատակութիւնով, որը առաջին անդամն է բաժին ընկնում ալս ամսագրին. Գրւածքի խորագիրն է. «Ժամանակակից Ատենախօսութիւն»: Նւէր Մուրճի տասնամեաչ անքիծ և անխոնջ գործունէութեան», Բզիսելով մի անձից, որը իւր գրականական երկար կեանքում միշտ ձգտել է դէպի լառաջադէմը, լուսաւորը և մաքուրը, պ. Ղ. Աղալեանի ալդ համակրութեան ցուցը անդնահատելի և շատ խրախուսական է մեղ համար, և, անկասկած է որ ի զիմաց Մուրճի պ. Աղալեանը կամեցել է պատիւ մատուցանել նաև ամսագրիս ամբողջ աշխատակցական խմբին:

Ալդ առիթով չենք կարող առանց զգածելու լավոնելու որ բարուական խրախուսանքին պ. Աղալեանցը իւր անապահով տեղովը կամեցել է աւելցնել նաև մի դրամական նւէր այն 200 ռուբլի գումարից, որ ինքը հենց ստացել է իրրե օժանդակութիւն իւր զրական գործունէութեան համար՝ ալեքսանդրապոլցի պ. Առ. Յունանեանից: Ալդ գումարի մի մասով պ. Աղալեանը որոշել է հայթավթել իւր գրւածքի արտատպութեան թղթի ծախքը հազար օրինակի համար, որպէս զի գիրքը վաճառւի ի նպաստ Մուրճի ապահովութեան:

Մենք որոշեցինք «Ժամանակակից Ատենախօսութիւնը» տպագրել Մուրճի ներկաէ տարւաչ հոկտեմբերի համարում, որը լինելու է մի արտակարգ հրատարակութիւն՝ Մուրճի տասնամեակը լրանալու առթիւ:

ՄՈՒՐՃ ՆԻՒՐՈՂՆԵՐ. (Շարունակութիւն). Պր. Սմբատ Շահազիզ (Մոսկա) Մուրճի մի օրինակը նւիրելով Թաւրիզի «Աբովեան» ընթերցարա-

նին, խոստացել է նոյնը կրկնել ամեն տարի առ միշտ.—Պր. Զաւլալ Տէր. Գրիգորեան (Ախալքալաք) — Բարալէթ գլուզի ընթերցարանին։ ՄՈՒՐՃԻ № 7 և 8 (լուլիս և օգոստոս) միացած զրքալ պիտի լոյս տեսնի մինչեւ սեպտեմբերի 5-ը։

ՄՈՒՐՃԻ ԱՅՍ ՏԱՐԻԱՅ ԿԻՍԱՄԵԱԿ Կաղմում է 932 երես, ակինքն մեր լատարարածից ու սովորականից 68 երես աւելի։

ՀԱՅՈՑ ՄԻԱԿԱՆ, ԴՊՐՈՅՆԵՐԻ ԿԱԼԻԱԾՔՆԵՐԸ, և գուքերը ներկատաս արդէն մեծ մասամբ ընդունել են, համաձայն կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կարգադրութեան. մինչև լուլիսի փերջը այդ կալւածների ընդունելութիւնը աւարտած է լինելու։

ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՅԱԱՍՑԱՆՈՒՄ. ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ:

Հայոց որբանոցները Յաճկատանում ալժմ թւով 22 են, որոնց ցուցակը կաղմել է կ. Պոլսի պատրիարքարանը, Ազդ 22-ից 14-ը կ. Պոլսի Պատրիարքարանից ամսաթոշակ են ստանում, 7-ը սպահպատում են հասարակութիւնների կամ ընկերութիւնների հաշով. որբեր խնամում են նաև կ. Պոլսի Ս. Փրկչեան հիւանդանոցը և Արմաշի դպրեվանքը. Ահա դոքա.

1. կ. Պոլսի Ս. Փրկչեան հիւանդանոցի որբանոցում խնամում են գաւառներից բերած 80 որբ, որոնց սահմանւած է ամսական 80 օսմ. ոսկի ծախք, որից 50 ոսկին ստացւում է աղգակին կալւածքի արդիւնքից, 30 ոսկին՝ մասնաւոր աղբիւրից.—2. Արմաշի դպրեվանքում գաստիարակութիւն են ստանում և խնամում 20 որբ (ընտրած ուշիմ տղաներից). դոցա համար սահմանւած է ամսեկան 20 ոսկի որբաց սնդուկից.—3. Վանի Վարագայ վանքինը. 20 որբ պատրիարքարանից ստանում է 10 օսմ. ոսկի ամսաթոշակ. 4 Վանի Կարմրւարի վանքինը. 20 որբ. պատրիարքարանից 10 ոսկի ամսական. 5. Վանի Սալնապատի վանքինը. 20 որբ  $4^{16}/_{100}$  լիրա. 6. Վանի Նարեկալ վանքինը. 20 որբ. 10 ոսկի ամս. 7. Բաղչշի Խընդրակատար վանքինը 32 որբ, 10 ոսկի. 8. Ուրֆակի Ս. Սարգիս վանքինը 42 որբ. 15 ոսկի. 9. Կարինի Կարմիր վանքինը 34 որբ. 5 ոսկի. 10. Խարբերդի Խուլէ վանքինը 30 որբ. 15 ոսկի, որ հոգացւում է Լոնդոնում կատարած մի հանգանակութեան արդիւնքով.—11. Մուշի Ս. Առաքելոց վանքինը. 35 որբ. 16 ոսկի.—12. Տիգրանակերտ քաղաքինը 24 որբ, 15 ոսկի. 13. Արագիր 32 որբ. 15 ոսկի պատրիարքարանից, որ հոգացւում է Ռողոստոի հանելի կողմբց և մի օրիորդի հանգանակութեամբ. 14. Մարաշ քաղաքինը 60 որբ, 30 ոսկի ամսական, որ պատրիարքարանի մշտ հոգում են

Մոսկվակի Ժամարեան եղբայրներ, 15. Աչնթապ քաղաքինը, 30 որբ. 15. լիրա, հոգացւում է Մանչստէրի Հայերի կողմից.—Ներքու չիշեալները Պատրիարքարանից չեն ստանում թոշակներ. 16. Զմիւռնիալի որբախնամ տիկնանց ընկեր., 37 որբ. 17. Զմիւռնիալի Ներսէսեան ընկ., 36 որբ. 18. Կեսարիալի Ս. Կարապետ վաճքինը 42 որբ.—19. Գաղատիալի Ս. Աստւածածին վաճքինը, 14 որբ. 21. Էտիրնէ քաղաքինը 20 որբ. 22. Կարին քաղաքինը. 20 որբ.

Կ. Պոլսի հիւանդանոցը հին հիմնարկութիւն է, նոյնպէս և Արմաշինը, այլ և № 16 (Զմիւռնիալի որբախնամ տիկն. որբանոց) հիմնած է 1893 թ. ապրիլին, հետևապէս ոչ յատկապէս կոտորածների պատճառով, բայց նոյց պատսպարած ու խնամած որբերը, որ նշանակւած են արտեղ, կոտորածների զոհ գնացած ծնողների զաւակներն են, Բոլոր մնացածները նոր հիմնարկութիւններ են, սկսած 1897 թ. ապրիլից մինչեւ ներկայ 1898 թ. ապրիլը:

Կ. Պոլսի պատրիարքարանը ուրեմն լիցեալ 22 որբանոցներից 14-ին տալիս է ամսական 189<sup>16</sup>/<sub>100</sub> ոսկի, աչլինքն ամսական շուրջ 1500 ուուրլի:

Պատրիարքարանը աշխատում է նորերը հիմնել, որովհետև որբերի թիւը շատ հազարների է հասել. Ով կարող է—պարտաւոր է պատրիարքարանի որբոց սնդուկին օգնութիւն գտալ:

—Պր. Գր. Զանշինելի խմբագրութեամբ ուուսերէն լուս տեսած «Եղբարական օգնութիւն» գրքի արդիւնքից խմբագրութիւնը ուղարկել է Կ. Պոլս 15.640 ո. 65 կոպ., Աչդ հաշւից 2.500 ո. ուղարկւած է Պատրիարքարան յատկապէս մի որբանոց հիմնելու 25 որբերի համար:

**ԲՆԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՐԿ**, Գալ տարւանից ներմուծւելու է Անդրկովկասի քաղաքներում Ռուսիաի ներքին նահանգներում 1894-ից գոյութիւն ունեցող բնակարանաչին պետական հարկ. Պորա համար քաղաքները բաժանւում են կարգերի, և ամեն մի կարգում մինչև մի որոշ գումար բնակարանի վարձ աւողները աղաւ կը լինեն հարկատւութիւնից:

**ԲԱՆՈՒԴՈՒԾԻ ՀԱՐԿ**, Հրատարակւած է նոր օրէնք, որով ներմուծւում է հարկ՝ առետրական և արդիւնագործական հաստատութիւնների վրաց (промысловый налогъ). Հարկը բաժանւելու է ութ կատեգորիանի, հիմնական դրամագլուխների կարգով:

**ԱԿԱԽԱՋԸ** հայոց թեմակ. դպրանոցների և Գէորգեան Ճեմարանի մասին.—Մուրճի անցեալ համարում մատնանիշ եղանք Կաւկազ, լրագրում լուս տեսած մի երկար և հանգամանօրէն գրած լոդւածի վրաւ հայոց թեմ. դպրանոցների և հիմնարանի մասին:

Պարտաւոր ենք համարում այդ լոգւածի բովանդակութեան հետ  
ծանօթացնել մեր ընթերցողներին:

Յօդւածի երեալուն արտաքին առիթ ծառակել է Աստրախանի  
քաղաքակին խորհրդարանում պատահած մի վիճաբանութիւն գիմնա-  
զի շնութիւն կառուցանելու մասին, բաց մեր գրիչը հրաժարում  
է, այդ պատրևակի հետ կապել որևէ դիտողութիւն հաջոց դպրա-  
նոցների մասին:

Կաւկազ'ը դրազւում է այն խնդրով թէ պիտի լինեն  
ամբողջ հասարակութեան և կամ նորա պատմականապէս առանձնա-  
ցած մասերի վրաչ ունենալիք եկեղեցական ներգործութեան սահ-  
մանները, ձեւերը և եղանակները. Եւ մասնաւորապէս մեր երկրի  
բնակիչների մի նշանաւոր կոնտինգէնտի համար շատ կարեոր է  
պարզել, թէ հայ-լուսաւորչականների կրօնական կրթութեան կանո-  
նաւոր դրութիւնը ինչպէս պիտի լինիու Որովհետեւ, ըստ լոգւածագրի,  
այդ կրթութեան ամֆմեան դրութիւնը չի կարող չաջող համարել, և  
որ, ընդհակառակը, նորա մի քանի առանձնալատկութիւնները ներ-  
կազացնում են հիւանդոտ կողմեր, առոնք տարաբախուաբար չա-  
փազանց երկար մնում են առանց կանոնաւոր բժշկութեան. Յօդւա-  
ծագիրը ապա անցնում է Գէորգեան ճեմարանի հիմնարկութեան և  
ցակմեան ընթացքին ու թեմական դպրանոցներին. Էջմիածնում  
հոգեոր ակադեմիա և զորան կից զպրանոց հիմնելու, որպէս նաև  
Ռուսիայում գոչութիւն ունեցող այլ հայ թեմական դպրանոցների  
գործունելութիւնը կանոնաւորելու խնդիրը պաշտօնապէս չարուցեց  
Գևորգ IV կաթողիկոսը, որի առաջարկի մասին Կովկասեան կոմի-  
տէի կազմած օրագիրը բարեհաջոց հաստատել Կալսր Ալէքսանդր II  
1-ն հոկտեմբերի 1874 թ. Հանգուցեալ կաթողիկոսի առաջարկը Կով-  
կասեան կոմիտէում կրել էր մի քանի փոփոխութիւններ՝ համաձայն  
կառավարչական պատշաճաւոր հաստատութիւնների ցուցմունքնե-  
րին. Ակդ օրագրով սահմանում էին ժամանակաւոր կանոններ, որոնցով  
թուլատրում էր հիմնել ճեմարանը և նորան կից դպրանոցը այնու,  
որ իննը տարոց յետոյ, անցեալի փորձի հիման վրայ, ներկազացէր  
ճեմարանի և դպրանոցի կանոնադրութեան ծրագիրը. 1884-ին իննը  
տարին լրացաւ, երբ կաթողիկոսական աթոռը թափուր էր. 10-ն  
նուիմբերի 1885 թ. Մակար I բարձրացաւ գահը, և երեք տարուց  
յիտու ներկազացէր պահանջած ծրագիրը, որին կցած էր բացատրով  
գրութիւն, ուր լաւանուում էր թէ ծրագիրը կազմելիս՝ ի նկատի են  
առանել նախկին կրթական մինիստր և Սրբ. Սինողի աւագ-պրոկուրար  
կոմս Գ. Ա. Տոլստոյի դեռ ևս 1874-ին արած բոլոր ցուցմունքները  
բացատրող գրութեան մէջ պատճառներ էին բերւած թէ ինչու դժւար

է ճեմարանի ուսուցիչների ցենզը որոշել, խոստացւում էր նաև կազմել բոլոր թեմական դպրանոցների նորմալ կանոնադրութիւնը՝ ըստ օրինակի ճեմարանին կից դպրանոցական դասարանների։ Ըստ այդ առաջարկի Մակար կաթողիկոսի՝ ճեմարանին և դպրանոցներին պիտի չատկացէին պետական հիմնարկութիւնների իրաւունքները և արտօնութիւնները, այլ և աւարտողներին պիտի տրւէին ուսուցչական իրաւունքներ և գինուրագրութեան արտօնութիւններ։

Մակար կաթողիկոսի այդ պրօէկտը կովկասեան կառավարութիւնը լանձնեց կովկասեան ուսումնարանական իշխանութեան ի քննադատութիւն, ի միջի ալլոց կովկ. ուսումն. իշխանութիւնը նկատել էր որ բնաւ ցանկալի չէ, որ հուսացրած լինի ամեն կառավարչական հսկողութիւն ուսումնաւանդութեան դրաւ։ Այդ քննադատութեան մէջ բացառում են Եջմիածնի ճեմարանի և դպրանոցի խընդրած արտօնութիւնները, որպէս նաև ուսումնաւարաններին ուսուցչական ցենզ չատկացնելու իրաւունքը. նույն իսկ հերքում էր հաւոց դպրանոցների հաւասարութիւնը ռուսաց մեմինարիաններին և համեմատում էին միայն կաթոլիկ հոգեոր դպրոցների հետ կենաւում։

Մակար կաթողիկոսը մի քանի տարի զուր աշխատեց իւր պրօէկտի հաստատման համար, և մօտ երկու տարի առաջ նորին վեհափառութիւն Մկրտիչ Ա ներկալացրեց կովկասեան գլխաւոր իշխանութեան նոր առաջարկներ, որոնք աւելի են մօտենում կառավարութեան գիտողութիւններին. Կաթողիկոս Մկրտիչ Ա նախ ընդդիմանում է այն բանին, որ հաւոց դպրանոցները համեմատում են կաթոլիկ դպրոցների հետ. Ապա կաթողիկոսը չի կամենում որ ճեմարանը գտնուի Եջմիածնի սինոդի հսկողութեան տակ, որը մի զուովարչական հիմնարկութիւն է. ցանկալի չէ գտնում որ ճեմարանի (տեսուչ) և օգնականը անպատճան հոգեորականներ լինեն և ոչ էլ ցանկալի է համարում որ նորա նշանակւեն ռուսաց իշխանութեան ձեռքով՝ ի վնաս նորին վեհափառութեան հոգեոր հեղինակութեան. կաթողիկոսը ընդունում է որ այդ դպրոցների զլուկ լինեն ռուսաց հպատակներից՝ պետական լեզուն խմացող, և որ ռուսաց լեզվի դասերը պէտք է աւելացնեն. Իսկ պետական հսկողութիւնը կաթողիկոսը չարմար է տեսնում ռեւիզիանների ճենով։

Ըսկ Կաւկազ'ի, այդ նոր պրօէկտի համար նորագուն դիտողութիւնները կազանում են նրանում, որ, ըստ Օրէնսդրքի չորրուած 1002 մաս Ա հատոր XI, ճեմարանը չի կարող տալ ուսուցչական իրաւունքներ, մանաւանդ որ կան Լաղարեան ճեմարանը և այլ (?) դպրոցներ. ապա որ բոլոր ժողովրդական դպրոցները պէտք է լինեն ռուսաց ուսումնարանական իշխանութեան իրաւասութեան ներքու,

և ճեմարանի ու դպրանոցների ուսումնական մասի հսկողութիւնը պիտի չանձնւի կրթական մինիստրութեան, «որովհետև ներքին գործոց մինիստրութիւնը, մանկավարժական հսկողութեան համար չունի լատուկ օրգաններ»:

**ԱՊՍԱՄԲՈՒԹԼԻՆԸ ՖԵՌԴԱՆԵԱՆ ԵԲԿՐՈՒՄ:** Անցեալ համարում հազորդիցինք Անդիֆանում պատահած անցքի մասին, այն է որ մօտ 1000 զինւած տեղացիք չարձակւել էին սուսաց բանակի վրայ Անդիֆանում, բայց՝ մի քանի կոտորած անելուց չետոք՝ ստիպւած եղան փախչել:

Փախածների չետեից ուղարկւեց պորուչիկ Աղաբէկովի, որը բռնեց պարագլուխ Խշան'ին, 23-ին մայսի մի տանուտէրի ձեռքով բռնեց Խշանի կարևոր աշխատակից Սուբտանկուլ, որի մօտ գտնեց Կ. Պոլսից մի նամակ՝ կասկածաւոր զրոշմով. նամակում Խշանը նշանած է խալիքի օգնական:

Տաշքենտի պատւաւոր տեղացիները չալտնեցին ամենահպատակ զգացումները, վրդովմունքը չարագործ չարձակման մասին և խնդրեցին վող ժողովել ստորին զինւորներից սպանւածների ընտանիքների համար. Նամանգանի և Մարգելանի գաւառապետները մաջսի 24-ին սկսեցին հետափուզություններ իրենց գաւառներում. Մարգելանի գաւառապետը կալանաւորեց 55 մարդ, որոնցից 5-ը զիւղախմբերի կառավարիչներ և ժողովրդական դատաւորներ:

Անդիֆանում, սպանւած մոլլալի կորանի մէջ գտնւած է թուղթ, ուր սրբազն պատերազմի լորդոր է կարդացում:

Յաւանի է կացուցած որ Նաուքատցիք կամեցել էին Օշի վրայ չարձակւել, բայց չկատարեց գաւառապետի պատրտատ լինելու պատճեռով՝ ընդդիմադրելու:

Բացի Խշանից, կալանաւորեցին նորա օգնականը 38 ապստամբներով. Անդիֆանում բռնւած են 80 մարդ՝ կասկածելիներ և խմբի մասնակիցներ. Օշում մինչև մայիսի 25-ը 100 հոգի էին կալանաւորւած, որոնցից երկուսը սրբազն պատերազմը չորդորող թղթի տակ ստորագրւած էին. Մարգելանի գաւառում բռնեցին ևս 19 հոգի, Անդիֆանի գաւառում նորն միջոցին 91 հոգի:

Թուրքեստանի ընդհանուր նահանգապետը հեռացեց պաշտօնից, խալազութեան մրջոցին ապատամբ խմբեր պատրաստելը նկատած չլինելու պատճառով. նշանակած է ժամանակաւոր ընդհանադապետ գեներալ լիւտենանտ Կորոլիով:

Ապատամբների պետ Խշան'ը, որը պահուում էր Անդիֆանի բերդում, շուրջ 45 տարեկան էր, ծնւած է Տաճիկ անունով ծմերանոցում (Ալիչլադ), Մինտեւրինի դիւզախմբին պատկանող, անունն էր Մուհամ-

մէդ Ալի-Խալիֆ. ունէր չորս կին և նոյնքան որդի. անզրագէտ էր Նըրբ քռնեցին, ու հարդ ու փորձի ենթարկեցին, նա ասաց, որ երկիրը ուսւների կողմից նւաճելուց խոտով՝ ժողովրդի մէջ սկսւեց բարքերի խիստ անկում, շարիաթի պատէրներից չեղումներ, ընտանեկան հիմքերի թուլացում, թէ ուսւ կառավարութիւնը, թէն փափուկ էր գարւում ժողովրդի հետ, բայց արգելում էր ուխտագնացութիւնը, վերացրեց զաքեաթը, մզկիթները զրկեց կալւածական (վակուֆ) եկամուտներից և հոգ չէր տանում բարոյականութեան և ընտանեկան հիմքերի պահպանութեան վրայ: Իբր թէ մի տարի առաջ նա ալդ բոլորը նկարագրել է թիւրքաց սուլթանի մօտ, խնդրելով խորհուրդ և ցուցմունքներ, և, իւր ասածով, ալս տարի նա ստացաւ խալիֆի (սուլթանի) նամակը, ուր վերջինս նշանակում էր նորան իբր իւր օդնական և խորհուրդ էր տալիս ազնել ժողովրդի վրա: որ հետեւն շարիաթի պատէրներին, և ուզարկեց իբր պարզ հին խալաթ: Ամեն օր իշխանը իւր բնակատեղում հաւաքում էր մի քանի աշակերտներ, որոնցից ոմանք մնում էին նորանից անբաժան, ալդպէս շարունակեց 10-15 օր:

Ալդ զրութեան մէջ մաջիսի 17-ին միտք լղացաւ ժողովուրդը առաջնորդել դեպի Անդիման, որ և կատարեց: Խշանը շատ բաների մասին լուսում էր և ամեն ինչ իւր վրա էր վերցնում: Կալանաւորման առաջին ժամանակը ոչինչ չէր ուտում, ընդունում է լետու կերակուր, տեսքը զւարթ էր, խօսում էր կամաց գանգատներ չէր անում: 18-ն մայիսին և ատարած լարձակման առթիւ բացատրեց որ նոյնպէս վարել էր հոգեկան խանգարման ազգեցութեան ներքոց:

Անցքից լետու Անդիմանում, բացի Թուրքեստանի ընդհ. նահանգակետի ժամանակաւոր պաշտոնակատար գեներալ-լէյտ. Կորոլլիկովից, զտնուում են և բարձրագուն հրամանով ուղարկւած անձեր, որոնց մէջ զեներալ-մայոր Զալկովսկի, Ֆերդանի ընդհ. նահանգապետի պաշտոնը կատարելու համար, և գեն. մայոր Խոնովը իբր հրամանատար բոլոր զօրքերի, որոնք նշանակւած են իշան'ի խումբը բռնելու և կարգը վերականգնելու համար:

Անդիմանում, ապատամբութեան գործում մեղադրութեան բաժանաւածները բաժանաւած են 5 խմբերի. առաջին խմբից 45-ը դատապարտեցին մահւան պատժի, որոնցից 37-ը ներումն ստացան կալարից, իսկ 9-ը կախւեցին տեղացիների ձեռքով չուլիսի 3-ին: Երկրորդ զրուպալից 48 հոգի դատւեցին զինւորական դատարանի առաջ. նոցանից 43-ը դատապարտեցին կտիսաղանով մահւան, 32 ի մասին խնդրելով կալսրին որ ներումն չնորհւի փոխարինելով տաժանակիր աշխատանքների 20 տարով, և երկուսին՝ երկու տարւայ բանտար-

Կութեամբ, կալվարը բարեհաճեց ազդ խնդիրքի համեմատ հրաման տալ: Ձերբակալւեց նաև Շադիրէկ անունով ապստամբական առաջնորդը, որի մօտ գտան Խշանի գրած լորդորը ապստամբութեան մասին, նա ձերբակալւեց 28 ալ հետեղների հետ:

Կառավարութիւնը խուզարկել է տւել ֆերգանեան երկրի բոլոր ձորերն ու բարձրութիւնները և համոզւել որ ալ ևս ոչ մի խումբ չկայ:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԽՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Թիֆլս, Քաղաքակին խորհրդարանը վճռեց ետ գնել Բելգիան կան ընկերութիւնից սորա բանեցրած ձիաքարչ երկաթուղիները, համաձայն քաղաքի հետ կապած պալմանի, որի զօրութեամբ քաղաքը իրաւունք ունի ետ զնել՝ 15 տարի ընկերութեան ձեռքում լինելուց հետոյ, ազդ ժամամիջոցը լրանում է ներկայ տարւակ սեպտեմբերին:

—Թիֆլս քաղաքը հարկ էր վերցնում ան տոփերից, որոնցով Քուռի վրայով գերաններ են բերում քաղաք ծախելու համար: Քաղաքին դա տալիս էր շուրջ 15000 ռուբրի: Տոփերի տէրերը (ԱԽՈՏՈՎՈՉԻԿԻ) չալոնելով որ քաղաքը ասօրինի կերպով է հարկ վերցնում նոցանից, դիմեցին կառավարչապետին, որը ընդունեց նոցադասով արդար լինելը և արգելեց քաղաքային ազդ հարկը վերցնելը: ԵՐԴԻԵԱԼՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆԸ ներկալումն հաստատում են Ռուսիայի նահանգներից մի քանիսում, ուր դեռ նա չկար (օր. Աստրախանում), ալ և Կովկասեան նահանգներից՝ Ստարապոլում և Կուբանեան շրջանում:

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ: (Տես Բերլինի մասին նախորդ Նո5):

Լայպցիգի համալսարան: (Հաղորդեց պ. Ատոմ Շահէն):

Պուկասեան Արքանամ, աշխարհագրական գիտութիւններ, աւարտեց դոքտորական վկայականութ:

Շարաբանդեան Մկրտիչ, քիմիա.  $2\frac{1}{2}$  տարի. Բաքուցի, ոչալական դպրոցից.

Զարզագնեան Արամ. թէկութիւն. 2 տարի. Կարնեցի. Էջմիածնի ձեմարանից, ապա Ներսէսեան դպրոցից.

Նալբանդեան Վահան. պատութիւն-դրականութիւն. 2 տարի. Վանցի, Թիֆ. Ներսէսեան դպրանոցից.

Սարդսեանց Քրիստոֆ, քաղաքատնաեսութիւն. 2 տարի. Բաքուցի, ոչալական դպրոց.

Սարուխանեան Ստեփան. քիմիա. Բաքուցի:

Հալէի համալսարան 1897-8-ի ձմեռաւակ կիսամեակում. (Հաղորդած է պ. Գր. Վահանցեան):

Զոհրաբեան Յուսիկ վարդապետ, աստւածաբանութիւն.  $1\frac{1}{2}$  տարի. Նոր-Նախիջևանի Սալա գիւղից. Գէորգեան ճեմարանից. Հալը հողագործ. ուսանում է Եջմիածնի հաշուով. Նախկին ուսուցիչ (27 տարեկան):

Գեանջեցեան Եղնիկ վարդապետ. համեմատական լեզւագիտութիւն.  $1\frac{1}{2}$  տարի. Շուշեցի. Հալը վաճառական. ուսանում է Եջմիածնի հաշուով, 28 տարեկան:

Հալէի երկրագործական պարոցում. Մուշեցեան Լեռն. գիւղատնտեսութիւն.  $1\frac{1}{2}$  տարի. Գէորգեան ճեմարանի սեմինարիալից. Վաղարշապատցի. Հալը հողատէր. հօր հաշուով.

Ստրաբուրգի համալսարան. Մինասեան Արշակ. Աստւածաբանութիւն.  $2\frac{1}{2}$  տարի. Խդղիրցի. Ներախեան զպրոցից. Հալը հողագործ. բարերարների հաշուով. Նախկին ուսուցիչ, մօտ 32 տարեկան:

Մարբուրգի համալսարան. Տէր-Յարութիւնեան Յովիանէս, աստւածաբանութիւն.  $1\frac{1}{2}$  տարի. Վաղարշապատցի. Գէորգեան ճեմարանի սեմինարիալից. Հալը վարժապետ ( $\dagger$ ). բարերարի հաշուով.

Ցակորջանեան Դաւիթ. մեքենագիտութիւն.  $1\frac{1}{2}$  տարի. Ներս. Դպրոցից. Ախալցխակի.

Շաւարչ ?—մեքենագիտութիւն. (տեղեկութիւնները պակաս):  
ՏԵՏԵՍԱԿԱՆ:

Շուշիայ գաւառ. Ան գիլդիական առեստրական և արդիւնագործական ճեռնարկութիւնների թիւը, որոնք 1897 թ-ին վճարեցին բաշխման տուրքը (раскладочнаяй сборъ), էր՝ Շուշւալ գաւառում քաղաքի հետ միասին 278, շրջանառութեամբ 1.082.800 ռուբլու և զուտ օդուտով 81.500 ռուբլո. ոչ գիլդիական ճեռնարկութիւնները, որոնք վճարեցին լրացուցիչ բաշխման տուրք (дополнительный расклл. сборъ) էր 408, շրջանառութեամբ 644,870 ռ. և զուտ օդուտով 66,520 ռուբլի:

Արտահանութեան առարկաներն էին գաւառական սահմաններից՝ ապրեշումի թել մինչև 12.000 փութ, խաղողի և թութի սպիրտ մօտ 8 միլիոն աստիճան (գրադուա), ցորեն, մոթաւ պանիր, գորգեր և ալլ գորգակին գործածքներ, բուրդ և ղեռ ևս աննշան չափերով բամբակ:

1897-ին աւելացել են մետաքսաթելի գործարաններ մէկը Քէրալիքէնդում՝ մանելու գործարան ոլորելու բաժանմունքով, և Դաշալթի գիւղում՝ ոլորելու գործարան:

Զերբարյալի դաւառ. (Նոյնպէս Գանձակի նահանգի ութ գաւառներից մէկը). գլուղիական ձեռնարկութիւններ բաշխման տուրքով 59, չըջանառութիւն 228,500 ռ., զուտ օգուտ 22.855 ռ., Ոչգիլդիական ձեռնարկութիւններ լրացուցիչ բաշխման տուրքի ենթակալ՝ 92, չըջանառութիւն 178,000, զուտ օգուտ 17.500 ռ.: Արտահանութիւնը՝ շերամի բոֆոններ, բարդ և ապրեզումի թել (Հաղորութղւում եղած զործարանից).

Նուշւար պետական գանձաբանը, որի գործողութիւնները չիշեալ երկու գաւառներն ունին իբր սահման, տւել է 2.300 փոխզրե. բով 3.600.000 ռուբլի:

**ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ՑՈՒՑԱԾԱՆԴԻՍ ԱԴՈՒԼԻՒՄՈՒՄ.** Մեր թղթակից Ա. Դ. զրում է: Յունիսի 21-ին տեղով օրիորդաց դպրոցի դահլիճում կալացաւ շերամապահական ցուցանդէս, որին մասնակցում էին 34 հոգի իրենց բոժոժներուի: Դրանք զլիաւորապէս Ագուլիսից էին, չըջակալ զիւղից շատերը բացակայում էին, ոմանք բոժոժը չհաւաքած լինելու ոմանք էլ ուղղակի նշանակութիւն չտալու պատճառով: Թուրքերը ամենաքիչ ներկալացուցիչ ունեին, այն էլ շատ լորդորելուց վեառ, նրանք երկիւղից չեին մասնակցել. կարծում են որ ցուցանդէսի հետևանքը այն կը լինի, որ կառավարութիւնը հարկ կը նշանակի շերամի վրայ. ոչ մի բացադրութիւն նրանց համար նշանակութիւն չունի, նոքա դարձեալ իրենց կարծիքին են մնում: Դահլիճը բաւականի գեղեցիկ զարդարւած էլու Պատերի տակ սեղանների վրայ շարւած էին թղթէ արկղիկների մէջ ներկալացրած բոժոժներ, որոնց իւրաքանչիւր այցելող շօշափելով և նայելով համեմատում էր միմեանց հետ: Պատերը զարդարւած էին շերամապահութեան վերաբերեալ պարագաներով, այն է՝ ցանցերով, ցախով, եղեգնի դարակնեռվ (էտաժեր՝ աներ), իսկ դահլիճի մէջ տեղում դրւած էր մի նոր սիստեմի վետակ և մի սեղան, որի վրայ դասաւորւած էին խոշորացոց, հաւանգներ, ամանեներ և թիթեռներ քսակների մէջ: Ացեղելուների առաջադրած հարցերին ցուցահանդէսի կառավարիչ պ. Սունդուկիանցը ուրախութեամբ բացադրութիւն էր տալիս. նրան օգնում էին տեղական երիտասարդները, զլիաւորապէս սերմագործները, Յանկացողներին խոշորացոցի տակ ցուց էր տալիս առողջ և հիւանդ թիթեռները: Առաւել հետաքրքրութիւն էր ներկալացնում նոր սիստեմի վետակը: Դրանցից պ. Սունդուկիանցի չնորմիւ այս տարի շատ տարածւեց թէ Ագուլիսում և Ցզնակում ներկալ էր ցուցահանդէսին և Օրդուրաթի պ. պրիստաւը, որը միմնուն ժամանսակ նախագահ էր ցուցահանդէսին. եկել էին Օրդուրաթից նոյնպէս մի քանի զինուորականներ իրենց կանանցով և երեխաններով: Հասարակութիւն

քիչ կար, գլխաւորապէս նրա համար, որ այդ օրը շատերը գնացել էին հարևան գիւղը մի հարուստի նշանդրէքի. Ացելողների թւումն էին և մի քանի թուրքեր և ալդ նրանք էին, որոնք եղել են քաղաքներում. Յուցահանդէսը տեսեց մի օր: Եթէ օրը և տեղը նպաստաւոր լինէին: Կարգագրիչը իր նպատակին հասած կարող էր լինել, իսկ այժմ հասաւ մասամբ, թէն նա ոչ մի ջանք չեր ինձեւ չաջողութեան համար: Բոլոր ներկալացրած բռոժները ուղարկւելու են Թիֆլիս քննութեան: Լաւերի համար նշանակւած են պարզեներ: Մասնաւոր պահածներից աչքի էին Ընկնում հետեւալ տիկինները. Սովիա և Լուսաբեր Արեանցիներինը, Եղիսաբէթ Մալեանցինը և Անոա Թաղէսսեանցինը»:

**ԱՅՍՈՐԻՆԵՐԸ ՈՒՂՂԱՓԱԾԻ:** Ուրմիաի ալսօրիների եպիկոպոս Մար-Յոնաշ'ն, Պետերբուրգում ուսաց ուղղափառութիւն ընդունելուց իւտոյ՝ եկաւ Թիֆլիս, ուր կատարեց մօտ 800 ալսօրիների ուղղափառութիւն ընդունելը Վրաստանի էքզարխ արքեպ. Ֆլաւիանի ձեռքով, ներկալութեամբ Մար Յոնա եպիսկոպոսի:

**ՈՒՐՄԻԱՅԻ ԱՅՍՈՐԻՆԵՐԸ:** Ուրմիա է ուղնորւում չուլիսի վերջը ուղղափառ առաքելութիւն, գլխաւորութեամբ ուսաց Սրբ. Սինոդի նշանակած Ֆէօփիլակտ վարդապետի, Ուրմիաի ալսօրիներին ուղղափառութեան հետ միացնելու համար: Առաքելութեան հետ գնում է նաև Մար-Յոնա՛ն: Հուլիսի 29-ին առաքելութիւնը ճանապարհ ընկաւ Թիֆլիսից:

**ՄՈՍԿՎԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ տնտեսական խորհրդի տպագրած հաշվից,** որ ուղարկած է մեզ, երեսում է, որ եկեղեցիները ունեցել են մուտք 18.277 ռ. 84 կ., ծախս՝ 14.935 ռ. 76 կոպ.: Մուտքը գուացած է հետեւալ գուածներից: 1) մոմից, պատէրով եղած լուսավառութիւնից, մկրտութեան, պահկների, թաղումների և հոգեհանգիստների համար տուրքերից, նույներից, գանձանկադրամից և մոմի մնանքութեան վաճառումից 3.702 ռ. 38 կ., 2, անշարժ կալածքներից 12.903 ռ. 51 կ., 3, տոկոսաբեր թղթերի տոկոսներ 1.218 ռ. 50 կ., 4, փողի տոկոսներից 122 ռ. 62 կ., 5, այլ մուտքեր 330 ռ.:

Մոսկվայի եկեղեցիներն են—Ս. Խաչ, Քաղաքի մէջ, և Համբարձ-ման, գերեզմանատանը:

Ծախսի խոշորագուն չողւածներից էիշենք. ոռնիկներ՝ աւագ քահանացին 950 ռ. (որից 150 ռ. փալտի համար). քահանացին 1550 ռ. (որից 150 ռ. վառելափալտի և 950 ռ. բնակարանի). աւագ սարկաւագին 552 ռ. (որից 132 ռ. վառելափալտի). տիրացուի պաշտօնակատարին 96 ռ., երգչին 600 ռ., հոգեորականութեան տրւած են տոկոսներ այն նպատակով նորած գումարներից

445 ռ. 42 կ., կենսաթոշակ աւագ քահանաց Սուրենեանցի ալրիին 300 ռ., եկեղեցապատկան տների վճարումներ 2.592 ռ. 8 կոպ. (որից 1400 ռ. Մոսկվակի Քաղաքային Վարկի Ընկերութեան, մուացածը քաղաքային և պետական տուրքեր), առողջարարութեան ընկերութեանը անմաքրութիւնները դուրս կրելու համար 1.150 ռ., 4 դրամապաններին 475 ռ. և 2 զիշերաց պահապաններին 48 ռ. և 1 ցերեկւաց պահապանին 36 ռ. եկեղեցու պահապանին 120 ռ. ցերեկւաց պահապանին և 18 ռ., տների և բնակարանների նորոգման համար 895 ռ., ջրի համար 294 ռ. 50 կ., ձիւն դուրս կրելու համար 280 ռ. (և տանիքներից ձիւնը վար թափելու համար 16 ռ. 50 կ.), դիւնական ծախքեր 103 ռ. 82 կ. (և պոստի ծախքեր 4 ռ. 96 կ.), տների ապահովացման 177 ռ. 52 կ., գերեզմանատան մակարդակը (պլան) հանելուն 400 ռ., օժանդակութիւն աշակերտեաններին 200 ռ., գաղթական 10 ընտանիքներին և այլ անձերի 121 ռ. 40 կ. Մացածը աւելի մանր ծախքեր են.

Է ՅՈՊԱՐԴԻԻ ՀԱՐԻՄԱՄՄԵԱԿ, Յունիսի 29-ին (ն. տ.) լրացաւ 100 տարին կում Զիակոս Լէօպարդիի ծննդեան օրից, Լէօպարդին Խոալիակի ամենամեծ բանաստեղծներիցն է. Դանտէից չետու (ծն. 1265, † 1321) նորա անունը ամենահոչչակաւորն է խոալական բանաստեղծներից. Ծնեց Ռէկանատի փոքրիկ քաղաքում, 16 տարեկանում նա ինքնուս կերպով զիտէր լատիներէն, լունարէն, Փրանսերէն, խոպաներէն, անգլիերէն, գերմաներէն և երրաքիրէն, թարգմանում էր և բացատրութիւններ գրում երկրորդ գարի հուսորների բնագրերին, զառական գրողների կենսագրութիւններ էր կազմում և այլ աչսպիսի աշխատութիւնների և ուսումնասիրութիւնների ձեռնարկուն, որոնք տպելով Միլանի ամսագրերում, իրենց վրա չատ գիտնականների ուշքը գրաւեցին. զոցա մէջ Պիետրո Ջիորդանի (գիտնական և քաղաքական գործիչ) բարեկամութիւնը ահագին ազգեցութիւն արաւ Լէօպարդիի չետաղաւ զարգացման վրաւ. Հայրը պահպանողական և կղերական էր, հակառակ «Նոր Խոալիակի» կուսակցութեան, կառակածու, տանը բռնակալ. Ջիորդանիի չորդորներով երիտասարդ Լէօպարդին, դարուս 20-ական թւականներին, ուշադիր եղաւ դէպի Խոալավ սոսորացած գրութիւնը. բռնկեց նորա մէջ հայրենասիրութիւնը, և նա գրում է մի շարք խորը, զգացւած ոտանաւորներ, ուր կոչ է անում կռւել օտարների (Աւստրիակի) լուծի դէմ. Քայլ շարժման անաջողութիւնները, ինտրիգները և նէապոլսեցոց դաւաճանութիւնը հիասթափեցնում են նորան, և Լէօպարդին այլ ևո զադարում է հաւատալ ազատութեան կարելիութեանը, հեռանում է քաղաքական գործունէութիւնից և ամբողջապէս նորւում է գրա-

կանութեան և Փիլոսօֆալութեան, 1822-ին նա, հօր համաձայնութեամբ, գնաց Հռոմ. հայրը լուսով էր որ նորան իւր ազգականներն ու բարեկամները կը համոզեն հոգեորական ասպարէղը մըտնել, որը այն ժամանակ դէպի պատիւ ու հարսութիւն էր տանում. Սակայն որդին ոչ ալդ կամեցաւ և ոչ էլ ալ, զբաղմունք գտաւ, չնայած նորա նոր բարեկամների՝ հոչակաւոր գերմանացի գիտնականների՝ Նիբուրի և Բունզէնի աշխատութիւններին. Հինգ ամսից Լէօպարդին վերադարձաւ հալրենի տունը, ուր սկսեց պատրաստել իւր ոտանաւորների առաջին ժողովածուն, իսկ 1825-ին ստանձնեց Ցիցերոնի թարգմանութիւնը բացատրական ծանօթութիւններով կատարելը, հրատարակիչ Ստելլակի առաջարկով, և ալդ առիթ տևեց 1825-26 թ. ճմեռը Բոլոնիում անցկացնել Բացի ալդ նա սկսեց Պետրարքի երկերի նոր հրատարակութիւնը, իւր ծանօթութիւններով. Ալդ ժամանակ նա հրատարակեց իւր դիլովածուն՝ Operette morale, որի համար Կրիտիկա Սէն-Բէօվը, խորը և դառն հեգնութեան կողմից՝ Լէօպարդին գնում է Լուկիանոսի, Սւիֆտի և Վոլտէրի շարքում. 1826-ին վերադառնալով հալրենի տունը՝ նորա առողջութիւնը վատթարացաւ. և ցաւերի վրայ աւելցաւ աչքերի բորբոքումը. նա ստիպւց անգործ մնալ, և ալդ նոյնպէս ազգեց նորա տրամադրութեան վրայ, Բարեկամները մի գումար ժողովեցին, որ նա կարողանաւ ամսագրական առօրեալ աշխատութիւնները թողնել և Ֆլորենցիակում ապրել. բայց՝ ալդ հանգըստութիւնը կարծ տեսեց. 1831-ին Աւստրիան ճնշեց լեզափոխական փորձերը, և բանաստեղծի տոսկանական բարեկամների շրջանը ցրեց, և Լէօպարդին մնաց միանակ ու աղքատ. հայրը չէր օդնում. Ալդ ժամանակ նորան ցաւակից կղան երիտասարդ գիտնական Անտոնիօ Ռանիէրի և ոորա քոչի Պաօլինա. Ռանիէրին եղաւ նորա քնչքոչ բարեկամը և հոգատարը. չորս տարի՝ սա տեղափոխեց նորան տեղից-տեղ՝ նալած բանաստեղծի առողջական պահանջներին. 1837 թ. լուլուի 14-ին նա վախճանւեց, ճաշի նստած ժամանակ իրեն չանկարծ վատ զգալուց և ննջարանը փոխադրւելուց չետուի—Նորա տաղանդը շատ կանխահաս էր. դեռ 22 տարեկան հասակում մի գերմանական ակադեմիա ընտրում է նորան իւր անդամ. Բայց նորա հոչակը բանաստեղծին է, ցաւակիր սկեպտիկականութիւն, դառն իրոնիա և արհամարանքը դէպի մարդկային ստորութիւնը և անկատալելութիւնը—ահա գծեր, որոնք ապա զարգանում են մինչև մի ամբողջ Փիլոսոփական սիստէմ, արտակարտած կենդանի, կրակով և սրամտութիւնով լի ուսանաւորներում, դիմուգներում, և պրոզալով:

ՀԱՅԱ. ՄԱՅՈՒԼԻ. Արեւելք լրագիրը, որ դադարեցրած էր հակական կոսորածների միջոցին 1895 թւին, նորից սկսեց հրատարակւել Կ. Պոլսում.

Անահիտ, հանդէս ամսեաչ ազգային, գրական, գեղարւեստական, Ալու անունով պ. Արշակ Չօպանեան, Մուրճի ընթերցողներին ծանօթ իւր «Ծաղկի» հանդէսի նախակին խմբագիրը (1895—96 թ.) յօդւածովը իբսէ-նի մասին, և ներկայ համարում տալուղ չօգւածովը Հայէէի մասին, նոգեմ-քիր ամսից պիտի հրատարակէ Պարիզում մի ամսագիր, ուր պիտի տեղ գտնեն՝ 1. «Աւսումնասիրութիւններ հայ ժողովուրդին պատմութեան», գրականութեան, գեղարւեստական, դիտական և ընկերական ընդհանուր ինդիրներու վրայ. 3. թարգմանութիւններ շատր հին և նոր մատե-նագրութեանց ամենէն կարեոր հրաշակերտներուն. 4. Վէպեր, վի-պահներ և բանաստեղծութիւններ ազգային կամ առասարակ արե-ւելեան կեանքէ. 5. Ոտանաւոր և արձակ գրութիւններ ազգային գրական ամեն սեռէ. 6. Հրատարակութիւն և ուսումնասիրութիւն հին և նոր հայ ժողովրդական բանաստեղծութեանց, աւանդութեանց և հեքեաթներու. Անահիտ պիտի ձգտի մասնաւորապէս ազգային գրա-կանութիւնը զարգացնել զուտ հայ տարրերով։

**ՏԱՐՍՅԱ** լունիս և լուլիս ամիսների համարներում տալում էին լիշողու-թիւններ թիֆլիսի բանտակին կեանքից, որ լանձնարարում ենք թէ միր ընթերցողների և թէ տեղական ոռուաց մամուլի ուշագրու-թեանը։

**ՀԱՆԴԻՍ ԱՄՍՈՒԹՅԱՆ**՝ Վիեննայի, Միխթարեանների օրդանը, մի առան-ձին «ճողով» ունի Շուրծի համար. «ինաւելով» մեզ՝ նա մի առանձին խնամքով լուսնեան է տալիս Մուրճի անունը նոյն իսկ իւր Զա-նազան լուրիերի մէջ (=«Ծաղկեփունջ»). Երեսի Մուրճի անունը «պրո-ֆանացիայի շմատնելու համար է արդ... Պէտք է ուրեմն գեռ չնոր-հակալ լինել թերթին՝ իւր ալդքան մեծ ուշագրութեան (թէ զսպու-մի) համար. Բայց արդէն Աստած մի արասցէ, որ Հանդէս Ամսո-րեան վճռի մէկ-մէկ նաև գրական մի բանով իւր հոգացողութիւնը մեզ համար ցոյց տալ. օրինակ՝ երբ նա վճռում է մեզ լորդորել ալս ու ալն բանն անելու և հարկէ զրդւած բարեկամական զգացմոնքից դէպի մեզ, որ ալն աստիճանի մեծ է, որ նա ալդ դէպքերում պատրաստ է մոռանալ նոյն իսկ իւր ամենամտերիմ... «Մշակուն» ին. լաւ խորհուրդները նա միան մեզ համար է պահում. Այսպէս է ահա որ իւր վերջին համարում (լուլիս) Հ. Ամս. Մուրճին խորհուրդ է տալիս ինչ կաչչկաչ ուռեմբէն գրւած հայերի լեզւի, պատմութեան և ալլն մասին՝ բոլորն էլ լիս-կատար կերպով թարգմանել. ուրեմն որպէս պիտի կարծել, Ք. Պատկանեանի բոլոր աշխատութիւնները, (հատորներ...) կմինի բոլոր աշխատութիւնները, (հատորներ...) Խալաթեանցինը, (որի

հէնց մի աշխատութիւնը՝ Հայոց Եպոսը և Խորենացին մի շատ հաստ հատոր է), Նիկոլսկու աշխատութիւնները Մարքի գրւածները, Մսերեանցինը, և էլ ինչ դիտենք քանի-քանի ուրիշներինը, թէ անցեալից և թէ ապագալում հրատարակելիները լրակատար թարգմանութեամբ տպել Մուրճ'ում, Երեխ ինքն էլ զգալով որ դա մի ամսագրի համար ամի փոքրո ծանր կը լինէր, Հ. Ամս. մեզ այդ թարգմանչական աշխատանքին ընկերացնում է Էջմիածնի Անրաբառը Եւ ալուսենը, Երեխ, ի հաշիւ հրապարակամասնի, վէպերի, դիտական քննադատութեան և այլն և այլն, որոնց կարդալու համար Մխիթարեանները գրութիւնները գրութիւնները, Զէ որ դոքա «հայկական գիտութիւններ» չեն!... Եւ կամ այդ ամսենը պլատի կատարելի ի հաշիւ մի դրամագլխի, որ գուցէ ունին ՎՐԵՆՆԱՅԻ Մխիթարեանները, բայց որը միան իրենց համար հն պահում՝ մեծանողութեամբ մեղ թողնելով... ծախքերը, թողնենք «գուցէ» հերք. բայց սա հաստատ է, որ Հ. Անօրեայն ինքն ևս կարող էր օգտակը մեզ տւած խորհրդից՝ եթէ միան չանձն առնէր մի փոքրիկ բան—մի ոռւսադէտ հայ աշխատակից ունենաւ, որը կը թարգմանէր Հ. Ամսօրեալի համար մինչեւ... բեղարացնելը իրեն էլ, իւր ընթերցողներին էլ:

**ՄՇԱԿԻ ՔԱՂԱՔԱԳԵՑՆԵՐԸ.** Իւր մի առաջնորդողի մէջ Մշակը ալս միտքն է լաւտնում, որ երբ հրատարակեց ամերիկական-խսպանական պատերազմը, իբր թէ ԱԼՄԵՆՆԻ համար հարց էր՝ մի՞՛ տի անդին են կանքիների (ամերիկացոց) կողմից պատեսաց մի դաշտ նետերը... ում գէմ? խպանայի դէմ: (Համեմատէք Մշակ № 11c):

Զենք կարծում թէ, Մշակի բաղդաւոր ընթերցողներից գուրս, աշխարհքիս մէջ, ի բաց չառած նոյն խակ խսպանացիներին, ում և իցէ արտօնութիւն արւած լինի այնքան խելօք հարց լսած կամ կարդացած լինել:

Եւ առհասարակ Մշակը շատ խելօք հարցեր է տալիս, և նոյնքան էլ խելացի վճռում «իւր լարուցած» հարցերը. իւր ընթերցողներից պակաս բաղդաւոր չէ Մշակը ինքը. Մի ալլ լոդւածում էլ (առաջնորդող!) նա ալս սրամիտ միտքն է լաւտնում, որ եթէ Ցունաստանը 7½, միլիոն ոռութիւ փող ունենար (իբր թէ ալդքան էլ չունէր); նա կը լազմէր Թիւրքիալին, էլ դորանից հեշտ բան?!

**ԲԱԶՄԱՎԱՐՈՒՅԻ** սկսում է զառնալ մի վայր ոռւսահակ անկոչ գրողների. երեկու միան մէկն էր—Գ. Բալասեանց—մի զրական միստիֆիկատոր. (տես ներքեւ էջ 920). ալժմ նոքա երեքն են, որովհետև առաջնին աւելացել են ոմն Տ. Մ. և ոմն Հ. Ա. բարուրեանց: Մարդ մնում է զարմացած, թէ այդ որտեղից են գուրս պրծուում ալդպիսի պղողներու ու «լիտերատորներ» և մանաւանդ թէ ալդ ինչպէս աւելի քան լիտունամեակ

թերթի խմբագրութիւն աճնքան դեռ մանուկ է, որ կարծես մի առանձին սիրով հիւրցնկալում է ալզափսի զրիչներ, որ աւելի լաւ կ'լինէր ասել՝ «գրչակոթեր», Մի ծայն կովկասից»—ալզպէս է ընդհանուր վերնագիրը այն չօղևածների, որ մատակարարում է Բազմավիշտին ալզ գրչակոթերից մէկը, Ալզ ինչ ձայն է Կովկասից, ընթերցողը դեռ ենթաղրում է թէ դա ինչ որ մի մեծ աղէտի մասին է և կովկասեցիք օգնութիւն են ինդրում, Բայց դուրս է գալիս՝ մի տեղեկութիւն Թիֆլիսի «Հժամանակին գրադարանի» մասին, այս անդամ էլ (ըունիսի տետր) նուն վերնագրի տակ՝ մի տեղեկութիւն Թիֆլիսի ինչ-որ «Փողովրդական գրադարանի» մասին (ուղում է ասել «Հասարակաց գրադարան»)։ Այս ալզ ամէնը գրւած կատարելապէս տուտուցավարի: «Ամբողջ գրադարանը, ասում է ալզ պարոն գրչակոթը, ունի 18.220 գիրք կամ 33.023 հատոր, Մեծ մասը կազմում են Գրանսերէնը և ապա հայերէնը, թւով 537 գիրք» Արիք ու հասկացէք, թէ ալզ ինչպէս հայերէն 537 գիրքը կարող են ալզքան պատւառը (մեծ մասը!) տեղ բռնել մի գրադարանում, ուր 33.023 հատոր գիրք կալ... Մարդը կամեցիլ է ազգասիրութիւն» անել! Յօդւածի մի ալ տեղում գրքերը զասաւորւած են ըստ լեզուների այս կերպ. 1. Հայերէն (առաջին տեղ!), 2. Փրանսերէն. 3. Գերմաներէն. 4. Յունարէն. 5. Ռուսներէն (վերջապէս... հինգերորդ տեղ). 6. Վրացերէն. 7. Տաճկերէն, ևս այլնու Մի երրորդ տեղ ազգասիրութիւնը» ստիպում է ասել ալսպիսի բան. «Այստեղց կարելի է եղբակացնել, որ կրկին խեղճ հայը աւելի մտաւոր պաշար կարող է ստանալ (գրադարանի գրքերից), յայտնի վնելով նրան բոլոր լեզուները, քանի ուսարը, որ բացի իր լեզուից՝ ոչ մի լեզու չգիտէ»...

Թէ ինչ դասակարգից է Բազմավիշտի ալզ նորաձով «գրչակոթը», չզիտենք, զուցէ ասիական դուլգար է, զոնէ ալսպէս է տեղեկացնում նաև Թիֆլիսի Հասարամիաց Գրադարանի ընթերցարանում զրած սեղանի մասին, այս էլ պիտի ասեմ՝ որ սեղանի երկարութիւնը ուռւսական 2 սածէն է, կամ 6 արշին, այն է՝ եթէ երեք միջահասակ մարդիկ ծգւեն ալզ սեղանի վրայ, կը պակասի միայն կէս մարդու մարմինը. ուղիղ՝ եկեղեցում գտնւած ննջեցեալների սեղանի նման է»։ Եւ ապա՝ «Ալզ սեղանի վրայ գտնւում է մի քանի թանաքաման և մի քանի գրչակոթներ, փառաւորապէս հին և մաշւած գրիչներով»...

Եւ բոլոր դասողութիւններն էլ ալզ կարգի ու տեսակի!

Բազմավիշտի մի երկրորդ ուսուահայ աշխատակցի մասին պարզ քաղւածներով անկարելի է գաղափար տալ. բաւական է արդէն «Գ. Բալասսանց» ստորագրութիւնը. Միայն թէ նա, բացի գողացած ու կեղծած ուսանաւորներից, շատ ամիսներից ի վեր տպու և է ալդտեղ

իւր «ճանապարհորդական չիշտղութիւնները Պարսկաստանում», որ սկսւած է, զեռ անցեալ ապարանից, թերթի լունիսի համարում սա հազիւ միան ռուսաց սահմանն է անցնում ու իւր անցաղիրը պարսիկ պաշտօնեալից վաւերացնել տալիս կիսացնորւած մարդու գրւածքի տպաւորութիւն է անում:

Իազմավէպի մի երլորդ ռուսակա աշխատակիցը պատով կարող է տեղ բռնել լիշեալ երկուսի շարքում: Նա խօսում է հայ աշխարհաբար լեզվի մասին Ծուսաստանում: Մեր «Անգլական դրացներից» իտող Մուրճի 1897 թ. № 2 և № 7-8-ում, դա մինոր թեմա է դառնել մի շարք գրողների համար: Խնչու չդրի արդ մասին նաև ոմն «Տ. Մ.» և ահա գրում է: «Գաւառներում հայ ժողովուրդը գրեթէ բոլորովին ազատ է ռուս լեզվի ազդեցութիւնից»: Իբր թէ՝ ով հայ գրողներ, թողեք ռուսներն մտածելու և «օտար բառեր գործածելու» սովորութիւնը, դաս առեք հայ ժողովրդից, ձիշդ է, միան Քաղմավէպ'ի Տ. Մ.-ն չէ, որ կարող են ազագիսի անհեղեղութիւններ ասել բոլորովին մոռանալով, որ հայ բարբառները կատարելապէս ծծւած են թրքական (օտար!): Ենոյն իսկ ռուսական ոճերով ու բառերով: Թրքականի նկատմամբ այդ լալոնի է ամենքին, ուրեմն նաև Տ. Մ.-ին: Բայց միան երազական ցնորժների մէջ ապրողների համար կարող է դիւս երևալ, եթէ ասենք որ մեր հայ ժողովուրդը նոյն պէս ենթարկւել է արդէն ռուսաց լեզվին, որպէս և թուրքականին, և որ միմիալն այնքան բամբառած գրտկան աշխարհաբար լեզուն է, որ հայ ժողովրդին հայերէն բառեր է մատակարարում: Ո՞ր լեզվի եթէ ոչ ռուսներէնի ազդեցութեան չնորհիւ է որ հայ ժողովրդը գիւղերում և թէ քաղաքներում գրծ է ածում աչս բառերը, որոնց հայերէնը նա նոյն իսկ չգիտէ էլ, պոտենց շկաֆ, կրաւաթ, սոտլ սկամի, չոտք, փակեթ, սպիչկա, ապտեկ, կարանդաշ, համչչիկ, գրոդ, մեշոկ, պաղոց, կարորկա, սուդ, և ազն և ազն և ազն: և միթէ գրական հայերէնի աղղեցութիւնից հեռու կանդնածները չեն որ, բարբառով խօսելիս ասում են՝ գարշիցա (մանանէլո), շեապ (գըլխարկ), փակեթ (ծրաբ), փեշատ (կնիք), պարաշնին (խնդիրք), գաստինիցա (հիւրանոց), ոլէսար (փականագործ), տոկար (ճախարակագործ) ուլիցա (փողոց), կաղեթ (լրագիր), միրաւոչ սուղեա (հաշտարար գատառոր, սուղի չլէն (գատարանի անդամ), պրոկուրոր (ղատախաղ), ղլասնը (իրաւասու), սոսանցիս (կալարան), զւանոկը տոխն (զանգը տոխն), մելեզնի դարող (երկաթուղի), և ազն և ազն և ազն, անթիւ-անհամար բառերու ոճեր?

«ՖԱՐԾ Ա.Ի.ԱԾ» Մի Գլուխու: Մի սերունդ կարելի է զանազան կերպ փճացնել, բայց միշտ մի հիմնական գիծ ընդհանուր կ'լինի աչտ բո-

վոր՝ կերպերին, — դա՝ մեծամտութիւնն է և մեծամտութեան ոգին ներշնչելը հետևողներին։ Եւ միշտ այդ գծերիւ տէրերը կը լինեն սուտ-մարգարէներ։ Դոքա ամեն բանի մէջ ծուռ են՝ և գիտութեան մէջ, և պարզ դատողութեան մէջ, և հասարակական հոսանքների ըմբռնման մէջ, և իրենց քննազատական սիստեմների մէջ, — բայց և նոքա միշտ հասարակութեան առջե կ'գան «աալլոմբռով», որը կիսակիրթների և մանաւանդ բարեմիտ միամիտների կողմից լաճախ «հեղինակութեան» տեղ է ընդունւում։ Դոցա տիպարներկալացուցիչը մեր մէջ կարող է համարել պ. Վ.ալ. Լունկեիչը, որի անունը ծանօթ է մեր ընթերցողներին մեր թերթի մանաւանդ 1897 թւականի համարներից։ Մենք միշտ զարմացել ենք թէ այդ ինչպէս է պատահել որ այդ մարդը դեռ մինչն օրս պաշտօնապէս չի անցել Մշակի խմբագիրների շարքը։

Բայց անցնենք։ Եւ նախ՝ մի անեկդոտ։ Մի տարի չկայ, ինչ դիմեազիական կուրսը աւարտած մի ձգոտող օրիորդ դիմում է մեզ խորհրդի՝ բարձրագուն ուսման համար համալսարանի ընտրութեան մասին։ Մեր պատասխանը նորան զեռ վերջնականապէս չի գոհացնում։ «Զարմանալի է! պ. Լունկեիչին ենք դիմում, նա ասում է թերլինի համալսարանի մասին թէ արթէ արգեօք կօշկակարների մօտ (բա սառաջնորդութեան) ուսումն գնալ, իսկ դուք...» Մեզ համար պարզ էր, որ Լունկեիչները ոչ մի բանից այնքան վախ չունին որքան գերմանական գիտութիւնից և այն բարձր մարդկացին հրազանքներից, որ կարող է ծնեցնել զերմանական համալսարանական մթնուրողը։ Լունկեիչներին հարկաւոր է իրացումն մի քանի տափակ ֆրազների, մի քանի ֆորմուլների, որոնք ընդունւած են Լունկեիչների ձանաշած խմբերում։ այդ մի քանի ֆրազները ու ֆորմուլները պիտի կազմնեն նոր սերնդի համար և գիտութիւն, և' կրթութիւն և' հասարակական իդէալներ, և գործունէութեան ծրագիր...

Հենց մի ազդպիսի ոգով պ. Լունկեւիչը զետեղել էր իւր նեղ ուղեղի արտադրութիւն-ջոդւածներից մէկը Նովոս Արազընիե-լում, ուր նա իւր համար շատ փափուկ, ընդարձակ և հիւրընկալ անկիւն է զըտնում։ Զարմանալին այն է, որ երազանքների բայց և գիտութեան երկրի մասին ազդպիսի կարծիք չափուողը ջատագովում է «ընդհանուր կըր.թութիւնը» թէև արդէն իբր հակառակ «մասնագիտական ուսումներին։ և նա այդ անումէ մի ազնալիսի «կօշկակարական» նեղաչեացութեամբ, որ վրդովեցրել է նոյն իսկ նոյն Նովոս Արազընիւնից տաղանդաւոր աշխատակից ։ Տխորժեւակուն, որը Լունկեւիչի անհեղութիւնների դէմ հարկ է համարել հրապարակաւ բողոքել (առև թերթի 22 լուլիսի համարը)։ Մենք գերադասում ենք պ. Տխորժեւակու կարծիքը իւր

համաշխատակցի մաս ին առաջ բերել հենց բնադրի խօսքերով, ամեն նախադասութեան թարգ մանութիւնը փակագծերի մէջ դնելով)։

„И когда видишь, какъ люди, (аѣніарѣ Լունկециչи վրաѣ) искренно желающіе добра молодежи, не понимаютъ ее и своимъ постыдными кличками, своимъ невѣрнымъ освѣщеніемъ могутъ сбить съ толку общественную мысль, становится вмѣстѣ обидно и какъ то тревожно на душѣ“. (Եւ երբ տեսնում ես, որ (Լունկեциչի պէս) մարդիկ, անկեղծաբար բարին ցանկալով երի փասարդութեան, չն հասկանում սորան և իրենց շուտափոլիթ մականուններով, իրենց սխալ լուսաբանութիւնով կարող են հասարակաց միտքը շեղել (այսինքն ուզում է ասել՝ մարդկանց հանել խելքից), ապա ալդ թէ վիրաւորում է և թէ մի տեսակ վրդովեցնում մեր հոգին):

Բայց ահա և գեղեցկագոյնը, որ և կազմում է պ. Տիորժեւակու անկեղծութեամբ բուրող լոգւածի վերջաբանը.

„Не могу, однако, удержаться, чтобы не выразить обшаго недоумѣнія, вызванного во мнѣ статьей г. Лункевича: (Չեմ կարող, սական, ինձ զսպել, որ չըալտնեմ մի ընդհանուր վըրդովմունք, որ չառաջացրեց իմ մէջ պ. Լունկեւիչի լոգւածը). Страннымъ кажется мнѣ негодованіе автора на то, что „заграницей почти каждая лабораторія издаетъ свой специальный органъ“... (Օտարութիւն է թւում ինձ երբ հեղինակը—Լունկեւիչ—զարդանում է ան բանի վրաѣ, որ «արտասահմանում գրեթէ ամեն մի լաբորատորիա հրատարակում է իւր լատուկ թերթը»)... Передъ глазами Лункевича словно не живая жизнь, а двѣ-три грубо сдѣланыхъ маріонетки съ ходячими ярлычками: праведникъ „въ кельѣ пѣдъ елью“ специалистъ „съ пергаментнымъ лицомъ“, двадцатилѣтній „мечтатель“ и т. д. (Պ. Լունկեւիչի աշքերի առջև կարծես կենդանի կեանքը չէ, ապ երկու-երեք կոպիտ շնած պաճումապատանքներ, որոնք խօսում են գործում են զսպանակ-մեքենա-լով և կրում են սովորական երալակներ...). Намъ кажется, что такими пріемами трудно прибавить что-нибудь „къ характеристикѣ современныхъ настроеній“, такихъ запуганныхъ и сложныхъ. («Մեզ թւում է, որ ազգիսի եղանակներով դժւար է որ և իցէ բան աւելցնել անքան կնճռուու ու բարդ աժամանակից ուզգութիւնների բնորոշման» համար—որպիսի վերհսագիր, աւելցնենք մեր կողմից, Լունկեւիչն էր տւել իւր լոգւածին):

Ե՛լ աւելի խիստ խօսքերով պ. Տիորժեւակի՞ն չէր կարող իւր արհամարանքը (այտնել դէպի մի մեծամիտը, որը ֆրազները գաղա

փարների տեղ է ծախում, մարիոնէտները՝ կենդանի մարդոց տեղ ներկալացնում...

Վերջացնենք մեր խօսքը նոյն Տիորժեւակու խօսքերով պ. Լունկեւիչի հասցէին. Հայտնութեան բարեւագրեալ տարածւած լինելով է միայն որ կարելի է բացատրել թէ ինչու մեղնում անքան բազմաթիւ են ուրիշների մտքերով, մողաչին զաղափարներով, ուրիշների չմարած ու խակ իդէալներով «Փարշ արած զլուխներ»):

Աղջ ափարշ արած»—(իրատապած) գլուխների հետ տառը տարի է ինչ զոր ունի նաև Մուրճը...

ՄԻ ԲԱՑՍՌՈՒԹԻՒՆ: Մենք կարծում էինք մի լաւ զործ կատարած լինել՝ Մուրճի անցեալ համարում խօսելով այն հականառութեան մասին, որ ծագել էր մանաւանդ կաղղւանի հասարակութեանը հետաքրքրող մի գատաստանական գործի առիթով պ. Մեսրոպ Ղաղարսանի և Ա. Սահրատեանի միջև, որին բժ. հաճկածեանը մի տարի առաջ վստահացել էր նույներով հաւաքած 300 ուուրլին տաճկահայ փախտականներին բաշխելու համար. Տեղեկացած լինելով իբր թէ պ. Մեսրոպ Ղաղարեան դատարանում խոստովանել է որ Սահրատեանը ճշգութեամբ բաշխել է գումարը, և տեսնելով որ այդ խոնտովանութիւնը չկաէ տպած այն թերթում (Մշակում), ուր մի տարի տառաջ Սահրատեանը անւանւած էր «անվտանելի», որի առիթով վերջինու դատաստանական պատասխանառութեան էր ենթարկել պ. Ղաղարեանցին, —մենք, անցեալ ամիս, հրաւիրել էինք պ. Ղաղարեանցին հրապարական բացադրութիւն տալու, թէ արդեօք ճշմարիտ է թէ ոչ նորան վերագրած խոստովանութիւնը, որ սական Մշակ'ում չտպւեց. Մեր աղջ պահանջը նամանաւանդ տեղին էր, որ ոչ միայն մեղ էին հաղորդել այն, ինչ վերագրւում էր պ. Ղաղարեանին, այլ և Ա. Սահրատեանը ինքը լրադրութեան մէջ նոյնը պնդեց:

Պր. Ա. Ղաղարեան ալժմ ուղարկել է մեղ իւր բացատրութիւնը. Նա հերքում է Սահրատեանի կողմից իրեն վերագրածը. «Փակութիւնը, գրում է մեզ պ. Ղաղարեանը, սա է, որ նախ քանդատն սկսելը, պ. Յովհաննիսեան (պ. Ղաղարեանի փաստաբանը) ինձ լաւանեց, թէ Սահրատեանցը ցանկութիւն է լաւտնում ինձ հետ հաշտուելու, եթէ ես զրաւոր կերպով խօսք տամ նրան Մշակ'ում տպագրելու, թէ Սահրատեանը վստահելի է և ճշմարտութեամբ է կատարել իրեն լանձնւած զործը. սակայն ես չհամաձանեցի այս

համաձայնեցի միայն տպել Մշակ՛ում, որ ես երբէք գործ չեմ ունեցել Ա. Սահրատեանի հետ և չեմ էլ ցանկացել վիրաւորել նրան. այլ ես գործ եմ ունեցել բժ. Կաճկաձեանի հետ, որը չարիքի բռնպատճառն է եղել. իսկ Սահրատեանը գործի հետ կապ ունենալով ակամակից մէջ է ընկելու:

Սորանով անցու շո հերթում է Սահրատեանի հրապարակապէս պնդածը, բայց այդ չի ազատում մեղ այս հարցադրութիւններից. 1. Ինչպէս կարող է Ալբը մի ուրիշից՝ Բէն'ից՝ պահանջել որ սա վկայութիւն տաէ թէ Ալբը ախտանելի է և շտակութեամբ է կատարել իրեն շանձնած գործը» Ազդպիսի բացարձակ վկայութիւններ մասնաւոր և կողմնակի անձերից պահանջելը բնաւ չի կարելի, և եթէ Բէնը ալդպիսի վկայութիւն տալու էլ լինի—նշանակութիւնից դուրկ միամիտ գործ կը լինի. 2. Ինչպէս կարելի է, որ Բէնը անւանի Ալբին աանվստահելի», բայց լետու գաչ ու լաւոնի թէ աեա, Բէնու Ալբին չեմ ցանկացել վիրաւորել և երբէք էլ գործ չեմ ունեցել նորա հետո. 3. Ինչու Մշակ՛ի հաշվետութեան մէջ բժ. Կաճկաձեանը անւանած էր նախագահ Բարեգ. ընկ. Կաղզւանի ճիշդի վարչութեան, քանի որ հէնց ամբողջ կոխւը պ. Ղազարեանի ու Կաճկաձեանի մէջ այն հանգամանքից էր ծագել, որ Ղազարեանը, չնայած որ Կաճկաձեանը նախագահ չէր, բայց նորա ստացած 300 ուուրլին Բարեգ. ընկերութեան ճիշդին նւիրած փող է համարում, (և ըստ մեզ՝ արդարացի կերպով, որպէս համոզում են մեղ պ. Ղազարեանի նամակի՝ մանրամասնութիւնները), իսկ Կաճկաձեանը՝ իւրաննական կարգադրաւթեան ներքու դրւած գումար է համարում.—Այս երրորդ հարցի պատասխանը այն է, որ պէտք է նաև դատարանների նկատմամբ խաղեր խաղալ—ըստ Մշակ՛ի շկոլակի:

**ԳԱՐԶԵԱԼ ՄԻՍՏԻՖԻԿԱՑՈՒՅԻ:** Մեր ժամանակակից գրականութեան մէջ մի անգուգական խաբերայ՝ Մշակ՛ում ու Բազմամիշպ՛ում գրող և այդ թերթերից հովանաւորող Գրիգոր Բալասեանից մենք ահա ի զուրելիու ամիս սպասեցինք թէ ինչպէս է նա իրագործելու Մշակ՛ում մեր նկատմամբ արած սպասնալիքը, իւրապատասխանը» Մուրճ՛ում տպագրելու համար. Որպէս զի մի վերջին դաս տւած լինենք գրականութիւնը և մամուլը խաբերայական շահատակութիւնների ասպարէզ դարձնողին, այժմ պիտի լաւոնենք, որ այդ նոյն անձը կամենում է եղել նաև Մուրճ՛ը իւր համար սպարէզ ընտրել Բոլորով վին անսպասելի կերպով մեր խմբագրական արխիւմ մէջ գտնեց մի նամակ ալդ անձից, դրւած Շուլավէրից, 28 օգոստ. 1889 թ., ուրեմն մօտ իննը տարի առաջ, որով նա, առաջարկելով մեղ իւր մի գըրւածքը, այլ և խոստանալով իւր այլ «աշխատութիւնները» ուղար-

կել, հաւատացնում էր մեզ միենոցն ժամանակ մի կատարելապէս անհարին բանում. Ահա այդ նամակից մի հատ տող.

«Ես թէպէտ «Հիւսիսափալը», «Մշակո», «Արձագանք», «Նոր-Դարո, մանկավարժական և մեր այժմեան պարբերական թերթերին աշխատակցել եմ զանազան կեղծանուններով»...

Դեռ մի կողմը թողնելով թէ այդ պարբերութիւնը ուղեղի խանգարման ինչ նշաններ է ցուց տալիս, բաւական է միայն ուշք դարձնել այս հանդամանքի վրա. Բալասեանցը «Իռուսոմ և Սալմանո-ի առիթով չպատճում էր թէ 1882 թւականին ինքը 16 տարեկան էր. բայց ահա 1889 թւականին (երբ ուրեմն 23 տարեկան էր) Մուրճի խմբագրութեանը նամակով ուղում էր հաւատացնել թէ ի միջի ապօց աշխատակցել է նաև Հիւսիսափալին, որը, ինչպէս լավո՞սի է, վերջնականապէս դադարել էր 1864-ին, ալսինքն այդ պարոնի լուս աշխարհք տեսնելուց զեռ մի-երկու տարի էլ առաջ...

Եւ այսպիսի միստիֆիկատորին զեռ շարունակում են «Բազմավիճում և Մշակում տեղ տալ...

### ՆԻՔԻՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ.

Առաքել Առաքեանի († յուլիսին, Շուշի) անունով Նուիրւած են հետեւալ գումարները. Գէորգեան ճեմարանին 1.000 ռ., Շուշաւ թիմական դպրոցին 1.000 ռ., նոյն դպրոցին կից ապաստանարան հիմնելու գոնդ կազմելու համար 2.000 ռ., Շուշաւ ռէալական դպրոցին 1.000 ռ., Բարեգ. ընկ. Շուշաւ ճիւղին 500 ռ., այլ և խոստացւած է Շուշաւ Ղազա՞նցեցոց եկեղեցու գմբէթի կիսատմեացած մասը լրացնել և Թամմիրեանցի ջրանցքից մի ճիւղ անցկացնել հանգուցեալի բնակած թաղը.

ԿՐԵՏԵՒ: ԺԱՄԱԿԱԿԱԽՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ, Յունիսի 24-ին (Հին տ.) Ֆրանսիակի, Ռուսիակի, Անգլիակի և Խոալիակի դեսպանները առանձին-առանձին չանձնեցին Բ. Դուան կարծ հաղորդագրութիւն Կրետէի ժամանակաւոր կառավարութեան մասին. Կզղին կառավարում է ինքնավար կերպով, Թիւրքիաէի (անւանական) գերիշխ անութեան ներքու. Եւրոպական ծովակալները մնում են Կրետէի ջրերում. Պրօէկտը, որ կազմել են մեծ պետութիւնները, ծովակալների ներկայութեամբ, ապա հաղորդւեց Կրետէի ժողովրդական ժողովին լուսարի 26-ին (Հ. տ.): Մովակալները պաշտօնապէս ճանաչեցին Ժողովի օրինականութիւնը: Բ. Դուանը բողոքեց՝ պետութիւններին դրած նոտարով, Խոալիան պատասխանեց թէ՝ «Որովհետեւ այլ ես անկարելի է թիւրքական կառավարութիւն մտցնել և որովհետեւ Բ. Դուան ու պետութիւնների միջն կարելի չեղաւ կզղու վերջնական կառավարութեան մասին համաձայնութեան գալ, — ուստի չորս պետութիւն-

ներին թւաց թէ ալդ ժամանակաւոր կառավարութիւնը բոպէի պահանջներին ամենից շատ բաւարարութիւն կը տալու—Թիւրքիան Կրետէսում ալժմ ունի 18.000 հոգի զօրք. բաց ծովակալները չալտնեցին որ պիտի Ընդդիմանան եթէ Թիւրքիան նոր զօրք զրկելու լինի Կրետէ. Չորս պետութիւնները չալտնեցին Բ. Դրան, որ հաւանութիւն հն տւել ծովակալների այդ չալտարարութեան. Կրետէի ծողովը միաձախն ընդունեց ժամանակաւոր կառավարութեան ծրագիրը և արաւ միաէն աննշան դիտողութիւններ:

ԹիւրքիԱ. Սուլթանը առաջարկ է արել Հռոմակ պապին՝ որ սորա մօտ Թիւրքական զեսպանատուն հիմնվի. Դորա հետեանքը ան կը լինէր, որ դորանով Թիւրքիան կ'ազատւէր Ֆրանսիակից, որը կաթոլիկների հովանաւոր պետութիւնն է Արևելքում. Պապը չընդունեց Թիւրքիայի առաջարկը.

— Ֆրանսիական կառավարութիւնը պահանջեց Թիւրքիայից հայկական կոտորածների ժամանակ ֆրանսահպատակներին հասցրած շուրջ 600.000 ֆրանկ վճարու. Սուլթանը մերժեց բաւարարութիւն տալ, իրեն պատասխանատու չհամարելով եղած անկարգութիւնների համար. Ֆրանսիակոն արտաքին գործերի մինիստրի թելադրւածն է համարւում «Թան» լրագրի մի խիստ յուրածը, որով լայտնուում է թէ, եթէ Բ. Դուռը իւր մալրաքաղաքի փողուների կարգի համար երաշխաւոր չի կամնուում լինել, ապա Սւրոպան կ'իմանակ ըստ այնմէ էլ վարւել Թիւրքիայի հետ. Ֆրանսիան իւր պահանջի չափով արգելք զրեց Օսմանեան բանկում Յունաստանից ստացոծ պատերազմական տուգանքի վրայ. Վնասի պահանջ ունին նաև Անդլիան, Ռուսիան և Խոալիան:

ՎԻՃԵԼՄ II. Գերմանիայի կախարը պատրաստում է հոկտեմբերին Պալեստինում լինել. Սուլթանը մեծ պատրաստութիւններ է տեսնուու գերմանացոց կալսեր փառաւոր ընդունելութեան համար. Ամեն ինչ լիկայում է, որ Գերմանիան վճռել է Թիւրքիայում գերիշխող զիրք բռնել ինչակէս ալդ արել են ներկալ դարում մանաւանդ Անդլիան և Խոալիան, իրբե մրցակիցներ:

ՖՐԱՆՍԻԱ. Բրիտոնի մինիստրութիւնը իւր առաջին յալտարարութիւնն արաւ ն. տոմ. 1 լույսի Պատգամատորների ծողովում, որը հաւանութիւն տւեց 316 ձախով ընդդէմ 230-ի.

ԻՏԱԼԻԱ. Նոր մինիստրութիւն. Մարքիզ Ռուողինի մինիստրութիւնը, որը Կրիստիի անկումից լիտով մշտապէս եղել է մինիստր նախագահ, հրաժարական տւեց. Նոր մինիստրութեան նախագահն է զեն. Պելլու. Թագաւորի ալդ ընտրութիւնը անկասկած թելադրւած է այն ապստամբութիւնով, որ տեղի ունեցաւ մալիսին Միլանում և երկրի

ալ տեղերում և որը ունէր սոցիալիստական բնաւորութիւն։ ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՈՏԱՄԲՈՒԹԻՒՆ, Զինաստանում կազմակերպութիւն է Նոր Զինաստանի կուսակցութիւն, որը ապստամբութիւն գլուխ քերեց կուան-Սի նահանգում, որը կանոն քաղաքն է։ Ապստամբութիւնը ս կուեց Խոն-Շինում և Լուն-Չուանում, ուստից ապստամբները ուղևոր ւեցին դէպի Վ.ու.-Զժու, լուլիսի 10—12 (ն. տ.) նոքա վերցրին իննը քտ-զաք, ջարդելով կալսերական զօրքերը, որոնք կորց բին շուրջ 1.500 մարդ, Ապստամբները լաւարարեցին, որ նոքա կու ում են մանդա-րինների (չինական պետական պաշտօնեանների) դէմ, որոնց է էմ ան-գօր է կալսերական կառավարութիւնը։ Ապստամբութեան պարա-գլուխն է Սուն-Յատ-Ցաէն անուն չինացին, որը եւրոպակիթ է։ Կանոնոնի բնակիչները համակրթութեասր են վերաբերւում դէպի ապստամբները և կարենոր անձեր ժողով կալացրին՝ ապստամբներին խրախուսել։ Մտազրութիւն կատ նոր կառավարութիւն հիմնել՝ բազո կացած եւրոպական գաղափարների տէր անձերից։ Սպատամբների գլուխը լալարարեց նոր իշխանական տոհմ՝ «Մեծ լառ աջաղիմու-թիւն» անունով։ Հայտնելով որ այժմ կալսերական տոհմը անզօր է մանդարինների դէմ կուելու համար և որ ազդ թուլութիւնից Զի-նաստանը ընկնում է եւրոպացինների ձեռքը։ Նոր առմ. 18 լուլիսի նորից ապստամբութիւն եղաւ։

Ազդ ապստամբութիւնը առաջմ արտաքուստ ձնշւեց։

ԵԱՊՈՆԻՒՅ. Նոր մինխտրութիւն. Առմս Խտօ՞ի մինխտրութեանը փոխարինեց կոմս Օկումաչի և Խտահակի՞ի մինխտրութիւնը, ինչպէս որ խոր-հուրդ էր տալիս կալսրին կոմս Խտօ՞ն։

ՀԱԻԱՅԻ ԿՊ.ԶԻՆ անցաւ. Հիւս. Ամերիկակի Միացեալ Նահանգների ձեռքը։ Ազդ կղզին ամենամեծն է Սանդելիչեան կղզիներից Խաղաղ ովկեա-նոսում (12.620 քառակա. կիլոմէտր), Ամերիկան մտադրութիւն ունի Հաւալի՞ի Հոնոլուրու քաղաքը դարձնել Խաղաղ ովկեանոսի ամենա-ամուր բիրդը։

ԶՈԼԱՅԻ ԳՈՒԾԸ. Մուրճի ներկայ համարում տպագրելով մինխտր կաւե-նեակի լաւարարութիւնը Դրէլֆուսի մասին՝ կարենոր է ծ անուցա-նել որ Զոլան հարկ համարեց ազդ ճառի դէմ ես բողոքելու, անդե-լով որ մինխտրի ճառում լիշւած երեք դոկումէնտներից իբր թէ երկուսը Դրէլֆուսին չեն վերաբերուա, իսկ մէկը՝ կեղծ է, Զոլան ալդ լալաննեց մի դրութեան մէջ, ուղղած մինխտր-նախագահ Բրի-սոնին։

Պիքաքը և Էստէրապին ձերբակալւեցին, մէկը՝ գաղտնի թըդ-թեր ալլոց (օրինակ, փաստաբան Լըբլուալին) հաղորդած լին ելու համար, իսկ Էստէրապին—կարդտպահութեան դէմ մեղանչած լ։

նելու համար։ Ասում են նուև որ էստէրհազին է Պիքարին «Ապերանցա» ստորագրութեամբ հեռագիրը քաշել էստէրհազինի հետ ձերբակալւեց նաև նորա սիրուհին՝ տիկին Պէջ իւր մօտ եղած նամակ-ներով։

**ՑՈՐԵՆԱՎԱԾԱՌ ԼէՅԹէՐ:** Ծերունի և խորամանկ Լէյթերի 30 տարեկանորդի Յովսէփ Լէյթէր, Ամերիկայի Չեկագո քաղաքում, անցեալ տարւակ նորեմբերից մի չանդուզն միտք լղացաւ, որին և հալրը հաւանութիւն տւեց, —ցորեն գնել ու ամբարել ամենասովալի քանակութեամբ, ու բարձրացնելով գները Ամերիկայում ու Եւրոպարում, մեծապէս շահւել Լէյթէրի գնումները իւր վրաչ զարձրին ամենախոչըցորենավաճառների ուշքը, որոնց մէջ նաև ամենաչափնի պ. Արմոր (Armoer), որից Լէյթէրի նորնապէս մեծ քանակով ցորեն էր գնում թէ կանխիկ և թէ վարկով։ Լէյթէրի լուսերը գների բարձրանալու մասին իրականացանու և ալդ հանգամանքը աւելի ևս ոչ տւեց երիտասարդի չանդգնութեանը, որը արդէն ամբարել էր ցորեն 125 միլիոն ֆրանկի։ Նա սկսեց վաստակել ցորենի թագաւորին անուն Սական կարծ եղաւ նորա ալդ սին փառքը. մրցակիցները մեծ քանակներով Եւրոպա թափեցին իրենց ունեցածները և ցորենի գինը մեծապէս կոտրեց. Լէյթէր, որը եթէ ճիշտ ժամանակին ծախէր՝ 25 միլիոն ֆրանկ շահ կարող էր ունենալ, նոր տոմարով լունիսի 13-ին սնանկացաւ։ Բայց պ. Արմոր անդութ չվերաբերեց դէպի իւր պարտապանը. մտածելով որ իւր մրցակցի լանդգնութիւնը լաւագոյն վիճակի էր արժանի, սորան դիւրութիւններ է տւել պարտքերը վճարելու։

**«ԲՈՒՐԳՈՅՑՆ»** Փրանսիական նաւը, Ամերիկայից գալիս՝ զարնւեց «Ակրոմարտիր» ամերիկական նաւին և խորտակւեց, ովկիանոսի մէջ խեղդելով 565 հոգու—Փրանսիացիք ու ամերիկացիք։

**ՇԻՔԵՐԸ:** Յուլիս ամսի մանաւանդ երկրորդ և երրորդ շաբաթները Թիֆլիսում եղան շատ մեծ շոքեր. Ռէօմիւրի ջերմաչափը մեր խմբ. սենեակում հասնում էր մինչև  $26^{\circ}/_2$ , իսկ 25-ից չէր իջնում, լուլսի 20-ից սկսած անձրենների պատճառով շոքերը կոտրւեցին և ջերմաչափը օրւակ ընթացքում ցրց է տալիս  $21^{\circ}/_2 - 24$  աստիճան։

† ԻՇԽԱՆ ՕՏՏՈ ՖՈՆ ԲԻՍՄԱՐԿԻ, իրականացնողը Գերմանական միութեան, կատարութեան նախկին կանցլէր, կոչւած Երկաթէ Կանցլէր, դարուս ամենատւժ՝ զ պետական անձը, գլխաւոր ստեղծողը ներկաէ քաղաքական չարաբերութիւնների Եւրոպայի ցամաքում, նախաձեռնողը տնտեսական ու սոցիալական օրդինադրութեան փոփոխման Գերմանիակում և Եւրոպարում, վախճանւեց լուլիսի 18 (0գոստոսի 30), Բիսմարկը ծնւած է ն. ա. ապրիլի 1-ին 1815 թւականի. վախճան-

ևց իւր 8 ։-երորդ տարեկան հասակում: Այդ արտասովոր խոչորութեան պետական անձի մասին Մուրճ'ը գալ համարում կը տազ առանձին լոգած:

## ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԲԵՐ

(Ուր թւական չկայ—ներկայ տարւանն է)

- 1) ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ, պատկերազարդ, Գիրք Գ. 1898—№ 1։ Թիֆլիս, տպ. Մ. Ռոտինեանցի. գինն է
- 2) ԾՈՅՑԻԿԵԱՆ, Ս. Մ.—Վեհ. Հայրիկը Բաքու—Բաքու, տպ. Արօր 2 ռ. (տարեկան 2 գիրք—3 ռ.), 15 կ.
- 3) ՊԵՏՐՈՍԵԱՆ, Յ.—Ազետիրական օղեգործութիւն: Հր. Թ. Հ. Հր. Ընկ.. Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոս-ցի. 40 կոպ.:
- 4) ՎԱՅԵԴԻՆՍԿԻ, Ա.Լ., պրոֆ. Ա. Պետերբ. համալս.—Խնչ պայմաններում կարելի է հաւատալ կեանքի խորհրդին: Թարգմ. Յովհ. Բարխուդարեան: Թիֆլ., տպ. Մն. Մարտ-ցի, գինը?—
- 5) ՆԻՔԻ ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻՆ. Արխանգէլսկալա, Մ. Վ.—Կենդանի է արդեօք: Փոխ. ռուսերէնցից: Թիֆլ. տպ. Յ. Մարտիր., 8 կոպ.:
- 6) ՄՈԼԻՔԻ. —Տարտիւֆ. կատակախաղ. Փրանս. թարգմ. Խորէն եպիսկոպոսիանէ: Բաքու, տպ. Արօր. 50 կոպ.:
- 7) ՊԱԼԵԱՆ, Տրդ. Վ. առաջնորդ հայոց կեսարիու. —Նշանագիրք Հայոց. (8 վեհատիպ տախտակով): Վիեննա, Մխիթ. տպ., 1 Փր. 50 սանտիմ:
- 8) ՏԱՇԵԱՆ, հ. Յակովբոս Վ., Մխիթ. ուխտէ.—Ալինարկ մը Հայ հնագրութեան վրա: Ուսումնասիրութիւն հայոց գրչութեան արևեստին: (10 զնկատիպ պատկերով): Վիեննա, Մխիթ. տպ., 2 Փր. 50 սանտիմ.
- 9) ABOVIANTZ-TATOSSINTZ, Marie, Mme.—Cystite chez la femme enceinte et nécrose de la muqueuse vésicale. Thèse inaugurale présentée à la Fac. de l'Univ. de Genève p. obt. le grade de Docteur en Médecine.—Genève, imp. Studer.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

ՀԱՅԵՐԻՐԴ ՊՊՐ-Այ

1898 թ. № 1, 2—3, 4, 5, 6 1898 թ.

1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ . . . . .	5 Քաղաքացիութեան զգացմունքը:
2 ՇԱՆԹ . . . . .	9 Վերժին (վերջ),
3 ԿԻԿՏՈՐ ՀԻՒԳՈ-ից՝ ԾԱՏՈՒՐ.	51 Գետի ափին (բանաստեղծութեան):
4 ՀԱՅՆԵ-ից՝ ԱՏՈՄ ՇԱՀԵՆ . . . . .	53 Բանաստեղծութիւններ:
5 ԱՐԱՄ-ԶԱՐԴԻ . . . . .	66 Պատկերի առաջ (բանաստեղծական):
6 ԱԴԵԼԵՍՆ, Ա. . . . .	67 Երկու կրակի մէջ (պատմածք):
7 ԴԵՄԻՐՃԵԱՆ, Դ. . . . .	83 Օտար գարուն:—Նա էլ...—Անա- ռիկ սրտերի պատմութեան:
8 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԵԼ.	87 Էւոլյուցիանի գաղափարը (շարք):
9 ՅՍԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ. . . . .	97 Ռուբենիկիս (բանաստեղծական):
10 ԽՈՉԱ-ԵՑՆԱՐԵՈՒՑ ՅՈՎՀ. . . . .	99 Գիւղական ցաւեր (շարունակական):
11 ՎԱՐԴԱՆԵԱՆՑ, ՎԱՄԻԼ. . . . .	107 Տրամադրութեան ստրուկ (Տոլստոյ):
12 ԱՂԲԱԼԵԱՆՑ, Ն. . . . .	124 Յ. Տէր-Միրաքեանցի «Ժողովրդի ընթերցանութիւնը»:
13 Տէր-ՄԻՐԱՔԵԱՆ, Յ. . . . .	129 «Շառատո», «Նապաստակ», «Ան- տառապահը»:
14 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն. . . . .	131 Վեսելովսկու՝ „Ստիխոտվորնեանի պատմութեան”:
15 ՍԵՓՈՒՀ. . . . .	135 Բալասեանի՝ Ռոստով և Սալմանա:
16 Տէր-ՄԻՐԱՔԵԱՆ, Ն. . . . .	141 Ալբրենարանիս քննադատներին:
17 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, Ա. . . . .	148 Փամանակակ. Տեսութիւն:—Զո- լակի դատի առիթով:
18 ՍԵՒԱՆ, Հ. . . . .	153 Թատրոնի շուրջը, XVI.

- 19 ՄՈՏԱ. . . . . 158 Աջ ու ձախ, Գ.
- 20 ԽՄԲ. . . . . 164 Զանազան լուրեր, — Մուրճ'ի նոր  
բաժանողութեան առթիւ, — Մուրճ'ի խմբագրութիւնը, — Նւէրներ  
Մուրճ'ի պարտքի համար, — Մուրճ'ի ընթերցող ոչ-բաժանորդներին:  
«Վերժին» վէպը: — Խորտակւած կեանքը», — Հայնէի բանաստեղծու-  
թիւնները, — Մի գրախօսութեան աւթիւ, — Մուրճ նւիրողներ, — Վե-  
հափառ կաթողիկոսը: — Խիստան Գալիցին, — Արքութեան չնորհումը: —  
Կրթական գործի մինհստր, — Պատերազմական նոր մինհստր: — Հայ-  
կական մամուլ (Բիւրակն, Արձագանք, Մշակ), — Արագս: — Լեպսիու-  
սի հրատարակութիւնները: — Օգնութիւնը հայերին Տաճկաստանում:  
Յօգուտ տաճկահայ փախստականների, — Նւէրներ և կտակներ, — Պո-  
լիտեխնիկումի համար: — Էջմիածինը պէտք է հաշիւ տաչ ազգին: —  
Տեղեկութիւններ հաչ ուսանողների մասին: — Հաչ ուսանողներ ար-  
տասահմանում: — Թուրք ուսանողներ արտասահմանում: — Քաղաքացին  
ինքնավարութիւն: — Քորդոր Սմբ. Շահաղիզի աշակերտներից. — Հե-  
րակլ II մահւան 100-ամեակը, — Պարսկաստանից: — Ծխախոտագործ-  
ների ժողով: — Ռուս գաղթականներ Կովկասում: — Անգլիացոց արշա-  
ւանքը աֆրիդների դէմ: — Զինական գործեր: — Դրէչիուս. Եստերհազի  
և Զոլա: — Կրետէ: — Նոր ստացւած գրքեր: — Մուրճ'ի պոստարկը:

### ՀՓ 2-3

- 1 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, Լինոն. . . . . 201 Խորտակւած կեանք (վէպ, շար.):  
2 ՀԱՅԵ-ԻՄ' ԱՏԲՈՄ ՇԱՀԵՆ . . . . . 222 Բանաստեղծութիւններ (շար.):  
3 ԲԱՐԱՆՑԵՎԻԶ, Կ. Ս. . . . . 241 Երկու ողի (նորավէալ):  
4 ԴԵՄԻՐՃԵԱՆ, ԴԵՐԵՆԻԿ. . . . . 251 Փոթորիկ (բանաստեղծութ.):  
5 " " . . . . . 254 Փոթորկի ժամին (բանաստեղծ.):  
6 ԽՈՉԱ-ԷՑՆԱՄԹԵԱՆՑ, ՑՈՎՀ. . . . . 255 Գիւղական ցաւեր (վերջ):  
7 ԱՐԱՅԵԱՆ, ԱՐԵԱԿ. . . . . 263 Նւէր ընկերիս (բանաստեղծ.):  
8 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՐԱՑԵԼ. . . . . 266 Էւոլիցիալի գաղափարը (շար.):  
9 ՖԲՈՒԳ-Ից' - Յ. ՅԱԿՈԲԵԱՆ . . . . . 272 Տիրոջ սկիհը (լեզնդա):  
10 ՖԻԼԻՊՈՂ-Ից' Գ. ՍԱՐԳՍԵԱՆ . . . . . 274 Օգտակար և վնասակ. միկրոբներ:  
11 ՎԱՐԴԱՆԵԱՆՑ, ՎԱՍԻԼ. . . . . 290 Տրամադրութեան ստրուկ (վերջ).  
12 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն. . . . . . . . . . . 303 Աւիֆտի «Գուլլիվէրի ձանապար-  
հորդութիւնը»:  
13 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, Ա. . . . . . . . . . . 310 Ժամանակակ. Տեսութիւն: — Զո-  
լափ դատի առիթով II:  
14 Ա. 326 Զոլափ գործը երգւեալների զա-  
տարանում (Մանրամ. արձան.):  
15 ՄԱՐ. ՑԱՐ. . . . . . . . . . . . . . . . . 362 Երեանի քաղաքացին ընտրու-  
թիւնների առթիւ:

- 16 ՍԵԽԵԱՆ, Հ. . . . . 366 Թատրոնի շուրջը, ԽՎՌ,  
 17 ՎԱՆՑԵԱՆ, ԳՐ. . . . . 369 Նամակ խմբագրին,  
 18 ԽՄԲ. . . . . . . . . . 372 Զանազան լուրեր, ՆԱԿՐՆԵՐ Մուր-  
     ծին պարտքերը հանգցնելու համար, Զոլալի դատը, — Նանթի «Վեր-  
     ժին» վէպը, — Անհամիան, կաթողիկոսը, — Սսի կաթողիկոսութիւնը, —  
     Կրթական նոր մինհստր-բոգոչպով, — Վրաստանի նոր էքզարիսը, —  
     Պարսկաստանից, — Թրքահաւ փախստականները, — Օքնութիւնը հակ-  
     րին Տաճկաստանում, — Ծուռիսի Մարդահամարը, — Սիրիրի և Միջն-  
     Ասիալի նահանգների նոր բաժանումը, — Դատաւորների անփոփոխ-  
     լիութիւնը Անդրկովկասում, — Մահմեդականների զաղթ, — Դուխորոր-  
     ների զաղթ, — Հերակլ Առի, — Նոր Քաղաք, — Պոլիտեխնիկում Թիֆլի-  
     սում, — Նոր Պոլիտեխնիկումներ Ծուռիսալում, — Քաղաքակին ինքնավա-  
     րութիւն, — Կենսաթթոշակի Դանձարան Ներս, Դպրոցում, — Գիւղա-  
     կան բանկ, — Երևանում գիւղատնտ, ընկերութիւն, — Կովկ. գիւղատնտ,  
     ընկերութիւնը, — Ոճիսի գիւղատ, զպրոց, — Նէրներ և կտակներ, —  
     Հասան Զալալեանի կտակի հաշիւը, — Բաքւակ նաւթագործութիւնը  
     և Անգլիացիք, — Հալոց գրականական Ֆոնդի խոդիրը, — Օրինակելի-  
     տանուտէր, — Հայկական մամուլ, — Թարգմանութիւններ «Մուրճ»ից,  
     Մի «Հնորհաւորութիւն» Մշակ'ին, — Մշակ'ի նորագոյն սիմբագործու-  
     թիւնը, — Մի հոգ թերթ (Մշակ) որ գրական գողութիւն է քարոզում,  
     — Մսուր, — Թիֆլիսի վաճառականաց Ժողովը, — Ձիւնը Թիֆլիսում, —  
     Միֆիլիսը Դաշտանում, — Զինաստան, — Յունաց թագաւորին սպա-  
     նելու փորձ, — Կրեաէ, — Աւատրիա, Նոր մինխստութիւն, — Կուբա կզզի, —  
     Խսպանիա և Հիւս. Ամերիկա, — Յուղմունքներ Բոմբէլում, — Կորէա, —  
     Ծովագին ովիթ ուժեղացումը Եւրոպակում, — † Կաւալյուտի (Քելիչ), —  
     — † Շիշկին, Խամն Խանովիչ, — † Ստատկովսկի, Բոլիսլաւ Խանա-  
     տիւէիչ, — † Ատելիանհանց Յուհաննէս, — † Յախումնան, Համբար-  
     ձում աղա,

## № 4

- 1 ԱՐԱՍԻԱՆԵՍՆՑ, ԱԻԵՏԻՔ. . . . . 403 Խօսէք անպէս ինչպէս զրում էք,  
 2 Վիկուր Հիփուզէթ.Ա. ԾԱՏՈՒԹ. 407 Մանուկ (բանաստեղծութիւն),  
 3 ՀԱՅՆԷՒՅՑ ԱՏՈՄ ՇԱՀԵՆ . . . . 309 Բանաստեղծութիւններ (Զար.)  
 4 ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ . . . . 434 Կուրի ափին (բանաստ.),  
 5 ՄԱՆԻԿԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . . 435 Խորտակ:ած կեանք (վէպ, շար.)  
 6 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԻԵՏԻՔ . . . . 454 Յողնած ծովը (բանաստ.)  
 7 ԶԵԽՈՎ, Ա.Ն. Պ. . . . . . . . . . 455 Տանը (պատմածք).  
 8 ՄՈՒՐԱԴԵԱՆՑ, ՅԱԿՈՒ . . . . . 467 Ակ ծովի ափերին I.  
 9 ՅՈՒՂԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԵԼ. . . . . 477 Էտոլիւցիալի զաղափարը (շար.).

- |                     |     |  |
|---------------------|-----|--|
| 10 ՄԱՐՐ, ՆԻԿ.       | 489 | Հայ վրացական չարաբերութիւն-<br>ները անցեալում:   |
| 11 ՄԱՐ. ՅԱՐ.        | 518 | Շանթի «Վերժին» վէպը:   |
| 12 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն.     | 526 | Քեասիմիկալեանքի տեսարանները:   |
| 13 ՎԱՆՑԵԱՆ, ԳՐ.     | 533 | Եկմայեանի ներդաշնակած «Պա-<br>տարագի երգեցողութ» առթիւ:  |
| 14 ՎԱՐԴԱՆԵՍԵՆՑ, ԳՐ. | 535 | Զոլալի «Պարիզ» վէպը:   |
| 15 ԱՐԱՄԻԱՆԵՍԵՆՑ, Ա. | 542 | Ժամանակակի Տեսութիւն.—Քա-<br>ղաքացին ինքնավար. Կովկ.:  |
| 16 ՇԱՏՈՒԻՔԵԱՆ ԱԼ.   | 546 | Ծովի բանաստեղծը (Ավագովսկի):   |
| 17 ՍԵՒԵԱՆ, Հ.       | 551 | Թատրոնի շուրջը, XVIII  |
| 18 Զ.               | 554 | Քաղաք. Տեսութ.—Խապանօ-ամե-<br>րիկական պատերազմը.—Ծայ-<br>րագուն Արիելք:  |
| 19 ԽՄԲ.             | 559 | Զանագ. լուր:—Նևէրներ Մուրճի<br>պարտքերը հանգնելու համար:—Մուրճ նէփողներ:—Պրոֆ. Մարրի<br>չողւածը:—Մեր աշխատակիցներից:—Վեճափառ կաթողիկոսը:—Հա-<br>լոց ծխական դարրոցները:—Թանգութիւնը Ռուսիակում:—Թանգու-<br>թիւնը Կովկասում:—Տաճկահայ փախստականներ:—Օգնութիւնը Տաճ-<br>կա-Հայաստանում:—Գաւառական ապահովութեան ոստիկանութիւն,<br>Ելենենդորֆի հայ գաղութը:—Մի չորհաւորութիւն ևս Մշակին,—<br>Մուրճ և Մշակ կամ մի պատասխան:—Նևէրներ և կտակներ:—Սա-<br>նասարեանի կտակի գործադրութիւնը:—Արովեան-Նազարեան գրա-<br>կան ֆոնդ:—Կովկասի Հալոց Բարեգ. ընկերութիւն:—Հալոց հրատ.<br>ընկերութիւնը:—Ախալքալաքի ճիւղը:—Թիֆլ. Հալուհեաց Բարեգ. Ընկերութ.<br>ընդհ. ժողովը:—Նոր-Նախիջեանի Հալոց Բարեգ. Ընկ.՝<br>Ատրպատականի Հայունեաց Բարեգ. Ընկ.:—Աստրախանի Հալուհեաց<br>Բարեգ. Ընկեր.՝ Թաւրիզի լսարանական ընկերութիւն:—Ընկերութ.<br>աշխատասիրական տան համար Թիֆլիսում:—Կովկ. իրաւաբանական<br>ընկերութիւն:—Ռուս գաղթականներին օգնող ընկերութեան ճիւղը:<br>Շուշալ թեմի կառավարիչ:—Ռւզգափառ եկեղեցի Վաղարշապատում,<br>Ռուսաց ուղղափառ ընկ. Խանքենգում:—Ռւզգափառութիւնը ալսո-<br>րիների մէջ:—Թիֆլ. հայ քահանալից միաբանութիւն:—Թիֆլ. երե-<br>խացախնամ ընկերութիւն:—Պոլիտեխնիկում Թիֆլիսում:—Դուխո-<br>րորների գաղթը:—Հայ ուսանողներ արտասահմանում:—Խաչատուր<br>Արովեանի մահւան իմսնամեակը:—Գանանեանի մըցանակ:—Ռուսաց<br>մամուլ:—Թուրքաստանի ընդհան. նահանգապետ:—Բուտիրկինի չօբե-<br>լեանը:—Գաղաքալին ինքնավարութիւն:—Պարսկաստանից:—Պ. Գ.<br>Բաշինջաղեանի նոր նկարը:—Զոլալի գատը:—Շէնկի գիւտը:—Ժան- |

տախտը թումբէլում:— Ռուսիան Զինաստանում:— Յովն-տաճկական պատերազմ:— Շարժումներ Խտալիանում:— Ֆրանսիական ընտրութիւններ:— † Չուհանձեան Տիգրան:— † Աղափիրեան Գրիգոր Եպիսկոպոս: † Պառևլոսն, Խոսիֆ Խւանովիչ:— † Մալտընովակի, Վ. Ա.— Մուրճի պոստարկդ:— Նոր ստացւած գրքեր:

## № 5


- |                                   |   |
|-----------------------------------|---|
| 1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ ԱհԵՏԻՔ. . . . .     | 595 Խօսէք ալնպէս ինչպէսքրումէք. Փ. Ա.   |
| 2 ՀԱՅՆԷՒՅՑ ԱՌՈՄ ՇԱՀԵՆ . . . . .   | 601 Բանաստեղծութիւններ: (վերջ.)   |
| 3 ԴԵՄԻՐՃԵԱՆ ԴԵՐԵՆԻԿ. . . . .      | 628 Ծամբին:— Են մարդիկ... (Բան.):   |
| 4 ՄԱՆԻԷԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ . . . . .      | 630 Խորտակւած կեանք (վեպ, շար.):  |
| 5 ԽՍԱՀԱԿԵԱՆ ԱհԵՏԻՔ . . . . .      | 658 Շառաշելով:— Ես չեմ ուզում .. (Բան.):  |
| 6 ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԵԼ . . . . . | 660 Էւոլիցիալի գաղափարը (շար.):   |
| 7 ԱԹԱՅԵԱՆ ԱՐՇԱԿ . . . . .         | 682 Զինուրի երգը (Բան.):  |
| 8 ԿՈՒՍԻԿԵԱՆ, ՑՈՎՀ. . . . .        | 684 Հրասիափալ և Ա. Շահագիգեան:  |
| 9 ԱՂԲԱԼԵԱՆ. Ն. . . . .            | 698 Աւետիքեանի «Վեկալարներ» և «Սամիտարնի»:  |
| 10 ԱՐԱՅԻԱՆԵԱՆՑ, Ա. . . . .        | 705 Ժամանակակ. Տեսութ:— Ուկիամ՝ Եւարտ Գլադոտոն:   |
| 11 ԱՐԿՈՍԵԴ, Տ. . . . .            | 708 Քաղաքալին ինքն ավարութիւնը:   |
| 12 ՊԱՇՏՈՆԱՌ ԱՆ . . . . .          | 711 Կովկ. կառավարչապետի նոր լիազորութիւնները,   |
| 13 ԴԱՒԹԵԱՆՑ, ԱԻ. . . . .          | 714 Ամուսն. առողջապ. զաւառում:  |
| 14 ՄԱՐԴԱՆԵԱՆ ՖՐԻԴՐԻՆ . . . . .    | 719 Պոլիտեխնիկումի խնդիրը Բաք.:   |
| 15 Հ. . . . .                     | 723 Խազանօ-Ամերիկական պատեր:  |
| 16 Հ. . . . .                     | 727 Քաղաքական տեսութիւն (Զեմբերլէնի ճառը. Անգլօ-Ամերիկական նիզակակցութեան գաղ.):  |
| 17 ԽՄԲ. . . . .                   | 732 Զան. լուրեր:— Կարգադրութիւն հայ փախստականների մասին:— Նւէրներ Մուրճին:— Խօսէք, ինչպէս գրում էք:— Մեր աշխատակիցներից:— Հարոց եկեղեցական: Ծխական դպրոցների մասին:— Կանանց նոր իրաւունքները Որուսիայում: Կովկասի կառավարչապետ:— «Արձագանք» լրագրի խափանումը:— Սինողի նոր անդամներ:— Օգնութիւնը Տաճկաստանում: Որբանոցներ:— Տաճկահայ փախստականները:— Թիֆլիսի քահանաների միաբանութիւն:— Մահմեդականացած հակեր Պարսկաստանում:— Պարսկաստան:— Իզմիրեան արքեպիսկոպոսը:— Կավազը լրագիրը:— Ապը. տամբրական անցքը Անդիժանում:— Անգլիացիք Բաքւում:— Բելինսկու |

մահւան լիսնամեակը:—Խաչատուր Արովեանի լիշտակին:—Պրոֆ. Մարրի լոգւածները:—Հիտուխոնիերը իբր նախահակեր:—Խուզադեանի կտակի լանձնաժողով:—Հաջոց որբանոց:—Մամուլ:—Քաղաքակին ինքնավարութիւն:—Հայ ուսանողները:—Ծաղկկ պատւաստողներ Անդրկովկասում:—Մրցանակ թէ իւղութիւն:—Մշակը և դաստարանը:—Աղջկանց ինստիտուտը Թիֆլիսում:—Ներամուպահական ցուցահանդէս Օրդուրաթում:—Մասիսի նոէրը:—Ֆրանսիակ. նոր պարլամէնտը:—Մելինի հրաժարականը և Բրիտոնի մինիստրութիւնը:—Ընտրութիւնները Գերմանիայում:—Ֆիլիպ Ֆեռորի:—Ապստամբութիւնը Խոսլիայում:—Թեսալիայի ազատւելը:—Էդէմ-փաշան:—Մերբիա և Բողդարիա:—Հականրէական շարժումներ Գալիցիայում:—Զինաստան:—Պալատիկու 100-ամեակը:—Կոտորածներ=Տնտեսական տագնապ:—† Գլազոսոն:—† Ֆրիդրիխ Միւլէր:—Նոր ստացւած գրքեր:—Մուրճի պոստարկ:

## № 6

1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ. . . . .	759 Խօսէք ակնպէս, ինչպէս զրում էք, III.
2 ԾԱՏՈՒՐԵԱՆ, Ա.Լ. . . . .	763 Երգեր Ա'խ ինչ ասեմ...—Ա'չ սև ամպեր...
3 ՇՐԵՑՆԵՐ . . . . .	756 «Հէքիաթներից»:
4 ԴԵՄԻՐՁԵԱՆ, Դ. . . . .	777 Ախ, մինչ օրս էլ... (բանաստ):
5 ՖԻԼԻՊՈՆ-ԻՑ Գ. ՍԱՐԳՍԵԱՆ	778 Օգտակար և լնասակար միկրոբներ:
6 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ա.Ի. . . . .	799 Ժողովրդական մոտիւ (բան.):
7 ՆՈՅՆԸ . . . . .	800 Ո՞ւր էք կորեր... (բան.):
8 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն. . . . .	801 Վ. Գ. Բէլինսկի. (Քննակ. էտիւդ):
9 ԱՐԱՄ-ԶԱՐԾԻ	813 Սիրենք իրար—Ասացէք նորան:—Երկու օրորոցներ (բանաս.):
10 ԶՈՊԱՆԵԱՆ, ԱՐՇԱԿ . . . . .	816 Հանրի Հայնէ: (Քննակ. էտիւդ):
11 ԱԹԱՑԵԱՆ, ԱՐՇԱԿ. . . . .	829 Եղբակը (բանաստ.):
12 ՄՈՒՐԱԴԵԱՆՑ, ՑԱԿՈԲ . . . . .	831 Սև ծովի ափերին. II.
14 ԱՂԲԱԼԵԱՆ, ՆԻԿ. . . . .	839 Երգ ու Վէրք: Ա. Խասհակեանի մասին:
15 ՎԱՐԴԱՆԵԱՆՑ, ԳՐ. . . . .	856 Ալֆ. Դողէի «Ընտանիքի լինարան»:
16 ԴԱԻԹԵԱՆՑ, ԱԻ. . . . .	876 Ներամի սերմագործութիւնը Գողթանում:
17 ՄԱՐ. ՑԱՐ. . . . .	884 Երևանի քաղաքակին գործելը:

- 18 ԽԱԶ-ՊԱՊԵԱՆ.. . . . . 887 Աշ ու ձախ, Դ.  
 19 Զ. . . . . . . . . . . . . . 893 Խսպան,-Ամերիկ. պատերազմը:  
 20 ԽՄԲ. . . . . . . . . . . . . . 900 Զանազան լուրեր—Պր. Ղազա-  
     րոս Աղաղեանի նևէրը Մուրճ'ին:—Մուրճ նվիրողներ, Մուրճ № 7 և  
     8:—Մուրճ'ի ալս տարւաչ կիսամնակը:—Հայոց ծխական դպրոցների  
     կալւածքները:—Օդնութիւնը Տաճկաստանում: Որբանոցներ:—Քնա-  
     կարանական հարկ:—Բանուգործի հարկ:—«Կաւկազ»-ը հայոց թեմ,  
     դպրոցների մասին:—Ապատամբութիւնը Ֆերգանեան երկրում:—Քա-  
     զաքալին ինքնավարութիւն:—Երդւեաների դատարանը:—Հայուսա-  
     նողներ արտասահմանում:—Տնտեսական (Շուշի, Ջերբալի):—Եերա-  
     մապահական ցուցահանդէս Ագուլիսում:—Ալսօրիները՝ ուղղափառ:—  
     Ուրմիակի ալսօրիները:—Մոսկաչի եկեղեցիների տնտեսական խորհրդի  
     հաշիւը:—Լէօպարդիի հարիւրամեակ:—Տարազի լուսիս — լուկիս հա-  
     մարները:—Հանդէս ամսօրեան:—Մշակի քաղաքագէտները:—Քաղ-  
     մակէպը:—«Ֆարշ արած» մի գլուխ:—Մի բացատրութիւն:—Դարձեալ  
     միստիֆիկատորը:—Նևէրներ և կտակներ:—Կրետէի ժամանակաւոր  
     կառավարութիւնը:—Թիւրքիա:—Վլիչէլմ II:—Ֆրանսիա:—Խտալիա,  
     Զինաստանում ապստամբութիւն:—Եապնիա:—Հաւալի կղզին:—  
     Զոլակի գործը:—Ցորենավաճառ Լէքիր:—Բուրգոն:—Նոքերը:—Դ  
     Իշխան Բիսմարկ:—Նոր ստացւած գրքեր:—  
 21 ԽՄԲ. . . . . . . . . . . . . . 925 Բովանդակութեան Մուրճ'ի կիսա-  
     մեակի:



# ՄԱՐԴԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՅՈՐԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Գ Բ Ի

ՔԱԺՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1898 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է

ՔԱԺՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ տարեկան 10 սուբլի, կամ 30 ֆունկ:  
Դիմել, Թիֆլիս, Արգիխանկայա փողոց, տուն № 6: Այլ քաղաքներից՝ Տիֆլիս. Въ Редакцію журнала „МУРЧЪ“.  
Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

ԲԱՐԻՈՒՄ կարելի է գրւել նաև պ. Ֆրիդրի Մարգանեանի մօռ (գրասենեակ ե. և Հ. Մելիքեանների):

